



ԵՏՅՐԱՏԻ

ԵԺԱՆՍԳԻՆ

ԽՐԱԴՈՐԱՆ

58-50

58-50

ՅԵՂԻՇԵ ՕՍՆԵՆՑ

ՅԵՂԻՇԵ ՆԱՅԻՐԻ

891.99

9-28

ԱՆ ՀԲԱՏՈՐԱԿՅԱՐԹԻՐԱՆ  
ԱՆ

1934

891.99

2-28

ky


1007  
31588

ՅԵՂԻՇԵ ԶԱՐԵՆՑ

# ՅԵՐԿԻՐ ՆԱՅԻՐԻ



4056



1934



Պատ. Նմբադիր՝ Ս. Հաբուսյան  
Տեխ. Նմբադիր՝ Տ. Նաչվանյան  
Սրբադիր՝ Վ. Տ ե ռ յ ա ն

Հրատ. № 2818, Գլավիտ № 8385(բ),  
պատվեր № 129, տիրաժ 5000. Պետ-  
հրատի տպարան, ստ. ֆ. 6 72X105, մեկ  
տպ. թերթում 102.400 տպ. նշ. հանձնված  
և արտադրության 16 I 1934 թ. ստորա-  
դրված և տպադրության 9 VI 1934 թ.

## Յ Ե Ր Կ Ի Ր Ն Ա Յ Ի Ր Ի

1920—1923

## Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Շ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Ռ Թ Ի Վ

«Յերկիր Նայիրի» վեպը լույս տեսնելուց հետո հեղինակն իր մի շարք հայրենակիցներից սկսեց ստանալ դրուժյուններ, մեծ մասամբ բարեկամական նամակներ, վորոնցով այդ արդո նայիրցիները մի կողմից իրենց խորին դոհոնակութունն են հայտնում հեղինակին, վոր նա վորոշ տեսակետով, այսպես ասած՝ անմահացրել է իրենց սրտին շատ մոտ նայիրյան այդ քաղաքի որերն ու վաստակները, — իսկ, մյուս կողմից, դժգոհութունը, վոր հեղինակը, իր կամքից յերևի անկախ պատճառներով, նայիրյան այդ քաղաքի մի քանի արդո քաղաքացիների մասին արձանագրել է տեղեկութուններ, վոր չեն համապատասխանում իրականության։ Այսպես, որինակ, մի շարք քաղաքացիներ հայտնում են, վոր նայիրյան այդ քաղաքի առաջին ծխականի տեսուչ յեղել է վո'չ թե պ. Մարութեմ, ինչպես ասված էր մեր աշխատության մեջ, այլ պ. Բյուզանդ Վարդերեսյանը, վորի և մի շարք վոչ այնքան ել գեղեցիկ արարքները ծխական դպրոցում, հիշատլ հիմնական սխալի պատճառով, վեպում վերադրված էյին պ. Մարությին։ Այս վերջինիս մասին մի շարք ամենաստույգ աղբյուրներ իրենց պարտքն են համարում հայտնել նաև այն, վոր նա, այ-



սինքն պ. Մարուքեն, ավարտած է յեղել վո'չ թե Գե-  
վորգյան շեմարանը, ինչպես ասված էր մեր վեպում,  
այլ — տեղական յոթնամյա ֆաղաֆային դպրոցը,  
վորտեղից և, վորքան մեղ հայտնի յե, անցել  
է արտասահման (Բերլին)։— Սակայն այս վերջին  
հանգամանքն է ահա, վոր այնպես ել մութ մնաց հե-  
ղինակին, մեղ այնպես ել չհաջողվեց ճշտել, թե յեղե՞լ  
է նա արդյոք Բերլինում, ինչպես ինքն է ասում, և,  
յեթե այո՝ իրերի ի՞նչ յերջանիկ բերումով է, վոր նա  
կարողացել էր նայիրյան այդ — թող ներվի ինձ ասել  
— բավականին հետամնաց քաղաքից թռչել — պատ-  
կերավոր ասած — այդքան հեռու։

Այս հանգամանքն է ահա, վոր այնպես ել մութ  
մնաց մեղ համար ու չպարզարանված, — և ահա, ոգ-  
տրվելով առիթից, խնդրում ենք բոլոր մեր հայրենա-  
կիցներին՝ յեթե նրանք ունեն ստույգ տեղեկություն-  
ներ հիշյալ կարեորագույն հանգամանքը ճշտող՝ թող  
բարի լինեն դրել մեղ, հետևյալ հասցեյով։—

Յերկիր Նայիրի. Յեղիշե Զարեմցիւն։—

Մինչ այդ, ոգտվելով մեր վեպի յերկրորդ հրա-  
տարակության ցանկալի առիթից՝ այսու մենք շտա-  
սում ենք առաջին հերթին մեր խորին շնորհակալու-  
թյունները հայտնել մեր բոլոր հիշյալ բարեկամնե-  
րին՝ վոչ այնքան մեղ, վորքան պատմությանը մա-  
տուցած նրանց հիշյալ անգնահատելի ծառայությանց  
համար, և ապա՝ շտկել բոլոր այն սխալներն ու թե-  
րությունները, վոր, մեր կամքից անկախ, տեղ էյին  
գտել մեր աշխատության եջերում։

1926. հունիս  
Յերևան

P S. — Մեր աշխատության մեջ դուցե և կան,  
իհարկե, ավելի մեծ, թեկուզ մի քիչ այլ կարգի,  
սխալներ ու թերություններ, քան վերահիշյալները։—  
Բայց այդ սխալներն ու թերությունները շտկելու հա-  
մար հարկավոր էր թերևս նորից դրել այս վեպը,  
բայց դա արդեն վո'չ թե շտկում կլիներ, այլ անդա-  
մահատություն՝ մահվան սպառնալիքի ներքին։ Ուստի  
և մենք հիմնականում թողնում ենք մեր աշխատու-  
թյունն այնպես, ինչպես նա կա, յեղնելով ժողովրդա-  
կան այն իմաստուն ասացվածքից, վոր կուզիկի մեջքը  
գերեզմանը միայն կշտկի... Թեկուզ պիտի ասենք,  
վոր ժողովրդական այս իմաստուն ասացվածքում կա  
մի բան, վոր նրա նշմարտությունը մեր աչքին դարձ-  
նում է բավականին քեյական։— այդ այն է, թե վո'նց  
կարող է գերեզմանը — շտկել ... Գերեզմանից հե-  
տո — ևլ ի՞նչ շտկում...

Հասկացողը կհասկանա։

ՅԵ. Զ.



## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Վաղո՞ւց, վաղո՞ւց մտորում ե իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղո՞ւց յեղք ե փնտռում կուտակված մի կարոտ: Մթի մեջ, գիշերի կեսին, կամ ցերեկը, յերբ յես դբադված եմ լինում առոյթյա հոգսերով, կամ անդամ յերբ յես տարված եմ լինում գինու կամ կնոջ հմայիչ հաճույքով,—ներսը, սրտիս խորքում, գողի պես զգուշ, կամացուկ չարժվում ե նա:

Ինչպես վաղուց տրված մի խոստում, կամ ինչպես ժամանակին չվճարած պարտամուրհակ — ծանրանում ե սրտիս, անողոր — ուտում ե սիրտս:

Հաճախ պատկերանում ե նա ինձ, վոքսես մի վաղեմի բարեկամ. վաղեմի ծանոթի մի նման, վորին յես շատ առաջ եմ հանդիպել, բայց կորցրել եմ հետո — որերի մշուշից յեղնում ե նա հաճախ, որերի մշուշից նայում ե ինձ: Յերկա՛ր—յերկա՛ր նայում ե աչքերիս: Ասում ե՝ չե՞ս ճանաչում: Մոռացե՞լ ես,—ասում ե նա: — Ու սահում ե ելի, թաղվում ե որերի մշուշում — կորչում ե որերում:

Հաղա՛ր—հաղա՛ր տեսքով ու կերպարանքով պատկերանում ե նա ինձ: Լինում ե, վոր յես թերթ եմ կարդում, կամ, ասենք, գնում եմ շուկա փայտ գնելու: Փայտ ծախողն ե, ասենք, մի սովորական դյուղացի. մի սայլ փայտ ե բերել շուկայում ծախելու: Հարցնում եմ՝ ի՞նչ արժե, բարեկամ, փայտդ: — Այսքան, կամ այսքան: — Ու մի պահ, հարցական, նայում ե ինձ: Յեվ, յերևակայում եք,— հանկարծ, այդ ամենասովորական դյուղացու աչքերից — աչքերի մշուշից — սահում ե, ինձ ե նայում — նա: Նայում ե

յերկա՛ր—յերկար: Ասում ե՝ չե՞ս ճանաչում: — Մոռացե՞լ ես,— հարցնում ե նա: Յեվ յես, փայտ գնելու փոխարեն անողոր մորմոքը սրտիս — վերադառնում եմ տուն:

Յերբեմն ել յես տեսնում եմ նրան ... հորս, Աբգար աղայի դեղնած, դեղնափայլ ... մաղերում: Հորըս, Աբգար աղայի դեղնափայլ մաղերից յեղնում ե նա, հաղարամյա — նայում ե ինձ: Հաղար — հաղար տեսքով ու կերպարանքով պատկերանում ե նա: Ապրում ե, անկերույթ, մեր ամեն ինչում:

Բայց ո՞վ ե, կամ ի՞նչ ե նա — ահա ամենանյա-կանը: Գուցե մեծ լինի դարմանքդ, սիրելի ընթերցող, յեթե ասեմ, վոր յես ել չգիտեմ: Գիտեմ, վոր նա — կա, յեղել ե ե հին ե, վորպես իմ արյունն ե — հին: Կա,—ղգում եմ, չոչափում եմ սրտով, տեսնում եմ,—բայց հենց վոր ուղում եմ բռնեմ, տեսնեմ մարմնավոր, կանգնեցնեմ հաստատ,— կորչում ե, դառնում ե աներևույթ, ցնդում ե, վորպես ծուխ, կամ ցնորք:

Գորշ, ամենուրյա, առոյթյա մեր կյանքում, կենցաղում, մորմոքում ե նա մութ, աներևույթ, կանչում ե — ո՞ւր ... Յերբ, իրիկնադեմին, մեղմ, հատ—հատ ղողանջում ե զանգը հին, խալխուլ զանգակատնից — կանչում ե նա: Ո՞վ ե լսում: Ով ել վոր լսում ե — շա՛տ բան ե հասկանում: Յես ել, վոր մանկությունից լսել եմ նրա կանչը — շա՛տ բան եմ հասկացել: Բայց ել ինչո՞ւ յե խեղդում ինձ, ինչո՞ւ յե կարոտը խեղդում: Ինչո՞ւ յե կանչում — մտերիմ, կանչում — անվերջ: Յեվ յես ինչո՞ւ յեմ ուղում, ինչո՞ւ յեմ կամենում փնտռել, գտնել նրան, խոսել նրա հետ — սրտով, սիրել նրան:



Սիրելի ընթերցող: Ների՛ր, վոր այս հարցերի պատասխանը էսս դտնի այս գրքում: Այս հարցերի պատասխանը քո սրտում, քո հոգում պիտի գտնես: Պիտի ցանկություն զգաս գտնելու: Ուրիշ վոչինչ: Այո: — Ուրիշ վոչինչ...

— Ինչքա՞ն, ինչքա՞ն անգամ հարցրել եմ յես ինձ, թե ի՞նչ ե, վերջապես — Նայիրին: Գուցե քեզ տարորինակ թվա այս հարցը, սիրելի ընթերցող: Բայց դա նույնքան ե բնական, վորքան այն հարցը, թե ո՞վ ենք մենք ե ո՞ւր ենք գնում: Ի՞նչ ենք յեղել յերեկ ե ի՞նչ պիտի լինենք վաղը:

Մմեն, ամեն անգամ, յերբ նման հարցերը կերել են սիրտս,—մեկը, մի ուրիշը կարծես, ուրվականի նման յեղնելով որերից, որերի մշուշից, տվել ե ուղեղիս չարախինդ մի հարց.— «Ձե՞ր կարելի արդյոք տեսնել մարմնավոր, պատկերացնել հաստատ յերկիրը Նայիրի: Նու, թեկուղ հենց իրենց՝ նայիրցիների կյանքում, կենցաղում: Շոշափել այդ յերևույթը — նայիրյանը — սրտով, չոչափել մարմնավոր, պատկերել յերկրային ... Գուցե սուտ ե Նայիրին, Նայիրին— չկա ... Գուցե հուշ ե միայն, ֆիկցիա, մի՛ֆ: — Ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն...

Սիրելի ընթերցող, թողնում եմ, վոր դու...այո, դու—գտնես Նայիրին: Սույն այս իմ պոեմանման վեպում կանցնեն աչքերիդ առաջով բաղմաթիվ նայիրցիներ. սիրի՛ր, վորին կուղես, գտի՛ր, ում վոր սրտում, կամ հոգում կամենաս, յերկիրը Նայիրի:

Իսկ յեթե, բան ե, չգտար—ների՛ր, սիրելիս՝ յես

չեմ մեղավորը... Գուցե ճիշտ վոր՝ միտած ե Նայիրին. ֆիկցիա. մի՛ֆ. ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն ... Իսկ նրա վոխարեն — կա այսոր մի յերկիր, վոր կոչվում ե Հայաստան, ե այդ հին յերկրում ապրել են յերեկ ե ապրում են այսոր շատ սովորական մարդիկ՝ սովորական մարդու սովորական հատկություններով: Յե՛վ ուրիշ — վոչինչ: Վոչ մի «յերկիր Նայիրի» — այլ միայն — մարդիկ, վոր ապրում են այսոր աշխարհի այն անկյունում, վոր կոչվում ե Հայաստան, վոր հիմա դարձել ե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն, իսկ 1917-ից առաջ վոչ այլ ինչ եր, յեթե վոչ Ռուսական Իմպերիայի մի հետամնաց ծայրամասը — ե ուրիշ վոչինչ...

Ուրիշ վոչինչ:

. . . . .

Մնացածը — վեպում:

ՅԵ. 2.

Մոսկվա. 1921. հոկտեմբեր



Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

## ՔԱՂԱՔԸ ՅԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Այստեղ նայիրյանն ե նազում...  
Վ. ՏԵՐՅԱՑ

Նայիրյան այդ հնամյա քաղաքն ամեն ինչով  
նման եր նայիրյան բոլոր հին ու նոր քաղաքներին. —  
փոքր եր, վոչ բազմամարդ, խարխուլ ու փոշոտ. ժա-  
մանակակից լեզվով այդպիսի քաղաքներին ասում ես  
զավառական հետամնաց քաղաք: Յե՞րբ ե շինված նա-  
յիրյան այդ հին քաղաքը — ասումած ինքը գիտե-  
բայց ասում են, վոր այդ քաղաքը հիմնողները յեղել  
են հին նայիրցիներ. — դուցե՞ խալդեր լայնաթիկունք  
ու ջլաբաղուկ, դուցե՞ գանգրահեր ուրարտացիներ:  
Սակայն պատմական այդ հանգամանքը, կարծում  
ենք, այնքան ել կարևոր չե, վորովհետև խալդական  
կամ ուրարտական այն հին քաղաքից հիմա յերևի  
տեղն ել չե մնացել. նրանց այն կավե գետնափոր  
խրճիթների փոխարեն կանգնած են հիմա նայիրյան  
այդ փոքրիկ քաղաքում քարե միհարկանի, յերկհար-  
կանի և նույնիսկ յերեք հարկանի շինություններ՝  
տներ ու խանութներ, վորոնք նույնքան են նման ու-  
րարտական այն խրճիթներին, վորքան քո քիթը, ըն-  
թերցող... Եյֆելյան աշտարակին: Այդ նոր տներից  
ու խանութներից մի քանիսը նույնիսկ թիթեղե կար-  
միր կամ կանաչադույն կտուրներ ունեն — մի հանգա-

մանք, վոր քսաներորդ դարից ե դալիս — և, վոր-  
պես այդպիսին, նոր ե և միանգամայն ուշադրավ:  
Քաղաքի ցածիկ տների ու խանութների միտրինակ  
ծովում թիթեղե այդ կտուրներն աչքի յեն դարձում,  
ինչպես աչքի կդարներ կանացի յեվրոպական փետրա-  
զարդ գլխարկն արևելյան գյուղում: Յեվ ի զուր չե,  
վոր նայիրյան այդ քաղաքում մինչև որս ել մի անհուն  
վախով ու պատկառանքով են խոսում այն անձնավո-  
րության մասին, վորն առաջին անգամ թիթեղե կտու-  
րով ե ծածկել իր յերկհարկանի բնակարանը. դա բո-  
լորին հայտնի, բոլորից հարգված, այսպես անվան-  
ված Գեմեքալ Ալոշն ե, ութսունն անց պատկառելի մի  
նայիրցի, վորի հետ ընթերցողը դեռ շատ առիթ կու-  
նենա հանդիպելու սույն իմ այս պոեմանման վեպում:

Տները, ինչպես ասացի, նայիրյան այդ քաղաքում  
ցածիկ են, մեծ մասամբ մի հարկանի, տափակ կտուր  
ներով, — բայց տների ու խանութների այդ միտրինակ  
տափակության ծովում, քաղաքի ճիշտ կենտրոնում,  
վորպես ուրիշ մի աշխարհից, կամ յերկնքից ընկած  
քարե մի հրաշք — կանգնած կա, յերևակայում եք...  
հինգ հարկանի մի հսկա, քարե մի թյուրիմացու-  
թյուն... Ծխական գպրոցի ծանոթ ուսուցիչ պ.  
Մարութ Դրաստախալաթյանը, վոր պակաս մի հրաշք չե  
նայիրյան այդ քաղաքում, ամեն անգամ այդ շինու-  
թյան մոտից անցնելիս ասում ե ինքնիրեն, կամ, յեթե  
խոսակիցներ ե ունենում — նրանց. «Ուրիշ բան ենք  
մենք, ուրիշ — յեվրոպացիք... Ա՛յ»: — Յեվ նա հիա-  
ցած աչքերով նայում ե հինգ հարկանի շենքի տարո-  
րինակ-փոքրիկ քառակուսի պատուհաններին: — «Դեռ  
մենք շատ ենք հետամնաց» — ասում ե նա: Այսպես ե



մտածում պ. Մարութեն — և նա, իհարկե, ունի իրավունք. — պ. Մարութեն ավարտել է տեղական քաղաքային յոթնամյա դպրոցը և, իրերի անհայտ բերմունքով, յերկու-յերեք ամսով յեղել է Բերլինում. — դոնե այսպես ե հավատացնում ինքը, պ. Մարութեն: Նա սիրում է միմիայն նորն ու կատարյալը — և չի կարող տանել վոչ մի հնություն: Այսպիսով նա, միանգամայն իրավացիորեն, յեվրոպացու հռչակ ե վայելում նայիրյան այդ քաղաքում և բոլորը, մեծ թե փոքր, բացի յերկրորդ ծխականի ուսուցիչ ընկ. Վառդգանից, հարգում են նրան:

Բայց քաղաքը, բացի այդ հինգ հարկանի հրաշք շինությունից, ուներ մի շարք տեղական հրաշալիքներ, վորոնցով դժբախտաբար չիր հետաքրքրվում պ. Դրաստամատյանը: Սակայն ինչ ուղում ե պ. Մարութեն կարծե — առանց այդ հրաշալիքների նայիրյան այդ քաղաքը յեթե վոչ իր ամբողջ հմայքը, դոնե իր հմայքի կեսից ավելին անսլոյման կկորցներ — հենց իրենց, այդ քաղաքի բնակիչները աչքում: Յեվ ճիշտ վոր. ինչո՞ւ համար կատարյալ հրաշալիքներ չեն կարող համարվել — թեկուզ հենց բերդը, կամ ասենք, — վարդանի կամուրջը, կամ վերջապես — Առաքելոց յեկեղեցին ... Իսկ ձորի Սլլան քա՞րը, ձգնավորի մատուռը, — վորը թվում: — Բոլորն ել հրաշք են, զարմանալի զարմանք, անկարելի հնճարք:

Սկսենք բերդից:

Քաղաքի Արևմտյան ծայրում, վերը, ժայռակուռ, դեղին բլուրի վրա — խիստ, խոփոռ, վորպես

արևելյան քարե մի բռնակալ — բաղմել ե բերդը: Ժայռե իր դահի, աթոռի վրայից նայում ե քաղաքին: Քարե մի վիթխարի արկղ լինի կարծես, ծանր՝ ընկել ե վերից ու կախված մնացել ե բլուրի վրա, նստել ե՝ ծանր ու հաստատ: — Ընկել ե նախ մի հսկայական քարե արկղ կարծես — և հետո, մեկը մյուսի յետևից տեղացել են վար ուրիշ մեծ ու փոքր, ծանր ու թեթև, զանազանաձև սնդուկներ՝ մեկը մեկի վրա, կողք-կողքի. հրաշք ե, չես հասկանում, զարմանում ես միայն: Ասում են, վոր այդ բերդը շինելիս նայիրցի վարպետները ձվի սպիտակուլց են գործածել շաղախի փոխարեն — ահա, թե ինչու յե այդ բերդը անխորտակելի: Անառիկ ե այդ բերդը — ամենքը այդ գիտեն, — և դավաճանությունն ե, նենգ, ստոր, նայիրյան դավաճանությունն ե այդ բերդը հանձնել յեկվոր սրիկաներին: Հիմարները միայն կարող են չզարմանալ այդ բերդի վրա — և այդպիսի հիմարներից ե, թող թույլ տրվի ասեմ, պ. Մարութեն: Յեվ թող ասի խնդրեմ պ. Դրաստամատյանը, այդ մեծամիտ «յեվրոպացին» . ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի պաշտպանվեր համայն այդ քաղաքն առաջին իսկ թշնամուց, յեթե բերդը չլիներ: Այնտեղից, այո — բերդի անխորտակելի պատերի վրայից պիտի ուռներ տեղան, յեթե պատերազմ լինի: Այնտեղից — բերդի ժայռակերտ պատնեղների վրայից իջնի պիտի մի որ, վորպես յերկաթե մի բռունցք, պիրկ, անսարտ կորովը նայիրյան ցեղի: — Վորպես յերկաթե մի բռունցք — իջնի պիտի մի որ թշնամու դելին: — Ահա թե ինչ ե այդ բերդը — իհարկե, հասկացողի համար: Յեվ ահա թե ինչու — վարը, քաղաքում հանդիստ են տները՝ նիրհել են ան-




Հոգ ու անտարբեր: Իսկ խանութներն առաջ նստել ե նախիրցի խանութպանը և ծուլլ, անփուլթ Հորանջե-  
լով սուլասում ե գնորդի: Յեվ ի՛նչ նշանակութիւն ունի այն հիմար, միանգամայն սլատահական և ժամա-  
նակավոր հանգամանքը, վոր հիմա, 1913 թվին, բեր-  
դի ամենաբարձր աշտարակի վրա ծածկնվում ե վո՛չ  
նախիրյան, արծվաղարդ մի դրոշ: Բերդը շինել են նա-  
խիրցիները, բայց դժբախտաբար, այդ նույն բերդն ե  
հիմա յեկվոր սրիկաներին — առխերին — պաշտպա-  
նում թե մեզնից, բերդի և քաղաքի իսկական տերե-  
րից — և թե ամեն մի թշնամուց: Որը կդա և նրանք  
կդնան: Յեվ նորից, բերդի անառիկ ամրութիւննե-  
րից, վորպես յերկաթյա ահեղ մի սպառնալիք — կել-  
նե, կհառնե ահասատ, նախիրյան վոգին. կորովը,  
ուժը հաղարամյա — նախիրյան աշխարհի ... Ու կը-  
վառվի նորից անմար խնդությամբ, կժպտա խնդա-  
գին յերկիրը հաղարամյա — յերկիրը նախիրի...

Այսպես եյին մտածում այդ բերդի մասին նախիր-  
յան այդ քաղաքում ապրող իսկական նախիրցիները —  
և այս փաստի հանդեպ ի՛նչ կարող եր անել մի, թե-  
կուղ և յեվրոպացի, պ. Դրաստամատյան...

Բերդից, քարե այդ վիթխարի սնդուկի յերկու  
կողքերից սկսվելով՝ ծուռ ու մուռ, հսկա սապատա-  
վոր ուղտերի նման, դեպի վար, դեպի քաղաքն են  
իջնում քաղաքի յերեմնի պարիսպների հիմիլիա մնա-  
ցորդները: Առաջ, շատ հնում, քարե ուղտերի անընդ-  
հատ ձգվող մի քարավան ե յեղել, ամրակուռ մի պա-  
րիսպ, վոր բերդից իջնելով, անցնելիս ե յեղել դետը  
և ամբողջ քաղաքն իր մեջ առնելով՝ տարիներ շարու-  
նակ պաշտպանել և բնակիչներին չարից ու վտուխից:

Բայց հիմա քարե այն հսկա ուղտերի սապատներն են  
միայն — ծուռ, կոշկոճ բլուրների նման — տեղ-տեղ  
մնացել: Մնացել են հիմա այն հին պարիսպների զար-  
մանք հետքերը միայն — մեկն այնտեղ ահա, բերդի  
պատերին կաած, մյուսն այնտեղ, գետեղերքին, մեկն  
ել — հեռու-հեռուն՝ քաղաքից դուրս: Ամեն մեկը հի-  
մա մամուկատ մի պատ ե կատարյալ, չիմացողը կա-  
սի՝ ո՞վ ե այս բլուրի քարերը հղկել, աղնվացրել և  
մամուռով պատել ... Իսկ մի վիթխարի կտորը այդ  
առասպելական պարիսպի մինչև որս ել մնացել ե քա-  
ղաքի միջով անցնող գետի ճիշտ մեջտեղը. գետի մեջ-  
տեղը մնացած պարիսպի այդ կտորն ե ահա, վոր կոշ-  
վում ե հիմա վարդանի կամուրջ: Կարծում են կամուրջ  
ե յեղել և համոզված են, վոր այդպիսի մի կամուրջ  
վարդան զորավարը միայն կարող եր շինել, վորովհե-  
տե այսօրվա միամիտ նախիրցին այն ամենը, վոր մեծ  
ե և զարմանալի, ինչ-վոր նախիրյան ե ու հաղթական  
— վերադրում ե վարդան Մամիկոնյանին, վերջին այդ  
արքայակերպ նախիրցուն, վորի մասին այսօր ամեն մի  
հասարակ նախիրցի այնքանը միայն գիտե, վոր բարե-  
կենդանի հինգշաբթի որը բոլոր նախիրյան յեկեղեցի-  
ներում պատարագ ե լինում նրա հիշատակին, յերգ-  
վում ե «Լուեց ամպերը» և այդ որը բոլոր նախիրցիները  
«տոն» ունեն, այսինքն՝ անվանակոչութիւն... Բայց  
այդ չե, իհարկե, պատճառը, վոր վարդանի կամուրջը  
նախիրցիների աչքին դարձել ե խորհրդավոր մի հրաշք՝  
ահռելի գեղեցկութիւն: Ասում են — և այդ բոլորը  
գիտեն — վոր գետում խնդրվածները զալիս հավաք-  
վում են կամուրջի տակ ցամաքի հանդիպակերպ  
վիհի վրա յե կանգնած այդ հսկա քարակոյուղը — ահա  
Յերկիր նախիրի 2

1007  
8513





Թե ինչ: Նրա տակ դատարիկ ե, բոլորովին դատարիկ: Յեւ այդ դատարիկության վրա, վորպես նայիրյան հնամենի դարմանք, յեղեւ ե կամուրջը, կախիւ ե, ծանր ու հաստատ, վիհերի վրա: Վարդանի կամուրջը: Յեւ այդ անհուն, անհատակ վիհերում, վորոնց մեջ ջուրն անդամ վարանում ե լցիւել — ասլորում են ջրային դադաններ, պառաւներ, մարդազլուխ դոմեներ, ջրային հսկա մի ոճ, վոր կամուրջի «տեղն» ե, կամուրջի բարի վողին ե յերկու ջրահարս: Ահա թե ինչու վոչ մի քաղաքացի չի համարձակվում լողանալ կամուրջի մոտերքը. քանի՛-քանի անգամ յեղեւ են դեպքեր, յերբ մի առաքինի, խելոք, բարի նայիրցի գիշեր ժամանակ Վարդանի կամուրջի մոտերքից անցնելիս զգացել ե հանկարծ, վոր քաշում են իրեն վար, դեպի վիհերը Վարդանի կամուրջի, — կանչում են, հմայում են, ուզում են խելդեն: Յեւ քանի՛-քանի անգամ Վարդանանց տոնին սուրբ Գևորգ յեկեղեցու քարե ամբիոնից տեր Հուսիկ քահանայն զգուշացրել ե քաղաքացիներին, վոր նման դեպքերում ամեն մի իսկական նայիրցի խելույն պետք ե հիշի Վարդան զորաւիր քաջին ե ամբաստնութի պապերի հաւատով: Պիտի մտաբերի այն մեծ նստատակը, վորի համար ընկել ե նա Աւարայրի դաշտում — ե չվարանի: Յեւ յեթե չվարանի, կցնդի, քամի կդառնա այն չար զորութիւնը, վոր թշնամու ցանկությամբ կախիւ ե Վարդանի կամուրջի վրա: Յեւ Վարդանի կամուրջը կդառնա հավատքի մի խորան՝ բարի մի զորութիւն: — Հարուքյան պուն կդառնա Վարդանի կամուրջը հաւատացողի համար — ասել ե հաճախ տեր Հուսիկ քահանայն: Բայց միշտ այնպես ե պատահում, վոր ամենալտան-


դավոր վայրկյանին թռչում ե Վարդանի անունը վարանոտ քաղաքացու ճղճիմ ուղեղից ու մնում ե տեղը դատարիկ տարածութիւն, սարսափելի դարդանդ, վոր, ի դեպս ասած, ավելի յե բարձրացնում Վարդանի կամուրջի հրաշալի հմայքը քաղաքացիների աչքին: Յեւ յես չգիտեմ, չեմ կարող պատկերացնել, թե վորքան խղճուկ ու անհետաքրքիր պիտի թվար նայիրյան այդ քաղաքը նրանում ասլորդների աչքին, յեթե այդ կամուրջը չլինէր: Բայց արի տես, վոր այդքան հետաքրքիր ու վարմանալի հնամյա այդ քաղաքում միայն կամուրջը չե: Յեւ յեթե առաջարկվէր բնակիչներին ձեռք քաշել քաղաքի հրաշալիքներից մեկն ու մեկից, հարց ե դեռ՝ չեյի՞ն դիշի նրանք Վարդանի կամուրջը — հոգուտ Առաքելոց յեկեղեցու: Ուզում եմ ասած լինեմ, վոր չնայած Վարդանի կամուրջը քաղաքացիների սրտին չափազանց մոտ լինելու հանգամանքին — ուրիշ բան ե այդ նույն քաղաքացիների համար Առաքելոց յեկեղեցին: Առաքելոց յեկեղեցին ամենամեծ ու ամենանախարհան հրաշալիքն ե, զարդն ե, զարմանքն ե այդ հնամյա քաղաքի — ե բացի նրանից չկա մի ուրիշ ավելի հմայիչ զարմանք քաղաքացիների համար: — Ինչ վոր ե հոգին մարմնի նկատմամբ, ինչ վոր ե ուղեղը, աչքը կամ սիրտը՝ մարդու կալմովածքում — նույնն ե Առաքելոց յեկեղեցին նայիրյան այդ քաղաքում: — Ինչ վոր ե Նատր Դամը փարիզիցիների համար — նույնն ե այդ քաղաքի բնակիչների աչքին — Առաքելոց յեկեղեցին:

Բերդից դեպի հյուսիս, վարը, բլուրի լանջին, ծվարել ե Առաքելոց յեկեղեցին, վորպես քարից շինած մոխրադույն մի թռչուն: Առաքելոց յեկեղեցին թռչու-



նի յե նման վերից — բերդից նայելիս. բայց դեմից նայելիս նա թողնում ե նստած վարդապետի տալովորություն: Քարե ծեր մի վարդապետ ե կարծես, նըստել ե բլուրի լանջին ու մնացել ե նստած — դարեր, ու կմնա նստած, քանի դեռ կա աշխարհը և անհուն աշխարհում — յերկիրը նայիրի: Վերը, դմբեթի ծայրին, խաչն ե՝ պարզ, յերկաթե նայիրյան մի խաչ: Ու խաչից սկսվելով՝ ծայրը վեր տնկած կոնաձև հողի մի նման իջնում ե դմբեթը քարե մի ահուկ սնդուկի վրա:

— Ահա՛ Առաքելոց յեկեղեցին: Հրաշք ե, չես հասկանում — այնքան ե պարզ: Բայց վորպեսզի ընթերցողը պարզ, ակնհայտի կերպով կարողանա պատկերացնել Առաքելոց յեկեղեցու հմայիչ պարզությունը — յես կնկարեմ այստեղ, մոտավորապես, նրա արտաքին տեսքը.



— ահա: Հասարակ ե, պարզ ե՝ նայիրյան վոգին ե կարծես՝ կերպարանք ստացած: — Անպաճույճ ե, պարզ ե — դրսից, բայց հասկացողի համար նա վորքա՛ն ե անհուն ու բազմահրաշ...

Ճիշտ այնպես, ինչպես պատմել են ինձ, պատմեմ յես ել քեզ, ընթերցող, Առաքելոց յեկեղեցու մասին. ուզում ես հավատա, ուզում ես ծիծաղիր: Բայց յես մոռացա ասել, թե ինչու յե այդ յեկեղեցին կոչվում — Առաքելոց յեկեղեցի: — Յեվ հենց այստեղից ե ահա, վոր սկսվում ե այդ յեկեղեցու զարմանալին ու հրաշալին:

Քարե այդ յեկեղեցու քարաչեն դմբեթի պատերի վրա դրսից քանդակել ե նայիրցի վարպետը տասներկու առաքյալների դեմքերը՝ մեկ-մեկ, կողք-կողքի — տասներկու առաքյալ: Հասկանո՞ւմ եք՝ քարի մեջ փորել ե հրաշալի դեմքեր: Նրանք հիմա յե պարզ նայում են դիտողին դմբեթի հնաբույր, մամուռ պատերից՝ կարծր, չոր, նայիրյան լեռնաքարի մեջ փորած հրաշալի դեմքեր: Յեվ այն ել կնկատի ուշադիր դիտողը, վոր առաքյալներից մեկի բոլոր դիմադծերը փորված են անխնամ. քիթը չկա, խակ աչքերի փոխարեն նայում են վերևից յերկու սև ու ալյանդակ խոռոչներ: — Հուդայի դեմքն ե դա, կասի ձեզ իմացողը, — վորին նայիրցի քրիստոնյա վարպետը տվել ե հրեչի կերպարանք: Բայց Հուդայի այդ դեմքը խակի յե կարծես քանդակված չլինի յեկեղեցու վրա, վորովհետև յեկեղեցին թեկուղ և արչտոնապես կոչվում ե Տասներկու Առաքելոց, բայց ժողովուրդը համառորեն ասում ե՝ Տասներկ Առաքելոց — և նա իրավունք ունի. նա չի հաշվում Հուդային. չի ուզում հաշվել: Սակայն յեթե ժողովուրդը տասներկու առաքյալներին ել հհաշվեր — ելի Առաքելոց յեկեղեցին վոչինչ չեր կորցնի իր դարավոր հմայքից: Վորովհետև այլ ե նրա կոչումը և հմայքը — այլ: Յեվ այն, ինչ վոր յես հի-



մա պիտի քեզ պատմեմ, սիրելի ընթերցող, թող քեզ դատարկ հեքիաթ կամ զրույց չթվա: Յեթե մի անգամ պատահամաք այդ քաղաքն ընկնես՝ հարցրու Առաքելոց յեկեղեցու մասին և քեզ ամեն մի տեղացի նույնը կպատմե, ինչ վոր յես պիտի պատմեմ. դուցե և ավելին:

Դեպքը պատահեւ եւ այսպես:

Առաքելոց յեկեղեցուց յերկու-յերեք հարյուր քայլաչափ հեռու, յեկեղեցի տանող ճանապարհի վրա հիմա յեւ կանգնած կա կիսավեր մի տնակ: Պատերը կանգնած են դեռ, բայց կտուրը վոււ և յեկել. հողակույտ եւ հիմա այդ տնակը, անդուռ ավերակ: Ընդամենը քսան-քսաներկու տարի առաջ այդ տնակը թե դուռ ուներ և թե լուսամուտներ, և նրա խոնավ, ցածլիկ սենյակներում ապրում եր մի գաղթական նա-յիրցի՝ հիմա ամենքին անուշով հայտնի Մշեցի Թաթում: Այդ մարդը դժբախտ եւ յեղել. նայիրյան հեռու մի քաղաքում Ջարդի ժամանակ կորցրել եւ իր ընտանիքը և մերկ, բոբիկ, հասել եւ այդ քաղաքը և բախտի բերումով բնակութիւնը դտել յեկեղեցուն մոտիկ այդ խարխուլ տնակում: Ապրել եւ մշեցի Թաթոն այդ խարխուլ տնակում մի քանի տարի. վոչինչ չի նկատել: Յեւ ահա մի որ շուկայում հանդիպում եւ նա իր հայրենակիցներից մեկին. նոր եւ յեկած լինում հեռու հայրենիքից: Պատմում եւ այնտեղի մասին քսումնելի բաներ: Յեւ պատմութիւնը նույնն եւ լինում կոտորած, կոտորած, — Բռնաբարված կին, կորած յերեսաներ: Ու փախուստ — ոտաբութիւն՝ մուրացկանի վիճակ: Լսում եւ Մշեցի Թաթոն և հիշում եւ իրը.

հիշում եւ կնոջը, յերեսաներին: Մտնում են միասին գինետուն և սկսում են խմել—դառն, արնահամ, նայիրյան ողի: Յեւ ահա Թաթոն սկսում եւ պատմել ընկերոջը քաղաքի մասին. դուրս են դալիս որորվելով. տեսնում են բերդը, վարդանի կամուրջը, Առաքելոց յեկեղեցին: Ասում եւ ընկերը՝ որը կգա և մտից կելնե, կհառնե մշուշից — նայիրյան վոզին: Հաղթ, հաստատ կիջնե թշնամու դիւին — յերկաթե վրեժ: Այսպես զրուցելով դալիս են Թաթոյի տնակը. սլառկում են քնելու: Յեւ ահա կես դիշերին թվում եւ Թաթոյին՝ մեկը անուշ ձայնով, կանչում եւ իրեն: Ներքեից, տան ներքնահարկից, կանչում եւ մեկը, ծանոթ, կանչում եւ վար: Յեւնում եւ վեր և ասում եւ ընկերոջը՝ արի: Յեւ նրանք միասին վերցնում են ճրագը՝ իջնում են վար: Իջնում են ներքնատուն: Խոնավ, գաղջ ողով լցված, դարհուրելի: Մի վայրկյան մնում են չվարած. սարդ, լսելի՝ կանչում եւ տխուր մի ձայն հատակից, ներքեից: Աչքերը դետնին են հառում — տեսնում են՝ դետնի մեջ, ծանր, թաղվել եւ մի ջրաղացքար: Մտածում են՝ դուռ եւ: Դնում եւ Թաթոն վոտքը ջրաղացքարի վրա. չարժվում եւ: Կռնում, բարձրացնում են քարը — բացվում եւ նրանց առաջ մի մութ ներքնահարկ: Մութ, խոնավ՝ փչում եւ դեմքերին թավ, խոնավ մի քամի: Նայում են ճրագով—աստիճաններ: Վերցնում են ճրագը և իջնում են վար: Ահա վերջանում են աստիճանները և դեմը խավար մի անցք տանում եւ ո՛ւր: Գնում են անցքով—դալիս, դալիս—լայնանում եւ անցքը: Յեւ ահա նորից—աստիճաններ: Յեւնում են վեր—և դուրս են դալիս հանկարծ... Կանգնած են Առաքելոց յեկեղեցում: Բեմը, խորանը ահա, վարադուլըն ահա — մութ կա-



պոռայտ վարադուր՝ վրան վոսկե մի խաչ: Ավագանը  
ահա, վորտեղ յերեսաներ են «կնքում»... Մնում են  
չվարած: Մոտենում են դռներին, ուզում են դուրս  
յեկնել — փակ է: Զարհուրած փախչում են յետ: Մի-  
կնույն անցքերով՝ քայլում, քայլում են յերկար և  
ահա նորից — աստիճաններ: Յեւ չանկարծ, գլխների  
վերեւում, վերը, ներքեւում, իրենց շուրջը, չորս կող-  
մը լսում են — խուլ, հեռու ջրերի խշոց: Յեւնում են  
աստիճաններով և դուրս են գալիս... Քիչ է մնում  
հովից ու խոնավությունից ճրագը մաքի: Ո՞ւր են —  
չեն հասկանում: Զգում են միայն, վոր կանգնած են  
բարձր մի տեղ, ինչ վոր զարհուրելի խոնավության  
վրա: Ներքեւում, վարը — գետ է, հեղհեղուկ հոսանք:  
Զրերի խշոց: Ու հորդ, հեղեղուկ հոսանքի վրա,  
վերը — յերկինք է. մութ, խոնավ գիշեր: Յեւ թաթոն  
հիշում է հանկարծ՝ կանգնած են ճիշտ այն բլուրա-  
նախն պարսպի մնացորդի վրա, գետի մեջտեղում: —  
Կամուրջն է. տեղացիք ասում են՝ Վարդանի կամուրջ:  
Ահա ջրերի միջից, վարը, յերգում են պառավները:  
յե՞րգ է, թե ջրերի խշոց: Ու հորդ, հեղհեղուկ խալա-  
րում շողշողում է վարը, ծփում է պսպղուն — ոճը,  
Կամուրջի բարի վոգին: Յեւ ահա խոնավ, խշացող  
ջրերի միջից յեկնում են, ահալոր բառաչում խոպոտ  
— ջրային գոմեշները. — ահ է, զաղբելի դարմանք...  
Արագ իջնում են վար, փախչում են անցքերով ու ելի  
ահա — աստիճաններ: Շատ են, ինչքա՞ն են շատ...  
Յեւնում են, յեկնում են, յեկնում են. և ահա — դուրսն  
են նորից: Շուրջը — յերկինքն է. աստղային մշուշ:  
Վարը — քաղաքն է յերեւի. առկայծում են դեղին,  
տարտամ կրակներ: Հեռուն, շատ հեռուն լսվում է

խուլ, տխուր — խշոցը գետի. վոտքերի տակ իրենց —  
բերդն է. քարե սնդուկները ծանր շնթուկել են, քնել  
են ահալոր: Կանգնած են իրենք բերդի ամենաբարձր  
աշտարակի վրա. փչում է սուր, սարսուռ, սառը մի  
քամի: Ու մոտիկ-մոտիկ ծածանվում է լաթի մի կտոր.  
դրոշակն է բերդի: Մութ է ափսոս: Յեթե ցերեկ լի-  
նե՞ր՝ կտեսնե՞յին գեղին կտավի վրա — յերկալիսանի մի  
արծիվ՝ վոսկենկար զարգանդ: Մութ է, գիշեր է, չի  
յերեւում: Փչում է կատաղի — հրում է քամին. հիմա  
կընկնեն: Ինչո՞ւ յեն աշտեղ — ինչ են ուզում: Սար-  
սափից խելագար՝ աստիճաններով կրկին իջնում են  
վար, ընկնում են գետնավոր անցքերք. վազում են  
չնչակտուր: Յեւ քրտինք կտրած, հանկարծ, յերեւի  
պատահամաճաճ — յեկնում են իրենց ներքնահարկը նո-  
րից. բարձրանում են թաքոյի սեյյակը և քնում են  
մեռելանման: Քնում են դառը, աներաղ, ծանր մի  
քնով, բայց առավոտը զարթնում են կայտառ, վոգե-  
վորված: Պատմում են բոլորին անցքերի մասին — և  
բոլորը մնում են ապշած ու չվարած: Լինում են մար-  
դիկ, վոր այդ պատահական գյուտը համարում են  
խորհրդավոր նշան, զարթնումի սկզբնավորում: Մոտ  
է — ասելիս են յեղել նրանք — վայրկյանը վերածնու-  
թյան: Յեւ կանչել են նրանք թաթոյին ու ընկերոջը.  
խստիվ արդեւել են այդ մասին զրուցել ու խոսել:  
Բայց հիմա, այդ նշանավոր անցքից քսան-քսանհինգ  
տարի հետո, բերդի, Առաքելոց յեկեղեցու և Վարդա-  
նի կամուրջի մեջ գտնվող այդ անցքերի և աստիճան-  
ների մասին — բոլորը, նույնիսկ յերեսաները գի-  
տեն: — Բայց այդ մասին, իհարկե, չեն խոսում  
յերբեք. այդ մասին խստիվ արդեւված է խոսել: Այն



եւ մոռացաւ ասեմ, վոր յերբ Թաթոյի և ընկերոջ անուշադիր լինելու շնորհիւ կառավարութիւնն իմանում եւ Առաքելոց յեկեղեցու դադարելը — խուս և Առաքելոց յեկեղեցին նայիրցիներէ ձեռքից, իսկ Թաթոն ու ընկերն աքսորվում են Սիրիւր և փախում են այնտեղի խոնավ դնդաններում: Ահա թե ինչ ե իրենից ներկայացնում Առաքելոց յեկեղեցին ... Յեւ զեռ յես այն եւ մոռացաւ ասեմ, վոր բացի վերահիշյալ հրաշքներից՝ նայիրցան արքաներ կան թաղված Առաքելոց յեկեղեցում և յերբ, յեկեղեցին դրավելուց հետո, սոխերը քանդել են յեկեղեցու հատակը—վեմբարի ներքեւում գտել են անթիւ—անհամար գանձեր ու անգնուբյուսներ... Եւ, հին ու մութ սլաքութիւնն ե, ընթերցող, — վո՞րը թվեմ: Գիտուն, խորամանկ, հարուստ ու հպարտ են յեղել նայիրցան արքաները. այդպիսի արքաներ հիմա չկան: Գիտուն, խորամանկ, հարուստ ու հպարտ են յեղել, բայց, դժբախտաբար, յեսական ու անմիաբան. յեթե վոչ ... ինչո՞ւ սլաքի կորչել արքայութիւնը նրանց և ավերակի վերածվել յերկիրը Նայիրի ... Ո՞ւր են հրաշագործ նայիրցիները հիմա — ո՞ւր ե հաղաբամյա Նայիրին... Չկա, վոչինչ չկա հիմա: Անդամ հնուց մնացած այդպիսի դարմանք — հրաշալիքներ ունեցող նայիրցան այդ քաղաքը, վոր առաջ արքայանիստ ե յեղել, մայր-քաղաք, համանի կենտրոն — այդ քաղաքն անդամ դարձել ե հիմա սոխերի տիրապետութիւնն որով — զավառական հետամնաց մի վորջ, ուր պատժվելու համար մայրաքաղաքներից աքսոր են ուղարկվում դանաղան զեղծումների մեջ բռնված ավաղակ պաշտոնյաներ...

Քաղաքի այդ յերեք հին հրաշալիքները նկարագրելուց հետո՝ անցնենք հիմա քաղաքի նոր հրաշալիքներին: Այդպիսով մենք կամաց-կամաց կմոտենանք քաղաքի առորյա կենցաղին և հետզհետե մեր դեմ կենեն հնամյա այդ քաղաքում այժմ ապրող բոլոր նշանավոր ու աննշան նայիրցիները — քաղաքի հիմնկվա բնակիչները:

Ամենամեծ նորութիւնը, վոր նայիրցան չե և նույնիսկ անընտել, անհասկանալի յե թվացել սկըբում տեղացիների աչքին — յերկաթուղադիծն ե՝ ձգված սոխերի տիրապետութիւնն որով, քսան տարի առաջ: Քաղաքի բնակչութիւնն կեսից ավելին դեռ մինչեւ հիմա յել հիշում ե անմոռանալի այն որը, յերբ անհայտ հեռուներից մինչև այդ քաղաքը ձգված յերկաթե դձերի վրայով առաջին անգամ մոտեցել ե գնացքը նորակառույց կայարանին: Յեղել ե — խնդուն խրախճանք՝ դարմանալի դարմանք: Յեղել են մարդիկ, վոր դարմանքից ու հիացմունքից չեն կարողացել խոսել. առնվել ե լեզուները դարմանքից ու հիացմունքից: Ծառերը հիշում են այն հետաքրքիր մանրամասնութիւնն անդամ, վոր գնացքի շողեկառը դարդարված ե յեղել ծառերով ու ծաղիկներով: Իսկ շողեկառքի ճակատին, ճիշտ լապտերի վերեւ, ծածանվելիս ե յեղել կապույտ մի դրոշակ՝ վրան վոսկինկաւր յերկաթի խառնի մի արծիւ: Այդպիսի ահա շուքով ու ցնծութիւն ե մոտեցել գնացքը քաղաքի կայարանին, վորտեղ քաղաքի համարյա ամբողջ բնակչութիւնը հավաքված ե յեղել—ուրախ, տոնական զեեստներով—գնացքին դիմաւորելու: Կայարանի առաջ նվաղելիս ե յեղել



ղինվորական յերաժշտախումբը և նրա մոտ կանգնած դիմավորել են դնացքը մի շարք պատկանելի նայիրցիներ և բարձրաստիճան պաշտոնյաներ. գավառապետը, ոգնականը, զինվորական ատյանի պետը, գեներալ Ալոշը, Մագուրի Համոյի հայրը՝ Առաֆել աղան — վրձը հիշես... Չնայած, սակայն, նրան, վոր այդ զարմանահիշատակ որվանից քսան-քսան յերկու տարի յե անցել, չնայած, ասում ենք, այդ յերկար ու ձիգ քսան-քսաներկու տարիներին — մինչև որս ել կան այդ քաղաքում շատ պատկանելի ու անպատկառ նայիրցիներ, վորոնք յերևակայում եք, վոր միայն դնացք չեն նստել, այլև նայում են շողեկառքին, վորպես մի դարմանալի հրաշքի։ Որինակ՝ քաղաքում ամենին հայտնի դադաղադործ Մեռելի Յեմոֆիմ Վինչե որս ել դարմանալի յե թվում, թե եղ ի՞նչպես են մարդիկ, անշունչ յերկաթների վրայով, անձի-անգամեշ վադոններին մեջ նստած՝ տեղից տեղ ճանապարհավում։ Դեռ մինչև որս ել կյուրակի որերը շատ անդամ կարելի յե հանդիպել յերկու պատկանելի նայիրցիներին, վորոնք կիրակնորյա պտույտի յելած (յերկաթուղու կայարանը քաղաքային այգուց հետո յերկրորդ դրոսավայրն և նայիրյան այդ քաղաքում) — կանգնել են յերկաթուղադծի առաջ և դրադված են այսպիսի մի զրույցով.

— Ես տնաքանդի սոխը տես մի ինչեր արաց... ասում ե մեկը, վորքով ծուլորեն խփելով յերկաթուղադծին և յուղոտ մի ժպիտ յերեսին՝ լսելով յերկաթուղծի ախորժ գնդոցը։

— Եսպես վոր նստիս — տեյի ո՞ւր կերթաս...

«Ուր որ կուզես», պատասխանում ե մյուսը։

— Մոսկով կերթա՞ս։

«Հըլբըթ կերթաս»։

— Կի՞վ...

«Կիվ ել կերթաս...»։

Ու տիրում ե լուսթյուն՝ ակնածանք ու զարմանք։

Յերկրորդ նորությունը, վոր նույնպես նայիրյան չե և դեպի վորը հատուկ մի ակնածանք են զգում բոլոր քաղաքացիներն անխտիր և վորով այնքան հիանում ե միշտ ծխական դպրոցի ուսուցիչ պ. Դրասսամատյանը — հիմզիարկանի այն հակա շինությունն ե, վոր կանգնած ե քաղաքի մեջտեղում, վորպես ահուկի մի վեհություն, քարե ակնածանք։ Այո, քարե մի ակնածանք, վորովհետև այդ շենքը բացի իր վիթխարի լինելը, նշանակալից ե և մի ուրիշ, ավելի կարևոր — ամենակարևոր հանգամանքի շնորհիվ, — այդտեղ — այդ միակ շենքումն են կենտրոնացած քաղաքի և նույնիսկ գավառի ամենաազդեցիկ հիմնարկությունները։ Այդտեղ են նստում՝ գավառապետը, վոստիկա-նապետը, — այդտեղ ե գորակոչային գավառական ատյանը և այդ շենքում են, վերջապես, գտնվում՝ փոստ-հեռագիրը և պետական գանձարանը։ Յեվ ելի՜ բոլորը չկարողացա թվել։ Մոռացա ամենակարևոր հիմնարկությունը — այն, առանց վորի այդ առասպելական շինությունն իր հմայքի և մանավանդ սարսափելի ակնածանքի կեսից ավելին կկորցներ... Բանն այն ե, վոր այդ հիշողահարկանի շենքի առաջին հարկում, միջանցքի ամենածայրը, կարելի յե ասել, շենքի ամենահետը կած անկյունում կա մի փոքրիկ սենյակ... Աստված չանի, ընթերցող, այդ սենյակն ընկնես. վոր ընկար — աղատվելիք չկա։ «Մուր տեղը» — այսպես են անվանում քաղաքացիք այդ սենյակը, թեկուղ սենյա-



կը բոլորովին լույս ե՛լ յերկու պատուհան ունի և յե-  
րեք ելեկտրական լամպ: Իսկի յ՛լ լուսավորություն  
չունենալը չէ, վոր դարձրել է սենյակը այդ խորհրդա-  
վոր ակնարկին արժանի, այլ թերեւս այն, վոր այդտեղ  
մտնողի աչքերը մթնում են սարսափից. ահա թե ինչ  
հատկություն ունի այդ խորհրդավոր սենյակը, սիրե-  
լի ընթերցող ... Յեւ մեծ չափով այդ սենյակին պետք  
է վերադրել այն խորհրդավոր հարգանքը, վոր զրուժ  
է ամեն մի քաղաքացի այդ շենքի մօտով անցնելիս:  
Յեւ նա չի՞ արդյոք պատճառը, վոր այդ հինգ հար-  
կանի տունը դարձել է մի ամենակարող կենտրոն,  
կամ, ավելի լավ է ասել առանցք, վորի շուրջն են  
դառնում քաղաքն ու դավաւը և չեն կարող չդառնալ:  
Այն միանգամայն ճշմարիտ ակսիոման, վոր տիեզեր-  
քում ամեն մի կետ կարող է կենտրոն համարվել —  
ամենայն հեշտությամբ հերքվում է այս դեպքում,  
ինչպես և բոլոր նման դեպքերում, յերբ խոսքը վե-  
րաբերում է վարչական և վոչ թե աստղային համա-  
կարգություններին: Այդ հինգ հարկանի շենքն է,  
այո, քաղաքի կենտրոնը և միակ կենտրոնը — և նա,  
այդ քաղաքը, միևնույն ժամանակ ուրիշ վա՛չ մի  
կենտրոն չի կարող ունենալ: Թող վորքան կուզե ծխա-  
կան դպրոցի ուսուցիչ ընկեր վառողյանը համոզե  
որիորդներին, վոր տիեզերքի նկատմամբ կենտրոն  
կարող է համարվել Բռչկա Նիկոլայի պանդուկը ան-  
դամ — թող ինչ ուղղում է ընկ. Վառդգյանն ասե —  
մենք չենք փոխի մեր կարծիքը և հաստատ կսնդենք,  
վոր հինգ հարկանի այդ տունն է, այո, միակ կենտ-  
րոնը նայիրյան այդ քաղաքի և ամբողջ դավառի և  
այնտեղից է, այո, վոր յեւնում են, ելեկտրական կա-

պուլտ կայծերի նման և տարածվում ամեն ուղղու-  
թյամբ — վնիռներ ու ֆակատագրեր: Ընկ. Վառդ-  
գյանն այդ բանը, իհարկե, մեղանից լավ գիտե, բայց  
նա որիորդներին հաճելի, հանդուգն, խիղախ յերեւա-  
լու համար սովիստություններ է առում: Յեւ ի՞նչ-  
պես կարող է ընկ. Վառդգյանն այդ չիմանալ, յերբ  
իր կաշվի վրա յե դեացել այդ ամենակարող կենտրոնի  
անմիջական ազդեցությունը: Հարկավոր է ասել,  
վոր «կաշվի վրա» դարձվածքը պետք է բառացի հաս-  
կանալ. ամենքին լավ հայտնի սրճարանատեր Տելե-  
ֆոն Սեքսոն — նա, վոր սրճարան ունի Լորիս-Մելիք-  
յան կոչվող փողոցի վրա, — յերգվում է Հիսուսի ա-  
նունով, վոր բաղնիքում պատահամբ տեսել է ընկեր  
Վառդգյանի կոնակի վրա ... հետաքրքիր հետքեր:  
Վո՞րտեղ, ասացեք խնդրեմ, յեթե՛ վոչ այդ ամենա-  
կարող կենտրոնում, կարող եր ընկ. Վառդգյանի կըռ-  
նակն այդպիսի հետաքրքիր դրոշմներ ստանալ՝ կա-  
պո՛ւլտ-կապո՛ւլտ գծեր: Իսկ յեթե ընկ. Վառդգյանն  
այդ ել չի ընդունում և խորհրդավոր կերպով ակնար-  
կում է իր «Ընկերութեան» անդամ լինելու հանգա-  
մանը ... դժվար է այդ դեպքում վորեւէ հակաճա-  
ռություն անել ընկ. Վառդգյանին: Նույնիսկ յերե-  
խանքը գիտեն, վոր «Ընկերութեանը» կենտրոնն է, մի  
ավելի ամենակարող և ահռելի կենտրոն, վոր սուլթան-  
ներ, չահեր և կայսրներ պիտ տապալե — այդ անդո,  
ավելի լավ է ասել մաքեմատիկական այդ «կենտրո-  
նը» ... Ասում ենք «մաթեմատիկական», վորովհետեւ  
ընկ. Վառդգյանի ասելով՝ ի նկատի ունենալով այն  
միանգամայն անհերքելի հանգամանքը, վոր հինգհար-  
կանի «կենտրոնը» կառուցված է վախի, բռնության,



արքան ու թյուրիմացութեան վրա, — «Ընկերութեան» կենտրոնը քարե յե, գրանիտե՝ կառուցված գիտական սոցիալիզմի անհողող հիմունքների վրա: — Ուրեմն յերկու անգամ յերկու հավասար ե չորսի պես պարզ պետք ե լինի, վոր վոչինչ ե հինգհարկանի կենտրոնը, իսկ «Ընկերութունը» — փաստ, անողոր ճշմարտութուն — մերկ ճշմարտութուն: Այսպես ե տրամաբանում ընկ. Վառուդյանը և նա իրավունք ունի. հարց բեր ամեն մի յերեխայի, այո, նույնիսկ յերեխայի, և նա անմիջապէս կերպով տեղն անգամ ցույց կտա այդ «Գերկենտրոնի» — այո. — Վարդանի կամուրջը: Այսինքն վոչ թե կամուրջը բառացի, այլ նրա դիմացը, գետափին շինված մի տնակ, վոր կիսաքանդ ե հիմա, ամբերակ, և վորի քանդելու խորհրդավոր պատմութեան հետ ե կապված ընկեր Վառուդյանի կռնակի պատմութիւնը...

Ահա՛ այդ պատմութիւնը, սիրելի ընթերցող:

Մի որ, այսինքն մի գիշեր, ժամը մոտավորապես յերեքին, քաղաքի բոլոր տների պատուհանների ապակիները հանկարծ զընդում են թափով և նույն վայրկյանին լսվում ե մի ահռեցուցիչ, ահռելի մի պայթիւն: Սարսափած քաղաքացիք դուրս են թափվում տներից և սկսում են դեպի դաշտը, դեպի գերեզմանոցը փախչել. կարծում են յերկրաշարժ ե, ժաժք՝ Աստծու պատիժ: Բայց այդ լուրը հերքվել ե չուտով և տարածվել ե մի ուրիշ սարսափելի կարծիք, վոր պայթել ե բերդը՝ ամբողջ բերդը մի ըոպելում թռել ե յերկինք: Շատերն ել այն կարծիքին են յեղել, վոր պայթել ե Առաքելոց յեկեղեցին. ամեն վոք գիտե,

վոր նրա վեմ-քարի ներքեում նայիրցի վարպետները պահած են յեղել հազար փութ դիմամիտ ... Իսկ հայտնի պանդոկատեա Բոչկա Նիկոլայը, նա, վոր հաշիվամարտէլի դուխան ե պահում Լորիս-Մելիքյան փողոցի վրա, ասել ե իր հարեան Մեռնի Յեմոֆին, վոր, յերեկ, պատերազմ ե սկսվել, բայց իրենք չգիտեն. հասարակ մարդիկ են — ի՞նչ իմանան: Բայց չուտով պարզվել ե, վոր վո՛չ բերդն ե պայթել, վո՛չ Առաքելոց յեկեղեցին և վո՛չ ել պատերազմ ե սկսվել: — Յերանի այդ լինելը — ինքն իրեն տղայաբար հերքելով ասում ե մինչև որս ընկ. Վառուդյանը, — բայց, մեր կարծիքով, բարեբախտաբար այդ չի յեղել, այլ պայթել ե, յերևակայում եք ... Վարդանի կամուրջը, այսինքն՝ վոչ թե ինքը կամուրջը, այլ նրա դիմաց գտնվող այն հողե խրճիթը, վորի մասին քիչ վերը խորհրդավոր կերպով հիշատակեցինք: — Խրճիթում պայթել ե յերեք փութ ... դիմամիտ ... ահա թե ինչ ... Յեվ հետեյալ որն այդ խրճիթի տակից գին-վորներն ու վոստիկանները հանել են չորս կիսավառ դիակներ, ամբել ճիշտ, դիերի մնացորդներ: Յեղել են՝ բոլորին ծանոթ Ղարաբաղցի Նիկոլը, ուսուցիչ, — Մշեցի Մարգարը, սրճատանատեր, — Ռուս Աբրահամը, դադտնի վոստիկանութեան պաշտոնյա, — և Վարժապետ Կարոն, — նա, վորի մասին խոսելիս ընկ. Վառուդյանը միշտ ակնածանքով ասում ե ընկեր Կարոն: — Ահա՛ թե ինչո՞ւ յե Ընկերութունը կենտրոն և նույնիսկ — Գեր-Կենտրոն, սիրելի ընթերցող: Յեվ ի՞նչ նշանակութիւն կարող ե ունենալ, բացի դրանից, այն հանգամանքը, վոր հողե այդ խրճիթում պայթած դիմամիտի սողեցութիւնը կողմնակի կեր-



պով արտահայտվել է ընկ. Վառուդյանի կոնակի վրա, վորպես կապույտ գծերի նրբահյուս մի նկար: Այն մյուս, սոխի գլխի չափ անդամ ընկ. Վառուդյանի աչքին նշանակութուն չունեցող «Դառնության կենտրոնում» (ինչպես անվանում է ինքը ընկ. Վառուդյանը հինգհարկանի շենքը), — յեղել է — հերոսական պայքար, անպարտ ընդվզում — մի կողմից (կարդա՛լ ընկ. Վառուդյանի կողմից) — իսկ մյուս (սոխի) կողմից — բռնություն, մղձավանջ, դեղին ստրկություն: Իջել է, իջել է, վորպես կարմիր ամոթ, «շամպայը» ընկ. Վառուդյանի կոնակին — և նա յեղել է վեր՝ դռնած, կարծրացած, — վորպես սրբած դաշույն՝ յեղել է դառնություն, զարանքի կենտրոնից, — հառնել է հաղթարան, նայիրյան ըմբոստ վողին ... Այսպես է յեղել:

Բայց մի բան դեռ մինչև որս էլ ընկ. Վառուդյանը չի կարող մոռանալ և իրեն ներել. այն, վոր աշտեղ «Դառնության կենտրոնում», կամ — ինչպես ժողովուրդն է ակնածանքով ասում — «մութ տեղը», — ինքը, ընկ. Վառուդյանը, ինչպես ծեծից անառ, նույնպես և, մանավանդ, ծեծի ընթացքում, յերեւակայո՞ւմ եք — զղջացել է յերեսայաբար, վոր ինքը խառնվել է, միանգամայն պատահական կերպով, այդ հիմար պատմությանը: Յեւ ի՞նչ է արել վերջի վերջո. մի միամիտ յերկտող է գրել ընկեր կարոյին և խնդրել է նրանից «Ամբոխային տրամաբանությունը» — ահա՛ և ամբողջը: Յերկտողը գտել են Կարոյի գրպանում և ինքը պետք է տուժե. ի՞նչ թյուրիմացություն: «Հիմար հեղափոխականի անգղուշություն», — մտածել է

զայրացած ընկ. Վառուդյանը փորձության վայրկյանին: — Յեւ նա յերկար ժամանակ չի ների իրեն վոչ-խարային այդ վախը, այդ ամոթաբեր թռչունությունը, վոր սե բիծ կարող է դնել ամեն մի իսկական հեղափոխականի անկաշառ խղճին: Փառք ասածու, վոր այդ մասին գտնե վոչ վոր չգիտե. ընկ. Վառուդյանը խոսք է տվել իրեն, վոր այդ սե արատը մի որ ըմանա իր խղճից մի իսկական հեղափոխական գործով, — բայց մենք արդեն չափազանց յերկարացրինք ընկ. Վառուդյանի խղճի պատմությունը. անցնենք քաղաքին:

Բացի հինգ հարկանի շենքից — այդ, այսպես թե այնպես — ամենակարող կենտրոնից — քաղաքում կան այստեղ ու այնտեղ հաստատված մի շարք ուրիշ, քիչ թե շատ նշանավոր և աննշան կենտրոններ, ինչպիսիք են՝ Հիվանդանոցը, քաղաքային խկումբը, տղայոց գիմնադը, իգական գիմնադը, քաղաքային և յերկու ծխական դպրոցները. մոռացանք հաշտարար դատավորի առյանը, բանտը և «հասարակաց տունը», վորի մասին խորապես խնդրում ենք ներողամիտ լինեք: Զորանոցները քաղաքին չեն վերաբերում. նրանք գտնվում են յերկաթուղագծի այն կողմը, գերեզմանատան մոտ, այնպես վոր այդ յերկու «հիմնարկությունները» թողնում ենք, միանգամայն հասկանալի պատճառով, անուշադիր: Քաղաքային հիվանդանոցն էլ, ասենք, համարյա թե քաղաքից դուրս է գտնվում, միհարկանի ծաղիկ մի տնակ և այդ, վոր գտնվում է քաղաքի ծայրում, մի ցեխոտ ու նեղլիկ փողոցի անկյունը՝ ինքն էլ ցեխոտ ու խոնավ, ինչպես այդ փողոցը: Հիվանդանոցի բժիշկ պ. Սերգեյ Կա-







նույնիսկ բավականին հուշակ եր վայելում մոչ միայն քաղաքի հետամնաց թաղերում, դեպի վորոնք հաճախ բժշկական տուրքներ եր կատարում բիթլիսցի Արշակը, կամ ինչպես գյուղացիներն եյին նրան հորջորջում՝ «դոխտուր Արշակը»: Պարբերաբար ամեն տարի Մեծ Պասի յերրորդ շաբաթվա յերկուշաբթի որը կարելի յեր տեսնել բիթլիսցի Արշակին՝ գյուղական յերկանիւ սայլի վրա նստած՝ դեպի մոտակա գյուղերը տուրքներ զնալիս, վորից նա միշտ վերադառնում եր ավազ յերեքշաբթի որը՝ նույն յերկանիւ սայլի վրա յուղ, պանիր, ձու և մի քանի սպիտակահեր դառնուկներ բարձած, վորոնցից բավականին պատկառելի մասը բժշկի տունն եր ուղարկւում, վորպես նրա յերախտապարտ ծառայի կողմից խոնարհաբար մատուցած զատ կահան «ռուշվաք» (նվիրաբերություն): Այնպիսի վոր բժիշկը իր այդ մարդասիրական քայլն անելու համար ամենայն բարոյական և իրավական իրավունք ունենալուց բացի՝ ի դեպս իր ամենավերջին պաշտոնյային ըստ արժանեաց վարձատրելով հանդերձ՝ ազատեց իր վտիտ ուսերը քաղաքային բժշկի չափազանց ծանր ու պատասխանատու պարտականությունների մի փոքրիկ մասից՝ ուսերի ազատ մնացած մասը տրամադրելով ընտանեկան վերահիշյալ դժբախտութեան ահռելի ծանրութեանը, վորը կրել կարողանալու համար ճիշտ վոր հարկավոր եյին այդպիսի քիչ թե շատ թեթևացնող միջոցներ: Յեւ վայր միջոցները դառնելու գործում, ասում են, մեծ բարոյական ոգնութիւն և ցուցց տվել բժիշկ Սերգեյ Կասպարովիչին նրա վաղեմի բարեկամ և թղթախաղային պարտնշոր՝ քաղաքի հաշտարար դատավոր պ. Ոսեփ Նարիմանովը, նա, վոր մոտիկ բա-

րեկամն և մի անգամ արդեն պատմութեան սկզբում հիշված, քաղաքի ամենահարգելի հարուստ գեներալ Ալոշի, վորի ասելով Ոսեփ Նարիմանովը «նոգի յե, իսկական հոգի»...

Նրա ատյանը դառնում և քաղաքի ամենամեծ — Ալեքսանդրյան փողոցի վրա: Մի թիթեղե ցուցանակ ունի, վորի վրա գրված և ուսեսերեն՝ «Հաշտարար դատավոր»: Ոսեփ Նարիմանովը նստում և այդտեղ: Նրա ատյանին կից յերեքհարկանի շենքը ռեալական դպրոցն և, նրանից յերկու տուն այն կողմը — որիորդաց դիմնադը, իսկ որիորդաց դիմնադից յերեք տուն այն կողմը — այն պալատ-չինութիւնն և, վոր պատկանում և մեզ արդեն բավականին ծանոթ գեներալ Ալոշին: Քաղաքի ամենամեծ հարուստն և գեներալ Ալոշը, վոր թեկուղ և գեներալ չե և վոչ ել զինվորական, բայց քաղաքում ունեցած իր դիրքի և ազդեցութեան շնորհիւ ստացել և այդ պատվավոր հորջորջումը: Իսկ գեներալ Ալոշի դիրքի մասին մոտավոր դատարար տալու համար բավական և ասել, վոր նրա բնակարանում և իջևանում նահանգապետը՝ ամեն անգամ այդ քաղաքն այցելելիս — ահա թե ով և գեներալ Ալոշը: — Հաշտարար դատավոր Ոսեփ Նարիմանովը, վոր ապրում և գեներալ Ալոշի պալատ-բնակարանի ներքեի հարկում, սիրում և պատմել ակումբում — նրա, գեներալ Ալոշի ներկայութեամբ, թե ի՞նչպես նահանգապետը, առաջին անգամ գեներալ Ալոշի բնակարանը մտնելիս, բարեհաճել և այն կարծիքը հայտնել, վոր այդպիսի մի ճաշակավոր բնակարան պատիվ կարող եր բերել... Կույնիսկ Պետերբուրգին, այո,



անգամ Պետերբուրգին ... Յեւլ այս պատմութիւնն անելիս հաճուքով չփշփայնում ե շրթունքները հաշտարար դատաւոր Ոսեփ Նարիմանովը, իսկ ներկա գտնվող զեներալ Ալոշը հաճուքից թարթում ե աչքերը ու նայում ե հատակին, համեստութեամբ ասես ուղղում ե գետինը մտնի: «Հոգի մարդ ե այդ Ոսեփ Նարիմանովը» — մտածում ե նա:

Յեւլ ճիշտ վոր՝ հաշտարար դատաւոր Ոսեփ Նարիմանովը, ինչպես ուսանելն են ասում, հոգի յե, կատարյալ հոգի: Չնայած, վոր նա ծնվել ե Հաշտարախանում, բայց, յերկարայում եք, այնպես ե ընտելացել նախորդան այդ քաղաքին, վոր ասես այդտեղացի լինի: Ահա սա յե պատճառը, վոր նա չատ գործեր՝ վեճեր, ընտանեկան կոխիւններ, ամուսնական անխորժութիւններ ե նման այլ ե այլ վորքիկ դատեր սիրում ե հարթել վոչ վորպես պաշտոնյա, այլ, այսպես ասած՝ ընտանեբար, կամ, ավելի ճիշտ՝ հայրաբար — վորի համար ե նա ամենաիրաւացի կերպով վայելում ե բոլոր քաղաքացիների հարգանքը, իսկ շրջակայքում բնակվող գյուղացիները կողմից այդ հանդամանքն արտահայտվում ե, վորպես խորին ակնածանքով նվիրվաբերած մի քանի տասնյակ ձու, տասն-տասներկու Փունտ «անֆաշ» պանիր, կամ, յերբեմն ել, յեթե դործը քննվում ե զատկական տոների նախորդակին՝ մի-յերկու գառ կամ ուլ: Նա չի սիրում գործերը ձգձգել՝ զգվում ե պաշտոնական յեռուղեով: Ոսեփ Նարիմանովն այդպիսի մարդ չե ե չի յեւ ուղղում լինի: Յեթե նա հնարավորութիւն ունենար ե մի քիչ ել ֆիզիկականը ներեր — ամենամեծ ուրախութեամբ

կթողներ քաղաքն ել, հաշտարար դատաւորի պաշտոնն ել ե վորեւ մի գյուղ կտեղափոխվեր՝ յերկրագործութեամբ զբաղվելու: Ունի Նարիմանովը շատ ե սիրում յերկրագործութիւնը, մանաւանդ այդ աստվածային զբաղմունքի կենարար բարիքները ե հողային հարցի մասին սիրում ե հայտնել բավականին ազատամիտ կարծիքներ: Հետաքրքիր անձնավորութիւն ե Ոսեփ Նարիմանովը — Ոսեփ Նարիմանովին հարկաւոր ե հասկանալ:

Հաշտարար դատաւորի ատյանին կից շենքը, ինչպես ասացինք, ռեալական դպրոցն ե, իսկ յերկու տուն այն կողմը որիորդաց գիմնադը: Հարկաւոր ե ասել, վոր քաղաքի այդ մասը ներկայացնում ե իրենից — իսկական մի «կրք-ական կենտրոն»: Յերկու դպրոցի յեւ շենքերը պատկանում են մեղ արդեն հայտնի զեներալ Ալոշին ե ամեն առավոտ, յերբ նա հաշտարար դատաւոր Ոսեփ Նարիմանովի հետ անցնում ե դպրոցների առաջից — ռեալական դպրոցի տեսուչ Արամ Անտոնիչ — «Փուխը» (այսպես են անվանում դպրոցի տեսուչ Արամ Անտոնիչին չարածճի աշակերտները՝ նրա վորի բավականին պատկառելի մեծութեան պատճառով) — բացականչում ե վերից՝ տեսչանոցի պատուհանից. — խորի՞ն հարգանքներս Ալոշա Նիկիտիչին. Ոսեփ Կարպիչին — նույնպես»: Դպրոցի աշակերտները շատ անգամ են լսել իրենց խոթող տեսչի սիրալիր այս բացականչութիւնը վերոհիշյալների հասցեյին — ե թերեւ մի քիչ ել այս ե պատճառը, վոր նրանք, դպրոցի աշակերտները, մի առանձին հարդանք են տածում դեպի զեներալ Ալոշը ե Ոսեփ Նարի-



մանովը: Ասում եմ «մի քիչ», վորովհետեւ հիշյալ պատկառելի քաղաքացիներին հարգելու ուրիշ պատճառներ և միանգամայն արդարացի հիմքեր ևս ունեն ունեւորական դպրոցի չափահաս աշակերտները: Յերբ, Ձատկին կամ Ծննդին, դպրոցական յերեկույթներ են լինում դպրոցի սրահում—ո՞վքեր են բաղմում առաջին կարգի նստարանների վրա, դավառապետի կողքին — Գեներալ Ալոշը և Ոսեփ Նաբիմանովը: Յեւ յերբ տոնածառի լուսադարձ ճյուղերից կախված չաքարե թիթեռնիկներն ու գույնգույն կանֆետները ստանալուց հետո աշակերտները գնում են տուն և միայն հյուրերըն ու ուսուցիչներն են մնում ընթրիքի — ո՞վքեր են բացակայում միշտ՝ յեղնում են սեղանի վրայից ու քչիչալով շրջում մութ դասարաններում. — տեսչի կին Ոլգա Վասիլևնան — Շիկախեր Դդուսը (ինչպես անվանում էյին նրան աշակերտները) և Ոսեփ Նաբիմանովը — մեկ, — և հետո՝ Ալոշա Նիկիտիչը՝ մերթ որիորդաց գիմնազիայի վարժուհի վառյա-հոգյակի հետ թեանցուկ, մերթ եւ՝ թվաբանության ուսուցիչ Բարսեղ Արզարիչի կնոջ — «Ճուտ»-ի իրանը գրկած: Այս խմբին իր սեփական աչքերով տեսել ե հինգերորդ դասարանի աշակերտ վարդանյան Սերգուշը և պատմել ընկերներին ամենայն մանրամասնությամբ: Իսկ նման գեպերից մի չարաթ անց սովորաբար ունեւորական դպրոցի և որիորդաց գիմնազի արտաքնոցի պատերին լույս են տեսնում վերոհիշյալ անցքերին վերաբերյալ բավականին հետաքրքիր հանգամանքներ և անհանգ հրույթյուններ, վորոնք շատ շուտով տարածվում և բերանից-բերան են անցնում վոչ միայն հիշյալ դպրո-

ցի պատերում, այլ այդ պատերից բավականին հեռու գտնվող շատ և շատ ընտանեկան հարկերի ներքո, նույնիսկ Տելեֆոն Սերպի արձարանում: Յեւ արդյոք նրանք չեն մեղավոր (գեներալ Ալոշը և Ոսեփ Նաբիմանովը), վոր մինչև որս ել «պսակի չարժանացած» ծխական դպրոցի ուսուցչուհի որ. Սաքոն ունի ընդամենը հինգդասյան կրթություն և վորպես վոչ-միջնակարգավարտ ստանում ե պակաս ուժիկ. նրանք են. — նրանք են միշտ՝ գեներալ Ալոշը և Ոսեփ Նաբիմանովը: — Հետաքրքիր քաղաք և նայիրյան այս քաղաքը և բաղում խորհրդավոր ու հետաքրքիր գեմքեր ու պատմություններ ունի...

Սակայն վերոհիշյալ պաշտոնական կենտրոններից ստելի հետաքրքիր և ուշադրավ են քաղաքի, յեթե կարելի յե այսպես արտահայտվել՝ «անսլաշտուն» կենտրոնները, թեպետ և նրանք, ըստ մեծի մասի, չեն վայելում հանրության կողմից այն խորհրդավոր հարգանքը, վոր վիճակվել ե պաշտոնական կենտրոններին: Բայց ինչո՞վ, ինչո՞վ ե պակաս և ինչո՞ւ համար հասարակական հիմնարկություն չպետք ե համարվի թեկուզ հենց, որինակի համար, յեկեղեցական մումավաճառքի խանութը, վորտեղից դուրս յեւած բոլոր մոմերը կնքված են լինում, այո, — իսկական նայիրյան կնիքով: Կրկնում եմ՝ իդուր են միամիտ քաղաքացիք յեկեղեցական մումավաճառքի խանութի վրա աչքի ծայրով նայում. նա կենտրոն ե, և վորքան ել ասածս չափադանցություն թվա — կարևոր կետքոն: — Յեկեղեցիներին և ծխական դպրոցներին վերաբերյալ բոլոր խնդիրներն այդտեղ են արծարծվում և սանկիա



ստանում: Մոմավաճառքի՝ արտաքինից այդ քոսոտ խանութը, վոր այնպես համեստ պահվել է փողոցի ամենախուլ անկյունում — եյապես այն նշանակալից դերն է խաղում քաղաքի հասարակական կյանքում, ինչ դեր վոր խաղում են քաղաքակրթված յերկրներում քաղաքական ակումբները և սալոնները: Յեւ այդպիսի մի դեր խաղալու համար ամեն հարմարություններ ունի մոմավաճառքի խանութը. — տաք է, քաղաքի կենտրոնում է գտնվում և, վոր ամենակարեւորն է՝ ազատ է կողմնակի այցելուներից. չարածր մի, կամ չատ-չատ յերկու այցելու հաղիվ է մտնում այդ խանութը մոմ գնելու նպատակով, այնպես վոր վոչ մի կողմնակի անձնավորություն չի խանդարում այդտեղ հավաքված վարժապետներին և հոգաբարձուներին: Յեւ նրանք ել, լիովին ոգտվելով խանութի այդ հարմարություններից՝ հաճախ նարդի, կամ քուլք են խաղում վորեւե ուտելիքի կամ մի-յերկու շիշ գինու վրա. ով վոր տարվեց — դնի: Բայց գիտե՞ք, թե ինչո՞ւ, ի միջի այլոց, մոմավաճառքի խանութը կողմնակի այցելուներ չունի: այդ մասին կարող է տեղեկացնել քաղաքում շատ հայտնի սրճարանատեղ Սեթոն, վոր ամեն ինչից տեղեկություններ ունենալու շնորհիվ քաղաքացիների կողմից արժանացել է «Տեխնոն Սեթո» հորջորջման: Այդ հարգելի քաղաքացին պատմում է, վոր յերբ կոչկահար Սիմոնի յերեսան կնշխիս ինքը, վորպես կնքահայր, ուղեցել է մտնել մոմավաճառքի խանութը մի զույգ կերոն գնելու — Գեորգ յեկեղեցու քահանա տեղ Հուսիկ — Խաչազարդ գղույ՝ քաջել է նրա փեշից. մոմավաճառքից կերոն գնելու վոչ մի կարիք չկա, — ասել է տեղ Հուսիկ

խաչազարդ Տեխնոն Սեթոյին, — կարող է յեկեղեցուց վերցնել. թե եթան կնատի և թե յեկեղեցին կողտըլի, ասել է Տեխնոն Սեթոյին տեղ Հուսիկ քահանան: Ահա թե ինչու աղջային այդ հիմնարկությունը յեկեղեցական մոմավաճառքի խանութը — այցելուներ չունի:

Բայց վորպես մի իսկական «քաղաքական ակումբ» — և այն ել վոչ միայն վարժապետների և հոգաբարձուների, այլ և աղջային գործերով բոլոր հետաքրքրվողների համար, — վորպես այդպիսի ահա մի հասարակական կենտրոն հայտնի յե քաղաքում «Լույս» նավթարդյունաբերության ընկերության այդտեղի ներկայացուցչի գրասենյակը, — մի հիմնարկություն, վոր ամենայն իրավունքով կարող եր անվանվել «Նալիբյան գործերի կենտրոն»: Յեւ այդ ել՝ «Լույս» ընկերության ներկայացուցիչ Համո Ասատուրովի շնորհիվ, այն Համո Ասատուրովի, վորին, նավթի հետ գործ ունենալու պատճառով, քաղաքում կարճ անվանում են — «Մագուրի Համո»: Չնայած այն հանգամանքին, վոր «Լույսի» ներկայացուցիչ Համո Ասատուրովը — Մագուրի Համոն — գավառապետի ամենամոտիկ բարեկամն է նրա տարիքավոր կնոջ՝ Ագրիպպինա Վլադիսլավովնայի միակ միսթարանքն այդ «տաղտուկ, զզվելի, հիմար քաղաքում» — մյուս կողմից՝ չնայած վոր գավառապետն իր հերթին մշտական հյուրն է Համո Համբարձումովիչի հյուրընկալ ընտանիքում՝ մանավանդ յերբ տանն է լինում վոչ թե ինքը Մագուրի Համոն, կամ նրա կինը՝ Անգինա Բարսեղովնան, այլ նրանց աղջիկը՝ տասնութ տարեկան «սևաչյա պրիմադոնան», — չնայած, կրկնում ենք,



Մազութի Համոյի ընտանեկան այս բարդ հանդամանքներին—գուցե և շնորհիվ հենց այդ հանդամանքներին— Մազութի Համոն և և կմնա միակ կենտրոնական անձնավորութիւնը մայիրյան այդ քաղաքի — և վոչ մի ազգային, կամ հասարակական խնդիր չի կարող արծարծվել կամ ընթացք ստանալ առանց նրա, Մազութի Համոյի, սանկցիայի: Վորովհետեւ, բացի վերոհիշյալ հանդամանքները, Մազութի Համոն ամենախեղացի և գործունեյա անձնավորութիւնն է ամբողջ քաղաքում, դիրքի տեր է, ուժեղակալոր պաշտոնյա յե թեկուզ՝ բայց սեփական տուն ունի և մի քիչ եւ հող,— մի խոսքով՝ հարուստ է, խելացի, հասարակական լայն կապեր ունի, և, վոր ամենագլխաւորն է՝ Մազութի Համոն անդամ է ... «Ընկերութեան» և այն եւ՝ ազդեցիկ անդամ ... Չե՞ք հաւատում.— բայց յես այդ ամենահասարատ աղբյուրից գիտեմ: Հայտնի յե և այն, վոր նա, Մազութի Համոն, արտասահմանից «Իրոշակ» է ստանում և գաղտնի կերպով տարածում ժողովրդի ստորին խավերում: Յեւ այս հանգամանքը վոչ միայն ինձ, հասարակ մահկանացուիս, և հայտնի, այլ և նույնիսկ իրան — գալառապետին, — և այս է ահա ամենազարմանալին: Դաւառապետը Համո Համբարձումովիչի հեղափոխական գործունեյութեան վրա մատների արանքից է նայում և, հայտնի չե թե ինչու, նրա հեղափոխական գործունեյութեան վրա մատների արանքից է նայում, և հայտնի չե թե ինչու, նրա հեղափոխական գործունեյութիւնը համարում է «միա-միտ չարանիութիւն»: Համո Համբարձումովիչը կրակ էլ լինի — հողի յե և միանդամայն անվնաս անձ-

նավորութիւն,— ասում է դաւառապետը: «Դուք է յեկել մարդուն» — մտածում են քաղաքացիք.— «Ի՞նչ ասես»: Բայց թե իրոք վորքա՞ն է դուր յեկել դաւառապետին Մազութի Համոն — դժվար է մի քիչ պատկերացնել. քանի վոր հայտնի յե բոլորին, վոր Վարդանի կամուրջի դիմացը գտնվող այն հողե խրճիթը պայթեալ ժամանակ, յերբ գործը պետական քննութեան հանձնից՝ վարժապետ Կարոյի դրպանում գտնվեցին ... Մագութի Համոյի ձեռքով գրված մի շարք նամակներ ... Յեւ յեթե դաւառապետը չլիներ և չծածկեր այդ գործը — Համո Համբարձումովիչը հիմա Սիբիրում կլիներ, Մազութի Համոյի վոսկորներն անդամ հիմա փոած կլինեյին...

Բայց արի տես վոր՝ չնայած Մազութի Համոյի այդքան մեծ դիրքին ու հռչակին, մի ժամանակ քիչ մնաց, վոր նրա գրասենյակը, վորպես «մայիրյան գործերի կենտրոն», իր առաջնութիւնը զիջեր — յերեակայում եք՝ Ալեքսանդրյան կոչված փողոցում գտնվող չնչին մի խանութի, վորի ցուցանակի վրա նկարված կային հրացան, յերկու փայտեղ նապաստակներ, մի ձիու պայտ և մի հատ եւ չգիտես — ձիու թե շան գլուխ՝ պայտի մեջ մտցրած: Այսպիսի մի նշանավոր ցուցանակ ուներ այդ խանութը և ցուցանակի վրա, վերոհիշյալ նկարների մեջտեղը, գրված էր ռուսերեն՝ Магазин «Охота» Ншан Маранкозьян. Այս նշանավոր ցուցանակը կպցրած էր խանութի ձա-կատին, սակայն խանութի լայն վիտրինի աջ և ձախ կողմը կպցրած կային յերկու ուրիշ ցուցանակներ, վորանց վրա թեկուզ նկարներ չկային, բայց գրութիւն



նը հայերեն եր «Ծախում եմ վորսորդական գանազան» — գրված եր մեկի, և «Ասլրանգներ Նշան Մառանկոզյան» — մյուսի վրա: Վորսորդական ապրանքներ վաճառող Մառանկոզ Նշանի այս չնչին խանութն եր ահա, վոր մի ժամանակ մրցել եր ուղում Մազութի Համոյի գրասենյակի հետ և կամենում եր դառնալ ... «Նայիրյան գործերի կենտրոն»։ — Ծիծաղելի յե, չե՞: Բայց Մառանկոզ Նշանի այդ անխոհեմ վարմունքը, ինչպես և կարելի յեր յենթադրել, վերջացաւ կատարյալ անհաջողութեամբ և գործի նման վախճանը Մառանկոզ Նշանի համար ունեցաւ բաւականին վողբերդական նշանակութիւն ... Գործիչ ընկերների մշտական յել ու մոտը և գործնական հաւաքութենքն ի վերջո հիմնովին քայքայեցին Մառանկոզ Նշանի տնտեսական-փրկանականը, վորովհետեւ հո չե՞ր կարելի հաւաքել մարդկանց և դատարկ զրույցներով կերակրել, հարկաւոր եր և վորոշ հյուրասիրութիւն, ինչպես այդ ընդունված ե բոլոր քաղաքակիրթ յերկրների քաղաքական ակումբներում. մի բաժակ թեյ, մի-յերկու ֆունտ խաղող, մի թաս արաղ կամ գինի, իսկ յերբեմն ել, փոփոխութեան համար — մի-յերկու ուշումկա կոնյակ: Մի ամիս միայն Մառանկոզ Նշանի անտեսականը կարողացաւ դիմանալ գործիչ-ընկերների բարձրադատիւ գրոհին. մի ամիս միայն նրա խղճուկ խանութը կարողացաւ «նայիրյան գործերի կենտրոն» հանդիսանալու բարձր պատվին արժանանալ: Մի ամիս հետո, ցավոք իր սրտի և ի մեծ հաճույք Մազութի Համոյի — Մառանկոզ Նշանն ստիպված յեղաւ ծախել իր խանութը, թեկուզ բան ել չեր մտացել, ինչպես ասում են, ծախելու, — և գնաց

Պուլկարիա՝ ամբողջովին հեղափոխական գործին նվիրվելու: Յեւ հիմա նրա խանութը, թեկուզ ցուցանակները դեռ մնացել են անփոփոխ, միայն հիասթափութիւն կարող ե առաջացնել, յեթ մեկը՝ ցուցանակներին նայելով, ներս մտնի վորսորդական պիտույքներ գնելու: Ներս մտնողը հիմա այդ նշանաւոր խանութում կտեսնի — նախ՝ խանութի մի պատից մյուսը ձգվող փայտե մի նեղ դազգահ, վոր խանութը բաժանում ե յերկու անհավասար մասի, իսկ դադդահի այն կողմը՝ դեմը, կողք-կողքի շարված՝ թիթեղե մի չիւսացի, ձեռքին կլոր մի վահան, — աստորիական, նույնպէս թիթեղե, կանաչագույն մի զինուոր, նույնպէս վահանը ձեռին, — ֆեսսաւոր մի ասկյար, նա յել թիթեղե ու վահանաւոր, — և մի շարք ուրիշ նման աբարաններ — բոլորը քիթեղե, բոլորը վահանաւոր: Իսկ խանութի առաստաղներից այդ թիթեղե արարածների գլխին բարակ թելերով կախված դույնդույն ձգվերն ու լուցկիները, խորքում, դիմացի պատին հենած կարտոնե դեկորացիան, վոր իբր թե անտառ ե ներկայացնում, դադդահի վրա գրված հսկա գրամափոնը և բախտախաղի կլոր սեղանը՝ վրան եժանադին սպորտներ, աղամաններ և մի քանի հատ թղթադրամներ շարած — այս բոլոր հեքիաթային յերևույթները հասկանալու համար հարկաւոր ե դիտենալ, վոր Նշան Մառանկոզյանի այնքան նշանաւոր, պատմական անցյալ ունեցող հեղափոխական խանութում հիմա մեզ արդեն հայտնի Բիքլիսցի Արշակի յեղբայրը՝ Ամերիկայից վերադարձած Բիքլիսցի Մանուկը հիմնել ե «Տիր» կոչված հիմնարկութիւնը, վոր վերջին նորութիւնն ե, նայիրյան այդ քաղաքի վերջին ամերիկա-







ՂԱՇՎԵ. ԶԱՅ. ԶԱՇԱՐԱՆ  
ՍԵՅՐԱԿ ՖԱԼԻԱՆ

Թողնենք, ուրեմն, բոլոր այդ կենտրոնները և անցնենք քաղաքի առօրյա կենցաղին:

Ինչպես ամեն տեղ աշխարհիս յերեսին, այնպես ել նայիրյան այդ փողբլիկ քաղաքում — կանուխ, մութլուսուն յեկնում ե նայիրցի խանութպանը, վրմն կաքապետյան կամ Մարտիրոսյան, իր տնից, և դնում ե դործի: Քաղաքի առևտրական մասը Լորիս-Մելիքյան կոչված փողոցն ե, ուր յերկու շարք կողք-կողքի ձգված են ցածլիկ, միհարկանի խանութները՝ յերկար-յերկար — մինչև կայարան: Քաղաքի ամենաբանուկ փողոցն ե այդ և վրապես այդպիսին՝ ամենափոշոտն ու ամենացեխոտը: Յեթե անձրևային ե լինում յեղանակը՝ փողոցի մի մայթից մյուսն անցնելու հասարակապետը ե ձեռք քաշել կրկնակոշիկից կամ մար հարկավոր ե ձեռք քաշել վոտքիդ. անպայման ցեխում կոշիկից, յեթե մեծ ե այն վոտքիդ. անպայման ցեխում կմնա: — Այդ փոշոտ, ցեխոտ, նեղլիկ փողոցում են կենտրոնացած քաղաքի առևտրական հիմնարկությունները և ուրիշ վոչ մի տեղ, յեթե, իհարկե, չհաշվենք թաղերում դստվող այն մի-յերկու տուն-խանութները, վրոնցում առևտուրը տեղի յե ունենում նահապետական ձևով՝ ապրանքների փոխանակությամբ: Մի ձուն — մի ասեղ՝ ահա այդ խանութները առելատուրը:

Ինչպես ասացինք՝ առավոտ կանուխ, համարյա մութլուսուն, յեկնում ե նայիրցի խանութպանը տնից

և դնում ե դործի: Նա — ահա անցնում ե առավոտվա մշուշի միջով, յեկնում ե մշուշից՝ միջահասակ, ծուռ, աջ ուսը միշտ մի քիչ բարձր ձախից. մոխիրե ուրվահան: Լուրջ ե՝ դեմքը թուխս նստած հավի յե նման. հոգսեր, հոգսեր, հոգսեր — աշխարհի հանելուկ: Յեկնում են, յեկնում են տներից ու քայլում են դանդաղ, անշտաղ, ու բացվում են խանութներն իրար յետևից. հացադործ, մանրավաճառ, կոշկակար, կողքին՝ մրդեղենի խանութ, կողքին՝ կտորեղեն, խալիներ, բրինձ: Համարյա վոչ մի խանութ չկա, վոր մի դործով զբաղվի. հացթուխի խանութում միևնույն ժամանակ նավթ ել ե ծախվում՝ Մաղութի Համոյից մի փութ նավթ ե դնել և դրվանքաներով ծախում ե ուղողին: Կտորեղեն ծախողը — հակերով բրինձ ե վաճառում, կամ շաքար, կամ լուցկի: Խանութը կոշկակարի յե, բայց խանութի անկյունում դրված ե մի սեղան, վորի դեմը կանգնած յեկվոր մի նայիրցի վարսավիր ե, բայց պատուհանի առաջ, անկյունում, աղնոցավոր մի մարդ սեղանի դեմը նստած՝ ժամացույցներ ե անտղում. ժամադործ ե:

Կամ այստեղ, նպարավաճառի կողքին, աղյուսե բավականին բնորոշակ խանութ ե ահա. մեծ, ապակեպատ դռներով, նույնիսկ վիտրին ունի, ուր շարված են՝ տղամարդու և կանացի պատրաստի կոստյումներ, յանրեր, մկրատներ, արտասահմանյան ոծանելիքներ: Իսկ ցուցանակը՝ Փարիզից ե բերված. — սե Ֆոնի վրա վոսկեզոծ տառերով դրված ե Փրանսերեն՝ «A bon marché»: Տերը յերեսունն անց ստիբլած յեվրոպացի յե՝ պինսնեն նայիրյան քիին,



անրեխ-անմորուք. դերասան ե ասես, վոր դրաղվում ե առևտուրով: Նրան անվանում են քաղաքում — պ. Արամարշ:

Արամարշի հարեանը սափրիչ ե. յեվրոպական վարսավիր, ինչպես հայտարարված ե նրա ցուցանակի վրա: Անունն ե պ. Վասիլ: Միջահասակ ե, լայնաթիկունք. չիլ աշտեր ունի, դեղին մորուք: Սիրում ե ածիլելիս շրթունքներն այնքան մոտեցնել սափրվողի դեմքին, վոր նրա մասին քաղաքում պատմում են դանդաղ առասպելներ:

Նրա հարեանը — կոչկակար ե, հայտնի յե քաղաքում, վորպես սքանչելի «կիմտաուրի» պարող: Բարեկենդանի հինգ շաբթի յերեկոները, յերբ քաղաքի ալումբում, վոր մի փոքր բեմական հարմարություն ունի, վորեւե յեկվոր մի դերասան տեղական սիրողներին հետ խաղում ե «Վարդանանց Պատերազմը» — բոլորը գնում են ալումբ վոչ այնքան «Վարդանանց Պատերազմը», վորքան կոչկակար Սիմոնի «կիմտաուրին» տեսնելու: Բոլորը սիրում են նրան, բացի վարսավիր Վասիլից, վոր չարախնդարար անվանում ե նրան կամ «կիմտաուրի Սիմոն», վոր դեռ ելի վոչինչ, կամ... «կուրի մեյմուն». — կատարյալ խայտառակություն:

Բայց ամենից հետաքրքիրը կոչկակարի հարեանն ե՝ պարսկաստանցի մի վաճառական, վոր դրաղվում ե դորդի, քիչմիշի, մորթեղենի ե շաքարի առևտուրով: Յեթե խանութը մասնե՝ կտեսնեք. — դորդեր, դորդեր, դորդեր՝ հին, փոշոտ, դանազան: Աղվեսի, սանսարի, վաղրի ու արջի մորթիներ: Պարկերով իրար վրա դարսած շաքար: Արկղներով քիչմիշ: Մեծ խա-

նութ ե. Պարսկաստանի ե Յեվրոպայի հետ առևտրական կապեր ունի:

Հարեան խանութը — մեզ արդեն բավականին ծանոթ Ղահվեմի Սեքոյի խանութն ե, ուր նա չոր սուրճ ե ծախում: Ինչպես այս խանութը, այնպես ել իրան՝ Ղահվեմի Սեքոյին չպետք ե շփոթել Տելեֆոն Սեքոյի ե նրա այն հայտնի սրնարանի հետ, վորը գտնվում ե մի քանի խանութ այն կողմը, ե վորի ցուցանակի վրա, ինչպես ասված ե արդեն, գրված ե՝ «Չայ, Ղահվե, շաշարան, Սեքրակ Գալիան»: Չնայած վոր յերկուսի յել անունը Սեթո յե ե յերկուսն ել դորձ ունեն սուրճի հետ, սակայն մեկը չոր սուրճ ծախող ե, իսկ մյուսը — սրնարանատեր: Բացի այս, — չհաշված այս յերկու արդո նայիրցիներին հիշյալ դուռպրոֆեսիոնալ տարբերությանը՝ նրանց մեջ կա ե, յեթե կարելի յե այսպես ասել, անմնական տարբերություն. — Ղահվեմի Սեքոն միջահասակ ե, դիրուկ, անրեխ-անմիրուք, թորոշմած դեմք ունի, ներքինուկերպարանք. — այնինչ Տելեֆոն Սեքոն չոր ե, բարձրահասակ, գլուխը փեսի յե նման, չոր բխեր ունի, ցանցառ միրուք, այծի կերպարանք: Յեվ վերջապես, տարբեր ե այս յերկուսի, այսպես ասած՝ հասարակական դիրքը. — Ղահվեմի Սեթոյի խանութը — անշահ մի վորջ ե, մի վողորմելի անկյուն, ուր մկները միայն կարող են հավաքվել, յեթե միայն նրանք, այսինքն մկները, ընդհանրապես կարող են հետաքրքրվել չոր սուրճով, — այնինչ Տելեֆոն Սեթոյի սրնարան-ճաշարանը, թեկուզ ե «ճաշարան» բառը զուր տեղն ե տեղ գրավել նրա ցուցանակի վրա, քանի վոր այդտեղ վոչինչ ել չի տրվում, բացի սուրճից ու



թեյից, — բայց, չնայած դրան, այդ սրճարանը նույնն է քաղաքի ցածր խավերի համար, ինչ վոր է վերին խավերի համար Մաղութի Համոյի գրասենյակը. — քաղաքական ակումբ է, հատարյալ ակումբ:

Հաջորդ խանութը ... Այդտեղ Հաջի եֆենդի Մանուկոֆը մանուփակուրա յե ծախում, այսինքն Սամաղանդի փուշիներ, զանազան կերպասեղեն (չիք, յազմա, չլվարի), «բրոցկի», շաքար, «լապշիկ» լուցկի: Միևնույն ժամանակ սարափություն էլ է անում. անդրերն զխտե և վորպես միակը քաղաքում՝ վայելում է քաղաքացիների առանձին հարգանքը: Կատաղի հայասեր է Հանի Ոննիկ Մանուկոֆ եֆենդին, ինչպես իրեն սիրում է հորջորջել հենց ինքը՝ այդ հայտնի հայտները:

Խանութները շատ են, բոլորը հո չի՞ կարելի թվել. մենք պատահամբ մի քանիսի մասին միայն յերկու խոսք ասացինք: Մնացածների մասին թող նրանց ցուցանակներն ասեն՝ ճիշտ այն հերթով, ինչ հերթով վոր շարված են նրանք Լորիս-Մելիքյան փողոցի մի ծայրից մյուս ծայրը՝ մինչև կայարան:

«Մանրուքի խանութ. Պողոս Կոլպոտյան» — «Գինի, արաղ, կոնյակ. Համբարձումով Նիկոլայ» (սա իր բավականին ընդարձակ փորի պատճառով քաղաքում հռչակում է բոչկա-Նիկոլայ) — «Պագաղագործ. Ընդունում եմ պատվերներ. Յենոֆ Կարապետյան» (սա հենց ինքն է՝ Մեռնի Յենոֆը) — «Ճաշարան Յեվդուպա». Յեգոռ Արգումանով — և ելի մանրավաճառ, կոշիկակար, մանրավաճառ, վարսավիր, մանրավաճառ, մանրավաճառ և հանկարծ — «Դեղատուն Ժգեմուխ» —

ու ելի՝ մանրավաճառ, ու ելի՝ մանր, մուկեր խանութներ — մինչև կայարան:

Կանուխ, մութլուսուն, բացվում են խանութներն իրար յետևից — ու ծուլ, դանդաղ, միասպաղաղ՝ սկսվում է քաղաքի գործնական յեռուզեռը՝ գործնական առոյթյան:

Սովորաբար առավոտվա այդ վաղ պահերին մայրերը բավականին դատարկ են լինում, այնինչ փողոցի մեջտեղով, խուռն ու բազմերանդ, հոսում են բավականին սալար բաղմոթյուններ: Անցնում են փողոցի մեջտեղով՝ սայլեր, վոչխարի ու տնային այլ անասունների բաղմապուլի նախիրներ, մշակներ, վոր մեծ խմբերով դնում են քաղաքից դուրս՝ յերկաթուղագծի վրա աշխատելու, գյուղացիներ, վոր գյուղական այլ և այլ բարիքներ են բերում քաղաքում վաճառելու: Սայլերի, նախիրների և գյուղացիների այդ խուռներում հոսանքը հոսում է Լորիս-Մելիքյան փողոցի մեջտեղով դեպի մեյդանը, այսինքն՝ չուխան, վոր գտնվում է փողոցի և կայարանի մեջտեղն ընկնող այն դաշտանման տեղում, վոր տեղացիների լեզվով կոչվում է «գյոլ» կամ «լիմ», վորովհետև դարձան սկզբին այդտեղ է հավաքվում ըլուրներից հոսող ջուրը, վորը և մնում է այդտեղ լճացած, մինչև վոր չորանա: Անցնում են, անցնում են. առավոտները հաճախ մշուշ է լինում, — ու մշուշի միջից սայլերից, նախիրներից ու գյուղացիներից կազմված հորդածուփ այդ հոսանքը արժանանում է իրենց խանութների առաջ նստած կամ կանդնած դնորդի սպասող խանութպանների դաշտյան նկատողություններին: Պետք է ասել, վոր



առավոտով այդ կանուխ պահերին, յերբ գլուղները  
յեկած հոսանքը դեպի մեյդան եւ շտապում, փողոցի  
յերկու կողմը շարված խանութները շատ չնչին ու-  
շաղթութեան են արժանանում դեպի մեյդան շտապող  
գլուղացիների կողմից։ Վերջը, կեսօրից հետո, յերբ  
իր բարեքը ծախած գլուղացին՝ յետ դեպի գլուղ եւ  
շտապում նույն Լորիս-Մելիքյան փողոցով — այս ան-  
գամ վոչ թե մեջակողով, ինչպես այդ վայել եւ սայլե-  
րին ու նախիրներին, այլ մայթերի վրայով, այդ  
ժամանակ միայն յեռում, կատաղի ճակատամարտի  
տեսք եւ ստանում մանրուքի խանութների արևտու-  
րը։ Իսկ մինչ այդ, մանավանդ առավոտյան այդ վաղ  
պահերին, յերբ նոր եւ սկսվում գլուղացիների հոսան-  
քը դեպի մեյդան, — նայիլից խանութպանները խաղաղ  
նստած են լինում իրենց խանութների առաջ եւ փողոցի  
մեջտեղով դանդաղ առաջացող յեռուղեւին նայելով՝  
հաղորդում են իրար իրենց պատահական մտքերն ու  
սպավորությունները։ Որինակ. — «Ան ոչխարը, նա-  
յն. մեկ փութ դմակ կախված ե յետևեմ» — ասում ե  
Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկոֆը դահվեհի Սեթոյին։  
«— Յես յաղլու մը կլլած եմ առտուս» — տեղի-ան-  
տեղի պատասխանում ե դահվեհին, ինչպես յերևում  
ե, բոլորովին տարբեր տրամադրություններով տար-  
ված։ Յեւ Հաջի Ոնիկ եֆենդին, միանգամայն բավա-  
րարված այդպիսի մի պատասխանով, լռում ե խոր-  
հրդավոր եւ շարունակում ե նայել փողոցով անցնող  
պախտակ վոչխարների ծանր դմակներին։ Ղահվեհին,  
վոր ընդհանրապես սիրում ե խոսակցությունը, ուղղում  
ե զրույց սկսել քաղաքի նորությունների մասին, բայց  
Հաջին, նկատելով փողոցի ծայրից առաջացող իր յե-

րեխային, վոր ամեն առավոտ իր համար հաց ու պա-  
նիր ե բերում անից (չաքար խանութում կա) — մըտ-  
նում ե իր խանութը թեյելու։ Ղահվեհին, մենակ  
մնալով, մտածում ե ինքն ել մտնի իր խանութը թե-  
յելու, բայց այդ պահուն կոչկակար Սիմոնը դուրս ե  
յեկնում խանութից ե ձեռքը մեկնելով նրան՝ «Բարի  
լույս, պ. Սեդրակ» — ասում ե քաղաքավարի։ «— Գի-  
շերս լա՞վ ես քնե — հարցնում ե կոչկակար Սիմոնը,  
ե միակն ե քաղաքում, վոր «պ. Սեդրակ» ե անվանում  
դահվեհի Սեթոյին։ Ուստի ե այս վերջին հանգաման-  
քից չափազանց դժացված՝ «Աղեկ եմ» — պատասխա-  
նում ե ժպտալով դահվեհի Սեթոն. «— առավոտ յաղ-  
լու մը կլլած եմ, ըստ սովորութեան»։ — «Անուշներ»  
կտրուկ կտրում ե Սիմոնը ե նորից մտնում ե խանու-  
թը՝ թողնելով անուշ հիացմունքի մեջ դահվեհի Սե-  
թոյին։ «Ի՞նչ կըսեր ելի կլուրի մեյմուներ» — յուզոտ  
ժպտը դեքին, դանդաղ մոտենալով, հարցնում ե վար  
սավիր վասիր։ «— Գործ չկա» — պատասխանում ե  
հորանջելով դահվեհի Սեթոն ե յերկուսը միասին,  
տխուր-տխուր աչքերով, սկսում են նայել փողոցի  
մեջտեղով անցնող անասուններին ու գլուղացիներին։  
«Յես չեմ հասկնար, քե դուն ինչո՞ւ չես հարգեր սա-  
րոժնիկ Սիմոնը» — ասում ե դահվեհին. «— յես անոր  
վտտերը ունեմայի քնե հիմա սանկ քիլիկ կնիկ մը  
տունս նստած կլար. սատանայի պես կպարե շանոր-  
դին...»։ «Ձի ըսե՛ մեյմուների պես, կըսե սատանա-  
յի» — լինում ե վարսավիրի կտրուկ պատասխանը։  
Ղահվեհին վերավորվում ե իր մեջ, բայց վախենում ե  
վարսավիրի հեգնող լեզվից ե վոչ մի բառով կամ ակ-  
նարկով չի արտահայտում իր դժգոհությունը։ «Ի՞նչ



կը հասկնա այս ազոտոտ «ուշադրազր» — հայհոյում է մտքում վիրավորված դահվեճին և մի վախլուկ ժպիտ սահեցնելով դեմքին՝ մտնում է խանութը: Յեւ այս պատմութիւնը կրկնւում է ամեն ուր համարյա, ամեն առաւիտ: «Վատ, չարախոս լեզու ունի ուշադրազ պերպերը» — մտածում է, խանութի մի անկյունը նստած, դահվեճի Սեթոն:

Արեւը կամաց-կամաց սկսում է բարձրանալ և ահա մյուս, վոչ խանութպան, քաղաքացիները ևս յենում են տներից և մայթերի վրայով գնում են՝ մի մասը «պրովիզ» քնելու, մի մասը — դործի: Պաշտոնյաները շտապում են պաշտոնատեղի, պ. Մարութեն շտապում է դպրոց: Խանութներում դործը հետգհատե սկսում է յեռալ և դուցե միայն դադաղագործը և «Յեւրոպա» ճաշարանի տնօրեն Յեզո Սրբումանովն են հիմա, անդործ նստած իրենց խանութների առաջ, ձանձրութից հորանջում: Սակայն նրանք ել կամաց-կամաց սկսում են դադալել. դադաղագործը ձանձրույթից ձանձրացած՝ սկսում է թղթե արծաթադոծ հրեշտակներ կպցնել դադաղների վրա, իսկ դուքանչի Յեզոն իր բալականին մաքուր սրբէջը վերցնելով՝ սկսում է ճաշարանի սեղանները սրբել: Սրբում է դուքանչի Յեզոն և չվագնելով «Վասադուլի» ուսասկան յերգը, մտածում է, վոր հարկաւոր է մի մեծ քաղաք տեղափոխել — Ռաստով կամ Կատինդար — և այնտեղ կարգին «ստալավո» պահել: Յեւ հանկարծ, ինքն ել չգիտե ինչու, հիշում է, վոր դահվեճի Սեթոն մի անգամ բարեկենդանին մի Ֆոնտ լիացքի սապոն մի անգամից կերավ՝ տասը ուլուխի գրազի համար:

«Թյո՛ւ քո գալած նամիքն...» զգլանքով հայհոյում է Յեզո Սրբումանովը և սրբէջը մի կողմ նետելով՝ յենում է վորոց:

Այդ նույն վայրկյանին պ. Մարութեն մտնում է վարսավիր Վասիլի վարսավիրանոցը՝ ածելովելու: Ամեն ուր դպրոց գնալուց առաջ անպայման ածելւում է պ. Մարութեն: Ահա թե ինչու վարսավիր Վասիլը մի առանձին հարգանք է տածում դեպի պ. Մարութեն. ածիլելիս այնքան է մոտեցնում իր արադահոտ շըրթոնքները պ. Մարութենի այտերին, վոր միանգամայն հախանալան է դարձնում դահվեճի Սեթոյի կասկածները վարսավիրի բարոյականի նկատմամբ: Պ. Մարութեն. իհարկե, յերևաապրդ չէ, յերեսուն-յերեսուներկու տարեկան կլինի — թեպետ, մյուս կողմից՝ դեմքը թուխ է, հաճախ սափրւելուց և պուրքա դործածելուց այտերը հաճելի քնքուլթյան են ստացել, իսկ քթի ծայրը համարյա միշտ կարմրած է լինում հարբուխից կամ ողուց:

«Խորին հարգանքներս պ. Մարութենին», ասում է վարսավիր Վասիլը, գլուխ տալով, յերբ պ. Մարութեն մտնում է ներս: Պ. Մարութեն թեթեւ գլխով է անում և լուրջ, սփրթնած դեմքով նստում է հայելու առաջ: Աչքերը փակում ու, ծուլլ, փափկաթուռի մե(լնկղմած, սպասում է, մինչև տաք, կակուղ խոզանակը, սաղոնոտ տահելով՝ քսվի դեմքին և իր այտերի վրա շոգ, տաք՝ զգա վարսավիր Վասիլի արադահոտ շնչառութիւնը: «Զգուշ» — բարկացած վեր է թռչում պ. Մարութեն, յերբ վարսավիրի տաք շրթոնքները պ. Մարութեն քսվում են նրա դեմքին: «Ինչ գոեհիկ են այստեղի վարսավիրները» — տխուր մտածում է պ.



Մարութեն: «Ուրիշ բան ե, որինակ, յեվրոպական քաղաքներում՝ կամ՝ թեկուզ, Ռուսաստանում. այնտեղ մարդիկ քաղաքավարի, մաքուր են ալելի, այնպես են ածիրում, վոր հաճույք ես դգում: Իսկ պ. Վասիրը ... Նու, քիչ ե մնում բերանդ մտնի. հիմար, դռնհիկ նայիրցի...»:

«Անուշներ» — ասում ե պ. Վասիրը, յերբ, մաղերը սանրելուց հետո, սպիտակ սրբիչով մաքրում ե պ. Մարութենի դեմքի պուզրան և խոզանակով սկսում ե նրա ոձիքը մաքրել: «Յստք աչքիս քիչ տխուր կերեվաս, ի՞նչ ե պատահե» — հարցնում ե վարսավիր Վասիրը խորամանկ ժպտալով: — «Առանձին բան չկա», — խոստո, լուրջ ձայնով պատասխանում ե պ. Մարութեն և դիտարկը վերցնելով շտապում ե դարոց:

Մարդիկ անցնում են դանդաղ, անշտաղ անցնում են մարդիկ, կանայք, յերեխաներ — յեղեկ են փողոց, վոր դնան՝ պաշտոնի, գնումներ անելու, բաղնիք, դործի: Բաղնիք, ասենք, առավոտվա վաղ ժամերին միայն կանայք են գնում նայիրյան այդ փողոցի քաղաքում. քաղաքում վա միայն յերկու բաղնիք, յերկուսն եղ ասիական, թեկուզ մեկի անունն ե «Ճերմակ», վորովհետև նրա պատերը սպիտակացրած են կիրով, — իսկ մյուսը, վոր մեջեթի նման ձմերուկաձև դմբեթ ունի, կոչվում ե «Փանտազիա բաղնիք — առանձին համարներով»:

Ընդամենը յերկու համար ունի այդ յեվրոպական նազված բաղնիքը, բայց դրությունը դրանից, իհարկե, չի փոխվում. համարներում գնում են լողանալու քաղաքացիները միմիայն՝ — առաջին քաղաքամասի պաշտավր, նրա կենը, աղջիկները, ելի մի քանի պաշ-

տոնյա ուսաներ և մեկ ել հայտնի մանուփակտուրիստ Հաջի Ոնիկ աղա Մանուկոֆը. նա յեղ, լինելով հմուտ անգլիագետ, համարները գերադասում ե ընդհանուր լողարանից: — «Ինչ կրնես ըրե — մարդ չի տեսար» — ասում ե նա այդ առթիվ, թեկուզ մեկ արդեն ծանոթ դահլիճի Սիմոնը նրա մասին եղ, ինչպես և վարսավիր Վասիրի մասին, ունի առանձին կարծիք: «Հաջի Ոնիկ աղան չի ուզեր հարեանները տեսնեմ, վոր ինքը դեղին սապոնով կլոզանա» — ասում ե նա:

Առավոտվա այդ վաղ պահերին բաղանիք են գնում, ինչպես ասացինք, բացառապես կանայք, վորովհետև քաղաքում գտնվող յերկու քաղանիքներն եղ, առանց բացառության, միջև ցերեկվա ժամը չորսը բաց են կանանց, իսկ չորսից հետո տղամարդկանց համար: Բաղանիք այդ քաղաքում կանայք գնում են առանձին մի շուքով, կարծես գնում են ծխակառարության: Գնում են, ընդհանրապես, մի քանի ազգական — կանայք, աղջիկներ և յերեխաներ միասին. մենակ ընդունված չե բաղանիք գնալ նայիրյան այդ քաղաքում: Առջևից, գնացքի ավանգարդը կազմելով, գնում ե սովորաբար գզգզված մի մշակ՝ չալակին պղնձե մի մեծ ջրաման, վորի մեջ դրված են լինում պղնձե կլոր թասեր, փայտե նալններ, սանր, սապոն — մի խոսքով՝ լողանալու զանազան պարագաներ: Յեթե ընտանիքում ծովեր յերեխա յե լինում — նրան եղ սովորաբար դրկում ե նույն մշակը, վորի յերկու կողքից հաղթական քայլերով արշավում են յերեխաները, տղաներ ու աղջիկներ, տղաները — միջև յոթը տարեկան, իսկ աղջիկները համար տարիքը նշանակութուն չունի: Յերեխաների համար առանձին որենք ե



ընդունված նախընտան քաղաքներում. ընդունված է կանանց հետ քաղաքներ թողնել մինչև յոթը տարեկան տղաների, բայց յեթե ընտանիքում, վոր քաղաքներ է դնում, հիվանդ է տառնում եկ տարեկան մի տղա — նրան ել մայրն իրավունք ունի հետը քաղաքներ տանելու. հո չի՞ կարող հիվանդ յերեխան տանն սպասել և անվա մնալ: Այսպիսի քաղաքներ յան կարգեր կան, հետը մնացած, նախընտան աշդ քաղաքում:

Յեթե սմառ է, աշուն, մի խոսքով — մրդի ժամանակ՝ քաղաքներ դնող ընտանիքի հայրը, լինի նա վարսավիր վասիլը, թե Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկովը, կամ դուքանչի Յեզուր — ցերեկվա տաներկուսին մոտիկ պետք է քաղաքներ ուղարկել, լողացող ընտանիքին նվեր՝ ձմերուկ, սոխ, խաղող, կամ խնձոր, և դա սովորաբար արվում է հրապարակով, բոլորին ի տես, մանավանդ յերբ քաղաքներ է դնացած լինում Հաջի Ոնիկ եֆենդի Մանուկովի հանրմը՝ յերեխաներով հանդերձ: «Ետը իլի Հաջին քաղաքիք ե դրկե նուրուֆար հանրմին» — ասում են հարեանները քմծիծաղ: «Ետը եղնի» ասում է աշխարհի որերին Յեզուր Համարձումովը, «Յեվրոպա» ճաշարանի տերը, Հաջի Ոնիկին. «— Ետը Հաջին մեզ մոտ պիտի մաշե. լավ բոգրաշ եմ շինել տվե, իսկական դամաշնի՝ պամիդորով ու սոխով»: Բայց Հաջին չի սիրում ընտանիքից դուրս — ճաշարաններում ճաշել. յերբ տնից ճաշ չեն ուղարկում, նա յոլա յե դնում հացով ու պանիրով, իսկ յեթե մրդի ժամանակ է՝ սիրում է ձմերուկ կամ սեխ ունենալ մսի փխարեն: «Շատ բան պետք է մալդումը կշտացնելու համար» մտածում է

Հաջին. «— Անգլիքերում լորտերը սե հացով կրավա կանանան. սակայն այդ հանգամանքը չի խանգարեր անոնց, վոր անոնք ըլլան ազնիվ ու հայրենասեր»: — Յեվ հարեանները, չնայած վոր բնավ չեն ել մտածում հովատալ, վոր լորդերը Անգլիքներում սե հաց են ուտում, — այնուամենայնիվ հովանութուն են տալիս Հաջու խոսքերին: «Մարդս ինչով ասես կարող ե կըտանալ, մանավանդ Հաջի Ոնիկ եֆենդին» — մտածում են նրանք:

Յերբ արեւը բալախանին բարձրանում է վեր և կեսորից սկսում է դեպի արեւմուտք թեքվել, Լորիս Մելիքյան փողոցի վրա գտնվող խանութներում դորձնական յեռուզեռը հասնում է իր գագաթնակետին. — Հաջին շուկայից վերադարձող գյուղացիներին մանուֆակտուրա, չաքար, փուլներ ե ծախում, վարսավիր վասիլը ստիրում է ու խուզում, «Յեվրոպա» ճաշարանում բորչ են սկսում ուտել զինվորներն ու գյուղացիները, իսկ մանրավաճառները շունչ քաշելու անգամ ժամանակ չեն ունենում: Ասեղ, թեկ, կողպեք, քառորդ ֆ. սպիտակ հարկա, ֆուրգոնի մեղուք, Լադչինի լուցիկ, — դնում են, գնում են, ու՞մ ինչ հարկավոր ե որվա համար, և ծախում ու հարստանում են — Կոլբպոտյանը, Զարգար Հովհաննեսի տղան, վոր հիմա մանրուքի խանութ ունի, քաջալ թութուր, կաթոլիկ Սիմոն աղան և մնացած չարչիներն ու խանութպանները. — խեղճ Արմարշն ե միայն, վոր անգործ, աչքը խանութի պատերից կախված յեվրոպական գույնդույն հագուստներին հառած, սպասում է գնորդի: Յերեխ նախընտանները չեն հասկանում, վոր ինչպես իր ցուցանակի վրա գրված, այնպես ել իրեն



կայցրած ֆրանսերեն «Արոն մարշ»-ն վոչ ալ ինչ է նշանակում, յեթե վոչ — բարի գալուստ, — մտածում է նա: — Յեթե ալ հասկանալին, դոնն ներս կմտնեյին, դենը դեռ մի կողմ: Պետք է ցուցանակները ռուսերենի վերածել — վստուշում է նա մտքում և սկսում է իր նոր ցուցանակի համար անուն մտածել:

Տասներկուսից տաս անց՝ յերկրորդ դասն արդեն վերջացրած լինելով՝ քաղաքի ծխական դպրոցի ուսուցչանոցում, մեծ դասամիջոցից ողովելով, նախաճաշ են անում ուսուցիչ-ուսուցչուհիները: Ուսուցիչները մեկի անունն է Բյուզանդ վարդերեսյան, յերեսուներե մոտիկ ճամբարանավարտ փորձված ուսուցիչ: Մանուկ Աբեղյանից է սովորել հայերենը և պարծենում է դրանով: Մադերը պահում է յերկար, սանրում է մեծ խնամքով: Թողնում է կարճ մորուք: Դպրոցում պարապում է հայերեն և յերգ: Միևնույն ժամանակ դպրոցի տեսուչն է, ավագ ուսուցիչը: Յերկրորդ ուսուցիչը — մեղ արդեն ծանոթ պ. Մարուքեն է, դպրոցում նա ավանդում է թվարանիցուն և ռուսաց լեզու: Յերրորդը նույնպես ճամբարացի յ, բայց ավելի յ յերիտասարդ. սիրում է հասարակական դործունեյությամբ դրազվել և միտք ունի հաջորդ ամսվա ընթացքում մեղ արդեն բավականին ծանոթ յերկրորդ ծխականի ուսուցիչ ընկ. Վատուկյանի ընկերակցությամբ մի շարք դաստիարակություններ կարդալ հայոց պատմության մի քանի հետաքրքիր և դաստիարակիչ գլուխների մասին, կազմակերպել յերիտասարդական միություն, վորի գլխավոր նպատակները մեկը պիտի լինի «Հայոց լեզուն տարածելու

խնդիր» — ռուսախոս նայիրցիների շրջանում: Լավ յերիտասարդ է պ. Աշտուր և լավ մտքեր ունի, բայց զժրխտարար անտարբեր չէ դեպի իր պաշտոնակցուհի որ. Նվարդ Լուսպարոնյանը, վոր Թիֆլիսի հովանյանավարտներից է և պահում է կարճ մազեր: Չորրորդը նույնպես ուսուցչուհի յ, յերեսուներե մոտիկ մի որիորդ, որ. Վարդուխի Զատիկյան. վերջացրել է Յերեսուրի Գայանյան դպրոցը, չի սիրում որ. Նվարդին և ֆիզիքական ատելություն է դրում դեպի նրա կարճ մազերն ու թեթեամիտ հանաքները: «Կինը պետք է իրեն պահել իմանա» — ասում է նա հաճախ՝ ակնարկելով որ. Նվարդի հանաքները պ. Մարուքեյի հետ, դեպի վորը, ասում են, ախրան ել անտարբեր չէ. ինքը՝ որ. Վարդուխին:

Նրանք նստած են հիմա ուսուցչանոցում, վորը շատ լվանալուց խոնացած հատակով և դեղնած առաստաղով յերկպատուհան մի սենյակ է. մեջտեղում՝ կանաչ ծածկոցով, թանաքոտած մի սեղան, պատից կախված է մի մեծ, կայարանների ժամացույցների նման, կլոր ժամացույց, իսկ յերկու պատուհանների մեջտեղում — մի մեծ փայտյա պահարան: Պատուհանները փողոց են նայում. իսկ դուռը միջանցք է դուրս դալիս. բակը, վորտեղ խաղում են յերեսուները, մնում է հեռու — աղպիտով նրանք ալատեղ բավականին ապահովված են իրենց դրամ յերեսուների աղմուկ-աղաղակներից. մի հանդամանք, վորից շատ զժգոհ է պ. Մարուքեն և ավելի քան գոհ է որ. Նվարդը:

Թեյը, դեղին, պաղ, հորանջում է ապակյա բաժաններում. ձանձրալի յ. կավա չկա. Բեյ, Բեյ,



քեյ — ամեն որ նույնը: Զանճարալի յեն որ. Վարդուհուսի զրուցները կանացի առաքինութեան մասին — որ. Նվարդին, իսկ որ. Նվարդի տափակ հանաքները որ. Վարդուհուսի անկանջներն ու հոգին տանջում են, բռնաբարում են համարյա. վոչ խոսքն է ողնում, վոչ վրդովմունքը: Պ. Մարութեն թերթ է կարդում և քթի տակ ծիծաղում է որ. Վարդուհուսի վրա, իսկ յերբ լսում է սլ. Աշոտի դողդոջուն ձայնը, վորով նա խնդրում է որ. Նվարդին մի բաժակ թեյ ևս լցնել — աչքերը բարձրացնում է թերթից և սլաղ նայում է սլաղառնակից դեմքին: Իսկ սլ. Բյուզանդ Վարդեթեանը համարյա ամեն որ մեծ դասամիջոցին հաճույքով վիճում է որ. Վարդուհուսի Զատիկյանի հետ բարոյախոսութեան մասին և դո՛հ է թե իր հայացքներից, թե իր խոսքի ձայնից և թե, մանավանդ, որ. Վարդուհուսից, վոր միշտ համաձայնվում է նրա հետ և միշտ ասում է, հայացքը որ. Նվարդին դարձնելով. «Ճիշտ է, պ. Բյուզանդ. մարդիկ, մանավանդ կանայք, պետք է առաքինի լինեն: Յես միանգամայն համաձայն եմ Զեզ հետ, պ. Բյուզանդ»: Յեվ սլ. Բյուզանդը, դո՛հ, ժպտաղեմ՝ սրբում է իր նայելու մեծ քիթը կարմիր թաշկինակով:

Տալիս՝ և զանգը և ուսուցիչ-ուսուցչուհիները, դանդաղ, տեղերից հազիվ բարձրանալով, նորից գնում են դասարանները սլաղապունդները շարունակելու:

Յերբ որ. Նվարդը մտնում է դասարան, աշակերտներից ամենաչարը և ամենահերոսը, վոր ընկերների կողմից հարգվում է վորպես կատարյալ տղամարդ — չիլ, դեղնած աչքերով Միտակ Հովհաննիս-

յանը, կամ ինչպես ընկերներն են ասում՝ Շլոմ կանգնած է լինում դրասեղանի կամ նույնիսկ ուսուցչի սեղանի վրա. դասարանում աղմուկ է, փոշի, վայրենի, բայց ուրախ հրճույց: «Շլի դու սեղանի վրա յես բարձրացել» — սուր, խզվող ձայնով ճշում որ. Նվարդը և վրա յե շաղում Շլոմյին բռնելու: Շլոմն սեղանից-սեղանի թռչելով հասնում է դասարանի վերին անկյունը և մտնում է դրասեղանի տակ: — «Ներողութուն, որիորդ, ներողութուն» — ճշում է այնտեղից Շլոմն: Յերեսաններն ավելի յեն հրճում, աղմուկը դառնում է անտանելի: «Հանգիստ» ձեռքն աթոռին և վոտքը հատակին խփելով ճշում է որ. Նվարդը սուր, խզվող ձայնով, դասարանում մի վայրկյան տիրում է բացարձակ լռութուն: Որ. Նվարդը մոտենում է ուսուցչական սեղանին և վերցնում է քանոնը: — «Դուրս արի դրասեղանի տակից» — քանոնը սպառնալի կերպով բարձրացնելով վեր և արագ մոտենալով Շլոմյի դրասեղանին — ասում է որիորդը: Բայց դուրս է գալիս այնպես, վոր Շլոմն այլևս այն նստարանի տակից տեղափոխված է լինում արդեն դասարանի հակառակ անկյունում դրած նստարանի տակ: Աշակերտներն ավելի ազատ և ավելի ուրախ են սկսում հրճալ, որ. Նվարդը հուզմունքից քիչ է մնում ուշաթափվի և յերբ լացակամած աչքերը բնազդով դռան է հասնում և տեսնում է դրասեղանի վրա մեծ, ծուռ տառերով գրված «Քաշալ Նվարդ» բառերը — այլևս չի կարողանում իրեն զսպել և արագ մոտենալով ուսուցչական սեղանին՝ թուլացած ընկնում է նրա մոտ գրված նստարանի վրա և գլուխը սեղանին դնելով՝



մի փոքրիկ աղջկա նման սկսում է աղիողորմ հեծկըլտալ:

Դասարանում տիրում է մեռելային լուռութուն, վորի մեջ որ. Նվարդի խուլ, դառն հեկեկանքերը հնչում են ավելի խուլ և ավելի աղի, այնպես վոր նույնիսկ Շլդոն, աղբվելով վայրկյանի լռությունից, նստում է իր տեղը: Յեվ բոլոր աշակերտները մի տեսակ միտախեղական դրության մեջ ընկած՝ կամ նայում են վար, իրենց դասեղանի սև տախտակներին, կամ սրաղ, անտանական ահով լցված մանկական աչքերը որիորդի ցնցվող արմուկներին և կարճ մաղերին հառած՝ սպասում են ստեղծված կացության վախճանին:

Մի յերկու վայրկյան հեծկտալուց հետո որ. Նվարդը հանկարծ վեր է թռչում տեղից և թեթև քայլով, գլուխն ու ամբողջ մարմինը տարրերինակ ցնցելով, վազում է դասարանից դուրս: Աշակերտները հասկանում են, վոր որ. Նվարդը գնում է ուսուցչանոց, տեսչին կանչելու: «Շլդոյի գլխին ավելք թող բռնանա» — ասում է մի աշակերտ լուռութունը խզելով. « — Տեսուչը վոր յեկավ, բոլորիս կպատժե» շարունակում է նրա մոտ նստած ընկերը — նա, վոր ամենից շատ էր հրհուում և մտքի մեջ նախանձում էր Շլդոյին: Յեվ ահա Շլդոյի մոտ նստած աշակերտը, տասերկու-տասերեք տարեկան չի Մուկուչը ձեռքն արդեն բարձրացնում է վեր, վոր իջեցնի Շլդոյի գլուխին — բայց դուռը բացվում է հանկարծ և ներս է մտնում պ. Բյուզանդը՝ զայրացած, ահուելի դեմքով, իսկ նրա յետևից, աչքերը սրբելով մտնում է որ. Նվարդը — հոգնած ու դունաւոր:

« — Մկրտիչ Կարապետյան, դուրս արի» — ավելի բարձր ձայնով, քան կարելի յե յենթադրել, վար ունի պ. Բյուզանդը, — բղավում է պ. Բյուզանդը դեռ ներս չմտած. նա տեսավ չիլ Մուկուչի բարձրացած ձեռքը, վոր յեթե ինքը մի վայրկյան ել ու շանսը՝ ծանր, պիտի իջներ Շլդոյի գլխին: Գլուխը կախ, խոնարհ՝ վախից դողացող մարմնով յենում է չիլ Մուկուչը դուրս: « — Միսակ Հովհաննիսյան» — ավելի ահուելի ձայնով կանչում է պ. Բյուզանդը. « — Դու ևս դուրս արի»: Յեվ ահա Շլդոն ևս, գլուխը հռուտեւորեն քորելով գալիս կանգնում է դրատախտակի մոտ: Դասարանը սարսափ կորած, չոած աչքերով սպասում է դրության վախճանին:

«Սա՞ յեր» — ցույց տալով Շլդոյին՝ հարցնում է պ. Բյուզանդը: Որիորդը հուզված, գլխով է անում. չի կարողանում խոսել: «Ա՛րջ» — վրա պրծնելով բղավում է պ. Բյուզանդը. « — յես քեզ ցույց կտամ, աչքերդ կհանեմ»: Ու փայտե քանոնի աղեցիկ հարվածներ իջնելով Շլդոյի գլխին՝ արագ շարում է իրար յետևից գունեղ ամսականներ. — «Շա՛շ, հիմա՛ր, իշո՛ւկ, փողոցի քափքփուկ, լի՛րբ, — ի՛նչ ասեմ, ի՛նչ ասեմ, ի՛նչ ասեմ» ելի ու ելի. մի զարկը — մի ամսական: Հետո հերթը հասնում է չիլ Մուկուչին. նա յել, իր հերթին զանազան գեղարվեստական ամսականներ ստանալով և գլխի վրա նրանց քանակը հաշվելով՝ սկսում է լաց լինել բարձրաձայն, այնպիսի ահուելի մի բացող, վոր ձայնը հասնում է մինչև մոտակա փողոցը: « — Յես դուրս կանեմ սրանց, որ. Նվարդ» — ասում է պ. Բյուզանդը՝ սրբապանության առաջին մասը վերջացնելով. — «ներողութուն եմ խնդրում, վոր



մինչև հիմա մնացել են զպրոցում»։ — « — Թող ելի մնան, պ. Բյուզանդ» — վոգրերգական ձայնով ու սոսոցուն, դո՛հ աչքերը տեսչի դեմքին հառած — խնդրում է որ. Նվարդը. « — Դ՞նչպես կարելի յե դուրս անել յերեսաներին. դա հակամանկավարժական է և անվայել քաղաքակիրթ ուսուցչին» — մըտքում մտածում է նա, բայց վախենում է իր այդ միտքը բարձրաձայն արտահայտել պ. Բյուզանդին։ Բայց անընկճելի պ. Բյուզանդը, հրամայելով պատժված աշակերտներին իսկույն տուն գնալ և ծնողներին կանչել, առանց պատասխանելու յեղնում է դուրս։ Աշակերտները վոտքի յեն կանգնում և մնում են կանգնած, մինչև որ. Նվարդը դրամատիկական ձայնով ասում է. — «Նստեցե՛ք»։ — «Բայ արեք զրքերդ» — ասում է մի վայրկյան հետո, ճակատը չփելով, որ. Նվարդը։ «—Մարտիրոսյան, կարդա՛» — ասում է նա։ Յե՛վ դասն սկսվում է նայիրյան դպրոցում՝ ճիսուր, անհետաքրքիր, խոլ որ. Նվարդի գլուխը սկսում է նվալ և մտքերը նրա փոքրիկ գլխում սկսում են պաղ, միապաղաղ հորանջել։

Արևը գննիթից սկսում է իջնել, փամբ մոտենում է յերեքին, խոլ դահվեճի Սեթոն դեռ վոչ մի մսխալ սուրճ չի կարողացել ծախել։ «Թարս որ է, գիշերը քարս եմ քնացիր» — մտածում է նա խանութի առաջը նստած և ծխախոտ է վոլորում, վոր քունը չտանի։ Ուրորվելով, ուսը տարօրինակ ցնցելով մոտենում է նրան Արամարչը, վոր ձանձրությունից փակել է խանութը և դռան ապակուն, ինչպես այդ ընդունված է Յեվրոպայում, փակցրել է սպիտակ մի թուղթ՝

վրան գրված «փակ է. դնացել եմ ճաշի»։ Այդ քաղաքավարի արարքով նա միանգամից կարողացել է հասնել յերկու նպատակի. նախ, վոր իր խանութը յեվրոպական խանութ է իր բոլոր կողմերով, յերկրորդ՝ վոր ինքը, լորպես իսկական յեվրոպացի, ճաշում է ժամը չորսին։ Թեկուղ վոչ մի կողմիկ ապրանք չի կարողացել ծախել պ. Արամարչը. բայց դո՛հ է, վոր հնարավորություն ունի և դիտե յեվրոպացի լինել։ «Տո՛, գոեհիկ գամեշ, ի՞նչ ես արևի տակ նստե. երբանիք քուղք խաղանիք» — ասում է նա, մոտենալով դահվեճի Սեթոյին։ « — Նարդի կուգես նե — կխաղամ, քուղք չեմ խաղար» պատասխանում է դահվեճին և քանի վոր Արամարչը չի հակաճառում՝ նա նույնպես փակում է խանութը, բայց թուղթ չի փակցրում դռանը, վոր գնում է ճաշի — և յերկուսով միասին գնում են Տեկեֆոն Սեթոյի սրճարանը — նարդի խաղալու։

Յերբ նրանք թե-թեի տված, ձանձրութից փրկվածների դոհունակությամբ մտնում են Տեկեֆոն Սեթոյի սրճարանը՝ այնտեղ հանդիպում են մի շարք հարեվանների, վորոնք նույնպես քուղք, դոմինո կամ նարդի յեն խաղում՝ նայած տրամադրության։ Դա-գաղափորձ Յենոքը և Կինտաուրի Սիմոնը նախընտրել են թուղթը և յերկուսով «փաստոն» են խաղում ձմեռուկի վրա. ով վոր տարվի — մի ձմեռուկ գնի։ Նրանց դիմին հավաքվել են՝ Հաջի Ոնիկ Մանուկոֆ և Ֆենդին, մանրավաճառ Պողոս Կոլոպոտյանը, Կաթոլիկ Սիմոնը, գինեվաճառ Նիկոլ Արզումանովը և իրենց տաք բացականչություններով մասնակցում են նրանց խա-



դին ու մի առանձին հետաքրքրութեան միջոցն էն ստեղծում Յեղուի սրճարանում: Նրանց այդ վողեւոր-ված հավաքութիւն տեսնելով դահլեճի Սեթոն և պ. Արամարչը ևս, մոռանալով իրենց նարդի խաղալու ցանկութիւնը, միանում են նրանց:

Յերբ որն սկսում և կամաց-կամաց միմեկը՝ հերթով, իրար յետեւից, սկսում են փակվել Լորիս-Մե-լիքյանի փողոցի ցածրիկ խանութները: Ամենից առաջ դադաղադարձ Յենոք Կարապետյանն և փակում իր խա-նութը ներսից և ինքը մնում և խանութում: Այդ հար-գելի նայիրցին տուն չունենալու պատճառով ընում և իր դորձատեղում, իր չինած դագաղներից մեկում. այդ բանն ամբողջ քաղաքը գիտե և ահա հենց այդ և պատճառ, վոր նրան քաղաքում անվանում են Մե-ռելի Յենոք, իսկ յերեխաները վախենում են նրանից և չեն սիրում անցնել դադաղադործի խանութի առաջից: Յերկրորդ խանութպանը դահլեճի Սեթոն և, վոր փա-կում և իր խանութը և նույնպէս ընտանիք չունենա-լու պատճառով՝ զնում և քաղաքային այդի՝ դրոսնելու և հարսնացու ընտրելու: Հետո Հաջի Ռիկ Էֆենդի Մանուկովն և իր խանութը փակում—և ահա նրանից հետո բոլորը, իրար յետեւից խանութները փակելով, զնում են՝ վորը տուն, վորը քաղաքային այդի, վորն էլ նորից Տեղեփոն Սեթոյի սրճարանն և զնում, վոր յերեկոյան հանդիստե աշտեղ վայելել—թղթախաղով, կամ ուրիշ խաղին նայելով: Յեւ տայալս կամաց-կամաց սկսում և բոլորովին ամայանալ. մութն էլ, անդամ ու անխորհուրդ, ծուլ, հորանջող պառավի մի նման, իջնում և ու նստում փողոցների վրա և տեղ-

տեղ տարտամ, վախկոտի աչքերի պէս թարթող կրակ-ներն են միայն յենթադրել տալիս, վոր այդտեղ դա-րերից ի վեր ապրում և ու զվարճանում նայիրյան մի քաղաք:

ՄԱՍՆ ՅԵՐԿՐՈՐԳ

Դ Ե Պ Ի Ն Ա Յ Ի Ր Ի

Հնամյա, հին մի յերազ,

Յերկիր մի՝ դարերի ուրու...

Յե. 2. «Ամենապահ»

Սույն այս վեպիս առաջին մասում յես փորձեցի պատկերել նայիրյան այդ քաղաքն իր բոլոր հին ու նոր հրաշալիքներով, ջանացի տալ նրա բնակիչների կեն-ցաղը, կամ, ավելի լաւ և աւել— կենցաղային կոլորի-տը, ընդհանուր դույնը միայն, և վո՛չ թե մանրամաս-նը— աշնպես, ինչպէս տեսել եմ նայիրյան այդ քաղա-քը յես, ինչպէս պատկերացել և նա ինձ, այդ քաղաքը ճանաչողիս: Սրտի անհուն թրթիռով յես ձեռնամուխ յեղա նրա նկարագրութեանը, սիրելի ընթերցող, վո-րովհետեւ սիրելի յես նա ինձ, վորպէս մանկութեան որո-ւան, և ծանոթ են նրա բնակիչներն ինձ, ինչպէս հինգ մասոս, կամ այս գրիչս, վորով զբոլում եմ հիմա՝ Կրկ-նում եմ՝ արտի բուն արտիով սկսեցի գրել նայիրյան այդ քաղաքի պատմութիւնը, բայց հիմա, յերբ ու-ղում եմ անցնել հետազա որերին ու դեպքերին, պատ-կերել նրա որերն ու վառապանները—դառն, ծանր մի մորմոք թանձրանում և սրտիս, ուստում և սիրտս: Մի անգամ չգիտեմ չուկա՞ եյի զնում, թե վերադառնում



էյի շուկայից, յերբ անհեթեթ մի պատկեր դրաւից ու-  
չադրութիւնս: Փողոցի մեջտեղով դնում եր բաւակա-  
նին տարիքոտ, միջահասակ մի մարդ, վոր արտաքինով  
նման եր գաւառցի վարժապետի, կամ փոստ-հեռա-  
գրային ցրիչի, և, գլխի վրա դրած, տանում եր— յե-  
րակայում եք— դեղնավուն մի դադաղ: Անձրեւ եր,  
ցեխոտ փողոց. ցեխը հարկիսայի նման ճաճաղում, կըտ-  
չում եր վտաքերին. և այդ մարդը ահա, գաւառցի այդ  
վարժապետը կամ ցրիչը, տանում եր, գլխի վրա դը-  
րած, իրենից շատ ավելի ծանր և մեծ մի դադաղ:  
Դեմքը չեւր յերևում, բայց մեջքի և ծնկներին. լարված  
կորութիւնը խիստ արտահայտիչ կերպով ցուցադրում  
էյին, վոր նա դժվարութեամբ և տանում այդ բեռը,  
բայց ինչ դնով էլ լինի ուղում և տեղ հասցնի, միայն  
թե հասցնի: Յերեւի մայրն եր մահացել, կամ կինը,  
կամ վորդին— ո՞վ իմանա: Նա լարել եր ուժերը. դա-  
դաղի ծանրութիւնից կզակը կպել եր կրծքին. մեջքը  
չեւր կարողանում միևնույն կորութեամբ պահել, այն-  
պես վոր դադաղը, մերթ առաջ, մերթ յետ կշռվելով,  
քալում եր ցեխերին: Ինչի՞ համար եր այդպէս նա չար-  
չարվում, ինչի՞ պիտի հանդիպեր այդ խեղճ վարժա-  
պետը տեղ հասնելիս...— Մի սիրած— դե՛, յեթե վոչ  
սիրած, դոնե հարազատ մեռելի, վորին նույն այդ դա-  
դաղը դրած պիտի հանձնէր հողին— ահա թե ինչո՞ւ  
յեր այդպէս անմխիթար. այդպէս անողնակա՞ն ջանքե-  
րով, դադաղը նվազող վողնաչարին հալած, դեպի տուն  
շտապում այդ տխուր վարժապետը... Այդպէս ել յե՛ս,  
ընթերցող, ճիշտ այդ վարժապետի նման.— ո՞ւր եմ  
դնում: Ինչո՞ւ յեմ հպել— բայց վո՛չ թե վողնաչարիս,  
այլ դանդիս ուղեղին դադաղանման այս բեռը, և ու-

ղում են տեղ հասցնում... ո՞ւր: Յե՛վ մի՞թե այնտեղ,  
տընութեանս վերջում, վորպէս նվիրական, սիրելի մի  
մեռել— չպիտի՞ պատկերանա ինձ Յերկիրը Նայիրի,  
վորին դամբանելու համար տանում եմ յես ահա խոհե-  
րիս տողաչար դադաղը— տանում եմ կամքեա հակա-  
ռակ, վորովհետեւ, այո, հարկավոր և տանել: Չե՞ վոր,  
այո— թաղել և հարկավոր բոլոր մեռելներին, վորքան  
եւ նրանք սիրելի և հարազատ լինեն. չե՞ վոր, միև-  
նույն և, հակառակ դեպքում կքայքային նոքա՝ դադ-  
րելի և անտաքույր, այնպէս վոր անդամ սիրահարը  
կզոյի պաշտելի աճյունից: Թողնենք, ուրեմն, մի կողմ  
լիբիկական դեղումը՝ սիրելի ընթերցող, և անցնենք  
Նայիրյան այդ քաղաքի որերին և դեպքերին: Յե՛վ թող  
բացվի մեր դեմ որերի և մարդկանց «վաստակոց և մե-  
ծադրութեան» խորհուրդում «յերկիրը հաղարամ-  
յա»— հնամայ Նայիրին...

Վեպիս առաջին մասում, ինչպէս ասացի, յես ձեզ-  
տեցի պատկերել կենցաղային այն բնույթը, յերանդը,  
վոր ունէր Նայիրյան այդ քաղաքը «խաղաղ ժամա-  
նակ»: Ուժերս ներածի համեմատ՝ յես նախ նկարագրե-  
ցի քաղաքը՝ հին ու նոր հրաշալիքներով, և ապա անցա  
բնակիչներին, վորոնց ամեն մեկի մասին այնքանի-  
միայն կարողացա ասել, վորքանի վոր, գուցե արժանի  
յեն նրանք: Գուցե դու կուզեյիր, սիրելի ընթերցող,  
վոր յես յեմքոսկան անվանի հեղինակներին հետեւե-  
լով մանրամասն վերլուծութեան յեթարկելի «հերոս-  
ներին» հոգեբանութեանը, մանրալինին պատմելի, թե  
ինչպիսի նրբին «պարումներ» եր ունենում, ասենք,  
դեներալ Ալոշը, յերբ նահանգապետն իջևանում եր



ներա հոյակապ բնակարանը, կամ, ասենք, հոգեկան ի՞նչ ալեկոծումներ ունեցաւ քաղաքային բժիշկ Սերգեկանսարիչը կնոջը թաղելիս... Բայց այս առթիւ յետ, մի անգամ ընդմիջաւ, հարկադրւած եմ ասել, վոր սույն իմ այս վեպում չկա և յերեւի չի յել լինելու և վոչ մի «հերոս» — և այս տխուր հանգամանքում, կարծում եմ, վոչ թե յետ եմ մեղաւոր, այլ նախորդան աղքատը, վորովհետեւ — ի՞նչ, ի՞նչ «հերոսներ» կարող են դուրս գալ, ասենք գեներալ Ալոչից, կամ Համո Համբարձումովիչից — Մազութի Համոյից... Գուցե Մեռելի Յենո՞քը հարմար «հերոս» լիներ, կամ Կինտաուրի Սիմոնը, կամ, վերջապես — Տելեֆոն Սեթոն... Ե, թողնենք այս հարցը, սիրելի ընթերցող, և անցնենք, քանի շուտ ե, մեր ընտրած քաղաքի «որերին ու վաստակներին» և, ո՞վ դիտե, կարող ե պատահի, վոր դեպքերի բերումով այդ աննշան քաղաքի աննշան բնակիչներէից շատ շատերը հանկարծ դուրս գան հերոսապանծ հերոսներ — դժբախտ ու հերոսական որերի բերումով՝ դժբախտանան ու հերոսանան...

... Իսկ դժբախտ որեր շատ անցան հետազայում ինչպես այդ քաղաքի, նմանապես և ամբողջ Նախիբի գլխից — և չեյի՛ն, չեյի՛ն կարող, այո՛, այդ դժբախտ որերը չճնել անձնավորութիւններ՝ դժբախտ ու հերոսական: Ձե՛ր կարող, ո, վո՛չ այդ դժբախտ որերի, տարիների հրից, չեղնել, հերոսական, չհառնել, պայծառ ու քրքացած — Նախիբյան վոգիմ:

Ինչպես այսօրվա ճաշս, սիրելի ընթերցող, յետ հիմա ամենայն մանրամասնութեամբ հիշում եմ պատ-

մական այն օրը — 1914 թվականի հուլիսյան կիրակիներէից մեկը — նախորդան աղքատ քաղաքում: Սույն այս վայրկյանիս, յերբ յետ մտադրութեան ունեմ մանրամասն նկարագրել այդ նշանավոր օրվա անցուղարձը — տարիների մշուշից, կամ, ինչպես բանաստեղծը կասեր տարիներէ մոռալ մոխիրների տակից յեյնում են ահա և նկարվում են աչքերիս առաջ այն նշանավոր օրվա դեպքերն ու պատկերները: Պարզ, վորոշ, կարծես այդ ամբողջը յերեկ, կամ մի ժամ առաջ կատարված լինի — յետ տեսնում եմ ահա Մազութի Համոյին՝ քաղաքային այդու աղումբի առաջ, թղթախաղի կանաչ սեղանի վրայից, ճառ ասելիս... Պարզ, վորոշ, կարծես թե հիմա, սույն այս վայրկյանիս կատարվելիս լինի — յետ լսում եմ ահա Մազութի Համոյի հատուկ ձայնը, Մազութի Համոյի հզոր առողջանութիւնը: Խավարի, այո, սենյակիս գիշերային խավարի միջից նայում են ահա ինձ Համո Համբարձումովիչի կայծկելտող աչքերը և սիրտս թպրտալ է սկսում անորոշ մի հուզմունքից, սիրտս, տաղնապալից, դարձել է սկսում, ինչպես երկտրական դանդի արծաթագոծ լեզվակ: Յեւ յերեակայութիւնս, առաջ վաղելով, արդեն նկարում ե, անողոք դահլճի մի նման, Մազութի Համոյին՝ փայտե մի մանեկների նման կախաղանից կախված... «Ո՛ւ՛ղճ, խե՛ղճ Համո...» փափսում է սիրտս, լացակումած և յետ դրիչս ցած եմ դնում, վոր սիրտս հանդստանա և յետ հնարավորութեան ունենամ պատմութիւնս շարունակելու:

Ծուլ, խաղաղ, կիրակնօրյա իր հանդիսուն եր վայելում նախորդան այդ քաղաքի այդ առավոտ: Ծըն-



գում եր Առաքելոց յեկեղեցու զանգը՝ խաղաղ ու ան-  
վրդով։ Ով սիրում եր աղոթքը — գնացել եր յեկեղեցի,  
բայց քաղաքացիները մեծ մասը այգում եր գտնվում,  
կամ նստած փակ խանութների առաջ՝ զբաղված եր ա-  
ռուրյա դրույցով։ Կային եւ մարդիկ, վոր հավաքվել  
էին Տեկփու Սեքոյի կամ Յեգո Արգումանովի սրբ-  
ճարաններում։ Կային եւ, վոր հավաքվել էին այգու  
ակումբում։ Ակումբում այդ որը հավաքվել էին՝ քա-  
ղաքային բժիշկ Սերգե Կասպարիչը, Ռսեի Նարիմանո-  
վը — հաշտարար դատավորը, Արամ Անտոնիչը — դրո-  
ւոցի տեսուչը, պ. Մարուֆեն, Կիմտաուրի Սիմոնը, վո-  
րը սիրում եր «մեծերի հետ նստել», անգլիագետ վա-  
ճառական Հաջի Ոննիկ Մանուկով եփեղին եւ ելի մի  
քանի քաղաքացիներ — թուղթ էյի՝ խաղում։ Խաղում  
էին — «պրափերան», «մակա», «քակարա» — սիրում  
էին խաղալ։ Խաղում էին, ըստ սովորության, լուռ  
ու հանդիսավոր, մերթ ընդ մերթ միայն «փաս», «28»,  
«տալիա» եւ նման բացականչութիւններով խղելով ը-  
նտը։ Բայց, չնայած խաղի մեջ գլխովին ընկմ-  
ված լինելուն, խաղընկերներից շատերը, ինչպես, մա-  
նավանդ, Սերգե Կասպարիչը եւ Ռսեի Նարիմանովը,  
լավ չէին զգում իրենց. նրանց թվում եր, վոր «փչում  
ե», չնայած հուլիսյան հաճիլի յեղանակին։ Շուտ-  
շուտ դռանն էին նայում, կամ պատուհանին։ Բանն  
այն ե, վոր պակասում եւ սովորական մի «բան», վո-  
րին ընտելացել էին բոլոր — յեթե միայն «բան» կա-  
րելի յե առել կենդանի եւ այն եւ պատկառելի մարդուն։  
— Պակասում եր գնեքալ Ալոշը։ Առանց նրան կյանք  
չկար ակումբում, մանավանդ վոր, նրա հետ մեկտեղ  
պակասում եր նաեւ ակումբի «յերկրորդ հոգին» — ա-

կումբի կենտրոնը — Մագուքի Համոն։ Դեռ խաղն սկը-  
սելուց առաջ Ռսեի Նարիմանովը հարցրեց, այսինքն  
վոչ. — ակումբ մտնելով, ըստ իր մշտական սովորու-  
թյան, Ռսեի Նարիմանովն ուրախ բացականչեց — «Խո-  
րի՛ն հարգամենքս Ալոշա Նիկիտիչին...» — բայց պա-  
տասխան չստացավ այն հասարակ պատճառով, վոր  
Ալոշա Նիկիտիչը չկար։ Ռսեի Նարիմանովը չվարեց։  
Գլխում, մի վայրկյանում, զարթնեցին մի շարք կա-  
կածներ։ Նախ՝ գեռ յերեկ, գիշերվա ժամի չորսին ա-  
կումբից յեկնելիս, գեներալ Ալոշը խոսք եր տվել առա-  
վոտյան տասին ակումբում լինել եւ շարունակել ընդ-  
հատված «մակա»։ Յ՝րկրորդ՝ վերջերս գեներալ Ա-  
լոշը մի տեսակ «ծուռ» աչքով եր նայում Ոլգա Վասի-  
լենային — Շիկախեր Դոմաին։ Իսկ Ոլգա Վասիլենան  
ի՛րն ե, ի՛րը, Ռսեի Նարիմանովին եւ միևնույն ժամա-  
նակ ուրեւ վոչ վոքինը չի կարող լինել։ Գեներալ Ալոշը  
թող այս լավ իմանա, գեներալ Ալոշը... Հաղիվ էին  
այս մտքերը զարթնել Ռսեի Նարիմանովի գլխում,  
յերբ Արամ Անտոնիչը, վորի կնոջ համար այնքան ան-  
հանդատանում եր նրա լավ բարեկամ հաշտարար դա-  
տավորը — ներս մտավ հեհեհ եւ նկատելով, վոր բո-  
լորն արդեն անցնում են գործի — բռնեց, յետեից մո-  
տենալով, Ռսեի Նարիմանովի թևից եւ առաջարկեց  
նրան «մի ձեռք մակառ կամ պրափերան»։ — «Խորի՛ն  
հարգամենքս» — բացականչեց Ռսեի Նարիմանովը սրբ-  
տանց ուրախացած. «Ի՞նչպես ե Ոլգա Վասիլենայի ա-  
ռողջութիւնը, Արամ Անտոնիչ»։ Ռսեի Նարիմանովը  
նոր կարծես մտաբերեց; վոր յերեք որ ե արդեն, ինչ  
չի տեսել Ոլգա Վասիլենային. իսկ յերեկ, ժամը յերե-  
կոյան վեցին, յերբ, ըստ չին սովորության նա գնաց  
Յերկեր Նայերի 5.



«այցելության» (ժամը վեցին Արամ Անտոնիչը սովորաբար դպրոցում էր լինում) — աղախինը հայտնեց, վոր Ուղա Վասիլենան հրամայել է վոչ վոքի չընդունել: Այս դեպքը հիշելով՝ արդեն մթնել էյին սկսում Ոսեփ Նարիմանովի աչքերը, արդեն ցանկանում էր հեռացնել Արամ Անտոնիչի պսպղուն աչքերից իր մշուշած աչքերը Ոսեփ Նարիմանովը, յերբ... — «Ուղա Վասիլենայից ջեմազին բարեկներ» — ասաց Արամ Անտոնիչը խորհրդավոր ժպտալով. և ապա, շրթունքները մոտենցնելով Ոսեփ Նարիմանովի ականջին՝ ինտիմ չչնջաց, — «Մամաշան» — քաղաքի մանկաբարձուհի Ակսյոնա Մանուկովան — «յերեկ յերգվեց, վոր այս անգամ անպայման — անսպասելի տղա կլինի...»: Ոսեփ Նարիմանովի սրտից ծանրութունը, քար, ընկալ: — Ի դուր չե, ուրեմն, իր յերկարամյա մտերմութունը Ուղա Վասիլենայի հետ — մտածեց նա զվարթացած և հայտնեց, բարեկամաբար սեղմելով Արամ Անտոնիչի ձեռքը. — «Պատիվ ունիմ Կոլեզկի կնքահայրը լինելու. — հասկանում եք, Արամ Անտոնիչ, — անսպասելի «կոլեզկի»... — Յեվ բոլորովին հանգստացած՝ նստեցին խաղի: — «Իսկ ո՞ւր է Ալյոշա Նիկիտիչը» — հարցրեց, թուղթը բաժանել սկսելով, Արամ Անտոնիչը, մի վայր կյան անց: Բայց բոլորն արդեն զբաղվել էյին խաղով, այնպես վոր վոչ վոք, չնայած վոր ամենքն էլ զգում էյին նրա բացակայութիւնը, չպատասխանեց նրան: Բժիշկ Սերգեյ Կասպարիչը միայն աչքերը կրկին դեպի պատուհանը հռնեց, ուղեց ասել կարծես, վոր «փչում ե» այնտեղից, բայց դիտի ընկալ, վոր այդ չե անհանգստութեան պատճառը, և, լուռ, շարունակեց խաղալ:

Յեվ ահա, ցերեկվա ժամը մոտավորապես տաս-

ներկուսին, շնչասպառ ներս ընկան գեներալ Ալոշը և Համո Համբարձումովիչը — Մագուրի Համոն: Ռուսերի պես ներս ընկան գեներալ Ալոշը և Մագուրի Համոն, արագ մոտեցան սեղաններին, խառնեցին թղթերը — թափեցին հատակին... Բոլորը վեր թռան տեղերից զարմացած ու ապշած: Իսկ Կինտաուրի Սիմոնը, չնայած վոր բոլորից շատ էր տարվել և ավելի մեծ առիթ ուներ բարկանալու — ինքը ևս, անակնկալի յեկած, կարծելով, յերեկ, վոր հարբած էն «տղերքը» — վեր նետեց թղթերը, վոտքի թռչելով, և բացականչեց, հիմարացած. — Ուռա՛, ուռա՛, ուռա՛, ուռա՛...:

— Ի՞նչ է, ցնդե՞լ եք, գասպաղա, — զայրացած բացականչեց բժիշկը՝ ձեռքը «եղանին խփելով. — Ի՞նչ է պատահել:

Յեվ դեռ չէյին կարողացել ուշքի դալ մյուսները, յերբ Համո Համբարձումովիչը ձեռք վեր բարձրացրեց, նշան անելով, վոր լսեն, և —

— Պատե՛րազմ, — հայտարարեց Համո Համբարձումովիչը կիսաձայն ու տիրեց լուռության ականածանք ու զարմանք:

Գեներալ Ալոշը ևս ցանկանում էր ինչ-վոր բան ասել. ձեռքը վեր բարձրացրեց, բայց տիրած լուռությունից ազդված՝ լուեց ու մնաց: Արամ Անտոնիչի աչքերը հառած մնացին գեներալ Ալոշի վեր տնկած ձեռքին: Հիմարային մի ժպիտ վախեցած քարացալ Կինտաուրի Սիմոնի — Կլուրի Մեյմունի դեմքին: Սերգեյ Կասպարիչը ձեռքը շրթունքներին տարավ և, մեքենայաբար, ինչպես այդ պատահում էր բժշկի հետ ընդունելութեան պահերին՝ չոր, պաշտոնական հաղաց: Հետո գեներալ Ալոշը և Մագուրի Համոն պատմեցին յեղելութիւնը,



ինչպես վոր գիտեցին: Բանից դուրս յեկավ, վոր առա-  
վոտյան ժամը յոթին-ութին, յերբ Համո Համբարձու-  
մովիչը դեռ քնած է լինում, վոչնչից տեղեկություն  
չունենալով—զալիս հայտնում են, վոր գավառապետը  
խնդրում է իսկույն իր մօտ անցնել մի չափազանց կա-  
րևոր գործով: Խնդրում է, վոր Ալյոշա Նիկիտիչին ևս  
վերցնի: Իսկույն հագնվում և Ալյոշա Նիկիտիչի բնա-  
կարանն է վազում Մազուլի Համոն: Միասին գնում են  
գավառապետի բնակարանը: Վերջինս, առավոտյան այդ  
անսովոր պահուն, չափազանց սիրալիր ընդունելով  
հյուրերին,—հայտնում է նրանց, վոր «կամօքն Աստծո  
և Ոգոստոսափառ Կայսեր՝ Ռուսաստանը, հարկադրու-  
ված, պատերազմ է հայտնել... այսինքն գերմանական  
ստոր կայսր Վիլհելմ II-ը պատերազմ է հայտարարել  
Ռուսաստանին: Հարկավոր է այսոր ցույցեր կազմակեր-  
պել, ասել և գավառապետը Ալյոշա Նիկիտիչին և Մա-  
զուլի Համոյին,—և հասկացնել ժողովրդին դեպքի մեծ  
նշանակությունը—դեպքի խոշորագույն նշանակությունը»:

Համո Համբարձումովիչի պատմածը ունկնդիրների  
վրա թողեց վորոտի տպավորություն: Բոլորը ձեռք  
քաշեցին թղթախաղից և, Ալյոշա Նիկիտիչի առաջնոր-  
դությամբ, դուրս յեկան ակումբից: «Պարոնայք, հար-  
կավոր ե սկսել»—ասաց Համո Համբարձումովիչը ա-  
կումբի դռանը կանգնելով: «Ի՞նչը»—հարցրեց Կինոս-  
տաուրի Սիմոնը անհանգստացած. նրան թվաց, թե  
հարկավոր է պատերազմ սկսել:

— «Ա՛յ, հիմա կտեսնես»— պատասխանեց Համո  
Համբարձումովիչը խորհրդավոր և կրկին մտավ ա-  
կումբ՝ Կինոստաուրի Սիմոնը նրա յետևից: Ակումբից

դուրս յեկան նրանք՝ կայսեր մեծադիր նկարը բրո-  
նած, իսկ նրանց յետևից դուրս յեկավ ակումբի ծա-  
ռայողը և դրեց ակումբի առաջ թղթախաղային կանաչ  
մի սեղան: Կայսեր նկարը բռնեցին գնեկրավ Ալյոշը և  
Ռսեփ Նարիմանովը. Մազուլի Համոն բարձրացավ ու  
կանգնեց թղթախաղային կանաչ սեղանի վրա. ժողո-  
վուրդը հավաքվեց: «Պարոնայք»—բացականչեց, ձեռ-  
քը վեր բարձրացնելով, Մազուլի Համոն, բոլորը քար  
կտրեցին, մնացին բերնարաց. հրաշք եր, զարմանալի  
զարմանք այդ Համո Համբարձումովիչը—Մազուլի  
Համոն...

Հայտնեց, հայտնեց՝ թղթախաղային այդ կանաչ  
սեղանը պատվանդան արած՝ թղթախաղային կանաչ  
սեղանի ահռելի բարձունքից Համո Համբարձումովիչը  
ներքևում խոնկած նայիրցիներին պատերազմի լուրը:  
Հայհոյեց՝ աչքերը կաթկլտուռ թափեցին. չանթեց իր  
բարձունքից գերմանական ստոր կայսր Վիլհելմ II-ին  
Մազուլի Համոն: Ամբոխի մեջ կանգնած մանրածախս  
Կուլպրոտցանին թվաց, վոր Մազուլի Համոյի վոխերիմ  
թշնամին է, անձնական «պարտքները»—գերմանական  
ստոր կայսրը՝ Վիլհելմը: Իսկ քիչ դենը կանգնած վար-  
սավիր Վասիլին Վիլհելմ կայսրը պատկերապես վորպես  
արյունալորու մի հրեշ: Չմոռացավ հայտնել նաև Մա-  
զուլի Համոն գավառապետի պատմած այն կարևոր  
հանգամանքը, վոր մեր ամենակարող քաղաքավոր-կայս-  
րը քանիցս անգամներ հեռագիր է խփել Վիլհելմին՝ ա-  
ռաջարկելով հաշտ-խաղաղ վերջացնել ծաղած քյուլի-  
մացուքյունը, բայց նրա հեռագիրները, ցավոք սրտի,  
մնացել են անհետեանք: Վերջում կոչ արավ Մազուլի  
Համոն ողնության հասնել ընդհանուր հայրենիքին այդ



աղետալի ժամին՝ հոժարակամ դռհել, չինայել անձնա-  
կան փոքրիկ զոհարերությունները մեծ հայրենիքին:  
«կեցցե, ուրեմն, մեր քաղաքը կայսրը և պանծալի  
բանակը. կորչի ստոր կայսր վիլիելմ II-ը. ուռա՛ւա»  
—վերջացրեց իր պատմական այդ ճառը Մաղութի Հա-  
մոն և, ի մեծ դարմանս նրա—տիրեց լուսթյուն: Չկար-  
ծեք սակայն, վոր ժողովուրդը դիտմամբ չձայնակեցե-  
լի հարկե, վոչ. ժողովուրդը չգիտեր, ղեռ չեր սովորել,  
վոր նման ղեպքերում հարկավոր է արձագանքել: Բայց  
ահա ողնության յեկավ իր բացառիկ դիրքով գեներալ  
Ալոշը. իր նման չաղ ծերուկից բավականին անսպասելի  
ճարպիկությամբ՝ ցատկեց կանգնեց Մաղութի Համոյի  
կողքին, կանաչ սեղանի վրա, գեներալ Ալոշը. «ուռա՛-  
ւա» — բացականչեց գեներալ Ալոշը գլխարկը թափա-  
հարելով. Սերգե կասպարիչը, Ոսեփ Նարիմանովը և  
Կինտաուրի Սիմոնը ահաճայն կրկնեցին—և արդեն  
ծայրե ի ծայր այգին թնդում եր բացականչությունից,  
«սնպես վոր նույնիսկ պ. Մարուֆեն, վոր արդեն բա-  
ժանվել եր խաղընկերներից և խառնվել եր ժողովուրդին,  
մի վայրկյան շփոթվեց՝ քիչ մնաց ինքն ել գլխարկը  
հաներ և գաղանախման մոնչար: Բայց պ. Մարուֆեն,  
իհարկե, այդ բանը չարավ. առաջին իսկ որից ինքնու-  
րույն դիրք բռնեց պ. Մարուֆեն գեպի կատարվող անց-  
քերը—բայց այս մասին հետո:

Դեռ թնդում եր այգին ուրախ բացականչությունից,  
յերբ հնչեց գավառապետի ուղարկած զինվորական յե-  
րաժշտախումբը. զինվորական յերաժշտախումբը նվա-  
դում է «Բոժե ցարյա»: Բոլորը գլխարկներն հանեցին.  
յերաժշտախումբը լուց: «կեցցե մեր սիրելի կայսր Նի-  
կոլա II-ը.—ուռա՛ւա» — նետեց Ոսեփ Նարիմանովը

գեպի հասարակությունը և նորից, կանաչ սեղանի վը-  
րայից, չափ տվին, ձեռքերը թափահարելով, գեներալ  
Ալոշը և Մաղութի Համոն: Ապա, բավականին չափ տա-  
լուց և բզավելուց հետո, ցած իջան գեներալ Ալոշը և  
Մաղութի Համոն, և ահա, յերկու այդ պատկառելի  
նայիրցիների առաջնորդությամբ, քաղաքացիների թա-  
փորը դուրս յեկավ այդուց և շարժվեց գեպի մեծ փո-  
ղոցը՝ գալառապետի բնակարանը:

Յերբ թափորը, զինվորական յերաժշտախմբի նվա-  
գակցությամբ, անցնում եր Տեղեֆոն Սեթոյի և Յեզու  
Արդումանովի սրճարանների մոտով—նրանցում հավաք-  
ված նայիրցիները, վոր դրադված էյին քուլք, դովինո,  
կամ նարդի խաղալով, դուրս թափվեցին և, մինչև թա-  
փորի հեռանալը, մնացին կանգնած սրճարանների ա-  
ռաջ: «Ե՛ս ի՞նչ զայաբալըդ ե ելի» — հարցրեց Մեռելի  
Յեռոֆը՝ զինների աղջիկը ձեռքին: «Յլի հացը պիտի  
քանգընա» — պատասխանեց կտրուկ Տելեֆոն Սեթոն և  
ներս մտավ սրճարանը գլուխն որորելով: «Հե՛չ չեմ  
հասկընա, քե յամի ընչի՞՞ յե ես գուռնա—նաղաբեմ—ա-  
սաց նա սրճարանում՝ վոչ թե մասնավորապես մեկին,  
այլ ընդհանուրին դիմելով, բայց պատասխան չստացավ  
վորովհետև ղեռ դուրսն էյին բոլորը, նայում էյին թա-  
փորին: «Յլի հացը պիտի քանգընա, եդ գուռնեմ ե կը  
փչեմ» — կրկնեց նա իր խոսքը, յերբ ներս մտան նորից  
այցելուները՝ ընդհատված խաղը շարունակելու: —  
«Ըբբ ի՞նչ պտի եղնի» — պատասխանեց նրան Գոռ Արու-  
քը, — և նայիրցիները, խորհրդավոր, գլուխներն որո-  
րեցին: Սրճարանում յեղածներից մի քանիսը սակայն,  
ինչպես պ. Արումարը, մանրավաճառ «Փռանգը», կա-  
թոլիկ Դանելը և ուրիշները, տեսնելով, վոր թափորն



առաջնորդում են այնպիսի պատկանելի նայիրցիներ, ինչպիսիք են գեներալ Ալոշը և Մագուրի Համոն, — իրենք ևս խառնվեցին թափոթին, գնացին հոսանքով։ Շուտով հայտնի յեղավ ամենքին, վոր գնում են դավառապետին իրենց փաղափայտական պատճառատակա-մուքյունը հայտնելու, իրենց հպատակությունը, — և պ. Աբոմարը դտավ, վոր այդ միանգամայն անհրա-ժեշտ է, անհրաժեշտ ու ցանկալի։ «Աշտ մինչև ֆանի տարեկանը պիտի կանչեն» — հարցրեց կաթողիկ Դանե-լը մտահոգված. «Վո՞վ գիտե, նայած հանգամանքին» — խորհրդավոր պատասխանեց Աբոմարը և յերկու խո-սակիցներն ել, կարծես թե, տխրեցին. լուռ քայլում ե-լին՝ աչքերը սևիական կոշիկներին հառած։

Կիրակի, չոր ուր եր. արևը վաղում եր վոսկեզույն. յերկինքը, պարզ, անամպ՝ կործվել եր քաղաքի վրա, վորպես կապույտ ափսե։ Նվազում եր յերաժշտախում-բը, մարդիկ, կիրակնորյա դուշնգույն շորերով, հե-տեվում ելին նրան. և ամբոխի մեջ խոնաված, մեծ մա-սամբ յերաժշտախմբի առաջն ընկած յերեսաներին զը-վարթ խրախճան եր թվում անհասկանալի այդ յերթը։ Տաս-տասերկու տարեկան մի տղա, Հաջի Ոննիկ եֆեն-դի Մանուկոֆի «սղտիկը», վոր հայտնի յեր բոլորին իր չար բնավորությամբ — քայլում եր, հաղթական, թըմբ-կահարի կողքից և, իրեն զինվորականի նմանեցնելով, չափ եր տալիս՝ «Մե՛կ-յերկո՛ւ, մե՛կ-յերկո՛ւ, մե՛կ-յերկո՛ւ»։ Թափորը վերջապես մոտեցավ դավառապետի բնակարանին։ Յերաժշտախումբը նվագեց «Բոժե ցա-րյա», դավառապետը յեկավ պատշգամբ։ «Ուռա՛» բա-ցազանչեց ամբոխը՝ գեներալ Ալոշի ղեկավարությամբ։ Ապա տիրեց լուռթյուն՝ մեռելային սարսափ։ Բոլորի

աչքերը մեխվեցին դավառապետին։ Նա — նիհար չ բարձ-րահասակ, — բարակ ձեռնափայտ և կարծես՝ ծայրին սոխի գլուխ։ Մի-յերկու վայրկյան նայում և վերևից, պատշգամբից, ներքևում հավաքված ամբոխին բարձ-րահասակ դավառապետը։ Ջեռքը բերանին և տանում՝ հաղում և յերևի, և ապա — չոր, կտրուկ, զինվորակա-նին վայել հստու, հաստատ ձայնով սկսում և խոսել։ Պատերազմ։ Կայսր։ Վիլհելմ II։ Մեր պարտքն և ծառա-յել հայրենիքին ու գահին։ Կեցցե՛։ Կո՛րչի՛։ Ուռա՛։

Նորից արձագանքում և ամբոխը, նորից նվազում և յերաժշտախումբը «Բոժե ցարյա»։ Յեկ՝ ահա — նորից դուրս և դալիս... Մագուրի Համոն։ Քաղաքացիների դեմքը վաղում և պարծանքից, փթթում և նայիրցիներ-րի դեմքը, վորպես բացված մի վարդ։ Ի՞նչ պիտի ա-նեք, ասացե՛ք խնդրե՛մ, նայիրյան այդ քաղաքը, յեթե չլինեք Համո Համբարձումովիչը, այդ «Լույսի» կառա-վարիչ Մագուրի Համոն։ Կկորչեք, վոտնատակ կլինեք՝ կթաղվեք տղիտության անսահման խալաբում։ Ամեն տեղ նա յեր, ամեն դժվարին դեպքում նա՛ պիտի, միայն նա՛, սայլը ցեխից հանեք։ Այդպե՛ս ել այժմ։ Քա-ղաքացիների կողմից նա, Մագուրի Համոն, ամենայն պատրաստակամություն հայտնեց մինչև վերջին կաթիլ արյունը կո՛վելու՝ հանուն գահի և հայրենյաց։ Գիտեք, հասկանում եր Համո Համբարձումովիչը, թե՛ վորտեղ ինչ լեզվով և հարկավոր խոսել։ Ո՛ձի լեզու ունեք Համո Համբարձումովիչը — Մագուրի Համոն։

Մագուրի Համոյից հետո շնորհակալություն հայտ-նեց յերախտապարտ քաղաքացիներին դավառապետը և ապա առաջարկեց ցրվել տները և զբաղվել առօրյա գոր-ծերով։ Գեներալ Ալոշը, Համո Համբարձումովիչը,



Ոսեպ Նարեմանովը և բժիշկը հրավիրվեցին վեր՝ ճաշի։ Ժողովուրդը ցրվեց․ զնացին՝ վորը տուն, ճաշի, վո՛րը Յեգու Արզումանովի, կամ Տելեֆոն Սեթոյի սրճարանը, վոմանք ել կրկին քաղաքային այգին՝ վերադարձան՝ որվա մնացած մասն այնտեղ անցկացնելու։

Այսպիսի ահա շուքով ու հանդիսավորությամբ դիմավորեց նախրյան այդ քաղաքը հետադարձում համաշխարհային պատերազմ կոչված արշավալի հյուրին, դիմավորեց, ինչպես այդ վայել եր ամեն մի իսկական քաղաքի, խորին աչալընթյամբ, և այդ հանգամանքում քաղաքը պարտական եր կրկին նրան, իր արժանի գավալին—Համո Համբարձումովիչ Ասատուրովին—Մադուքի Համոյին։

Հաջորդ ուրը, յերկուշաբթի, բոլորը ինչպես միշտ, արթնացան առավոտ մութլուսուն և զնացին դործի։ Վոչինչ չեր փոխվել, վոչինչ չեր կատարվել, յեթե միայն փոփոխություն չհամարենք այն հասարակ հանգամանքը, վոր զներալ Ալուչը, Մադուքի Համոն և ընկերները այդ առավոտ մի փոքր հոգնած եյին զգում իրենց, մի փոքր կոտրված, ինչպես այդ լինում եր սովորաբար լավ քեֆերից հետո։ Իսկ քաղաքացիների մեծ տոկոսին, մանավանդ առևտրական փողոցի գործնական ներկայացուցիչներին, այնպես եր թվում, թե պատերազմի մասին յերեկ, կիրակի ուր յեղած բոլոր զրույցները վոչ ալ ինչ եյին, յեթե վոչ—կիրակնորյա ներքի հանաքներ․ անցավ կիրակին, յեկավ յերկուշաբթին՝ բավական ե․ Թույլ տվեք զբաղվենք հոգսերով։ Իհարկե, խոսում եյին մեկ-մեկ և պատերազմի առթիվ, բայց խոսում եյին այնպես, լավի ալոց, վորպես իրենց չվերա-

բերող մի բանի մասին։ Այդպես եր—առաջին, յերկրորդ, յերրորդ ուրը, այդպես եր առաջին շաբաթվա ընթացքում, բայց կամաց—կամաց հետո պատերազմն սկսեց նկատելի դառնալ նույնիսկ նախրյան հետո այդ քաղաքի, այո, ամեն ինչում—և նույնիսկ մանրամասն կոլոպոսյանը և Մեռիլի Յոնոֆն սկսեցին զգալ իրենց չընդապատում անսովոր մի մթնոլորտ, անհասկանալի մի փոփոխություն։ Բայց որերում ու ժամանակներում պատերազմ հայտարարվելու առաջին իսկ վայրկյանից կատարված փոփոխությունը բոլորից առաջ պ․ Մարուքեն զգաց նախրյան այդ քաղաքում և այն ել հենց յերկրորդ ուրը, յերկուշաբթի առավոտ—և ահա՛ քե վոնց։

Յերբ, ըստ իր ամենորյա սովորության (իսկ պ․ Մարուքեն բացի իր այս միակ սովորությունից չուներ, ընդհանրապես, և վո՛չ մի սովորություն)։—վարսավիր Վասիլի վարսավիրանոցը մտավ և, նստելով դեղնավուն հայելու առաջ դեմքը, հլու, հանձնեց վարսավիրի թավ կակուղ խողանակին պ․ Մարուքեն—վարսավիր Վասիլի, սապոնոտ խողանակը թեթև սահեցնելով պ․ Մարուքեյի այտն իվար հարցրեց․ «Երեկ եդ ի՞նչ եր, պ․ Մարուքե․ տեսա՞ր Մադուքի Համոյին․․․ Ո՞հի՛ պես կիտներ ունի՞մա՞ծը»։ Պ․ Մարուքեն չպատասխանեց։ Տրամադրությունը վատ եր՝ գիշերը չեր քնել։ Յերեկոյան յոթից մինչև գիշերվա յերեքը պրեֆերանս եր խողացել այգու աղումբում Արամ Անտոնիչի, Կինտաուրի Սիմոնի և ելի սառանան գիտե, թե ում հետ («չեֆերը» չկային․ նրանք, ինչպես գիտեք, ճաշի եյին հրավիրվել դավառապետի բնակարանը և այդ ճաշը, անհասկանալի պատճառով, տեւել եր մինչև գիշերվա տասնմեկը․․․)։ Բայց



բանը նրանց ճաշը չէր, ի հարկէ, պ. Մարութեն թքե՛յ, ել չէր ուզի նրանց ճաշի վրա. պ. Մարութեն հասկանում էր, իհարկէ, այդ ճաշի խմաստը. դաժառակտի «տակլիզատրները» լակած «Մադերը» չէր նրա մուշկութեան պատճառը, այլ այն, վոր նա յերեկոյան խաղում տարվել էր Արամ Անտոնիչին մի խոշոր դումար և չէր կարողացել վճարել, վորովհետեւ չէր ունեցել մօտը։ Պ. Մարութեն ինքը առաջինը չէր սիրում «նիսիա» խաղալ, բայց ավելի ևս դեմ էր դրան Արամ Անտոնիչը, բայց յերեկոյան դեպքը կատարվեց թյուրիմացաբար, առանց իր իմանալուն. ինքն ել չհասկացավ, թե ինչպէս «տակլիալի» վերջում ինքը տարված դուրս յեկավ չորս հարյուր յոթը ոտբլի, այնինչ մօտը կար ընդամենը հարյուր իննսուն յերկու ոտբլի։ «Յոլդանիդ չափը գիտեմա՛ս» — ասել էր, բարկացած, Արամ Անտոնիչը պ. Մարութենին, յերբ տեսել էր, վոր վերջինս իր տարված դումարը չունի։ «Ներքուր յուն, վաղը կվնարեմ» պատասխանել էր պ. Մարութեն քաղաքավարի և շտապ դուրս եր յեկել ակումբից՝ յետեից լսելով Արամ Անտոնիչի հոհոտը և Կինտաուրի Սիմոնի, այդ Կլուբի Մեյմունի ստրկական արձագանքը... Մեծ ինքնասիրություն ունէր պ. Մարութեն և սիրում էր ամեն ինչում «գերմանացի» լինել, այնպէս վոր այդ դեպքը թողել էր նրա վրա ահռելի տպավորություն, վորչնչացրել էր նրան, հավասարել դեմին։ Գունաթափ յեկել էր տուն և յիսն ի վայր ընկել էր անկողնու վրա. մինչև առափսյ մնացել էր այդպէս. Բորբորված ուղեղում մինչև առափսյ մօտ ձեռը դանդաղ դուգորդությամբ ու կարգերով չարվել էյին — քվեք, քվեք, քվեք. գույնգգույն քրքաքրամներ, խաղաքրքեր։ Գլուխը ցավում էր հոգնու-

թյունից. ուղեղը մշուշի յեր մնան. ծփում էր, ծանր, մութ, ծփում էր ուղեղը. և, տարբեր ձևերով ու կարգով, չարվում էյին ուղեղի միջով — քվեք, քվեք, քվեք. գույնգգույն քրքաքրամներ, խաղաքրքեր։ Պ. Մարութեն յերեք չէր յերկարել իր վտառները վերմակից ավել. կգտնի, այսօր ևեթ կգտնի պ. Մարութեն այդ խղճուկ կոպեկները և վշպտի այդ շտեպի դեմքին։ Յեւ այժմ ել, դեմքը դեմ արած վարսավիր Վասիլի թալ, կակուղ ածելուն՝ հենց այդ էր մտածում, իր հոգնած ուղեղի չհնազանդվող ձիգերով պ. Մարութեն. ո՛ւմնից վերցնի։ Դեմքը դեղնել էր, այրվել, աչքերը՝ բութ, անխմատ՝ նայում էյին — ինքն ել չգիտեր, թե ո՛ւր. աչքերը տեսնում էյին — գույնգգույն քրքաքրամներ։

Վարսավիր Վասիլը — ի՞նչ շունկ եր, վոր չիմանար... իհարկէ գիտեր, դեռ յերեկոյան լսել էր բանի յեղևությունը, բայց չէր ուզում այդ առթիվ խոսել. նույնիսկ պ. Մարութենի, ըստ սովորութեան, «տրամադրարքունը» չհարցրեց. գիտեր, վոր «վատ» է — ի՞նչ հարցնէր։ Մոտեցրել էր չթունքները, սահում էր — թալ, թեթեւ քայլելով՝ սահում էր ածելին նրա դեմքն ի վար։ Լուռ էր, տոթ ու հանգիստ. լսվում էր վարսավիրի դանդաղ շնչատությունը — ու գուցէ, կպչող, բաղանիքի չոգիի նման խեղդող ալիքներով քսվում էր Վասիլի շնչատությունը պ. Մարութենի դեմքին։ Բայց պ. Մարութեն վոչինչ չէր նկատում. պ. Մարութենի հոգնած ուղեղում, ինչպէս բաղնիքի մառախուղում, որորվում էյին, չոգիի գույնգգույն կաթիլներին նման — գույնգգույն քրքաքրամներ։

Դուռը բացվեց և ներս ընկավ — մանր, չոր, հաստատ քայլերով, կարծես յերկու ձեռնափայտ էյին հատակին խփում — Հաջի Մանուկով Եֆենդին։ «Հը, բալի լույս եփենդի աղաներս, բարաջողում» — ուրախ բացականչեց







— «Յավաշ, ե, յավրում, ի՞նչ յեղավ քեզի» — բացառանքեց Հաջին, բարկացած. ապա — «Գնա՛ Սիմոնին ըստ դառվե մը հրամցնե հաշվուս, յես ժամանակ չու՛նիս. նե՛րոյ կըլլաս» — ասաց նա, Հաջի Ոնիկ և Ֆենդի Մանուկոֆը. դուռը բաց արավ արագ, մտալ և դուռը յետ խփեց պ. Մարուքեյի քթին:

Հասկացավ պ. Մարուքեն, վոր հույս չկա: «Թո՛ւ՛» թեց պ. Մարուքեն, վարսավիր Վասիլի նման, եփեկ-դու հասցեյին: Յեւ քայլեց... ո՛ւր: Մթնեց, մթնեց աշխարհը պ. Մարուքեյի աչքին, հուսահատությունը հասավ բարձրագույն կետի: Կսլատմե, ծաղրելով, կպատմե յերևի իր բոլոր ծանոթներին Արամ Անտոնիւր չը հիմա այդ «վերջին խայտառակությունը»: Կպատմե — պ. Մարուքեյի մթնած ուղեղում յերևացին դուռնաւոր, զաղրելի դեմքերն Ոսեփ Նաբիմանովի, Գեմեթալ Ալոշի, Մագուքի Համոյի: Յեւ հանկարծ, այդ վայրկյանին ահա, հուսահատության այդ ծայրահեղ վայրկյանին — հիշեց յերեկվա յեռուզեղը պ. Մարուքեն. կանգնեց, պատկերացավ հանկարծ պ. Մարուքեյի բորբոքված ուղեղում կանաչ սեղանի վրա կանգնած Մագուքի Համոն: Յեւ Մագուքի Համոն, այդ ամենաանսովորական «լույսի» կառավարիչ Համո Համբարձումովիչը, յերևաց նրան — ուրիշ. յերևաց անծանոթ: Ինչպես հեռո՛ւ-հեռո՛ւ, պատմական մի անձնավորություն, կանգնեց նրա գլխում Մագուքի Համոն... Ինչպես պատմության դասադրքից — հանած գրավյուր՝ պատմության դասադրքից սահեց Մագուքի Համոն դեպի պ. Մարուքեյի բորբոքված ուղեղը: «Պատերազմ» — ասաց յերեկվա ձայնով, պ. Մարուքեյի բորբոքված ուղեղին Մագուքի Համոն: Յեւ. պ. Մարուքեյի սրտում ինչ-վոր անհայտ մի ձեռք շարժեց, ժամացույցի սլաքի նման, ինչ-վոր ծանր մի բան սո-

վորական տեղից. պ. Մարուքեն հասկացավ, վերին մի հրաշքով գլխի ընկավ հանկարծ, վոր այդ վայրկյանից սկսած ուրիշ ե աշխարհքն արդեն, — վոր, այդ վայրկյանից սկսած, սկսվում ե որեքում և ժամանակներում և ուրիշ մի բան. — այն, վոր փոխելու յե աշխարհքը հիմնովին, ցնցելու, տակն ու վրա յե անակու — յեթե միայն կարելի յե այսպես ասել — դա՛րավար հիմքը... Յիրկի մեյմունի նման, ինչպես կասեր այդ մասին վարսավիր Վասիլը, — գլխիվայր մի ցատկյուն կատարեց կանաչ սեղանի վրայից, ինչպես դարավոր մի պատվանդանի վրայից, պ. Մարուքեյի ուղեղում Մագուքի Համոն. գլխիվայր մի ցատկյուն կատարելով՝ Մագուքի Համոն թռավ դեպի պատմության դասագիրքը... Նորից, ինչպես ամբողջ գիշերը, սահեցին, դանդաղ, շարժվեցին մի վայրկյան նրա ուղեղում — գույնգույն քղքաղքամներ: Բայց, ի մեծ վարմանք իրա, սիրտը չպաղեց, չխոցվեց, չձմրվեց: «Յեռունդա՛» — դուրս թռավ, լսելի ձայնով, պ. Մարուքեյի շրթունքներից. քարե մի ծանրություն սրտից ընկավ: Արագացրեց քայլերը պ. Մարուքեն. պ. Մարուքեն գնաց տուն՝ քնելու:

Հետագայում, հիշելով այդ վայրկյանը, քթի տակ ժպտում եր իր այդ վարմանալի, համարյա մարգարեյական տեսողական կարողության վրա պ. Մարուքեն. բայց հետագայում իր այդ համարյա մարգարեյական տեսողական կարողությունն այլ բանի յեր վերագրում պ. Մարուքեն. — պ. Մարուքեյի կարծիքով՝ իր այդ համարյա մարգարեյական տեսողական կարողությունը հետևանք եր վոչ թե ուղեղի բորբոքման, ինչպես կարող ե մտածել միամիտ ընթերցողը, այլ, յեթե միայն գեղարվեստական գրվածքում կա-



բելի յե այսպես արտահայտվել քաղաքական հեռատեսությամբ...

Արդեն սկսվել էր «կոնվը» ինչ-Վոր անհայտ տեղերում. մի, յերկու ամիս եր արդեն, ինչ սկսվել էր պատերազմը: Վաղուց արդեն ծայր ելին առել չչուկներ, Վոր չուտով, այսօր չե—վաղը, ինչպես Տեկեֆոն Սեքոն եր ասում՝ «ռուսը կովի կը կանչե անորենին»: Խոսում եր՝ արդեն ասում եր քաղաքային այդում ընկ. Վառոդյանը ծանոթ որիորդներին, Վոր կա, արդեն «կենտրոնում» ստացված են ստույգ տեղեկություններ, Վոր չուտով, շատ չուտով կոխվ կհայտարարվի նաև «վառլսին» և այն ժամանակ արդեն ամեն ինչ կփոխվի... Լայն հոբիգոններ կբացվեն այն ժամանակ Նայերի համար,— խորհրդավոր ձայնով, վորպես պետական մի գաղտնիք, ասում եր ընկ. Վառոդյանը ծանոթ որիորդներին: Չգիտեմ այդ ի՞նչ փոփոխություններ ե, Վոր դեռ պիտի տեղի ունենային այդ քաղաքի կյանքում և ի՞նչ հորիզոններ պիտի բացվեին Նայերիի առաջ այդ խորհրդավոր փոփոխություններից. չգիտեմ, ասում եմ, Վոր տեղից եր ստանում «կենտրոնը» նման տեղեկություններ. բայց մի բան կարող եմ հաստատ ասել, Վոր վերջ փոփոխություններ արդեն իսկ տեղի ելին ունեցել չատերի գործերում, բայց այդ բանը, դժբախտաբար, չեմ կարողացել տեսնել ընկ. Վառոդյանը: Այդ «տեղեկությունները» նա կարող եր ինքը, առանց «կենտրոնին» գիտելու, հենց տեղում ստանալ և ամեն մի ամենահասարակ նայիրցուց, թեկուզ հենց մանրամասն կոլապոտյանից, Վորի առաջ, այո՛, արդեն իսկ բացվել ելին վերջ հորիզոններ... Նրա, մանրամասն կոլապոտյանի

կյանքում, արդեն իսկ տեղի յեր ունեցել այն աչքի ընկնող, կենսական փոփոխությունը, Վոր, մի-յերկու ամիս ընթացքում, ռաֆինադ շաքարի գինը 14 կոպեկից թուել եր 17-ի: Ավելացրել եր գինը— Հաջի Ռնիկ եֆենդի Մանուկովը, Վոր ստանում եր շաքարը տեղից, ստանում եր վագոնով և, իր հերթին, պարկերով ծախում եր մանրամասններին: Բայց այդ դեռ չնչին փոփոխություն եր, համեմատած այն ավելի քան չոչափելի փոփոխության հետ, Վոր տեղի յեր ունեցել հենց այդ նույն կոլապոտյանի հարեան՝ Կաքովիկ Սիմոնի խանութում: Յեվ ուրիշ խանութներում ևս, վորոնցում պակասել եր արդեն, կամ պիտի պակասեր, կամ պակասելու վրա յեր ոգնող ձեռքը. Վորի վորդին, յեղբայրը, վորը հենց ինքը: Գնացել, տարել ելին արդեն—Կաթուղիկի վորդուն, նրա հարեան Կարապետյանի, Մարտիրոսյանի ու հաղար ու մի անհայտ «յան»երի վորդներին, յեղբորը, իրան: Հերթի ելին հենց իրենք— պ. Աբոմարչը, Կինտուրի Սիմոնը, սա, նա, մյուսը. վորը թվես: Արդեն, ամեն առավոտ յերեւում ելին պատերի վրա—պատերի վրա իրակցում ելին արդեն ինչ-Վոր անհայտ ձեռքեր սպիտակ հրամաններ: Կանչում ելին թղթերի վրայից, պառտերի վրայից, կանչում ելին սպիտակ հրամաններ— սրան, յերկրորդին, հարյուրին. կանչում ելին դեպի Հինգհարկանի Ծեմք: Գալիս, թափվում ելին արդեն ամեն առավոտ, լցնում ելին փողոցներն ու մեյդանը— պատանի, յերիտասարդ, տարբեր տրեխավորներ. չըջանի գլուղերից գալիս հավաքվում ելին Հինգհարկանի Ծիկուրյան առաջ: Գնում ելին այդտեղից—կայարան. խմբերով դնում ելին կայարան: Կանչում եր, յերկար ու կարմիր, սպրանքատար գնացքը. կանչում



եր կայարանից բախկանին հեռու, դեպոյի մոտերքը։ Տրեխավոր մարդիկ լցվում էին մեջը, թափվում էին մեկը մեկի վրա, ինչպես ձկները տակառում։ Սուլում էր շողեմեքենան. սուր, խեղդամահ արվող անասունի նման, սուլում էր սուլոցը շողեկառքի։ Տրեխավոր մարդիկ գոռում էին անիմաստ. տրեխավոր յերիտասարդները յերգում էին պառավաճայն.—

«Տա՛ —նը՛ը՛ը՛ —մեն— ադե՛ ջա՛մ— տա՛ա՛ —նը՛ը՛ը՛ — մե՛կե՛կե՛կե՛ն...»։

Իսկ մյուս կողմից, դալիս էին դնացքներ, ամեն ոք, ամեն գիշեր դալիս էին դնացքներ անհայտ հեռուներից դեպի նայիրյան այդ քաղաքը։ Ու լցվում էր քաղաքը «սոխ» գինվորներով. լցվում էր քաղաքը ուրիշ վրա, վայրկյան վայրկյանի յետևից։ Ուրախ էին Յեգոր Համբարձումովը, Բոչկա Նիկալայը, մանրափամառ կոլպապոյանը։ Ուրախ էր, ընդհանուր առումով, ամբողջ Լոբիս Մելիֆյանը՝ կայարանից—մեյդան։ Եւ, իհարկե, առավոտ կանուխ, մշուշի միջից իր խանութը վաղուց նայիրցի վաճառականը, մանրափավաճառը, չարչին, Հաջի Մանուկովին ու Կոլոպոտյանը չէին մտածում, վոր մինչև իննը—տասը, ինչպես այդ տեղի յեր ունենում առաջ, պետք է իրենց խանութների դռներ անդործ կանգնած, ձանձրույթից հորանջեն։ Ո, վո՛չ, իհարկե վոչ։ Առավոտվա ծեղից մինչև յերեկոյան մութը լի՛քն էր, լի՛քն էր լինում փողոցը հիմա «սոխով ու սխտրով», ինչպես անվանում էին խանութպանները ուս գինվորներին և դյուղացի նորահավաքներին։ Յեկ ի՛նչ. վատ չէ՛ր։ Վորը մի քառորդ չաքար, վորը հինգ կոպեկի հալվա, վորն էլ ուրիշ մի բան—ամենքից մի կոպեկ, հաշիվը—հարյուր՝ մանեքը

կա։ Այդ դեռ մանր—մուշրը։ Սրա հետ համեմատած— թալան էր, ինչպես նախանձելով, ասում էր Կոլոպոտյանը,—հաջի Մանուկովինը, պարսիկինը և ուրիշ մեծ մաղազաներինը՝ փողաքչիներինը։— «Տասը վագոն սապոն, 10 խոզի ֆարալ, տասն էլ չգիտեմ ի՞նչ գանձումար»—ահա, Կոլոպոտյանի հաշվով նրանց, «տումարը»։ Մենակ Մեռելի Յեմեմ էր, խեղճը, հին որերի որը. սկզբում նա կարծեց, վոր իր դործը ևս աջողակ կգնա, բայց չարաչար սխալվեց. մեռնողները ճիշտ է, շատացան աշխարհում, բայց վոչ այնպիսիք, վորոնք պետք ունեին դադաղի. «սոխերին», ինչպես նա յեր ասում, «կազմնի» էին թաղում, այսինքն՝ առանց դադաղի, իսկ «սխտրները»... Դե՛, յե՛րբ էին այդ տրեխավոր «քոկները» մարդավարի ապրել։ Այնպես վոր նա, ինչպես առաջ, որվա մեծ մասն անդործ, ձանձրույթից ձանձրացած՝ թիթեղե սպիտակ հրեշտակներ էր փակցնում պատրաստի դադաղների վրա, իսկ յերբ դրանից էլ էր ձանձրանում Մեռելի Յեմեմը—գնում էր Տալեֆոն Սեթոյի սրճարանը՝ վերջինիս յեղբոր, հիւուուն անց Բոռ Արուսի հետ դամիմո խաղալու։ Վերջինս ճիշտ վոր կույր էր. բայց, բարեբախտաբար, մի աչքից միայն. այդ մի աչքը Բոռ Արուսը կորցրել էր յերիտասարդ Ժամանակ՝ բարեկենդանի որը մեյդանում «դոչի» հետ մենամարտելիս։ Նրա մոտ էր գնում Մեռելի Յեմեմը իր ձանձրույթը փարատելու, վորովհետեւ իր նման անդործ էր լինում Բոռ Արուսը. յեղբոր սըրճարանում Բոռ Արուսը, յեթե կարելի յե այսպես արտահայտվել՝ վարում էր մշտական խաղակցի պաշտոն։ Մեկ—մեկ էլ կայարան էր գնում Մեռելի Յեմեմը յեկող—գնացողին նայելու, վորտեղից նա վերադառնում էր տխրած կամ ուրախացած. տխրած, վոր ինքը վո՛չ մի



չահ, վո՛չ մի հասույթ չունի զնացող-յեկողներէց, և ուրախացած, վոր ինքը չկա և, յերևի, յերբեք ել չի լինի ուղարկւողներէ շարքերում: Բայց Մեռելի Յենոքի այդ յեթերային ուրախությունը տեղի յեր տալիս ծայրահեղ տխրության, յերբ, նա, քաղաք վերադառնալով, տեսնում եր խանութներում տիրող յեռուզեռութիւնը:—Բոլորն աշխատում եյին, բոլորը շահում—բացի իրենից միայն և մեկ ել իր միակ սրտակից՝ Քոռ Արուբից: Բայց նրան վիճակւած եր զրկւել և իր այդ միակ սրտակիցը—մի հանդամանք, վոր խորը տպաւորություն թողեց նրա ինքնատիրության վրա և մտքեց նրա կյանքում ևս վորոշ փոփոխություններ...

Մի անգամ իր անպետք դադարներէց ու հրեշտակներէց ձանձրացած, Տելեֆոն Սեթոյի սրճարանը գնաց, ըստ սովորության մի ձեռք դոմինո խաղալու, Մեռելի Յենոքը, բայց մեծ յեղալ զարմանքը, յերբ տեսաւ, վոր Քոռ Արուբը սրճարանում չկա: Կարծեց թե դուրս է գնացել, սպասեց, սպասեց—բան դուրս չեկաւ: Քոռ Արուբը չկար: Տելեֆոն Սեթոն ել, դե, առաջմանը չեր, նրա սրճարանը ավելի լիքն եր լինում հիմա «սոխերով ու սխտորնեքով»: Դժվարանում եր հարցնի: Վատ զգաց իրեն Մեռելի Յենոքը, սիրտը սլաքիւմ եր սրտամտությունից, այնպես վոր չկարողացաւ համբերել, մոտեցաւ հարցրեց: «Գործի յեռ դրե վակզլի մեյդանը»—յեղալ Տելեֆոն Սեթոյի պատասխանը. «սոխերում չայ կծախե»: Զհասկացաւ առաջին վայրկյանին Մեռելի Յենոքը, բայց մտաբերեց կայարանը, հիշեց. հիշեց վակզալի մեյդանը: Սուս ու փուս դուրս յեկաւ Սեթոյի սրճարանից ու շտապ քայլերով դիմեց կայարան: Գնում եր խոշոր քայլերով. հեհնէ վազում

եր փողոցի մեջտեղից Մեռելի Յենոքը. սոխերը հրում եյին նրան, հայհոյում եյին յերբեմն, յերբ դիպչում եր նրանց, բայց ուշադրություն չեր դարձնում. գնում եր դուռը կախ և ձեռքերը թափահարելով: Յերկար, սե, խոնացած չուխի առանց այդ ել բորբոսնած փեշերը քալում եյին փողոցի փողոն, ավլում եյին փողոցը. նա գնում եր անկանդ, Լիր Արքայի նման սըրտում դառնություն ու կսկիծ՝ Մեռելի Յենոքը գնում եր կայարան: Վերջապես նա հասաւ կայարան և նո՛ր զլխի ընկաւ կարծես, վոր նրա զիմացը դառնալով նախկին ամայի տաքածությունը դարձել է արդեն—բազար, դարձել է, ինչպես Տելեֆոն Սեթոն հորջորջեց—«վակզլի մեյդան»: Նույն խոշոր քայլերով մտաւ վակզալի մեյդանը Մեռելի Յենոքը և այն է, դեռ նոր եր սկսել, դեռ նոր եր ուզում փնտռել իր ընկերոջը՝ Քոռ Արուբին, յերբ մեկը քաշեց նրա փեշից: «Պաշտ, սոխ-հալվարա»—կարծելով, վոր ուս դինիորներն են չուխիցը քաշում, հայհոյեց Մեռելի Յենոքը բարկացած. բայց... «Յե՛ս եմ, մա՛րդ Աստու, հա՛ջ չունի՞ս»—լսեց Քոռ Արուբի ձայնը—և շուտ յեկաւ դեպի նա: Ու մնաց, արձան կտրեց՝ տեղնուտեղը քարացաւ Մեռելի Յենոքը տեսած տեսարանից: Փոքրիկ մի սեղան, առաջին կանգնած թեյ եր լցնում թիթեղե թեյամանից Քոռ Արուբը. կողքին մի ուս դինիոր սարդել եր ձեռքը, վոր վերցնի: «Յա՛, տո՛. գործի՞ յես եղե, Հալվար...»—բացականչեց Մեռելի Յենոքը՝ հայացքը, պուշ, Քոռ Արուբին հառած:—«Հա՛, ի՞նչ եմեմք, Յեմոք ջան. յավաշ-յավաշ փարա կաշխատիմք, ի՞նչ կա ք...»—կարծես արդարանալով, կարծես սարձենալով պատասխանեց Արուբը. սկսեց դեմը դրած բաժակները



մաքրել: Նայե՛ց-նայե՛ց, կոտրած ժպիտը դեմքին, իր նախկին խաղընկերոջը Մեռելի Յենոքը, մի յերկու կցկտուր հարց ու փորձ արավ առևտրի մասին.— «Ն, երբա՛մ» — ասաց ապա, առանց ընկերոջը նայելու, Մեռելի Յենոքը: — Յեվ չուռ յեկավ անսպասելի կերպով. խոշորագույն քայլերով վերադարձավ քաղաք:

Հաջորդե ուրվանից, փոքրիկ սեղանի դեմը կանգնած, հաց ու կալբաս եր ծախում վակցալի մեյդառնում Մեռելի Յենոքը, իսկ մի շարաթ անց ալլևս չեյին վախենում, նրա խանութի առաջով անցնելիս, քաղաքի յերեսաները. Մեռելի Յենոքը լիկվիդացիայի յեր յենթարկել դադադարձությունը և դբաղված եր այժմ «ձեռքի առևտուրով»:

Ահա՛ թե ինչ փոփոխություններ եյին արդեն տեղի ունեցել մի-յերկու ամսվա ընթացքում, քաղաքի կյանքում, — իսկ ընկ. Վառոդյանը դեռ սպասում եր, հիմարը, վոր «կենտրոնը» տեղեկացնի իրեն ինչ-վոր խորհրդավոր փորձումների մասին, վորից հետո միայն, ընկ. Վառոդյանի կարծիքով, պիտի տեղի ունենային վճռոշ փոփոխություններ...

Յեվ անա... հիշում եմ, ինչպես որս, սիրելի ընթերցող. — նորից, և ամեն ինչի սկզբում, ամեն ինչ սկսողը, ամեն հասարակական քիչ թե շատ աչքի ընկնող յերևույթի մասին առաջին շեփորողը — նա ինքն եր, Համո Համբարձումովիչ — Մազուրի Համոն եր նաչիրլան այդ քաղաքում: Յեվ այս անգամ ել ելի նա յեր, ելի նա ինքը, քաղաքի ամենաազդեցիկ մարդը, «Լույսի» կառավարիչը և «Ընկերության» սեղական կոմիսիի նախագահը, — Մազուրի Համոն: Իհարկե, «Ընկերության»

ազդեցիկ անգամ լինելուն եր հարկավոր վերագրել այն հանգամանքը, վոր Մազուրի Համոն ամեն ինչ գիտեր, ամեն ինչ իմանում եր ժամանակին և ժամանակին ել հայտնում եր, ում վոր հարկն եր, ում վոր հարկավոր եր հայտնել ի լուր բոլորի. «Հայսնի՛ր բոլորին» — այսպես եր գրելված, ասում եր ընկ. Վառոդյանը, այն գրության վրա, վոր ստացվել եր, ավելի ճիշտ կլինի ասել՝ վոր ստացել եյին «Կենտրոնից»: Ընկ. Վառոդյանը իր սեփական աչքերով տեսել եր այդ գրությունը Մազուրի Համոյի գրասենյակում, Համո Համբարձումովիչն ինքն եր ցույց տվել այդ հետաքրքիր գրությունը ընկ. Վառոդյանին: Ընկ. Վառոդյանն ել, չգիտենք թե ինչու, հարկ եր համարել հայտնել ամենից առաջ պ. Մարուքեյին — բայց վոչ թե «Կենտրոնից» ստացած այդ գրության, այլ այն «ըզձալի սեղեկության» մասին, վոր բերել եր գրությունը: Պ. Մարուքեն այնքան ալ չեր սիրում ընկ. Վառոդյանին, այդ, ինչպես արտահայտվում եր նա — «Նայիրցի վաժմապետին», վորի կոնակի վրա, ինչպես հայտնի յե արդեն քեզ, սիրելի ընթերցող, «Դառնուրյան կենտրոնից» հիշատակ եյին մնացել հետաքրքիր հետքեր: Ընկ. Վառոդյանն ել, իր հերթին, վերևից եր նայում այդ «յեփուպացի ավանակ Գրաստամասյանին», վորի պատմական ազդանվան սկզբնառաքը այդպես անբարեխղճաբար փոխելով՝ բավականին զվարճություն եր պատճառում ընկ. Վառոդյանը ծանոթ որրորդներին: Բայց ընկ. Վառոդյանի նման, վոչ այնքան ել բարյացկամ, վերաբերմունքը դեպի պ. Մարուքեն ըզխում եր վոչ թե անձնական, այլ ավելի քան որչեկսիվ, հասարակական պատճառներից. բանն այն ե, վոր պ. Մա-



րուքեն յերբեմն թուլլ եր տալիս իրեն բավականին յերկիմաս հայտարարութիւններ անել «Ընկերութեան» հասցեյին. ահա թե ինչ... Այս բանը նրան վնչ միայն ընկ. Վառդգյանը, այլև Կլուբի Մեյմունեն անգամ չեր կարողանում ներել, թեկուզ նա, այդ կոշկակար Սիմոնը, վոչ թե անգամ եր «Ընկերութեան» այլ սոսկական համակրող: Յեւ ինչպես եր համարձակվում էր. Մարուքեն — ահա զարմանալին. ո՞վ, ո՞վ չգիտեր, վոր ավելի հեշտ եր «Մուր սեմյակում» հայհոյանք շարտել «Նիկոլի» հասցեյին, քան, անգամ յերազում, անբարյացակամ վերաբերմունք ցուցահանել դեպի «Ընկերութեանը»: — «Ընկերութեանը», ինչպես առաջին մասում առիթ ունեցանք ասելու, «Կենսուն» եր, և այն ել — «Գեր-Կենսուն»: Յեթե դու ցանկություն ունես, սիրելի ընթերցող, թեկուզ ամենահեռավոր, ամենանսեմ կերպով պատկերացնել այդ «Կենսունը» — յերևակայիր հետևյալը: — Ինչ-վոր անհայտ մի տեղ, մի տեղ, վորի ուր լինելը վոչ վոք, նույնիսկ ընկ. Վառդգյանը չգիտե. նայիրջան, չինական, կամ, ո՞վ գիտե, կարող ե պատահել, վոր ասորա-բարելախան իքս, իգրեկ, գեր — Անհայտ քաղաքում, քաղաքի ծայրամասում, կենտրոնում, կարող ե՞ դերեզմանատանը — մի խոսքով՝ այնպիսի մի տեղում, վորի գոյութիւնն անգամ կասկածի չե յենթաբերվում — կա, գոյութիւն ունի — չգիտեմ, ինչպես ասեմ, վոր գլխի ընկնես — նո՛ւ, անհայտ սենյակ. կամ խցիկ. կամ ներքնահարկ: Այդտեղ, այդ ներքնահարկում ահա, վորի ուր լինելը, ինչպես ասացինք, վո՛չ մի մարդ չգիտե, — ապրում ե հսկայական մի սարդ, աներևութ մի սարդ. սարդանման ուղեղ: Յեւ այդ սարդը ահա, սարդանման այդ ուղեղը, իր անհայտ

տեղից, իր այդ անվորոնելի բնակարանից պարզում ե իր ճանկերը. այնտեղից սկսած՝ հյուսում. վոստայնը, կուռ, հյուսում ե անողոք: Պարզում ե իր ճանկերը, թեւովոր, դեպի քաղաքները նայիրջան, դեպի ուղեղները, սրտերը, կամքերը նայիրջան. — պարզում ե — Մուռ, Բիբլիս, Դիարբեխ. պարզում ե — Թիֆլիս, Թեոդոսիա, Ենգելի. պարզում ե — Յերուսաղեմ... Մի խոսքով՝ ամեն, ամեն անկյուն, ուր կա մի, գոնե մի նայիրցի: Նյու-Յորք, ժրնեվ, Կալկաթա, Պերու, Բի-ժամբյուր, Անտառ. — ինչ, ինչ քաղաք, կամ յերկիր հիշատակեմ, ուր չկա. ուր չեն հասել քեկերը, յերկաթյա քեղիկները Ուղեղասարդի: Հյուսում ե իր վոստայնը նա. կուռ, յերկաթե՞ հյուսում ե քաղաքից-քաղաք, յերկրից-յերկիր. խկ ինքը չի յերևում. անխուսափելի, անշոշափելի յե ինքը, վորպես հրաշք. հրաշք ե, չես հասկանում. սարսափելի դադունիք. — զարմանալի զարմանք... Ահա թե ինչ ե «Ընկերութեանը» վորպես «Կենսուն», վորպես, ինչպես ընկ. Վառդգյանն ե շատ հաջող ընտրողում՝ «Գեր-Կենսուն» սիրելի ընթերցող: Բայց չես դեռ ամենազարմանալին, ամենազլխավորը չասի. վախեցա չհավատաս: Բայց ինչ կասես փաստերին. աչքի առաջ չեն փաստերը. փաստերը պերճախոս: Բանն այն ե, սիրելի ընթերցող, վոր Ուղեղասարդը վո՛ր վայրկյանին ուզենա՝ կարող ե քաշել դեպի ինքը, գործողութեան դնել, շարժել, ինչպես վոր կամենա, տեղափոխել իր վոստայնը, վոստայնի քեյլը ամեն մի, ամեն մի անհեռավոր քեյլիկը, թեկիկի ծայր, ծայրի ծայրածիր... Ահա թե ինչ: Յերևակայում եք՝ այնտեղ, իր անհայտ տեղում, սենյակում իր նստած՝ սարդային այդ ուղեղը, կամ ուղեղային այդ սարդը կարող ե շարժել, մի փոքր ձգել,



տատանել հազարերորդ իր ճանկը, ճանկի ճանկի ամենածալը, — և ահա Նյու-Յորքում այսինչ-այնինչ քելիկները, քելիկային մարդիկ, կանեն, ինչ վոր իմքը, Կենսոնը կամենա, Կենսոնաուղեղասարդը ուզե... Կը շարժե նա, Կենսոնաուղեղասարդը, իր հազար և մեկերորդ թելիկը և ահա ժընկվում, Յեվրոպի մեջտեղում, նայիրատառ «Ռոուսիկ» վրա կշարվեն, անհեղամուռնչ, գահալործան կոչե... Բայց դա չեւ դեռ վոչինչ. դեռ ամենաանյերեկակայելին կա, ամենահրաշանմանը: Ընտանեկան հարկում, կնոջդ, լերեխաներիդ, քրոջդ կամ մորդ հետ նըստած քեզ համար թեյ եյիր խմում, կամ ճաշում, կամ ընթրում եյիր դու, սիրելի ընթերցող, լերե քսանհինգ տարի առաջ, գեղեցիկ մի որ շարժեց իր ամենաբարակ ճանկը, ճանկի ամենածայրը Կենսոնաուղեղասարդը աներեւելթ իր տեղից — և ահա, յերևակայում ես, — այնտեղ, Վոսփորի դալարագեղ ափերին, սուլքանների լպիրշ մայրաքաղաքում, լիմոնդի խցանի մի նման՝ թավ, թեթև թռավ՝ անսիրտ դիվանագետների ժանգոսած ուղեղներում, վորպես նայիրյան, այսինքն «Ընկերության» վորդու ցասուճալից մի ցույց, արդարության բողոք — պայթեց, ողը ցնդեց Բանկը Ոսոման... Յեվ ինչն եր, ինչն եր, յեթե վոչ նույն Կենսոնաուղեղի ամենաանշան թելերի ամենաանշան շարժման ամենաչնչին հետևանքը — այն, վոր թռավ, գահընկեց, Յելըզլի մեծաշուք պալատներից Յելըզլի ձիվաղը — նա, վորի արյունաբու հայրենիքի մասին դրել եր, իր հեռու թելիկների միջոցով, դրել եր Կենտրոնասարգը, աշխարհիս առաջին մարդու յեվ անկառու նայիրաւերի բերանը «Հիվանդ մարդը պե՛ս է մեռնի» ճակատագրական պատգամը: Ո, վո՛րը, վո՛րը պատմեմ,

քանի վոր բազում են մեծագործությունները նրա, բազում ու անհատնում: Յեվ ինչքան, ինչքան, ինչքան պիտի ծիծաղելի թվա այս ամենից հետո այն, միանգամայն ճիշտ վոր անհանդուրժելի, հանգամանքը, վոր այնպիսի մի մեծամիտ վոչնչություն, ինչպիսին եր պ. Մարուքեն, այդ վորդորմելի «Դաստաւասյանը» հանդըհնում եր զանազան յերկմիտ, անթույլատրելի ակնարկներ անել, թղթե սլաքներ թոցնել «Ընկերության» հասցելին... Դիտեր, իհարկե, վաղուց շոշափել եր արդեն տեղական իր շնորհալի թելիկների միջոցով, այդ հանդուգն հանգամանքը Կենսոնաուղեղասարդը. բայց շատ եր չնչին, շատ եր անարժան մեծեղը, վորպեսզի ճանկերը շարժվելին և թռներ, հողս ցնդեր պ. Դաստաւասյանը Բանկ Ոսոմանի նման... այն: Ավելի քան ճշմարիտ կլինի կարծել, վոր պ. Մարուքելի հենց այդ չնչինությանը, այդ վոչնչությանը պետք է վերագրել այն, այլապես միանգամայն անհասկանալի, հանգամանքը, վոր նա մնում եր անպատիժ, և նույնիսկ շարունակում եր նայիրյան այդ քաղաքում իր անշան ծանրությամբ աննշան տատանումներ պատճառել Կենսոնաուղեղասարդի թելիկներից ամենաթելիկին — ընկ. Վառոդյանին: Բայց ընկ. Վառոդյանն եւ հո գիտեր իր գործը. ո՛ր, նա շատ սքանչելի լեր տիրապետել քելիկաստեմանում նրբագույն արվեստին. այդ բանում խրատական նշանակություն եր ունեցել ընկ. Վառոդյանի համար իր կարճատև մտերմությունը հանգուցյալ ընկ. Կարոյի հետ, այն տարաբախտ ընկ. Կարոյի, վոր այնպես վաղաժամ, ինչպիս ընթերցողին հայտնի յե արդեն վեպիս առաջին մասից, զո՛հ գնաց Վարդանի կամուրջի, այսինքն նրա դիմացը գտնվող աննշան խըր-



ճիթի պայքարն ղեկավարում էր Երանից, այն, ընդ. Կարոյից եր առաջին անգամ, իր հեղափոխական գործունեությունը վաղ արշալուստին, առաջին հրահանգներն ստացել ընկեր Վառդգյանը: Երանից եր ստացել առաջին անգամ ընդ. Վառդգյանը և հեղափոխական ընդդիմումի կարմիր ավետարանը — «Ամբոխային քառաբանությունը»: Կարծում ենք, ավելորդ և վերստին հիշատակել և այն ճակատագրական դասը, վոր իր հերոսական կրոնակի վրա, «ռուսյոյի» կապույտ — կապույտ հետքերի ձևով, ստացել եր ընդ. Վառդգյանը «Դառնություն Կենսունից»: Այսպիսի պատկանելի հեղափոխական անցյալից հետո դժվար եր, իհարկե, գործ ունենալ ընդ. Վառդգյանի հետ, մանավանդ վոր վերջերս նա կամաց-կամաց ավելի և ավելի խոշոր ուշադրություն եր սկսում արժանանալ Կենսունադիպատարդի տեղական գլխավորաբերի — Համո Համբարձումովիչի — Մազուրի Համոյի կողմից:

Յեվ, այստեղ յեթե հարկավոր ե ասել, վոր հենց այդ որերից ե, վոր սկսեց սարն ի վեր բարձրանալ ընդ. Վառդգյանը, հետագայում նայիրյան այդ քաղաքի կյանքում այնքան խոշոր դեր խաղացող այն ընկեր Վառդգյանը, վորը, վերջիվերջո, վոչ այլ ինչ եր, յեթե վոչ խղճուկ մի վարժապետ, «նայիրյան մի բրամսություն» — ինչպես ասում եր պրն. Մարութն: Ինչով, ինչով նա Մազուրի Համոյի աչքը մտավ — աստված ինքը գիտե, բայց փաստը մնում ե փաստ, վոր, այս որերից սկսած, նա ավելի խոշոր մասնակցություն ունեցավ քաղաքի անցուդարձում, քան ինքը Սերգե Կասպարիչը, բժիշկը — այդ չերկրորդ, կամ ավելի լավ ե ասել — աջ ձեռքը Մազուրի Համոյի: Յես ել Հեմ խո-

սում Ոսեի Նարիմանովի — Համո Համբարձումովիչի ձախ ձեռքի մասին, վորը կամաց-կամաց, դեպքերի զարգացման ընթացքում, համարյա թե կորցրեց իր ավելի նշանակությունը: Այս հանգամանքը ավելի զարմանալի կթվա, յեթե ասեմ, վոր նախքան այդ, ինչպես Սերգե Կասպարիչը, այնպես ել Ոսեի Նարիմանովը «Կենսունից» նշանակված անդամներ ելին Տեղական Կոմիտեյում, վորի նախագահն եր, ինչպես արդեն գիտենք, և մինչև վերջը մնաց — Մազուրի Համոն: Սա նշանակում ե, վոր, ինչպես բժիշկը, այնպես ել հաշտարար դատավորը, չերկուսն ել՝ Մազուրի Համոյի հետ հավասարապես յենթակա ելին Կենսունադարդի անմիջական, այն, անսխալմանով՝ ուղեղ-հրահանգներին. իսկ ընդ. Վառդգյանը... Նա ինչ եր վոր. նա իսկի չեկարծես գոյություն ունենալիս չլինեիր առաջներում: Ինչքան, ինչքան եր պատահել, չերբ նա, ընդ. Վառդգյանը, կարծես թե պատահամբ, մտել եր Մազուրի Համոյի գրասենյակը, յերբ այնտեղ «նիսի» յեն նուստած յեղել Տեղական Կոմիտեյի «Յերեբը». և ինչ, պատահում ե հետևյալը. նա, ընդ. Վառդգյանը, հազիվ եր կարողանում գլուխը ներս խոթել, չերբ բժիշկը, և միշտ այդ մեծամիտ բժիշկը, բարձրացնում եր քիթը վեր, հոտոտում եր ողբ՝ նայելով ընդ. Վառդգյանի դեմքին, և — «նեղություն» — ասում եր բժիշկը կիսաթալիտ, վորից հետո զսպանակի նման դռնից դուրս եր թռչում ընդ. Վառդգյանի գլուխը ու մնում եր փակ դռան յեռում՝ վորսորդական բարակի նման ներսի շուրջներին ունկնդիր: Այսպես եր, այն, առաջներում. բայց հետո... Հետո ընդ. Վառդգյանը դարձավ նշանավոր գործիչ, պատկանելի անձնավորություն և շատ, շատ անդամներ



առիթ ունեցան բժիշկ Սերգե Կասպարիչը և հաշտարար դատավոր Ոսեի Նարիմանովը նրա ընդունարանի առաջ ներքի սպասելու...

Բայց ներքի, ընթերցող, վոր յես պատմությանս թելը բավականին խճճեցի, թեկուզ, գիտես, նախորդան ալդ քաղաքի այն նշանավոր որերի պատմութիւնը գրողը հիմա, ուղած-չուզած, պիտի զգա իրան այն դժբախտ լեռնխալի դերում, վորը, ինչպես ալդ հաճախ տեղի լեր ունենում հենց նույն ալդ քաղաքի լեռնխաների կենցաղում, գետում լողանալուց հետո ուզում ե հագնվել, բայց գտնում ե շապիկի թեկերը թրջած և ախպես պինդ հանգուցած, վոր սատանան ինքը կղբ-վարանա արձակել. նա գիտե, նա հասկանում ե, վոր իր շուրջը հոռոցող յերեսաներն են ալդ արեւ. նրա սիրտը պալթում ե վորից ու բարկութիւնից, բայց նույնպես ավելի քան լավ հասկանում ե նա, վոր լեթե ընկնի ընկերների լետեից—շատ են, մի լերկուսը լետ կման և մնացած շորերն ևս կթրջեն ու կհանգուցեն, ուստի մնում ե նրան հանգուցած շապիկը մի կողմ թողնել և հագնել շորերն առանց սպիտակեղենի—ինչպես և մեզ, ընթերցող, գոնե ամսանգույց գեպ-քերն ու իրողութիւնները մոռացության չտալու նրա պատակով մնում ե մի կողմ թողնել բոլոր խճիճներն ու հանգուցները և անցնել վիպի շարունակությանը:

Ինչպես ասացի՝ ընկ. Վառդգյանը սեփական աչքերով տեսել եր Մաղուծի Համոյի գրասենյակում «Կենսունից» ստացած գրութիւնը, վորի մեջ գրված եր, ի միջի ալոց, «Հայսնի՛ր բոլորին» հրահանգը: Յեկ

ահա, Մաղուծի Համոյի գրասենյակից լինելով, հանդիպեց պատահմամբ, պ. Մարուքեյին ընկ. Վառդգյանը և մտածեց, վոր առաջին հերթին հենց ալդ հասամիս Դաստաւայանիմ ե հարկավոր հայտնել հետաքրքիր նորութիւնը: Ալդ միտքն հղացավ ընկ. Վառդգյանի գլխում լերկու պատճառով. նախ՝ ինքը ցույց կտա ալդ հաստամիտ պարոնին, վոր այնքան ել հասարակ անձնավորութիւն չե ընկ. Վառդգյանը, վոր, այո, ինքը կապեր ունի այնպիսի կենսունիցի հետ, վոր կարող ե ամեն նորութիւն իսկական աղբյուրից իմանալ, — և ապա ինչպես հրահանգել եր նրան Մաղուծի Համոն, «կեռնալիս նողը»... Իսկ պարոն Մարուքեն, այսպես թե այնպես, վորպես հակառակորդ, բավականին հետաքրքիր «նող» եր՝ հասարակական տրամադրութիւնները շոշափելու համար...

«Հեմաբի՛ր նուրբյուննեք» — ասաց ընկեր Վառդգյանը, այնպես, ի միջի ալոց, պ. Մարուքեյին:— «Բավականին հեմաբի՛ր...»:

«Էր» — ակնոցների տակից վեր, ընկ. Վառդգյանին նայեց պ. Մարուքեն. — «Ի՞նչ կա»:

Ընկ. Վառդգյանը ժպտաց: Ու հազաց հետո, ձեռքը շրթունքներին տանելով «Ընր՛, ընր՛, ընր՛», — ճիշտ և ճիշտ Սերգե Կասպարեչի նման:

Պ. Մարուքեն բարկացավ:

«Մի բան գիտես — ասա՛՛ ի՞նչ ես պոչդ գեցնովը տալիս»:

Ընկ. Վառդգյանը շիկնեց. աչքերից արյուն կաթեց ընկ. Վառդգյանի —

«Յոք որից երգում կլինենք» — պալթեց ումբի նման, կրկնելով Մաղուծի Համոյի խոսքերը, ընկ. Վա-



ռողջանը պ. Դրաստամատյանի գլխին, ու նախեց նրան, հաղթական:

Նայեց, նայեց նրան, արհամարհանքը ակնոցի տակից դառը պսպղացնելով, պ. Մարուքեն. — «Խիդի՛ս» — կարծես թեքեց, կարծես ձգեց, ծանր մահակի նման, ընկ. Վառուդյանի դեմքին պ. Մարուքեն. ու շուռ տվեց դեմքը. աջ ուսը ցնցելով հեռացավ:

Նա գիտեր, քչերից մեկն էր պ. Մարուքեն նախիրյան այդ քաղաքում, վոր թերթեր էր կարդում, — կարդացել էր արդեն պ. Մարուքեն, վոր արդեն, արդեն՝ պատերազմ է հայտարարված Տաճկաստանին: Յեվ, չերևակայում էք — դժգոհ էր դրանից: Տարորինակ, այո, զարմանալի մարդ էր այդ պ. Դրաստամատյանը, և ինչքան էլ նրան, խորին արհամարհանքով, պ. Դրաստամատյան անվաներ ընկ. Վառուդյանը, ինչքան էլ նրա, առանց այն էլ աչքի ընկնող քթի ծայրը, համարյա թե միշտ ավելի ևս աչքի դարկեր իր անհաճո կարմրությամբ, վոր, ինչպես ասում էլին, հետևանք էր վոգելից ազդեցությունների, — չնայած, կրկնում ենք, այս բոլոր տարրերն ակտիվություններին — պ. Մարուքեն էր և արժանի յն ամենայն ուշադրության: Յերևակայում էք. նա, այդ հարեցող «յեվրոպացին» այդ չերեկո հանդգնություն ունեցավ կատարելու այնպիսի մի մեծագործություն, վորի համար արժե վոր նա համարվի իմ միակ հերոսը, այդ կարմրաքիթ Դրաստամատյանը...

Նա գիտեր, այո — կարդացել էր արդեն պ. Դրաստամատյանը, վոր պատերազմ է հայտարարված Տաճկաստանին, և միակ մարդն էր գուցե, վոր, իրեն միայն հայտնի պատճառներով, դժգոհ էր դրանից: Կային

ասողներ — ինչպես. որինակ, Հաջի Մանուկոֆ եֆենդին, — վոր «ամարխիս» է պ. Մարուքեն, այսինքն «ամիլիտանական». այնինչ ընկ. Վառուդյանն այն կարծիքն ուներ, վոր նա, այսինքն պ. Մարուքեն, վոչ «ամարխիս» է, վոչ բան, այլ, պարզապես մի «վսի գուլա», վորին հաղավոր է «վսիել»: Չգիտենք, վորքան էր համապատասխանում իրականության ընկ. Վառուդյանի այդ կարծիքը պ. Մարուքեյի մասին, բայց հարկավոր է ասել, վոր ընկ. Վառուդյանի այդ որդիանալ կարծիքում կար, յեթե վոչ ուղղակի, գոնե կողմնակի ճշմարտության վորոշ տոկոս. գուցե, այո, ընկ. Վառուդյանի տեսակետից, այդ «վսի գուլա» հարկավոր էր «վսիել», քանի վոր, այո, — մենք չգիտենք, թե ուրիշ ինչ պատճառներ կային պ. Մարուքեյի համար, իրեն չվերաբերող մի խնդրի, — Տաճկաստանին հայտնած պատերազմից դժգոհելու, բայց մի բան պարզ էր ինքնըստինքյան, այդ այն է, վոր պ. Մարուքեն նկատել էր, վոր արդեն շարժվում է «Բնկերությունը», — և սա չէր, ամենից առաջ, նրա դժգոհելու պատճառներից մեկը: Վոչ ամարխիս, վոչ բան: Նա, պ. Մարուքեն, իրեն միայն հայտնի պատճառներից դրդված, դեմ էր «Բնկերությանը», այսինքն, կոնկրետ ասած տեղական «Վերեֆին» ու նրա արբանյակներին. նրանք սև ասեղին, պ. Մարուքեն կասեր՝ սպիտակ. նրանք հա ասեղին, պ. Մարուքեն կասեր՝ չե: Յեվ այսպես — ամեն ինչում. այսպես էլ հիմա: Արդեն խոսում էլին քաղաքում, արդեն շշնշում էլին, խորհրդավոր, զանազան բերաններ: Արդեն տալիս էլին հայցնի անուններ... Անհամբերությամբ սպասում էլին այդ ըզձալի որվան. այս ըզձալի որը, ինչպես ընկ. Վառուդյանն էր ասում քա-



դաքային այգում ծանոթ որիորդներին, պիտի բանար իրենց՝ Նայիրի առաջ քղծալի հորիզոններ։ Դեռ յերեկ, դեռ առաջի որը, այգու ակումբում պարծենում եր, «ազուալի աղջիկը» սեղանին խփելով, Կինտաուրի Սիմոնը, վոր «կամավոր կգնա»։ Հասկանում եր, իհարկե, զգում եր արդեն պ. Մարուքեն, վոր շուտով «պարը կսկսվի» և գլխապտույտ կգնա. հասկանում եր և, դժգոհելով, սպասում։ Իսկ հիմա ահա, ընկ. Վառդգյանին հանդիպելուց հետո, հասկացավ, զգաց պ. Դրաստամատյանը, վոր արդեն գլորվել է քար—և քթի տակ, դժգոհ, փնթփնթալով՝ քաղաքային այգու ակումբը գնաց պ. Մարուքեն, մտածելով, վոր այնտեղ, յերեկ, ամեն ինչ կիմանա։

Իրիկուն եր արդեն. արդեն վառվում ելին յույսերը քաղաքային այգում։ Նվազում եր զինվորական յերաժշտախումբը. նվագում եր «Բոնե ցարյա»։ Հասկացավ պ. Մարուքեն, վոր «սկսվել է պարը»։ Հիշեց այն մյուս կիրակին. կանգնեց, կանգնեց նորից պ. Մարուքեյի ուղեղում—կանգնեց, այժազուրկ, Մազուլի Համոն։ Լիքը, խիտ կանգնած հասարակության միջով մոտեցավ ակումբին պ. Մարուքեն—և, հրաշքի մի նման, չեղնելով կարծես իրա, Մարուքեյի ուղեղից—կանգնեց. դեմը, նույն թղթախաղային կանաչ սեղանի վրա կանգնած եր—Մազուլի Համոն։ Ներքուստ, այսինքն սեղանի կողքին գլխաբաց կանգնած ելին՝ բժիշկը, Ոսեփ Նարիմանովը, Արամ Անտոնիչը, Գինեբալ Ալոշը, ընկ. Վառդգյանը և Կինտաուրի Սիմոնը—կողակալբը, Բերանները բաց բղավում ելին «ուռա»։ Դեռ չեր ուշքի յեկել պ. Մարուքեն, յերբ մեկը յետեվից հրեց նրա կողին և ականջին բղավեց. «Դյաալիդ

հանե՛, տո՛, չե՞ս հասկընա»։ Նայեց—Արամուրցի եր. ակնոցը քթին, այժամորուք։ Դեմքին—պատկառանք եր խորհրդավոր. ակնոցը թեքվել եր մի կողմ. գլուխը նրման եր «նաքաքալից» հանած ծաղրանկարի։ Հանեց գլխարկը, առանց բան հասկանալու, պ. Մարուքեն. բայց մինչ այդ նվազը դադարեց, բոլորը ծածկեցին գլխարկները և այս անգամ պ. Մարուքեն ինքը մնաց՝ քիթը վեր, գլխարկը ձեռին։ «Հալքեմակիցնե՛ր»—սկսեց, յերեկ ընդհատված ճառը շարունակելով. Մազուլի Համոն. և տիրեց լուսթյուն՝ լսողութուն տիրեց։ «Մոս է մոսեմում է որը»—շարունակեց ապա Մազուլի Համոն,—«յերբ, յեկած մոխիրից, դարերի քնից—հառնե՛ պիսի, ազաւ, յերկիրը հազարամյա—ազաւ Նայիրին»։ Այս իմաստով ահա խոսում եր, բավականին հուզված, Մազուլի Համոն. բայց ահա նրա ձայնը բարձրացավ, ձեռքը վեր մեկնվեց և աչքերը վառվեցին. նա, ինչպես յերևում եր, վերջացնում եր ճառը.—«Ամեն վո՛ մեզանից պարտավոր է ոգնել, ինչով վոր կարող է, այսուր. յես չեմ կասկածում»,—վերջացրեց խոսքը Մազուլի Համոն,—«վոր մեր հաղթապանձ զորքեր մի ռաբարից հետ Նագում կմենեն»։ Այսպես վերջացրեց իր ճառը Մազուլի Համոն—և նորից թնդաց յերաժշտությունը՝ հասարակությունը վռնաց։ Վոգեկորության հենց այդ ծայրահեղ վայրկյանից հետո յեր ահա, վոր տեղի ունեցավ անսպասելի, աներևակայելի, անթույլատրելի մի բան. — յերևակայում եք՝ պ. Մարուքեն, այդ «ալմալա անասունը», վորպիսի հորջորջում տվեց նրան, դեպքը կատարվելուց հետո, Գինեբալ Ալոշը,—այդ վողորմելի պ. Մարուքեն ահա, իր կանգնած տեղից, հենց վոր Մազուլի Համոն իր խոսքը վերջացրեց



—«Իդիոս» — բացականչեց, ինչքան վոր ձայն ունեւր, չամո չամբարձումովիչի հասցեչին. տիրեց մեռելային լուռթյուն՝ ապշանք, ելեքտրական լարում:—«Բայց» — իջավ, չոր, հնչուն՝ շխլալով ընկավ ընկ. Վառդգյանի ապտակը պ. Մարութեյի աշտին: Պ. Աբումարեմ շտապեց վոտքի մի խրատական հարվածով ողնության հասնել ընկ. Վառդգյանին: Պ. Մարութեն, յերեսնիվայր, ընկավ. ակնոցը, պսպղուն, թռավ մի կողմ: «Հարբած ե» — հայտնեց Սերգեյ Կառպարիչը, դեպքի տեղը հասնելով: «Հարբած ե» — հաստատեց ընկ. Վառդգյանը. — «պեսե ե վոսիկանսուն ուղարկել, վոր ուեֆի բեքեմ». Ու պատմեց, վորպես ապացույց, ընկ. Վառդգյանը, վոր նույնը, բառացի, կես ժամ առաջ ասաց իրեն, փողոցում, առանց վորեւե առիթի, պ. Մարութեն:

Պ. Մարութեյին տաբան վոսիկանսուն:

Չգիտեմ, հարբած եր թե չե պ. Մարութեն, բայց մի բավականին հավաստի աղբյուրից յես հետո տեղեկացա, վոր, ճիշտ վոր, ինչպես այդ հավաստի աղբյուրն եր ինձ տեղեկացնում — պ. Մարութեն հարբած եր յեղել: Նույնն եր հաստատում ե Բոչկա Նիկալայր հետո, պատմելով, վոր այդ որը, դեպքը պատահելուց յերկու ժամ, մոտավորապես, առաջ պ. Մարութեն իր, Բոչկա Նիկալայի դախի դիմացը կանգնած՝ գլուխն ե քսել «մի բոքիլ սմիրնովկա» — դառնահամ ողի: Բայց այս դեպքում արժեքավոր ե, իհարկե, վոչ այնքան Բոչկա Նիկալայի ցուցմունքը, մանավանդ վոր ողունրա հիշատակած քանակը դժվար թե ընդունակ լինեւր «խելից համելու» պ. Մարութեյին, — վորքան, այո, վերեւում հիշածս «հավաստի աղբյուրի» ցուցմունքը, վո-

րովհետեւ... Բայց այս յենթադրությունս հիմնավորելու համար նախ ե առաջ հարկավոր ե ասել, թե ի՞նչ «աղբյուր» եր այդ, վորին կարելի յեր հավատ ընծայել ե այն ել այնպիսի մի նուրբ ե անհասկանալի հարցում, վորպիսին եր պ. Մարութեյի վարմունքը պատմական այն ահավոր, այն նշանակալից վայրկյանին: Այդ «աղբյուր», դե, մի մարդ եր, յերեսունին մոտիկ մի յերիտասարդ նայիրցի, վորը վերջին որերս եր միայն յերեացել նայիրչան այդ քաղաքում. բայց վորին ճանաչում եյին տեղացիք նրա մանկությունից. ուսուցիչն դպրոցի տեսուչ Արամ Անտոնիչի մորեղոր վորդին եր դա — Կարո Դաւթյանը, վորին յոթութ տարեկան հասակից Մոսկվա, Լադարյան ճամբարնն եր ուղարկել Արամ Անտոնիչը. սրա խնամքին եր մնացել ծնողներին մահվանից հետո, դեռ մանուկ հասակից Կարո Դաւթյանը: Արամ Անտոնիչը նրան Մոսկվա ուղարկելով հասել եր յերկու նպատակի մի անգամից. նախ ազատվել եր նա հոգսից, յերկրորդ իր վերջին պարտքը դրանով հատուցած եր համարել իր ազգակցի հիշատակին: Ինչպես վոր գնացել եր Մոսկվա Կարո Դաւթյանը — այնպես ել մնացել եր այնտեղ մինչեւ ավարտելը, վորից հետո եւ, թեկուզ տեղափոխվել եր Կովկաս — Բաղու, բայց չեւր յերեացել հայրենի քաղաքում, չնայած Արամ Անտոնիչի հաճախակի խնդրանքներին: Արամ Անտոնիչը, մանավանդ յեր Դաւթյանը վերջացրեց դպրոցը, յեր արդեն վերացած եր համարում ամեն մի հոգատարության խնդիր մորչեղորովորդու նկատմամբ, շատ եր ցանկանում նրան իր մոտ տեսնել, գուցե հենց նրա համար միայն, վոր, ինչպես ասում եր նա հաճախ Գենեբրալ Ալոշին, «ցանկանում եր իր ազնվության պսուղը մոսիկից նստ».



կել: Բայց հետո, Կարո Դարայանի Բագու գալուց մի քանի ժամանակ անց, Արամ Անտոնիչը դադարեց հանկարծ իր «ազնվության պսուղի» մասին առհասարակ խոսելուց, իսկ չերբ, լինում եր, հիշեցնում էլին նրան իր «սանիկի» մասին — Արամ Անտոնիչը թթու դեմք եր շինում. Արամ Անտոնիչը ծամծմում եր զրույցը: Գեներալ Ալոբը սկզբում չեր հասկանում, ավելի շուտ չեր իմանում բանի չեղելությունը. բայց հետո նա իմացավ և ահա բանը մինչև այնտեղ հասավ, վոր Արամ Անտոնիչը մի գեղեցիկ ուր ել վերցրեց գրեց իր սանիկին, վորը ի դեպս, համարյա թե չեր ել պատասխանում իր «բարեբաթի» նամակներին և վճի մի նշան չեր ել ցույց տալիս այդ կողմերը յերեվալու, — Արամ Անտոնիչը, ինչպես ասացինք, վերցրեց գրեց Կարո Դարայանին, վոր չլինի թե վերջինս իր աչքին չերկա. իսկ չեթե պատահի գալու լինի հալընի քաղաքը — չլինի թե մտաբերի իր քեռու բնակարանը. քեռու բնակարանը «փուլ» սանիկի համար փակված կլինի: Այսպես եր գրել իր մորեղբորվորդուն Արամ Անտոնիչը իր վերջին նամակում — և ահա, այդ նամակը գրելուց չերկու ամիս անց, վորտեղից-վորտեղ մեր պատմած դեպքերի նախորդակին, մի գեղեցիկ առավոտ չեկավ Կարո Դարայանը նայիրյան այդ քաղաքը և կառքը կանգնեցրեց... ճիշտ պ. Մարութի բնակարանի առաջ: Այս վերջին հանգամանքը խիստ դարմանալի թվաց վոչ այնքան քաղաքացիներին, վորքան իրա — Արամ Անտոնիչի պչքերին. բանն այն ե, վոր, ճիշտ ե, Մոսկվա գնալուց առաջ չերկու չերխաներ, ավելի լավ ե ասել՝ չերկու փողոցային խաղընկերներ, թեպետ և ճանանչելիս լինելին իրար պ. Մարութեն և Կարո Դար-

րայանը, բայց չե՞ վոր դրանից հետո այնքան եր ջուր հոսել, և այն ել տարբեր հունեություն, վոր վոչ մի հընարավորություն թվում ե թե, չպիտի մնար նրանց մտերմանալուն: Դրանից հետո պ. Մարութեն, ինչպես գիտենք, տեղական քաղաքային յոթնամյա դպրոցն եր ընկել, վորից հետո, չգիտենք թե ինչ դարմանալի հրաշքով չեղել ե Բերլինում, այն ինչ Կարո Դարայանը գընացել եր Մոսկվա, ապա Բագու, այնպես վոր վոչ մի առիթ, վոչ մի հնարավորություն, թվում ե թե, չեն ունեցել իրար հանդիպելու — և հանկարծ... Կարո Դարայանը վերադառնում ե այդ քաղաքը և կայաքանից քշում ե ուղի՛ղ պ. Մարութեյի բնակարանը, ամենայն ճշտությամբ լսում ե կառապանին պ. Մարութեյի հասցեն... Հասկանա՞մ եք՝ Կարո Դարայանը, ամբողջ քսան տարի վոչ հալընի քաղաքի և վոչ ել պ. Մարութեյի դեմքը տեսնելուց հետո — ասում ե կառապանին պ. Մարութեյի հասցեն և հին բարեկամի նման իջնում ե նրա տանը, նախքան վերջինս սենյակ մտնելը — դուրսը, հենց դռան առաջ, կառապանի կողքին մի պինդ համբուրվելով իրեն միանգամայն անձանոթ, բայց հրաշքով մտերմացած պ. Մարութեյի հետ... Այս բանն իր սեփական աչքերով տեսել ե Կիևաուրի Սիմոնը, կոշկակարը, և ամենայն մանրամասնությամբ պատմել ե րեկ. Վառոդյանին: Յեվ ահա — հենց այդ Դարայանը, նա ինքը, ինչպես այս բոլորից կարող եր չեղրակացնել՝ պ. Մարութեյի այդ հոգեկից ընկերն ահա, վերջինիս հետ քաղաքային այգում տեղի ունեցած այն ցավալի դեպքի չերկրորդ ուրը հավատացնում եր բոլորին, վոր պ. Մարութեն, ճիշտ ե, հարբած ե լեղի: Կարծում եմ, վոր չես իրավունք ունեմ Կարո Դարա-



յանին, այդ, իմ կարծիքով ամենահավաստի աղբյուրին, լիովին հավատալու, նախ նրա համար, վոր նա հետադաշում հայտնի դարձավ քաղաքին, վորպես միանգամայն մաքուր, անկաշառ մի անձնավորութիւն, և ապա՝ նրան, պ. Մարութիւն այդ սրտակից ընկերոջը, իսկի չեւ ձեռնառու չեւ հարբեցողի դիպում կպցնել իր «հոգեկցի» ճակատին, մանավանդ վոր այդ չարաբաստիկ «դիպումը» շատ շուտով պատճառ դարձավ պ. Մարութիւն ուսուցչական դիպումից զրկելուն։ Մի հանգամանք, վորի մեջ խառն եր—և նա ինքն եւ չեւ թագցնում — Մագուրի Համոյի մատը։ Նա, Մաղութի Համոն, վորպես ծխական դպրոցի ավագ հոգաբարձու, ասել եր հոգաբարձական ժողովին, վոր շտապ կարգով, վորպես բացառութիւն, տեղի չեւ ունեցել վո՛չ թե Համո Համբարձումովիչի գրասենյակում, այլ չեկեղեցու մոմավաճառի խանութում, վորտեղ միշտ պատրաստ եր լինում ծխական դպրոցներ հոգաբարձական կազմը,—այդ կազմին ահա ասել եր, զայրուլթի փըրփուրը բերնին, Մաղութի Համոն, վոր «նայիրյան դպրոցում, ուր կրթվում, հասունանում լիւ թիւ ե առնում մեւ մասադ սեռունդը, վորի ուսերի վրա, վորի վսիս ուսերի վրա վաղը պե՛տ ե ծանրանա նայիրյան — ո, յես հավատում եմ դրան, — պայծառ ապագան դարբնելու գործը, — հարգելի ժողովականնե՛ր, յես ասում եմ, ալո, վոր նման մի սրբազան վայրում լիւ այն ել ուսուցչի բաժն կոչումով, տեղ չպե՛տ ե ունենան պ. Դրաստամատյանի նման հարբեցող ավարտները...»: Այսպես եր ասել ծրխական դպրոցների հոգաբարձական կազմին, միանգամայն արդարացի լինելով, Մաղութի Համոն, — և նրան, այդ կազմին, վոչինչ ուրիշ չեւ ֆնում անելու,

քան հաստատելու նրա կարծիքը և հեռացնելու պաշտոնից պ. Մարութիւն, վորը և տեղի ունեցավ, ի մեծ անտարբերութիւն պ. Մարութիւն և ի մեծ ուրախութիւն ամբողջ քաղաքի — յերկու որ անց։

Բժիշկ Սերգեյ Կասպարիչը այլևս նստում եր զորակոչարին ատշանում։ Իսկ յերեկոները, ըստ սովորութեան, նորից զբաղվում եր քաղաքային ակումբում մըխիթարիչ թղթախաղով, բացց այն տարբերութեամբ, վոր այժմ հետզհետե խոշորանում եին գումարները, խաղամիջի գումարները. «Տասը», «հիսուն», «հարյուր»-ի տեղ կանաչ սեղանների շուրջը այժմ լավում եին «յետեֆուկես», «հինգ» «հավասար» բացականչութիւնները, վորոնք, փոխաբերաբար հասկացվում եին, վորպես հարչուրի ու հազարի հետ առնչութիւն ունեցող գումարներ։ Յերկրորդ աչքի ընկնող փոփոխութիւնը, վոր առանձնապես դուր եր գալիս Սերգեյ Կասպարիչին, այն եր, վոր նոր, միանգամայն «քառ» մարդիկ եին սկսել հաճախել քաղաքային ակումբը, ըստ մեծի մասի չեւ ընտանաբազ սպաներ, վորոնք շատ շուտ ընտելանում եին բժշկին և, նրանից հետո, ֆնացած շրջանին՝ Ոսեփ Նարեմանովին, Գեներալ Ալոշին, Արամ Անտոնիչին և ուրիշներին. յես դիտմամբ առաջին հերթին չտվի Համո Համբարձումովիչի ահուհը, վորովհետեւ նա թեկուզ և չեւ դադարել ակումբ հաճախել, բաց չերևում եր կանաչ սեղանի շուրջը վո՛չ պարբերաբար, ինչպես առաջ, այլ յերբեմն-յերբեմն, և այն ել չերեկոյան ուշ ժամերին, տասնմեկից հետո. ո՞վ, ո՞վ չգիտեր Մաղութի Համոյի հասարակական գործունեութիւնը, վորով, հարկե, քիչ տեղ եր ֆնում անձնական



հաճույքներին՝ աննշան տեղ: Արդեն խոսում ելին, արդեն շատ վորոշակի շշուկներ ելին շրջում քաղաքում—և այդ շշուկները ինչ-վոր առնչություն ունեցին ընկ. Վառդգյանի հետ, արդեն տալիս ելին հասցի անուններ: «Անդրանիկ», «Դրո», «Բեռի», — խոսում ելին արդեն տներում ու փողոցներում: Յեւ անունները կապվում ելին, ինչ-վոր անհայտ թելերով կապվում ելին այդ անունները Մազութի Համոյի գրասենյակին. ինչ-վոր անհայտ կողմերից լերկարվում ելին, ասես, անյերևութ թելեր և փաթաթվում ելին «Լույսի» կառավարիչ Մազութի Համոյի շուրջը, նրա հետ աղոթեի մեջ առնելով նաև ընկ. Վառդգյանին, այո, նախ և առաջ ընկ. Վառդգյանին և ապա բժշկին և Ոսեփ Նարիմանովին: Չգիտենք կապ ունեյի՞ն արդյոք այդ շշուկներին, թե վոչ, բայց այդ որերին եր հենց, վոր Հիմզ հաղկանի Շենքի հրամանների կողքին մի առավոտ քաղաքացիք փակցրած դռան — ուրիշ, նախաճառ հրամաններ, ճիշտ ասած՝ հայտարարություններ, վորոնց ներքևում, սպիտակի վրա սևով, ստորագրված եր՝ տպված եր նալիրատառ՝ Համազասպ Ասվաճաճյան. — դա հենց ինքն եր՝ «Լույսի» կառավարիչ Համո Համբարձումովիչ Ասատուրովը — Մազութի Համոն...

Այդ հայտարարությունները կանչում ելին քաղաքացիներին, կանչում ելին, ինչպես ասված եր նրանցում—կիրակի, ցերեկվա ժամը 12-ին, ամառային ա-կումբի դահլիճը—«հասարակական ժողովի»: Գրված եր, նույնպես ասված եր նրանցում, վոր—«Ներկա մոմենտի մասին կբանախոսե Համազասպ Ասվաճաճյանը»—(կարդա Մագոսի Համոն) և ապա «Բանախոսությունից

հետո տեղի կունենա մտքերի փոխանակություն մի շարք կարևոր հարցերի մասին. մուտքը ազատ ե բոլորի համար. պատասխանատու կարգադրիչ՝ Համազասպ Ասվաճաճյան»—ահա այդ հայտարարությունների բովանդակությունը:

Կարդաց—կարդաց այդ հայտարարությունը վառսավիւր Վասիլը և նրա դեմքը, չգիտեմ ինչու, գարնան առավոտի նման, զվարթ, բացվեց. կարծես, չուղ քսեցին վարսավիլի դեմքին: Ձեռքերը իրար շփելով, մտավ Կիմսաուրի Սիմոնի կողակարանոցը վարսավիլ Վասիլը և զվարթ բացականչեց. «Մագոսի Համոն ելի կանչել ե քեզի, տ, Կյուրի Մեյմուն, բանե խաբար ես հեշ...»: Կողակար Սիմոնը կարծեց, թե ճիշտ վոր կանչում ե իրեն Մազութի Համոն. դանակը վար դրեց Կինտաուրի Սիմոնը և չեղավ վոտքի: «Ուր ա, ուրեղ ե» — թեկուղ խոցված վարսավիլի կոպիտ հորջորջումից, բայց ներքուստ հպարտացած, վոր, ախ, ինքը ևս առնչություն ունի այնպիսի անձնավորության հետ, ինչպիսին ե Համո Համբարձումովիչը—Մազութի Համոն: «Ո՛ւրա», շողոքորթ ժպտալով հարցրեց Կինտաուրի Սիմոնը վարսավիլ Վասիլին, կարծելով, վոր դուրսը, դռան մոտ, յերեկ, կանգնած սպասում ե իրեն Մազութի Համոն: — «Ա՛յ» — պատասխանեց, մեջքը թեքելով և կունակը դեպի Կյուրի Մեյմունը դարձնելով, վարսավիլ Վասիլը. ու ցուցամատը տարավ, ցուց տվեց... իր այն տեղը, վորի վրա ծննդյան որից նրա՝ տուն եր նա: Հասկացավ Կյուրի Մեյմունը, գլխի ընկավ նա, վոր «ձեռ ե առել» իրեն վարսավիլ Վասիլը. — «Թյու, մարդ, նամուսիդ» — թեքեց Կինտաուրի Սիմոնը



վարսավիրի յետևից. բայց նա, խռպոտ հոհալուով, ցատկել էր արդեն դուրս: Վարսավիր Վասիլը արդեն չկար: Բայց չես մոռացա ասեմ, վոր Մազուլի Համոյի նույն այդ հայտարարությունների կողքին, նույն այդ որը, փակցված կալին եւ ուրիշ հայտարարություններ, վորոնց ճակատին տպած էր թեև «Լույս Նավթարդյունաբերական Բնկերության կողմից» ծանուցումը, սակայն նրանց ներքեում եւ տպած էր նորից նրա, անխուսփելիորեն նրա — Մազուլի Համոյի ստորագրությունը: Նրանցում, այդ մյուս հայտարարություններում, ծանուցվում էր ի լուր հանրության, վոր — «Ապրանաճեղափոխության պայմանների դժվարանալու պատճառով» «Լույսի» վարչությունը պատիվ ունի հայտնելու արգո հասարակությանը, վոր սույն քվից սկսյալ նավթը վաճառվելու յե փութը մի ուրիշ նիւզ կուպելով — այսինքն նախկին գնից փթին 15 կոպեկ ավելով: Չնայած Համազասպ Ասվադասյանի առաջին հայտարարության առանձին խորհրդավորությանը եւ անհասկանալի փոճին՝ Մազուլի Համոյի այս չերկրորդ հայտարարությունն ավելի հուզեց քաղաքացիների միտքը, քան առաջինը: Մանավանդ վոր չար լեզուներն սկսեցին խոսել, — եւ այս լեզուների շարքում իր առանձնահատուկ տեղն ունեւ պ. Մարութչի լեզուն, — վոր նավթի գինը բարձրացնելու խնդրում մատ չունի «Կենտրոնը», այսինքն «Լույսի» կենտրոնական՝ Բագվի վարչությունը, այլ վոր այդ հետեանք է իրա — Մազուլի Համոյի սեփական ձեռնբերելության, մի բարեմասնություն, վորով այնքան հարուստ էր Մազուլի Համոն եւ վորի շնորհիվ նա քանիցս արժանացել էր կենտրոնական վարչության առանձին ուշադրությանը,

հատուկ հարգանքին: Չգիտենք, վորքան հիմք ունեյին այդ զրուցները, բայց մենք, աչքի առաջ ունենալով ուսական հայտնի առածը, տրամադիր ենք կարծելու, վոր այդ «ծուլք» եւ պիտի նախապայման ունենար յեթե վոչ իսկական մի «կրակ», գոնե կրակամուտն մի բան: Միրելի ընթերցող, քո աչքից թող չխուսափես իմ այս միանգամայն «նուրբ», միանգամայն զգուշալու վերաբերմունքը դեպի Մազուլի Համոյի անձնակաշին ուղղված զանազան «ասեկոսները». վոր, վոր աւսացեք խնդրեմ, քիչ թե շատ համարում ունեցող հեղինակը կարող է ցանկանալ, վոր իրեն մեղադրեն բամբասանքի մեջ դեպի իր հերոսը — նո՛ւ, յեթե վոչ «ներսը», գոնե իր վեպի նշանավոր, այո՛, կենտրոնական անձնավորություններից մեկը: Իսկ ինձ համար, մանավանդ, վոչ միայն վորպես հեղինակի, այլեւ վորպես մարդու — ուրեմն կրկնակի կերպով անհաճելի պիտի լինեն նման մեղադրանքը, վորովհետեւ, գգում եմ, վոր յեթե չես թույլ տայի ինձ գոնե մի, թեկուզ անբարեխղճություն գրությանս առարկա անձնավորության հասցելին — ապա հետեւելին, խղճի խայթի նման հսկելին պիտի անքուն գիշերներս Մազուլի Համոյի կայծկտող աչքերը՝ ուսեյին պիտի սիրտս: Պիտի նայեյին նրանք, հսկելին պիտի խղճատանքս — կախաղանի բարձունքից պարզելին պիտի դեպի խիղճս Մազուլի Համոյի տառապալ աչքերը — նախատինքի, այո, մոռմոֆի ասեղներ...

Կիրակի, ինչպես դրված էր հայտարարության մեջ՝ ցերեկվա ժամը 12-ին արդեն կանգնած էր Մազուլի Համոն ահումբի դահլիճի դեռ չբարձրացրած վարա-



գուլըրի յետեր և պատրաստվում եր սկսելու: Նաչում եր վարագուլըրի արանքից դահլիճում հավաքված հասարակութանը և սրտմտում եր կարծես. կողքին կանգնած եր ընկ. Վառդգյանը և նույնպես ցույց եր տալիս դժգոհության նշաններ: Բանն այն եր, վոր այնքան ել կարծես, դահլիճը լիքը չեր: Առաջին շարքում, կողք-կողքի, նստած ելին՝ Գեներալ Ալոշը, Ռսեփ Նաբիմանովը, բժիշկը: Արամ Անտոնիչը չերկրորդ կարգի առաջին նստարանն եր ընտրել և քիթը վեր տնկած, հոտոտում եր ողը. փնտռում եր ողի ալիքներում ինչ-վոր ծանոթ մի բան, բայց, կարծես, չեր գտնում: Նրանից յերկու նստարան այն կողմը նստել եր կոշկակար Սիմոնը — Կյուրի Մեյմունը, Վարսավիր Վասիլը նրա յետևում դրված նստարանն եր ընտրել և, նայելով կոշկակարի ծոծրակին, շոյում եր մորուքը: Բացի այս հարկելի նայիրցիներից, յեթե Հաջի Մանուկովին, ռեալականի և որրորդաց գլխապի միքանի ուսուցիչ-ուսուցչուհիներին, ծխականի վարժապետ-վարժուհիներին, տեղ չուսիկ փառանա-խաչագողին և պ. Արամաբչին ել թվենք — սրանով համարյա թե սպառած կլինենք չափահաս քաղաքացիների կոնսիսցենսը. յեթե, իհարկե, այդպիսիների շարքին չգասենք միքանի ուսանող-ուսանողուհիներին և մի շարք աշակերտներին (մեծ մասը Գեորգյան ձեմարանից), վորոնք կարծես թե իրենք ել զգալով իրենց անչափահաս լինելը՝ շարվել եյին պատերի յերկայնքին և բռնել եյին մուտքը՝ չնայած վոր դահլիճում դեռ, բավականի թվով, մնացել ելին դատարկ նստարաններ:

Տասներկուսից տաս անց Մաղութի Համոն անհանգստացավ. նայեց ժամացույցին, նայեց ընկ. Վառդգյանին. «Հարկավոր ե սկսել» — ասաց ընկ. Վա-

ռոդգյանին Մաղութի Համոն: Ընկեր Վառդգյանը դուրս չեկավ մի վայրկյան, ծառային կարգադրեց — և ահա, յերբ կրկին վերադարձավ և հայտնեց Համո Համբարձումովիին, վոր իսկույն կսկսեն — դրսից, ակումբի դռնից, լսեց զանգի ձայնը, վորից հետո դահլիճ մտնել սկսեցին միքանի նոր անձնավորություններ, մի յերկու ուսանող, մի յերկու չեկվոր սպաներ. վերջին մեկը նաղը պ. Մարուքեն եր՝ յետից կարո Դարալանը, վոր տեղավորվեցին վերջին շարքի նստարաններին. ապա դուռը փակվեց և վարագուլը բարձրացավ...

Յեւ ահա այստեղ եր, վոր հանդիսականների աչքին ներկայացավ մի բավականին տարրինակ, անսպասելի տեսարան. բեմի աջ անկյունում դրված եր ամբիոնանման մի հարմարություն, վորի կողքին կանգնած եր Մաղութի Համոն, իսկ բեմի կենտրոնում, նույն ճակատագրական կանաչ սեղանի առաջ (ուրիշ սեղան չերկի չեր ճարվել ակումբում) նախագահական աթոռի վրա նստած եր, վորպես նախագահ, — յերեւակայում եր — ընկ. Վառդգյանը... Վաս, վաս հոս եր փչում, ինչպես հետագայում ասում եր պ. Մարուքեն, նայիրյան այդ ժողովից — ասում եր ինչպես ասացինք, հետագայում, յերբ արդեն պատմության գիրկն եր անցել այդ ժողովը և արդեն ակնբախ ելին դարձել, նույն-իսկ Մեռելի Յեմոֆի աչքին, նրա աղետավոր վտանգները... Բայց այն, այն ժամանակ վրանց հասկանար այդ «այդ վատ հոտը» — չասենք Մեռելի Յեմոֆը, վորն ընդհանրապես քիչ բան եր հասկանում, այլ, ասենք, հենց մանրավաճառ Կոլոպոյանը, վոր իսկի չեր ել յեկել ժողովի, կամ նայիրցի արհեստավորը, վոր չեր ել լսել այդ ժողովի մասին և յեթե լսեր ել — քիչ բան



պիտի հասկանար: Վո՞նց, վո՞նց իմանար նեխած ձկան նման վազոնները լցված նալիբյի սրեխալորը, վո՞նց հասկանար այդ «վառ հոսք» նա, վոր առաջին անգամն էր, յեւած իր մութը խողից, յերկաթազիծ տեսնում, և նրա անհայտ հեռուններից սարսափահար՝ լալիս էր պառավանման և յերգում էր, պառավաձայն, վայրենի իր «Տանըմը» — փակ, անդուռ վշտի հանճարեղ այց վռնոցը, վոր պատիվ կարող էր բերել ամեն մի, ձմռան կես գիշերին դուռնը լուսնին տնկած, սարսափահար գայլի...

Տասներկուսից տասնհինգ անց այդ ժողովը բացվեց: «Ընր, քնր», — լերկու մատը շրթունքների տանելով, չոր հազաց ընկ. Վառուդյանը. և ասաց բացման խոսքը, կարճ և աղդու:

«Տիկիներ յեվ պարոններ», սկսեց իր խոսքը ընկ. Վառուդյանը, թեկուզ, կարծեմ, վոչ մի տիկին չկար դահլիճում, յեթե, իհարկե, չհաշվենք ծխականի վարժուհի ուր. Սաքոյին, վորին փոխաբերական մտքով միայն, թերևս, կարելի յեր «տիկին» անվանել, և այն էլ յեթե նման մի անքաղաքավարութուն թուլատրելի լիներ նայիրյան ժողովներում: Ընկ. Վառուդյանը իր բացման խոսքում, մոտավորապես, ասաց, «մեծ ուրե» են յեկել, նշանակալից որեր ամեն մեկի համար, բոլոր ժողովուրդների համար և, մասնավորապես, նայիրյան ժողովրդի համար: Նա հայտնեց, վոր պ. Համազասպը կզեկուցե այդ նշանակալից որերի ամբողջ կարևորության մասին և համոզված է, վոր արգո հասարակութունը միանգամայն հասուն, աշխուրջ վերաբերմունք կցուցահանե դեպի դրված խնդիրները: «Եսուք գեկուց-

ման համար, սրվում է պ. Համազասպին» — ասաց ընկ. Վառուդյանը և նստեց: Յեվ մինչև կմոտենար ամբիոնին պ. Համազասպը, մինչև կխմեր ջուրը — դահլիճում, Գինեբալ Ալոշի առաջնորդությամբ, ներկաներն հազալ սկսեցին և կոկորդները մաքրել, կարծես իրենք պիտի, բոլորը մեկ, ատենախոսելին: Բայց շուտով տիրեց լիակատար լուսթյուն և Համո Համբարձումովիչը — Մազուրի Համոն, վերջապես սկսեց...

Յես չեմ կարող, իհարկե, արագագրական ճշտությամբ վերարտադրել այստեղ Մազուրի Համոյի այդ պատմական, այդ նշանավոր ճառը: Բայց ձեռնանը, այսինքն նրա շարժումների, ձայնի, առողանության և այլ նրբությանց նկարագրությունը մի կողմ թողնելով, վորովհետև, սիրելի ընթերցող, դա վեր է իմ ուժերից, — յեկաշխատեմ պատմել, ամենայն ճշտությամբ, նրա այդ պատմական ճառի բովանդակությունը, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ կօրիգր. — և թող ներե ինձ Համո Համբարձումովիչի տառապալ ստվերը, յեթե յես, ինձնից անկախ պատճանհերով, թույլ տամ թեկուզ ամենաաննշան, մաղաչափ անճշտություններ:

«Խաչատուր Աբովյան, «Վեբ Հայաստանի, վորը հայրենասիրի» իր հայցնի վեպում պատմում է, քե ինչպես լիդիացվոց Կրեսոս քաղաքի համբ լեզուն բացվում է մայրենի լեզվի հրաշալի հրաշքով: — Այսպես մանկածապատ, այսպես բանաստեղծական սկսեց իր այդ նշանավոր ճառը Մազուրի Համոն: Իմաստն այն է, պարզաբանեց նա հետո, վոր հայրենագուրդ մարդու գոյությունը մի վեբ է, մի յարա, իսկ մայրենի լեզուն — հրաշալի բալամ: Դուք գիտեք, թ ինչպիսի մեծ



սիրով, ինչպիսի մեծ վողկորութեամբ քնարերգել են բոլոր մեծ բանաստեղծները, ինչպես մեր Ալիսանք յել Գամառ Քաթիպան — շարունակեց հետո Մաղուծի Համոն, — իրենց հայրենի յերկիր, իրենց հայրենի աշխարհը — իրենց հայրենիք: Ինչո՞ւ, — հարցը, շեշտակի, գրեց Մաղուծի Համոն, — վորովհետև ինչպես հայտնի չե բոլորին և ինչպես համոզված ե ինքը — այդ չերկու զաղափարները, այդ չերկու հասկացողութիւններն են — մայրենի լեզու և հայրենի յերկիր — վոր հաւմունիկ կերպով Եղիապիւղով իրար, ստեղծում են այն մեծ, այն, ամեն մի ժողովրդի զարգացման պատկը կազմող, հոյակապ շենքեր, վոր կոչվում ե ազգութիւն: Հայրենի յերկիր և մայրենի լեզու. ահա այն չերկու հզորագույն ազդեակները, վոր շաղկապվելով իրար, ամեն մի զարգացած ժողովրդից, ամեն մի ցած ու ցրիւ ցեղից կազմում են անքակտելի մի միավոր, — կազմում են ինչպես ասաց, կենդանի մի ուրգանքով — մի ամբողջական ազգութիւն: Բայց հարց տանք, հարց տանք մեզ ամենից առաջ, թե ի՞նչ ե կոնկրետ կերպով իրենից ներկայացնում ազգութիւն միավորը կազմող իր առաջադրած անդամներից առաջինը — հայրենի յերկիր: Յեւ, իհարկե, վոչ վոքի համար նորութիւնն չի լինի, չեթե նա ասի, վոր դա այն հողն ե, վորի վրա ապրել են տվյալ ժողովրդի նախորդները, այն հողն ու ջուրն են, վորով սնվել են, դարերի ընթացքում կյանք են ստացել տվյալ ժողովրդի պապերը, պապերի պապեր, և նրանց ել պապեր ու պապերի պապեր: Ինքը նրա համար ե այնքան անգամ կրկնում «պապեր», վորովհետև ցանկութիւնն ունի արդո հասարակութեան առանձնակի ուշադրութիւնը հրավիրել այն, ավելի քան

կարևոր և տվյալ դեպքում ճիմնական հանգամանքի վրա, վոր «հայրենիք» զաղափարը կապված ե վոչ միայն հողի, այն չերկրամասի հետ, վորի վրա ապրում ե ճիմա տվյալ ժողովուրդը. ո, վոչ, իհարկե վոչ, հարգելի հանդիսականներ: Այստեղ ինքը, Մաղուծի Համոն, հարկադրված ե կիրառել ազգային հարցի շուրջ գոյութիւնն ունեցող զիտական գրականութեան այն հիմնական տեսակետը, վոր կոչվում ե «պատմական տեսակետ»: Բանն այն ե, այն ե, հարգելի հանդիսականներ, վոր հայրենիք կոչվածը մի ուրում չի շինվում. մի որում չի կազմակերպվում, հայրենիք կազմվում ե դարերի ընթացքում և ժառանգութիւնն ե մնում դարերի ժառանգներին: Յեթե որինակով խոսելու լինեք, միթե միայն սա, միթե միայն փոքրիկ այդ քաղաքն ե իրենց հայրենիք: Ծիծաղելի կլինեք, չեթե այդպես մտածեցին: Ո, նա գիտե, Մաղուծի Համոն համոզված ե միանգամայն, վոր վոչ վոք արդո հանդիսականներից այդպես չի մտածում: Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ պիտի հաստատեն իրենք, վոր այսինչ կամ այնինչ չերկրամասը, վորի վրա ապրում են այսոր բոլորովին տարբեր, ոտար ցեղեր — ինչի՞ հիման վրա կարելի չե պնդել, վոր այդ չերկրամասը ևս կազմում ե այսինչ ժողովրդի հայրենիք, նրա ուրիշական սեփականութիւնը: Վոչ այլ ինչով, յեթե վոչ կենդանի պատմութեամբ, գոյութիւնն ունեցող այն պատմական նեխերով, վոր թողել ե տվյալ ժողովուրդը տվյալ չերկրամասերում, ահա թե ինչ, ահա թե վորտեղ ե հարցի կենտրոնը, հարգելի հանդիսականներ: Ուրեմն, պարզ ասած, հայրենիք զաղափարի հիմքն ե կազմում տվյալ ժողովրդի կուլտուրան, կուլտուրական անցյալը — ահա ամենաեղանակը: —



«Ուրեմն, հիմնական այս տեսակետը պարզաբանելուց հետո, պարզ պիտի լինի ամեն մեկի համար, վոր այս-սինչ ցեղը, կամ ժողովուրդը, վոր, դեպքերի բերումով դարեր շարունակ տիրել եւ տվալ յերկրամասին եւ իր աջորած վայրում վոչ մի հետք, վոչ մի կուլտուրական արձան չթողնելուց բացի՝ քանզի եւ այդ միևնույն տեղում ապրած ու վասակած ժողովրդի հնագույն հետքերը.— պարզ եւ, հարգելի հանդիսականներ, վոր նման մի ցեղ մինչ մի իրավունք չունի խոսելու իր այդ ժամանակավոր ապաստանի մասին, վորպես «հայրենիք»։ Յերկանք-յերկանք խոսեց այս ուղղութեամբ Մաղուծի Համոն, բերեց կոնկրետ որինականեր, ինչպես «մենք յեղ Վոսխր», եւ ապա անցավ իր առաջագրած «յերկու հիմնական հասկացողություններից» յերկրորդին—մայրենի լեզվին։ Ինչպես հոգին ե՛ մարմնի մեջ, ինչպես հոգին ե շնչափորում չոր մարմինը եւ կենդանի կապակցություն ստեղծում մարմնի բոլոր մասերի, բոլոր անդամների, բոլոր բջիջների մեջ—այնպես եւ լեզուն, մայրենի լեզուն, այն հոգին, այն, ավելի լավ եւ ասել՝ ցեղեմեն ե, վոր միացնում ե տվալ ժողովրդին իր, դարերից ժառանգություն մնացած, հայրենիքում, կապում այդ ժողովրդի անհատներին իրար, կերտում ե նրանցից այն անփակելի միավորը, վոր կոչվում ե «ազգություն»։ Ահա թե ինչպես ե լուծում լեզվի յեղ հայրենիքի, այս-սինքն, մի խոսքով ասած՝ ազգությունը պրոբլեմ ժամանակակից գիտությունը, հարգելի հանդիսականներ, Ուրեմն, պարզ ասած «հայրենիք» տվալ ազգության մարմինն ե, իսկ «լեզուն»—հոգին։ Ուրեմն, հարգելի հանդիսականներ, յեթե մենք հարցը կոնկրետացնենք եւ կիրառել ուղենանք մեր հայրենի իրականությունը,

պիտի ասենք՝—տե՛ս՝ մեր հոգին, տե՛ս՝ մեր մարմինը։ Վաղո՛ւց, վաղո՛ւց ե արդեն, վոր բաժանված ե մեր հոգին մեր մարմնից, բայց, հարգելի հանդիսականներ, քանի դեռ կենդանի յե հոգին—կենդանի յե յեղ մարմինը։ Ինչքան ել «լեզուն» յեղ «հայրենիք» անբաժանելի ողակներ կազմեն «ազգություն» կոչված կենդանի միավորի, բայց պատմության մեջ շատ անգամ պատահել են դեպքեր, յերբ վորեն ազգություն, դեպքերի դժբախտ բերումով զրկվելով մեկից՝ կառչել ե մյուսին ե այդպիսով հնարավորություն ե ունեցել չձուլվել ոտարներին, պահել իր ազգային դեմքը, ինչպես մենք, արգո հանդիսականներ, ինչպես նայիրցիներ։ Յեղ այսօր, բայց ավելի լավ ե ասել մինչեղ ուս, վորովհետեւ նո՛ր, նո՛ր յեղ պայծառ հեռանկարներ են բացվում այսօրվանից մեր առաջ, հարգելի հանդիսականներ,—կ՛նչ, կ՛նչ ելինք մեզանից ներկայացնում, վորպես ազգություն. չես կասե՛լի՝ հոգի առանց մարմնի. հոգեվոր ազգություն։ Վորովհետեւ, այո, մայրենի լեզուն եր միայն, վոր դեռ պահում եր մեզ, պաշտպանում եր ձուլման վտանգից—եւ նրան, նրան շնորհիվ եր միայն, վոր մենք ուրիշ շատ ե շատ ազգերի, ինչպես, որինակ, Ասորեստանի յեղ Բաբելոնի նման կորսյալ չմտնվեցինք... Վերն եր, վերն եր Նայիրին մինչև ուս, հարգելի հանդիսականներ. վերն եր, այո,—կենդանի Նայիրին։—Նայիրին յե՛ս ելի, հարգելի հանդիսականներ, Նայիրին դո՛ւք ելիք ե բոլոր նրանք, վորոնք մեզ նման խոսում ելին նայիրյան քաղցր լեզվով, վորի մասին այնպիսի հրաշքներ ե պատմում խաչատուր Աբովյանը... Յես հիմա խոսում եմ,—հիշում եմ, ձայնը բարձրացնելով՝ մարգարեական հուզմամբ բացականչեց, վոգևորված, Մա-



գութի Համոն. — յես խոսում եմ հիմա Հոգեվո՛ւր Նա-  
յիրի մասին, հարգելի հանդիսականներ,—և այս  
խմաստով յես կարող եմ ասել, վոր Նայիրին այնտեղ է,  
վորտեղ կա գոնե մի նայիրցի: Առաջին՝ մարմնավորի,  
նախենի՛քի խմաստով՝ Նայիրին այնտեղ է, վորտեղ ապրել  
են մեր պապերը, մեր պապերի պապերը յեվ նրանց էլ  
պապերի պապերը, հարգելի հանդիսականներ,—այն-  
տեղ է, ասենք—Վանում, Բիրխում, Գիարբեֆիում,  
այնտեղ է—Կիրիկիայում, Դեսսիում, Գարաֆիաում,  
Իսկ չերկրորդ՝ լեզվի, հոգեվորի իմաստով—Նայիրին,  
կրկնում եմ, այնտեղ է, վորտեղ կա, վորտեղ ապրում  
է այսօր գոնե մի նայիրցի: Իսկ վորտեղ, վորտեղ, ա-  
սացեք խնդրեմ, չկա, չի ապրում հիմա մեր յեղբայր  
Նայիրցին... Վորտեղ, աշխարհի վոր, թեկուզ և ամե-  
նահեռավոր անկյունում, չկա, վորտեղ չի դրել հարե-  
նագուրկ Նայիրցին... Տարեկ է, իր հալածված սովերը,  
ստեղ է աշխարհից աշխարհից քափառակամ նայիրցին:  
Յեկել է նա, Նայիրցին հինգ դար առաջ—հինգ դար  
առաջ հայրենի աշխարհից ու թողել է հնամյա իր ա-  
նունը աշխարհի բոլոր կողմերի վրա քափառակամ  
նայիրցին: Յեվ այսօր ահա արդեն հնչում է ժամը,  
հարգելի հանդիսականներ. ժամանակ է արդեն, վոր գա,  
յես դառնա նորից հնամյա իր յերկիրը աստանդակամ  
նայիրցին: Յեվ արդեն—արդեն՝ աշխարհի հեռու, ամե-  
նախուռ անկյուններից պարզում է իր ձեռքը գեպի  
իր հայրենիքը, պարզում գեպի հայրենի Նայիրին—աս-  
տանդական զավակը. մարմինը կորցրած ուրվականի  
նման՝ մարմնամալ է ուզում հազարամյա Նայիրին...  
Բայց ի՞նչպես, ի՞նչպես, ի՞նչպես մարմնամալ...»—Այս-

տեղից եր ահա, վոր անցավ Մազութի Համոն «ներկա  
մոմենտին»:

Պետք է, սակայն, նկատել, վոր Մազութի Համոյի  
այդ պատմական բանախոսության առաջին, տեսական  
մասը բավականին քիչ, համարյա աննկատելի ուշա-  
դրության արժանացավ հանդիսականների կողմից:  
Հանդիսականները, ձիշտ է, չէին ազմկում, չէին ել  
հազում, կամ անհանդստանում տեղերում, այլ այն-  
պես, կարծես թե չկային, կարծես թե, ինչվոր մի  
անխուսափելի պարտականութուն կատարած լինելու  
համար՝ ականջները դեմ ելին տվել ստանի ջրաղացի.  
Վոչ ջուր եր լցնում ականջները, վոչ մեֆի հոսիկ: Բա-  
նախոսության յերկրորդ մասը, սակայն, բավականին  
հետաքրքրեց և նույնիսկ այն աստիճանի հուզեց հան-  
դիսականներին, վոր մինչև անգամ Կինտուրի Սի-  
մոնը—Կյուրի Մեյմունը ձայն առավ և... համարյա քե-  
խտեց:

«Իսկ գիտե՛ք,—ասաց Մազութի Համոն հարցի  
գործնականին անցնելով,—վոր, չերկրորդ շաբաթն է  
արդեն, ինչ պատերազմ է հաստատարված մեր դարա-  
վոր քննախնային—վստյաին: Մեր հաղթապան զորքերն  
արդեն մտել են թշնամու սահմանները,—մոտ է, մոտ  
է արդեն փառավոր այն ուր, յերբ մե՛ս փառավոր զոր-  
քերը երգում կմենն: Մանրուքյան կենտրոնը հիմա  
նրանումն է, վոր մենք, Նայիրցիներս, հարկ յեղած  
լոջուքյամբ գիտակցենք, հասկանանք լիովին այն խո-  
սոք նշանակութունը, վոր ունեն այդ անցքերը և կա-  
րող են ունենալ մեր հարցի համար: Բավական է  
գիտակցել այս հանգամանքը միայն, վորպեսզի հաս-  
կանանք, վոր չի կարելի այսօր, այն, չի կարելի



ձեռքերը ծալած նստել. հարկավոր է ցույց տալ մեզ բոլորին համար նվիրական գործին ամենայն աջակցութիւն, լիակատար աջակցություն: Թե՛ բարոյական, և թե՛, մանավանդ, նյութական: Դուք գիտե՞ք,—ձայնը բարձրացնելով և խորին հուզմունքով բացականչեց հանկարծ Մազուլի Համոն,—վոր յես հայտնեմ պիտի հիմա մի ուրախալի, մի, բացառիկ նշանակութիւն ունեցող, խոշոր նորութիւն.—բազալոր կայսեր usո-րագրութեամբ գրութիւն է ստացվիլ փոխտնայի հասցեով, վորով բուլլատվում է մեզ կամավորական բանակներ կազմակերպել—ուրիշ խոսքով ասած՝ մեր սեփական,—այ՛ո—նայիրում գործն անենալ՝ մեր հին հայրենիքի գրաված վայրերը պաշտպանելու համար...»:

Դեռ չէր վերջացել իր այս նախադասութիւնը Մազուլի Համոն, չէր, կարծեմ բժշկ Սերգեյ Կասպարիչի նշանով, դահլիճում ծալք առավ մի կատաղի ծափահարութիւն, Հանդիսականներից շատերը, ինչպես Կիմսաուրի Սիմոնը յել Վարսալիք Վասիլը, վոգեւորութեան այն աստիճանին հասան, վոր սկսեցին վոտքերը գետնին խփել և բացականչութիւններ անել: Բայց հնչեց նախագահի,—չոր, հատու,—հնչեց ընկ. Վառդյանի զանգը նախադահական տեղից. դահլիճում տիրեց լռութիւն: Բաժակից ջուր խմեց, առիթից ոգտվելով, Մազուլի Համոն և շարունակեց.—«Սա նշանակում է, վոր կայսուն իրական հողի վրա յես դրվում այսուրեւից մեր հարցը—յել մեզ մնում է գրկաբաց առաջ գնալ սեղծված նմարավորություններին՝ անապարել կազմակերպված դիմավորել մեր տոռայայ հայրենիքի վերջնական ազատագրմանը»։ Այստեղ նորից, չնայած մի վայրկյան առաջ եր խմել— բաժակից ջուր խմեց

Մազուլի Համոն և—«բայց դեռ յես չեմ հայտնել, հարգելի հանդիսականներ, ամենաեղանակը»—ասաց Մազուլի Համոն խորհրդավոր ձայնով. յերևում եր, վոր ուզում եր հայտնել չափազանց կարեւոր, նշանակալից մի նորութիւն, բայց դժվարանում եր ձևալորել: «Յես պիտի հայտնեմ ձեզ, հարգելի հանդիսականներ»—ասաց, շրթունքները սրբելով, նա վերջապես—«վոր նույն այդ բարձրագույն գրութեամբ—ամենամալատի աղբյուրից մենք տեղեկություն ենք ստացել—բավականին, այ՛ո, բավականին վորոք խոստումներ են տրվում մեզ ապագայի նկատմամբ—յել մենք ամենայն վնասակարությամբ կարող ենք ասել, վոր բացի քնդհանուր բարյացակամ վերաբերմութեց դեպի մեր «Հարցը»— մենք արդեն ունենք յել իրական, ապա ուրեմն պաշտպանական յերաւիսիքներ ամենաբարձր ինստանցիաներից գրավոր տրված...»:

Այստեղ նորից, նորից դրդաց դահլիճը հախուռն ծափահարութիւններեց, ապա անցնելով բանախոսութեան վերջաբանին, դեպի հասարակութիւնն յեկավ, ամբիոնի վերջապետով, Մազուլի Համոն և ասաց, մոտա-մոտեց հեռանալով, Մազուլի Համոն և ասաց, մոտա-մոտեց հեռանալով, «Մեծ, վճռական, պատմական վորապես, հետեւալ. «Մեծ, վճռական, պատմական ողբեր ենք ապրում, հարգելի հանդիսականներ,— և հարկավոր է, վոր մենք, պարզ ու վորոշ կերպով, ցուցահանենք մեր կազմակերպված վերաբերմունքը դեպի կատարվող անցքերը: Պետք է դիտենանք ոգտվել առիթից—չեշտեց, խրատական շեշտով, Մազուլի Համոն: Հարկավոր է գործով, այ՛ո, և վոր թե խոսքով, ոգնութեան դալ այդ հայրենիքի ազատագրման նվիրական գործին, պարզ ասած՝ պետք է ժողովրդական ամենա-լայն խավերի սեփականութիւն դարձնենք կամավորությամբ զազափարը: Թող դրվի, ով վոր կարող է, ով



վոր ընդունակ և զենք վերցնելու— թող գրվի՝ նա կամալուք, — և այն ժամանակ գալիք սերունդների առաջ մենք, հպարտությամբ, այս, իրավունք կունենանք ասելու, վոր արինք, ինչ վոր պահանջվում էր մեզանից պատմական այս ծանր վայրկյանին, — կատարեցինք, այս, վորդիական, մեր պարտք դեպի մեր թանկագին հայրենիքը, դեպի, յես հավատում եմ, այո, ո, չեմ կասկածում— «վերածնվող Նայիրին...»:

Այսպես, մոտավորապես, վերջացրեց իր պատմական այդ բանախոսությունը Մազուլի Համոն և հանդիսականների կողմից, ինչպես և կարելի չէր սպասել, արժանացավ բուռն, անսահման ծափահարությանց: Ո՞վ էր, թվ էր, չգիտեմ, սկսողը, բայց, մի վայրկյան չանցած, ամբողջ դահլիճը, վոտքի չեղնելով, չերգում էր նայիրյան հիմնը. դահլիճը, մի մարդու նման, Սերգեյ Կասպարիչի ղեկավարությամբ, յերգում էր «Մեք Հայրենիք»:

Հետո սկսեց մեքերի փոխանակությունը: Մտքերի փոխանակությունն սկսեց Սերգեյ Կասպարիչը, բժիշկը: Ապա խոսեցին՝ Ոսեփ Նարիմանովը, Արամ Անտոնիչը, պ. Արծմարը, տեր Հուսիկ քահանան — Խաչագողը: Բոլորն էլ համամիտ էլին պ. Համազասպին. բոլորն էլ ցանկություն էլին հայտնում, ուժեր ներածին համեմատ, ոգնություն գալ «ընդհանուր գործին»: Ամեն ինչ լավ էր գնում մինչ այդ, ամեն ինչ գնում էր, ինչպես հայած յուղ, արդեն պատրաստվում էր իր գործնական առաջադիմ մտցնել ընկ. Վառդգյանը, յերբ, հանկարծ, միանգամայն անսպասելի, աննախադուշակելի կերպով, պատահեց բավականին անախորժ, աներևակայելի մի

քյուրիմացություն: «Կարելի՞ յե մի խոսք» — հնչեց հանկարծ ներկաների 90, գուցե և 99 տոկոսին անծանոթ մի ձայն դահլիճի ամենածայրից. բոլորը յես նայեցին, իսկ Մազուլի Համոն և ընկ. Վառդգյանը — առաջ. անտեղի չէր այդ ձայնը և անսպասելի: Նայեց, ճարպոտ վիզը հաղիվ յես շրջելով — նայեց դեպի ձայնը և Արամ Անտոնիչը. նա միակն էր, գուցե, դահլիճում վոր ճանաչում էր այդ ձայնը: Ձայն խնդրող ձայնը Արամ Անտոնիչի «սանիկին» էր — Կառ Դարայանի: Գուշակեց Արամ Անտոնիչի սիրտը, վոր լավ բան չի կարող պատահել, և դեմքը հանկարծակի լեկավ — Արամ Անտոնիչի դեմքը անհամբերութունից ծռվեց: «Ի՞նչ... ինչի՞ մասին եմ ուզում խոսել» — հարցրեց, վոտքի կանգնելով, ընկ. Վառդգյանը: «Յես մի հարց միայն կուզեյի տալ պ. Ասվաժաճյանին» — պատասխանեց Դարայանը. — «Կարելի՞ յե»: — Նայեց, հարցականեց Դարայանը. անհամբերութունով ղեմքին ընկ. հալացք գցեց Համո Համբարձումովիչի դեմքին ընկ. Վառդգյանը: Համո Համբարձումովիչի հայացքը անհասկանալի մնաց ընկ. Վառդգյանին: «Սնդդեմ» — ասաց ընկ. Վառդգյանը, զանգը վերցնելով. — «Միայն թե կարն»: Դահլիճը, անհամբերութուն կտրած, սպասում էր Դարայանին: Կիսազարմացական, կիսահեղնական ժպիտը դեմքին՝ նայում էր Դարայանին Համո Համբարձումովիչը. « — Ո՞վ ե այս լուսնից ընկածը» — ասում էր կարծես հեգնախառն հայացքը Մազուլի ասում: «Յես մի հարց միայն կուզեյի տալ ինձ պ. Ասվաժաճյանին» — ասաց Դարայանը — «Չե՞ր կարող արդյոք պ. Ասվաժաճյանն ասել, թե ո՞վ ե ճեսել այն գրությունը, վորի մեջ, իբր թե, «Իրական խոսուսներ կան քրմած ամենաբարձր ինստանցիաներից» յեվ, յեթե այդպի-



սին, այսինքն գրութիւնը կա՝ ինչպե՞ս են ձեւակերպւած այդ խոսուածքները — բառացի...»:

Ինչպես քարը, այո՛, սարից գլորվելով և ընկնելով գետը՝ առաջ ե բերում շառաչուն ջրհոգում, ինչպես Ֆուսթոյի գնդակը, խաղընկերներից մեկի անշնորհ հարվածից խաղի ամենատաք վայրկյանին պայթելով՝ առաջ ե բերում րնդհանուր տհաճութուն և ընդհանուր ցասում — այդպես ել Կարո Դարայանի անտեղի ալդ հարցը, սրահի ընդհանուր, լարված վոգեորության մթնոլորտում պայթելով՝ առաջ բերեց — բարկութուն ու հեզնանք ասեմ, չգիտեմ, թե՞ — հեզնանք ու բարկութուն: Սերգե Կասպարիչը և Ոսեփ Նարիմանովը վեր թռան տեղերից, դարմանքը դեմքերին՝ հասարակությանը նայեցին Սերգե Կասպարիչը և Ոսեփ Նարիմանովը: «Ո՛վ ե այդ յերեսան, վոր նման մի հնա, յերեսանական հարց կարող ե ջալ նման մի ժողովում» — ահա այս եր գրված բժշիկ Սերգե Կասպարիչի և հաշտարար դատավոր Ոսեփ Նարիմանովի հայացքներում: Նրանց հետեւելով՝ նույնպես վոտքի կանգնեցին Գիներալ Արշը, պ. Աբումարը, Կինտաուրի Սիմոնը և Արամ Անտոնիչը. վերջինիս դեմքը մի այնպիսի արտահայտութիւն եր ստացել, կարծես ասելիս լինեք. — «Ներեցեք անարժանիս՝ յե՛ս եմ մեղավորը...»: Մեկը, Համո Համբարձումովիչ կարծեմ, հեզնական ծիծաղեց. և ամբողջ դահլիճը, մի մարդու, այո, մի բերանի նման՝ հեզնախառն փոթկաց: Ծը՛նդ, ծը՛նդ, ծը՛նդ, — հնչեց նախադահի զանգը, մեղմ ու զիջող. — «ծիծաղեցե՛ք, բայց լուր ե՛լ ե հարկավոր» — ասում եր ալդ զանգը կարծես ընկ. Վառոդյանի ձեռքում: «Լուեցե՛ք, պարոններ» — բացականչեց ընկ. Վառոդյանը, մի քայլ առաջ գալով, —

և, ինքն ել, կարծես չկարողանալով զսպել ծիծաղը փոթկաց: — «Լուրբը՛ն, լուրբը՛ն» — ողնության յեկավ նրան, արդեն բոլորովին լրջացած, Մաղութի Համո. «Նսեցեք, պարոններ» — ու ցուց տվեց ձեռքով թե ինչպես հարկավոր ե նստել, Համո Համբարձումովիչը: Բոլորը, աղմուկով ու հրհուրով, վերջապես նստեցին: Ապա առաջ յեկավ, ծանր ու լրջադեմ, Մաղութի Համոն — և տվեց արժանի պատասխանը. — «Յես պիտի ասեմ հարցաւեր յերեսաւարդին, վոր նման հարցեր կարող եմ ջալ միայն — թող ներե ինձ հարցաւեր պարոնը — դպրոցական առակներէն...»: Յեմ դահլիճը թնդաց, վորոտաց ծափահարութիւնից: «Թալլ սվեք» — ինչքան վոր ձայն ունեք, բղավեց, շփոթված, Կարո Դարայանը. «չի՛ կարելի, հասկանա՞ւ եք, մարդկանց խաբել...»: Յեմ այստեղ եր ահա, վոր, ինչպես ներքեւում ասեցինք, ձայն առավ — յերեսակայում եք — Կլուբի Մեյմուներ, — այսինքն, վեր թռչելով տեղից՝ ձայն տվեց ինքն իրեն Կլուբի Մեյմուներ և — «Դո՛ւքս արեք եղ ի՞նչ հայկանին» — բացականչեց, հոգու խորին վրդովմունքով, կոշկակարը ու առաջ պրծավ, ուղեց նետով դեպի Դարայանը, բայց... վարսավիր Վասիլը, ոգտվելով հանգամանքից, իբր թե պատահամբ, դեմ տվեց վոտքը Կլուբի Մեյմունին. Կլուբի Մեյմունը, գերանի նման, տարածվեց հատակին: Տիրեց ընդհանուր իրարանցում. աղմուկ, հրհուր, Հետո ինչ պատահեց — հետաքրքիր չե, ընթերցող, վորովհետեւ, այո, պատահեց անխուսափելի. Ոսեփ Նարիմանովի առաջարկով քվեարկության դրվեց, դահլիճը բավականին հանդարտվելուց հետո, որինական առաջարկը Կլուբի Մեյմունի. Համո Համբարձումովիչը յերկու հակերձ խոտքով խայտառակու-



քյան սյանը դամեց, Դարայանին հասարակության միա-  
ձայն վորդուժով դահլիճից հեռացնելուց հետո, Դարա-  
յանին նման «սխմար յերթասարգներին»։ Ընկ. Վառդգյանը  
հայտնեց ի լուր հանրության, վոր մոտ որերում չե-  
կեղեցու մոմավաճառքի խանութում կշկալի կամավառ-  
ների ցուցակագրութունը։ հետո ժողովը փակված հայ-  
տարարվեց և հասարակութունը ցրվեց։ Բայց վոչ-  
մոռացա մի հանգամանք ևս։ Ժողովը փակված հայ-  
տարարվելուց առաջ Մաղութի Համոն, չնայած վոր  
այդ մասին արդեն քաղաքում փակցված կային հայ-  
տարարություններ — Մաղութի Համոն, չնայած այդ  
հանգամանքին, հարկ համարեց իր կողմից ևս հիշեցնել  
հարգելի հանդիսականներին, վոր յերեկոյան ժամի 9-ին,  
այդ միևնույն դահլիճում, մայրաքաղաքից հյուր չեկած  
հայտնի զինվորական, գեներալ-պրոֆեսոր Այսինյ —  
Այսինյը կարդալու յե դասախոսութուն «Նախդան հաւցի  
ապագայի» մասին։ Խնդրում ե ներկա լինել և հարգել  
նրա, հատկապես այդ նպատակով մեր քաղաքը չեկած  
այդ ոստաղգի բարեկամի այդ գեներալ-գիտնականի  
բարյացակամ վերաբերմունքը դեպի նայիրյան դասը։  
Ժամը չորսը կլինեի, չերբ ժողովը վերջացավ։

Պ. Մարուքեն և Կարո Դարայանը. լավ դատել ելին իրար  
այդ «եթ զուխները», ինչպես կնքել եր նրանց Արամ  
Անտոնիչը — դպրոցի տեսուչը, «Մի մաս յուդ» ելին  
դարձել վերջին որերում նախիրյան այդ քաղաքում  
այդ յերկու պարոնները, «եսուփը գլորվել — զսել եր  
պոսուկը» — ասում եր նրանց մասին տեր Հուսիկ  
քահանան — Խաչագողը։ Բայց պ. Մարուքեն, այսպես  
թե այնպես, ելի «իբեց ռունն» եր — վերջին հորջոր.

Ջումը պատկանում եր իրան՝ վարսավիր Վասիլին, —  
իսկ ռվ եր այդ նոր «կապից կսրվածը», այդ, ինչպես  
ասում եր նրա մասին Արամ Անտոնիչը — Մոսկովցեում  
փյալցած անասունը։ Ո՞վ եր, այժ, այդ հիմար պարոնը,  
վորին հասակավոր քաղաքացիներն ելին միայն հիշում  
փողոցներում վեգ խաղալիս և վորը վերադարձել եր  
ահա իր հայրենի քաղաքը, վորպես ոտարական, վոր-  
պես անառակ վերդի։ Ո՞վ եր նա, ինչո՞վ եր զբաղվում,  
ո՞ւմ հացին եր յուդ փում — գեներալ Ալոշից սկսած  
մինչև վարսավիր Վասիլը։ Վարժապետ եր նա, բժիշկ,  
ինժեներ. չե. — արևակատ եր, չարչի, «լամպի ռուս»  
— ռվ իմանար։ Ահա բնական հարցեր, վոր, մանավանդ  
վերջին հետաքրքիր քյուլիմացութունից հետո, տալիս  
ելին իրենց հետաքրքիր քաղաքացիները։ Հարցեր, սա-  
կայն, վոր ֆում ելին անպատասխան։ Մնում ելին  
անպատասխան այն հասարակ իմաստով, վոր հազար  
ու մի պատասխան ելին դտնում զանազան ուղեղ-  
ներում։ Նայած տվյալ ուղեղի ցանկությանն ու խառն-  
վածքին։ Որինակ, վարսավիր Վասիլի ուղեղում այն  
կարծիքն եր նստել, վոր Կարո Դարայանը վոչ այլ  
ինչ ե, յեթե վոչ — «համի բոցնող», իսկ թե ինչ ե  
նշանակում «համի բոցնել», — հարկավոր եր իրենից  
իմանալ։ Այնինչ Հաջի Ոննիկ եֆենդի Մանուկոֆը  
տրամադիր եր հակառակը կարծելու. — վոչ թե «համի  
բոցնող» ե Կարո Դարայանը, ասում եր նա, այլ  
«համի ուտող», կամ, բառացի՝ «համի կուլ սվող», իսկ  
թե ինչ քամիներ եր ուտում, կամ կուլ տալիս Կարո  
Դարայանը — այդ ել հարկավոր եր Հաջուց հարցնել, Յե՞վ  
յեթե հարցնող լինեի — նա, Հաջի Ոննիկ եֆենդի Մանու-  
կոֆը, այդ պատկառելի նայիրցին, շատ պատկերավոր



կերպով կբացատրեն, թե ինչ է հասկանում ինքը «Բա-  
մի» ասելով: Ահա Բամբները ստամոսի սեղ կտնային. Ռու-  
սիո անուշահոտությունը կրսեն ասոնց երգումցիք...» —  
կասե՛ր քահանայ ծիծաղալով, հայտնի անգլիագետը:  
Բայց հարցը, իհարկե հիմնովին փոխվում է միանգա-  
մայն «Իրական» հոդի վրա չէր դրվում, յերբ վարսա-  
վիր Վասիլի և Հաջի Ուննիկ եֆենդու շնական ուղեղ-  
ներից տեղափոխվում էր Գեներալ Ալոշի, Մազուլի  
Համոյի, բժշկի, Ոսեփ Նարիմանովի, կամ ընկ. Վա-  
սոպյանի «գործնական» ուղեղները: Այս հարցը միանգա-  
մայն տարբեր բնույթ էր ստանում վերջիններիս քա-  
ղեղներում: Ամենից առաջ շատ բան ունեն լինում  
Արամ Անտոնիչի, գալոցի տեսչի ուղեղը՝ այն պարզ  
պատճառով, Վոր նա, Արամ Անտոնիչը, նախ հարա-  
զատ «Բեռն» էր Կարո Դարալանի, և ապա՝ նա, Արամ  
Անտոնիչը միայն գիտեր, տեղեկություններ ունեն ստա-  
ցած, թե ինչով էր զբաղվում իր «յեզանը», այսինքն  
մորեղբորորդին, Մասկվալում ու Բագվում: Այո՛, նախ  
Արամ Անտոնիչը և ապա Մազուլի Համոն: Գրե՛լ էր,  
ամենից առաջ Արամ Անտոնիչին էր գրել իր անար-  
ժան սանիկի «սլամա արաբների» մասին Արամ Ան-  
տոնիչի հարազատ յեղբայրը — Գարաթիմ Անտոնիչը,  
վոր գլխավոր հաշվապահի պաշտոն էր վարում «Հուլս»  
նավթարդյունաբերական ընկերություն կենտրոնական  
վարչություն՝ Բագվի գրասենյակում: Նա, Բամի կուլ  
սվող այդ հասագլուխ երբ — յերևակայում էք — բուրժ  
բանվորներին և գրգռելիս յեղի նավթարդյունաբերական  
նախըջան այդ ընկերության դեմ. — ահա թե ինչով է զբաղ-  
վելիս յեղի այդ «անբան անասունը» մինչև այդ քա-  
ղաքը գալը, սիրելի ընթերցող: Յե՛վ այն էլ, ինկատի ու-

նեցեք, մի ընկերություն, վորսի կենտրոնական վարչու-  
թյան նախագահն էր այն մուս, իսկական «Ընկերություն»  
— Կենտրոնադեղատարդի կենտրոնական թեյերից մե-  
կը՝ Հայսնի անունը: Ահա թե ինչպիսի տխուր տեղեկու-  
թյուններ էր ստացել իր «Հոգեծառանգի, իր անարժան  
«սանիկի» մասին, դժբախտաբար յերկու ամիս միայն  
առաջ, Արամ Անտոնիչը, և այն էլ այնպիսի մի անձ-  
նավորությունից, վորին չէր կարող, իրավունք չունեն  
չհավատար: Ստացել էր այդ շփոթությունից տեղեկություն-  
ներն իր հոգեզավակի մասին Արամ Անտոնիչը և վո-  
րեղ էր վոչ վոքի չհայտնել, բայց մեծ յեղավ նրա  
դարմանքը, յերբ, այդ տխուր նամակն ստանալուց  
յերկու ու հետո, յերեսց նրա գրասենյակում Մազուլի  
Համոն և, մի-յերկու սովորական հարց ու փորձից հետո,  
— բավականին հետաքրքիր նուրբյուններ ենք լսում «յե-  
զան»-ի մասին, Արամ Անտոնիչ — զցեց, իր շեղ,  
հեգնական հայացքի նման, ամոթահար ակնարկը Արամ  
Անտոնիչի դեմքին Մազուլի Համոն, Արամ Անտոնիչի  
դեմքը, գաճած պատի նման, սալիտակեց: Յե՛վ գրեց,  
այդ նույն յերեկո, Մազուլի Համոյի հեռանալուց  
հետո գրեց իր վերջին նամակը, առանց ստորագրու-  
թյան, Արամ Անտոնիչը, նախատեց, անարգանքի սյան  
կամեց իր վերջին նամակում Կարո Դարալանին Արամ  
Անտոնիչը: Յե՛վ պատվիրեց, լստով պատվիրեց ա.դ.  
վերջին նամակում, վոր չլինի թե յերբեկեց հիշել իր  
քեռուն այդ փուչ դավաճանը. չլինի թե յերբեկեց իր  
աչքին յերևա: Յե՛վ ահա — արդեն լուկ էր, արդեն,  
մոռացած, էլ չէր խոսում անհաճո այդ նույնի մասին  
Արամ Անտոնիչին հանդիպելիս Համո Համբարձումո-  
վիչը, յերբ, ինչպես գիտենք, անամոթաբար բուսնեց,



յերևաց հանկարծ իր հայրենի քաղաքում Կարո Դարայանը... Ըսցց այս մասին մենք, բախականին մանրամասն, արդեն պատմել ենք վերևում, պ. Մարուքեյի հետ քաղաքային այգում տեղի ունեցած այն անպատվաբեր դեպքը նկարագրելիս։ Բայց հիմա, չեք տեսնո՞ւմ գործունեություն հր սկսել, հանձնա Մազութի Համույի և ընկ. Վառուդյանի, Տեղական Կոմիտե — ի՞նչ, ի՞նչ միջթարանք կարող ելին պատճառել այդ թշվառ սանկի, մեղմ ասած՝ տղայական արարքները Արամ Անտոնիչին՝ նրա քեռուն, «հոգեհոր»։ Նա, Կարո Դարայանը, հասկանում է՞ք՝ համարձակվում էր ինչ-վոր փայտիկներ խրել «Ընկերության» անիվը, — այդ վողորմելի ձիճուն, այդ «Կարո Փարայանը»։ Դարայանի անվան սկզբնատառը այդպիսի մի չերեկմիտ կերպարանախոսության լինթարկողը նույն անձնավորությունն էր ելի, նույն ընկ. Վառուդյանը, վոր առանձին մի շնորհք, մի փոքրիկ թուլություն ունեւ դեպի նման, այո, «չերկիս» հանաքները. նա չէր, նա չէր միթե, վոր «Գ»-ի լեր վերածել պ. Մարուքեյի պատմական ազգանվան սկզբնատառը «Դրաստամատի» փոխելով արքայական «Դրաստամատը»։ Նա, նա յեր ելի, ինչպես առիթ ունեցանք վերելում հիշելու — գավառցի չնչին վարժապատից արդեն «անվարժություն» դարձած այդ ընկ. Վառուդյանը...

Յերեկոյան դեռևս ութ և կեսին լիքն էր, ծալերիծալբ լիքն էր արդեն ամառային ակումբի դահլիճն այդ յերեկո։

Առաջին շարքի նստարանները բռնված էին արդեն քաղաքի վերին, այո՝ ամենավերին խավերով։ Այդպիսի հասարակություն շատ սակավ էր հավաքվում, տարեկան

մի-յերեկու անգամ հաղիվ էր հավաքվում քաղաքի ակումբներում։ Բայց, ասենք, քաղաքի ակումբներում (նախըրջան այդ քաղաքը բացի ամառային ակումբից ունեւ և ձմեռային) — լերեք ել չեր հավաքվում նման հասարակություն. նման հասարակություն, լինում էր, վոր տարին մի անգամ, և այն էլ Մազութի Համույի բնակարանում, հավաքվում էր, այո, նրա անդուգական դասեր՝ Սեվաչյա Պրիմադոնայի ծնդան օրը, լերը ներկա լեր լինում ինքը գավառապետ և համարյա թի քաղաքի ամբողջ «վերին խավը», ընտրովի հասարակությունը։ Այդ օրերին, իհարկե, տեղ չունեյին նրա, Մազութի Համույի, ընտանեկան սեղանի շուրջը Կիմսաուրի Սիմոնը յեվ վարսավիր Վասիլը, վորոնք ներկա էին հիմա ակումբի դահլիճում. ընկ. Վառուդյանն անգամ չեր համարձակվի գլուխը ներս խոթելու Համո Համբարձումովիչի բնակարանն այդ բացառիկ օրերին, թեկուզ հետագայում, նկարագրածս դեպքերից հետո, ընկ. Վառուդյանը ևս սկսել էր տեղ ունենալ Մազութի Համույի սեղանի շուրջն այդ բացառիկ օրերին և նույնիսկ, լերեկայնում է՞ք՝ ասում են, ըմբիկ Սերգե Կասպարիչից, լերեկ, օրինակ վերցնելով, սովորել էր համբուրել Սեվաչյա Պրիմադոնայի՝ ձեռքը վերջինիս շնորհավորելիս. — չափից, այո, չափից արդեն անցնել էր սկսել այդ «սասկած վարժապետ» վերջին ժամանակներում...

Յերեկոյան, ինչպես ասացինք, ինքը չկար, լերը արդեն նստած էին, առաջին շարքում նստած էին արդեն — Գեներալ Ալոբ, քաղաքի պարետը՝ բարձրահասակ մի սպա, վոր վերջին ժամանակներս մի առանձին ուղադրության էր սկսել արժանանալ Համո Համ-



բարձրագույնի զստեր — Սեվայյա Պրիմադոննայի կողմից — բժիշկը, Արամ Անտոնիչը՝ իրա կնոջ — Շիկաներ գլուխի կողքին, Ոսեփ Նարիմանովը, Հինգմարեանի Շենքի համարյա թե բոլոր աչքի ընկնող պաշտոնյաները — վճռը թվիմ։ Սպասում եյին Գալաուպեսի յեկ կնոջը, վորոնց բերելու համար անձամբ, Սեվայյա Պրիմադոննայի ուղեկցութեամբ, գնացել եր ինքը Մադուլի Համոն։ Այստեղ եր նաև Անգիմա Բաբսեդովնան, Համո Համբարձումովիչի հարգելի ամուսինը, վորին զբաղեցնում եր Մադուլի Համոյի բացակայութեան պատճառով, պարեսը՝ բարձրահասակ սպան. անտարբեր չեր, այո, ասում եյին չար լեզուները, վերջին ժամանակներում դեպի այդ բարձրահասակ չերիտասարդը Անգիմա Բաբսեդովնան, վորը, իր հերթին հատուկ ուշադրութեան եր սկսել արժանանալ, չնայած իր պատկանելի տարիքին, սպայի կողմից։ «Զվանդի պիւն»՝ քավի պոչը կլիգե» — ահա վարսավիր Վասիլի չարամիտ կարծիքն այդ նուրբ հանգամանքի մասին. չար, չար, ո՞՞ր լեզու ուներ այդ «ուսաղբազ պերպեր» — ինչպես բնորոշում եր նրան, վարսավիր Վասիլին, դանկե՞ն Սեթոն։

Ո՞վ, ո՞վ ասես, վոր չեր չեկել, Գեներալ պրոֆեսորին լսելու ցանկութեամբ, այդ չերեկո. նուշնիսկ Բաբսեդ Արգարիյը, թվաբանութեան ուսուցիչը, վոր թոքերի պատճառով, բավականին «ծուլ» եր հասարակութեան մեջ յերևալու խնդրում — նա և, նրա կինը՝ «ձուսը», կնոջ ընկերուհին՝ Վառլա ճոգալիք — բոլորը կային, բոլորն ել, անխտիր, վերին խավից։ Նրանց մեջ եին, խառնված նրանց՝ նստել եյին դանկե՞ն միջին կարգերում — Հաջի Ունիկ եֆենդի Մանուկովը, պ. Արամարը,

տեր Հուսիկ քահանան — խաչագողը, — և նուշնիսկ, թեկուզ արդեն մուտքին բավականին մոտիկ, բայց և այնպես այս բարձր հասարակութունից վոչ այնքան ել հեռու — բազմել եյին... ծխականի վարժապետ — վարժուհիներ. — Բյուզանդ Վարդեբեյանը, հայերենի դասատուն, վոր աշակերտել եր Մանուկ Աբեղյանին և պարծենում եր զրանով, — որ. Վարդուհի Զասիկյանը, վոր չեր կարող «սանել» որ. Նվարդին, — նուշն այդ որ. Նվարդ Լուսպարոնյանը՝ «մագր կսրածը» — պ. Առոսի կողքին, այն ճեմարանավարտ պ. Առոսի վոր արդեն սկսել եր, դեպքերի բերումից ավելի ևս վոգեվորվելով, «Նալիլյան լեզվի պրոպագանդը ուստիսոս յերիսասարդների շրջանում» և արդեն իսկ ուներ, մանավանդ վերջերս, բավականին հաջողութուն։ Սրանց հետ խառն և սրանցից հետո — դանկե՞ն ծայրեծայր լցրած տեղավորվել եյին արդեն ալեկալ հասարակ քաղաքացիներ, ինչպես մանր խանութպաններից շատերը՝ կարապետյանը, Հովհաննեսյանը, Պողոսյանը, Պողոսյան չերկորդը, Կարապետյան, յերրորդը, — ուսանողներ, աշակերտներ, ճեմարանցիներ, (վերջիններս ուսանողների և աշակերտների մեջտեղ գտնվող մի ուրույն կոսեզորիա եյին կազմում նալիլյան այդ քաղաքում — ինչպես, չերեկ, և բոլոր քաղաքներում, — և հատուկ ատելութեան եյին չենթակա ուսանական դպրոցների սաների կողմից, դեպի վորոնք իրենք ևս առիթ չեյին կորցնում իրենց ծայրահեղ զգմանքը հայտնելու) — մի խոսքով՝ մարդ չկար, վոր այնտեղ չլիներ. պակասում եյին, թերևս Մեռելի Յենոբ լեկ բռն Արուսթիսիան, բայց նրանք ել, դե, չերեկ դեռ զբաղված եյին իրենց յեռանդուն առևտրով — վագալի մեղաճում։



Ժամը իննից հինգ ըոպե պահաս դահլիճը, վորպես ծփուն մի արտ, ծփաց ու որորվեց. բոլորը շուռ ավեցին գլուխները դեպի մուտքը. արդեն մտնում էին, դուգված ու շողշողուն, գավառապետը, նրա կինը՝ Ագրիպայինա Վլադիսլավովնան, Սեվայյա Պրիմադոննան լեվ Մագուրի Համոն... Մինչև նշանակված տեղերն ուղեկցեց նրանց, հասարակության հիասարսուռ հայացքների ներքո, Մագուրի Համոն և դուրս լեկավ նորից դահլիճից, չգիտեմ թե ինչու՝ նորից անհետացավ...

Ժամը ճիշտ իննին վարագույրը բացվեց։ Բեմը դատարկ էր՝ վոչ-վոք չկար։ Նույն թղթախաղի սեղանը, բայց այս անգամ արդեն կարմիր մահուդով ծածկված, դրված էր բեմի մեջտեղում. մոտը յերկու աթոռ. իսկ բեմի աջ կողմը — նույն ամբիոնանման հարմարությունն էր, վորի կողքին կանգնած բանախոսում էր, չորս ժամ առաջ, Մագուրի Համոն։ Յեվ ահա, վարագույրը բացվելուց ամիջապես հետո, ձախ կողմից յերեւվացին՝ Մագուրի Համոն — Գեներալ պրոֆեսորի թևը բռնած... «Ահ», հառաչեց դահլիճը հիացքից ու ահից. ծափահարություն էր, չգիտեմ, թե բերդը պայթեց... Չտեսնված, այդ, աներևակայելի ուլացիա յեր, վորին արժանացան Գեներալ-պրոֆեսորը և Մագուրի Համոն։ Յեվ ահա — թռավ, Գեներալ-պրոֆեսորի վոտքերի մոտ ընկավ թարմ ծաղիկների փարթամ մի փունջ. Սեվայյա Պրիմադոննան էր՝ վոր գեպի պրոֆեսորը նետեց ծաղիկների այդ փունջը իր նազելի ձեռքով, վերցրեց, վերցրեց, դստեր գցած փունջը Մագուրի Համոն և, խոնարհ գլուխ տալով, մատուցեց թանկագին հյուրին։ — Այսպիսի ահա չտեսնված մի փառքի ար-

ժանացավ Գեներալ-պրոֆեսորը դեռ բնախոսությունը չսկսած։ Յեվ դորդում էր դահլիճը հախուռն ծափահարությունից, վորին, գլխի «Տաղը» սոխափալլ պահպանելով, պատասխանում էր Գեներալ-պրոֆեսորը խորապես հուզված։ Գեներալ-պրոֆեսորին յերկու հակիրճ խոսքերով հասարակությանը ներկայացնելուց հետո — մոտեցավ, նստեց նախադահլիճի աթոռին Մագուրի Համոն՝ ձեռքը դանգին և աչքը, ծուռ, դեպի նստարանների շարքը հառած, դեպի Անգլիա Բարսեղովանյի լիքը թևը, վոր հավել էր, յերկնային մի անմեղությունը, բարձրահասակ սպալի մահուդե թևին։ «Ծրնգ — ծրնգ — ծրնգ» — հնչեց Մագուրի Համոյի — նախադահլիճի դանգը. ծափահարությունը դադարեց. դահլիճը պապանձվեց՝ ուշադրություն կտրեց։ Բայց հենց այդ վարկիւնին պատահեց մի փոքրիկ թյուրիմացություն, վորի վրա թեկուզ ուշադրություն չկարողացան դարձնել առաջին կարգերը, բայց դահլիճի մոտ նստածները նկատեցին և հաջորդ որը քաղաքում ամենայն մանրամասնությամբ պատմում էին իրար։ Դեպքը, կամ թյուրիմացությունը վոչինչ, առաձնապես, չերներկայացնում իրենից. նրա կատարման ընթացքում, առանց այն նկատելու, սկսել էր Գեներալ-պրոֆեսորը իր հետաքրքիր բանախոսությունը, բայց և այնպես թևը և դեմ զրույցների բավականին նյութ տվեց այդ «դեպքը» հետազոտում, նույնիսկ դրված գտան հետազոտում, Հինգմարկանի Շենֆի «մուր սեյմակում», ընդ. Վառդգանի պատվի հետ ինչ-վոր առնչություն ունեցող հետաքրքիր գրություններ՝ այդ «դեպքին» վերաբերյալ... Բայց այդ մասին հետո։ Բանն այն է, վոր վարագույրը բացվելուց ամիջապես հետո, յերբ դահ-



լիճը թնդում եր ծափահարությունից, դահլիճի դուռը, վոր փակվիլ եր արդեն, բացվեց և մտան, կամացուկ, այնպես վոր դռան մոտ նստածներից մի յերկուսը միայն նկատեցին նրանց — Կարո Դարյանը և պ. Մարութեն: Վոչինչ չկար տարրորինակ վոչ վոք ել, ինչպես ասացինք, համարյա թե ուշադրություն չդարձրեց այդ սովորական հանգամանքի վրա. բայց նրանց մտնելուց անմեջպես հետո, նույնպես համարյա թե աննկատելի, ներս մտավ նրանց յետևից անձանոթ մի անձնավորություն և առաջարկեց նրանց, այդ անձնավորությունն առաջարկեց պ. Մարութենին և Կարո Դարյանին «Այլ վախճանով՝ հետեվի իրեն՝ դուրս գալ դալիճից»: Թե ի՞նչ եր պատճառը, վոր առանց բողոքելու հետևեցին նրան. թե ինչո՞ւ նույնիսկ չբողոքեցին նրանք, Կարո Դարյանը և պ. Մարութեն — դժվար է ասել, բայց փաստը մնում է փաստ, վոր դահլիճից դուրս գալուց հետո ևս այնպես պատահեց, վոր, առաջ ընկած, քայլեց դեպի քաղաք անձանոթ աճյալորությունը և — մինչ արդեն, վոգեկորված նալիբյան հնագույն պատմության հնագույն դրվագներն եր վեր հանում աղումբի դահլիճում Գեներալ-պրոֆեսորը, — թոկով կապածների նման այդ նույն վալրկյանին հետևում էին անձանոթ անձնավորությանը, հլու գնում էին նրա յետևից Կարո Դարյանը և պ. Մարութեն: Դնում էին — այո, այդ նրանք հասկացել էին արդեն — անձանոթ աճյալորության յետևից «Մուր սեղն» էին գնում Կարո Դարյանը յեվ պ. Մարութեն...

Ընկ. Վառդգյանը գտնվում եր այդ պահուն Համո Համբարձումովիչի բնակարանում: Նրա վրա պարտա-

կանություն եր դրված պատրաստություն տեսնել «Բանկետի» համար. դասախոսությունից հետո ընթրիքի պիտի հրավերվեր Գեներալ-պրոֆեսորը Մազութի Համոյի բնակարանում: Յեվ ահա, իր պարտականությունները լիովին իմացող հեղափոխականի նման — տենդոտ, պատրաստություններ եր տեսնում, միանգամայն գիտակցելով գործի մեծագույն նշանակութունը նալիբյան ապագայի համար՝ Մազութի Համոյի պալատ-բնակարանում ընկ, Վառդգյանը:

Հենց այդ ապագայի մասին, նալիբյան ցեղի պայծառ ապագայի մասին եր խոսում այդ նույն վալրկյանին աղումբի դահլիճում Գեներալ-պրոֆեսորը: Թափվում էին, այո, հեղեղանման հոսում էին վաղազույց խոսույթներ դեպի յերջանկացած սրտերը հանդիսականների. — Գեներալ-պրոֆեսորի սոխանման դանդից, ուղիղ յենելով՝ բացվում եր, պայծառ ու լուսավոր, նալիբյան ապագան: Յեվ այդ պայծառ ապագայի հոսող ջերմությունից հալչում եր սիրտը Անգիմա Բարսեղովնայի. — նալիբյան պայծառ ապագան երևիտրական բոլոր հոսանքի նման լցվելով սիրտը Անգիմա Բարսեղովնայի՝ անցնում եր այնտեղից դեպի մահուդեթեւ բաղաձի պարեթի: Ու նույն այդ լուսավոր, նույն այդ նալիբյան պայծառ ապագայի քայլեց բողոքողուն, նայում էին, հրացալտ, նայում էին, այո, գալիք ուրերի հույսերով շողշողուն — նախադահական աթոռի բարձունքից նայում էին Անգիմա Բարսեղովնայի և բարձրահասակ սպայի մեղմ հպված թևերին մեծախոհ աչքերը Մազութի Համոյի:



Վաղոց, վաղոց, արդեն առավոտյան սովորական  
 ժամերին, ինչպես այդ անում եր նա առաջ — վարսա-  
 վիր Վասիլի վարսավիրանոցը վոտք չեր. դնում այլևս  
 պ. Մարուքեն. դպրոց մանելուց զրկվելով՝ զրկվել եր  
 նաև վարսավիրանոց մանելու սովորութիւնից պ.  
 Դրաստամատյանը: Կարո Դարայանի Մոսկվայից բե-  
 րած բավականին «բութ» ածելին քերում եր արդեն  
 պ. Մարուքեյի այտերն ու կզակը և հարկավոր ե ասել,  
 վոր պ. Մարուքեն վաղուց արդեն չեր վայելում այն  
 խոնարհ հարգանքը, վորպիսին տածում եր վարսավիր  
 Վասիլը դեպի նա առաջ: Այնպես վոր, թող ամենեւին  
 զարմանալի չթվա, վոր այդ առավոտ, լերը, մոտավո-  
 րապես ժամը 11-ին, դուրս յեկան Կարո Դարայանը և  
 պ. Մարուքեն «Դառնության կենտրոնից» և, տուն վե-  
 րադառնալով, անցնում էին արդեն վարսավիրանոցի  
 մոտից — «Անուլենի» — հեղնախառն ասաց վարսավիր  
 Վասիլը պ. Մարուքեյին — և դա ծագր եր, ծագր եր,  
 չարախինդ ակնարկ եր պ. Մարուքեյի հասցեյին: Յեւ  
 պ. Մարուքեն, իհարկե, հասկացավ վարսավիր Վասիլի  
 այդ հեղնանքը. պ. Մարուքեն հասկացավ, բայց լռեց:

Դառնության, այո, դառնության ու անակնալի մի  
 առավոտ եր այդ առավոտը պ. Մարուքեյի և, մասամբ  
 էլ, իհարկե, Կարո Դարայանի համար: Դեռ չելին ան-  
 ցել նրանք վարսավիր Վասիլի վարսավիրանոցից, լերը  
 դեմից բուռնեց, ուրիշ մի աշխարհից անսպասելի  
 ընկած հրաշքի նման դեմ լեւով նրանց... լերակայում  
 եք՝ Մարտնկո Նեանը, այն Նեան Մարտնկոյանը, վոր  
 «վարսորդական ապրանքներ» խանութ ուներ առաջ Ա-  
 լեքսանդրյան փողոցում, բայց, մի դեղեցիկ ուր, փա-  
 ւեց իր խանութը և «Պուկարիա» գնաց «զանազան

գործերով: Ընթերցողը, անշուշտ, հիշում ե սույն այս  
 վեպին առաջին մասից, թե, իրոք, ինչո՞ւ փակեց խա-  
 նութը Մարանկոյ Նշանը. խայտառակ փախուստ եր  
 դա իրոք և ուրիշ վոչինչ, խայտառակ փախուստ եր ու  
 չեզոքացում, վոր հետեանք եր, ինչպես գիտենք, Մա-  
 դուլի Համոյի հզոր ազդեցութեան, վորից նա, այդ  
 խեղճուկ վանեցիկ, ձգտում եր խել «Ճալիբյան գործերի  
 դեկավարութեան» առաջնութիւնը: Յեւ նա հիմա, իր  
 այդ խայտառակ անկման ու փախուստից հետո, վերա-  
 դարձել եր ահա նայիրյան այդ քաղաքը և այն էլ —  
 զինված ու փափախալու... Հետո էլ լերեքը չորսը՝ լե-  
 րեքը, չորսն էլ իրա, Մարանկոյ Նշանի նման, զին-  
 ված ու փափախալու:

«Մանրագե՛ֆ» — ասաց Նշան Մարանկոյանը պ.  
 Մարուքեյին մի լավ համբուրելուց հետո. — «Պուկա-  
 րահալ ուսանող, այժմ կամավոր — Հրանճ Կյուլպենկյան.  
 նույ՛ն՝ Ոննիկ Ուզունպանադյան. — ասիկա մեր «Պուկ-  
 արացի» — ցույց տվեց, խորհրդավոր ժպտը դեմքին,  
 լերորդ փափախալորին Նշան Մարանկոյանը և ապա  
 — «աս ալ մեր ընկ. Թափառականը» — վերջացրեց  
 այնպիսի մի շեշտով Մարանկոյ Նշանը, վոր նուշինսկ  
 Կարո Դարայանը, վոր չեր ճանաչում վոչ միայն դրանց,  
 այլև իրան՝ Մարանկոյ Նշանին — աչքերը հռեց  
 ընկ. Թափառականի դեմքին: Այդ դեմքը, ի դեպս, շատ  
 քիչ եր նման Թափառականի դեմքի. սափրված, կոկ,  
 ավելի շուտ սալոնային լակելի դեմք եր դա, քան հե-  
 դափոխական Թափառականի: Թող չվերավորվի ընկ. Թա-  
 փառականի պայծառ հիշատակը իմ այս վերջին համե-  
 մատութիւնից, քանի վոր դրանով յես վոչ թե նրա  
 ներքինը, այլ արտաքինը միայն նկարել կամեցա. նե-



ընկի յեն նման միջոցները գրելի մշակներին, վորոնք վոչ ներկ ունեն և վոչ ել ածուխ իրենց տրամադրութեան ներքո, այլ միայն բառեր, վորոնց տասնյակներ չեն կարող, իհարկե, ընթերցողի աչքին ասել այն, ինչ վոր վրձինի մի շարժումը կառեր, ածուխի մի գիծը: Յերջանիկ են, բլուր անդամ յերջանիկ են այս տեսակետից քանդակագործները, նկարիչները կամ նույնիսկ հասարակ լուսանկարիչները, սիրելի ընթերցող, վորովհետև շատ հաճախ պատահում են դեմքեր, վորոնք բաց են ինչպես գիրքը՝ նայիր ու կարդա, ինչպես գիրքը, այո՛ վերցրու ու կարդա: Այդ դեմքերից եր ահա և ընկ. Թափառականինը, ընկ. Թափառականի դեմքը հարկավոր եր տեսնել: Վայել եր այդ դեմքին չվրոպական ծղոտի գլխարկը, նուրբ «պանաման»՝ սպիտակ ու լաշնեզը, բայց ծածկել եր այդ դեմքը — ահուկի մի փափախ, իսկ կողքից կախել եր ընկ. Թափառականը պատկանելի մի զենք, վորը հետագայում խորհրդանշանը դարձավ ամբողջ մի «պիտան կազմակերպության»: Չեր, հաղար ու բլուր անգամ չեր սագում այդ դեմքը ընկ. Թափառականին, բայց ընկ. Թափառականը, ինչպես նա ցույց տվեց այդ հետագայում, արժանի չեր, այո, այդ դեմքը կրելուն:

Ծանոթացավ, իր հերթին պ. Մարուքեյի կողմից ներկայացվելով նրանց, Մարանկող Նշանին ու խմբին, և՛ Կարո Դարալանը. հետո նրանք բաժանվեցին, «Ալֆեօ եմ դրանք» — հարցրեց Կարո Դարալանը, չերբ մտնում եյին արդեն պ. Մարուքեյի բնակարանը: «Նացիոնալ դեմոկրատներ» — պատասխանեց պ. Մարուքեն տեղյակ անձնավորութեան անփութութեամբ

և հետո պատկերավոր վոճով պ. Մարուքեն բացատրեց, վոր դրանք նայիրյան հասարակական կյանքի դառնալուի վրա «Ընկերության» դառնակներին հակադրելով՝ նվազում են իրենց ճնշակները: Հետո նրանք մտան պ. Մարուքեյի սենյակը:

Սենյակում սպասում եր նրանց, վեպիս առաջին մասից մեզ արդեն հայտնի՝ չերկրորդ ծխականի վարժուհի որ. Սաթոն: Դա այն «պսակի չարժանացած» որ. Սաթոն եր, վոր, մեզ արդեն հայտնի պատճառով, հնարավորութուն չեր ունեցել վերջացնելու գիմնազը. ինչպես արդեն գիտենք՝ այս տխուր հանգամանքում մեղավոր եյին նրանք — Ոսեփ Նարիմանովը և Գենեհալ Ալոշը: Բայց արդեն անցած, մոռցված պատմություն եր այդ. այժմ «պսակի չարժանացած» որ. Սաթոն փաստապես արժանացել եր, թիկուղ վոչ պաշտոնական, բայց և այնպես «պսակի» անտարբեր չեր, ասում եյին, դեպի պ. Մարուքեն որ. Սաթոն և պ. Մարուքեն եր, մանավանդ զպրոցից հեռանալուց հետո, չեր խուսափում նրա, որ. Սաթոյի, քնքուշ վերաբերմունքից: Շատ-շատ եր տառապել այդ գիշեր, պ. Մարուքեյի անկողնի վրա ընկած, մինչև առավոտ, մինչև նրա զալը, որ. Սաթոն. բայց, տարրերինալին այն ե, վոր պ. Մարուքեյի վերադառնալուց հետո, քիչ եյին նման սիրային զրուցյների որ. Սաթոյի զրույցները. նա նույնիսկ չհարձակվեց, չփաթաթվեց սիրած ասպետի պարանոցին, չհամբուրեց նրան: Այլ... քա՛հ-քա՛հ ծիծաղեց որ. Սաթոն, յերբ մտան պ. Մարուքեն և Կարո Դարալանը. շնորհավորեց նրանց «հարսանիք» — և ապա, արագ-արագ, սկսեց խոսել... «Ընկերության» մասին:



«Ընկերությունը», ասում եր որ. Սաթոն, վաղուց արդեն սկսել է գործել: Արդեն ընկ. Վառդգյանը ամեն որ առավոտյան տասից «կամավորներ» եր գրում մոմավաճառքի խանութում: Արդեն պատմում եր, շուկով պատմում եր արդեն ընկ. Վառդգյանը մոմավաճառքի խանութը մտնողներին — բաժնագրույն ինստանցիաներից տրված խոստումների մասին հետաքրքիր նորություններ: Յեվ արդեն, հայտնի նկատումներով, «Մանր Վառիկի Ընկերություն» եր կազմակերպում Համո Համբարձումովիչը — Մազութի Համոն: Վերջինս, մանավանդ, զբաղված եր տենդային գործունեությունում: Անձամբ յեղել եր կենսոնում և նահանգապետից թուլտվություն եր ստացել «Մանր Վառիկի Ընկերություն» կազմակերպելու, վորով, ինչպես ասել եր հիմնադիրների ժողովին ինքը Մազութի Համոն — նախագահը՝ ձգտում ունեյին ողնության հասնել շրջանի գյուղացիներին, մանավանդ գյուղացիներին: Այդ գործը գլուխ բերվելում մեծ աշակցություն եր ցույց տվել նրան, Մազութի Համոյին, գավառապետը. նա զրել եր, այո, Մազութի Համոյի՝ նահանգապետին ուղղված խնդրագրի վրա — «Արգելներ չեմ գտնում» կտրուկ մակագրությունը: Իսկ, վոր ամենակարևորն է — շարժվել եր արդեն, իր անհայտ տեղում, Կենսոնասարդը, իր անհայտ անկյունից պարզել եր ցանցերն արդեն աշխարհից աշխարհ: Պարզել եր — Վան, Բիթիս, Բուխե. Նյու-Յորք. ստացել եր «համաձայնություն»: Յեվ գալիս էին արդեն, հավաքվում էին արդեն սահմանամոտ վայրերում — «ազդեցիկ անուններ»: Ազդեցիկ անունները բերում էին հետները փափախավոր խմբեր... Նույն իսկ այդ

ծիծաղելի ընկ. Մարանկոզյանը, ասում եր որ. Սաթոն, վերադարձել է արդեն. բերել է հետը — փափախավոր մարդիկ. ուզում է շուտով ճակատ մեկնել ընկ. Թափառականի խմբապետությունում: «Իսկ մե՞նք» — հարց տվեց, վերջապես, որ. Սաթոն, այդ «պսակի չափազանց» հուզված — «ինչո՞ւ չենք աշխատում...»: Պ. Մարուքեն և Կարո Դարայանը նայեցին իրար. տխուր մի հարցական կար, մութը մի հարցական նրանց հայացքներում: Իսկ Կարո Դարայանի աչքերում բացի հարցականից — և հեղնախառն ժպիտ: Որ. Սաթոն, դե, վողկորվում եր. լերիտասարդ արյունն եր հուզվողը:

«Յերկու որից յես մեկնում եմ բանակ» — հայտնեց Կարո Դարայանը. հենց այդ նպատակով եր մայրենի քաղաքը լեկել նա. — վորպես զորակոչի յենթակա՝ նա «կանչվում» եր իր ծննդավայրում:

Յերկու որից հետո Կարո Դարայանը մեկնեց բանակ:

Անցավ լերկու, լերեք, չորս որ, անցավ մի շաբաթ, վոչինչ նոր չպատահեց քաղաքում, բացի, թերև, նորանից, վոր կիրակի, պատարագից առաջ, մի վողկոշունչ բառով, մի, լեթե կարելի չէ ախպես ասել՝ հարենաշունչ կոչ կարդաց ս. Աստվածածին լեկեղեցու ամբիոնից տեր Հուսիկ քահանան — խաչագողը: Հիշեցրեց իր հոտին տեր Հուսիկ քահանան այն խորհրդավոր ու նշանակալից «անցները», վոր, ինչպես գիտենք, գյուղություն ունեյին Բերդի, Առաքելոց լեկեղեցու և Վարդանի կամուրջի մեջ: Խորամանկ, հանճարեղ են լեկել նայիրցի արքաները, ասաց տեր Հուսիկ քահանան. — նրանք իմացել են կապել հոգևորն ու մարմնավորը,



սուրբ և խաչը, կրօնն ու ռազմական կորույժը: Խորամանկ, հանճարեղ են յեղել նրանք, բայց, դժբախտաբար, յեսակամ ու անմխաբան, և այդ եր, վոր կործանեց յերկիրը հնամայն—հաղարամյա Նախիրին: Ստոր, նենգ, յեսական դավաճանությունն է յեղել մեզ կործանողը. անձնամուր վասակներն են յեղել մեր տունը քանդողը—ասաց, անարգանքի փրփուրը շրթունքներին, տեր Հուսիկ քահանան— Խաչագողը: Բայց հիշե, թող հիշե իր սիրելի հոտը Վարդան Մամիկոնյանի և Սեփակ Պարթևի պայծառ անունները — և թող խրատվի, վոգևորվի և գոտեպնդվի: Լավ է մարդ պատվով ընկնի պատերազմի դաշտում իր սրբազան կրոնի և հայրենիքի համար, քան քարշ տա անասնական գերություն, ինչպիսին քարշ ենք տալիս մենք հինգ դարից ավելի: Բայց ահա հասել է նորից վայրկյանը վերածնության յեվ դեպի նո՛ւր Ապարայք, նո՛ւր Վարդանաց պատերազմ և կանչում իր բոլոր ազնիվ զավակներին մեր տառապյալ հայրենիքը: Կանչում է այսօր նորից, կանչում է վերջին անգամ, ճեծության զեղաններից, դարերով անարգված, դարերով վոտնահարված ճախիջան վոգին: Կանչում է կիսավեր վանքերից, պապենական սրբավայրերից, նահատակների մամուռուլը շիրիմներից կանչում է ձեզ վերստին բարբարոսների անարգ վտանքերով վոտնակախ արված ձեր հայրերի կրոնը, ձեր պապերի հավատքը, ձեր հայրենիքի փառքը: Կանչում է ձեզ, արիներ ու պարմանիներ, ձեզ, վոր չեք մոռացել դեռ ձեր սուրբ կրոնը յեվ հայրենիքի փառքը: Կանչում է քեզ, հասարակ ժողովուրդ, վոր չունես մեծասունքների շահասեր սիրտը, վոր ինքը միայն պատրաստ էս յեղել միշտ կրեղու ամենայն զոհողություն՝ հանուն

կրոնի յեվ հայրենաց: Թող որինակ չծառայե այդ գոռոզ մեծատունների անձնասեր ու յեսական որինակը իմ սիրելի հոտին, քանի վոր նրանք չեն, վոր պիտի ժառանգեն յերկնքի արքայությունը:

— Յեվ նրանք չեն, այո՛, սիրելի ժողովուրդ, վոր պիտի ժառանգեն յերկրի արքայությունը, ազատագրված հայրենիք, վորովհետև դեռ պետք է վարես, ցանես ու վայելես նրա կենսատու բարիքները և վոչ թե այդ յեսական մեծամիտները, վոր փտում են գեղյալության զարեանոս մանիքներում, վոր ուտում են փոխանաղ հացը, քոնքի անուտաբույր լավաթի փոխարեն: — Այսպես ահա խարազանեց իր այդ նշանավոր քարոզում քաղաքի մեծատուններին, այսինքն Լորիս-Մելիքյանի խանութպաններին, տեր Հուսիկ քահանա-Խաչագողը, և նա, իհարկե, իրավունք ուներ. դրանցից և վոչ մեկը յեկեղեցում չկար, դրանցից և վոչ մեկը մի սև «խաչնամբուր» զգած չուներ դեռևս ս. Աստվածածնի զանձատուփը: — Հասարակ ժողովուրդն էր կազմում նրա «հրքը» և նա փառաբանեց նրան իր նշանավոր այդ քարոզում, դիմեց նրա սրտին, վոր անմեղ է, վորպես աստուծո գառը, և մաքուր է, վորպես աղավնի: Յեվ այդ «սրտով անմեղներին» ահա, և— յես կասեցի՝ վոչ միայն «հոգով» աղքատներին, վորոնք, տեր Հուսիկի կարծիքով, ժառանգելին պիտի յերկնքի արքայությունը—կանչեց, կանչեց նրանց դեպի Նոր Ապարայք տեր Հուսիկը: Յեվ ի՞նչ. կոչը շատ ավելի խորունկ, շատ ավելի իրական արձագանք գտավ ունկնդիրների սրտում, քան, ասենք, հենց իրա՛ Մաղուծի Համոյի տյն պատմական կեղծ քաղաքային այգում. բավականին թվով արհեստավորներ և քաղաքի ծայրամասում ապրող կիսա-



գլուղացիներ հաջորդ որը «գրվեցին» մոմավաճառքի խանութում, այնպես վոր՝ «Կեցցե խաչագողը» մտածեց ինքն իրեն դրանց ցուցակագրող ընկ. Վառդգյանը։ Թեկուզ, իհարկե, վորոշ հիմք պիտի վոր ունենային նաև այն կարծիքները, վոր այդ «ցուցակագրվելը» մի կողմից, անշուշտ, հետևանք լինելով տեր Հուսիկ քահանա — խաչագողի քարոզի ազդեցության, մյուս կողմից, անշուշտ պայմանավորվում էր նաև նրանով, վոր «գրվողներից» շատերն այսօր — վաղը, միևնույնն են, զորակոչի պիտի լենթարկվեյին Հիգհարկանի Շենեի կողմից. այնպես վոր նրանք, վորպես պարտաճանաչ նախիրցիներ, գերադասել էին «նայիրյան ռաբբ» — սոխականից։ Յեվ ապա՝ կամավոր գրվելով նրանք ազատվում էին «կառմիր վագոնների» սարսափից. այնպես վոր, գրվելուց հետո, նրանք սրտի ամենայն հանգստությամբ սկսեցին սպասել, ինչպես իրենք էլին առում՝ «խմբի գալուն»։

«Խմբի գալուն» սակայն, միայն թե ավելի քան անհամբեր, սպասում էին, մանավանդ, — ընկ. Վառդգյանը և Մազուրի Համոն։ Յեվ, թեկուզ վոչ, իհարկե, նման անհամբերությամբ, բայց և այնպես բավականին բուռն, սրտառուչ հետաքրքրությամբ, սպասում էր, այո, ամբողջ քաղաքը. պիտի գար, յերկու-չերեք օրից նախիրյան այդ քաղաքը պիտի ժամաներ «նայիրյան առաջին գորբ»։ Հայսնի խմբապետի առաջնորդությամբ, վերցնելով հետը անդական կամավորներին, ճակատ պիտի մեկներ նախիրյան առաջին խումբը մոտակա որերում։

Յեվ ահա — «խումբը» քաղաք ժամանելուց յերկու օր առաջ, քաղաքում «ժողովրդական ժողովարարու մաս»

սկսեցին, Գեներալ Ալոսի և — յերեկայումս եք՝ Համո Համբարձումովիչի ամուսին՝ Անգիա Բաբսեղովնայի գլխավորությամբ «խմբի» ռեդիոն։ Ժողովարարությանը մասնակցում էր համարյա թե քաղաքի ամբողջ «վերին խավը», նույնիսկ գավառապետ, Մազուրի Համոյի գոտեր՝ Սելաչյա Պրիմադոնայի ընկերակցությամբ, միքանի վալրկյանով յերևացին, մտան ամենանշանավոր, որ. հայի Ոճնիկ Եմեմի Մանուկոֆի, պ. Արմաուրի, Պարսկաստանցու և այլն — խանութները և վոչինչ, դժգոհ չմնացին։ Հաջի Ունիկ Եֆենդին նվիրեց սիրելի կամավորներին մի պարկ շաքար, իսկ Պարսկաստանցին — մի արկղ ծխախոտ և մեկ էլ «Լապեի» լուցիկ։ Պ. Արմաուրը ձեռնոցներ նվիրեց կամավորներին, ժգնեցին — դեղորայք, յեղը. Բալասյանները, վոր զբաղվում էին սապոնի առևտրով — սապոն, և այսպես շարունակ. — տվեց, ով ինչ վոր ուներ, ով ինչից վոր հարուստ էր, ինչպես ասում են սոխները։ Բայց և այնպես հարկավոր է հիշատակել, վոր ամենամեծ նվիրատուն — պ. Արմաուրն էր, վոր, ինչպես ասում էր հետո — «վտռել եք»՝ այսինքն վառվել, վորովհետև տվել էր — մենք քանակը չհշտեցինք — տասներկու զույգ կաշվե ձեռնոցներ, իսկ դա ավելի շատ արժեք, քան Հաջու մի պարկ շաքարը, կամ յեղը. Բալասյանենց սապոնը։ Բայց, շատ վորոշ նախադասութուններով հայտնում էր հետագայում պ. Արմաուրը, վոր այդ նվերը նա արել է վոչ այնքան կամավորներին, վորոնց, վերջիվերջո, «հերն էլ անի ծած», — այլ... Սելաչյա Պրիմադոնային։ — «Ծիծիկներ ուետեմ» — ասել էր նրան այդ զրույցի ժամանակ վարսավիր Վասիլը. — «Իմ մասերսկուս գար՝ եից բերած Եղնիլ, քե պատի հայիս չսայի»։ Ահա թե ինչպիսի ա-



ուելի, ինչպիսի հերոսական վոգեկորութիւնն եր առաջ բերել նայիրյան այդ քաղաքում այդ «ժողովրդական ժողովարարութիւնը»։ Ու տվել էյին՝ վերը փող, վերն ապրանք, Կոլոպոսյանը բաժակներ եր տվել, Բոչկա Նիկալայը - գինի, — մի խոսքով՝ ով ինչ վոր ունենէր — չեք խնայել։ Ժողովարարութեանը մասնակցել եր նաև տեղ Հոսիկ քահանան, բայց նա շրջել եր, իր լուսաւորի ուղեկցութեամբ, արհեստավորների խանութները, քաղաքի ծայրամասերը — և մարդիկ հետագայում ինչ-վոր առնչութիւնն էյին գտնում տեղ Հոսիկ քահանայի փայլուն կոշիկներէ և այդ որվա «ժողովարարութեան» մեջ. բայց սա բամբասանք եր կարծեմ, սիրելի ընթերցող, վոր առաջ եր լեկել վարսավոր Վասիլի կողմից նրա անվանը կպցրած հայտնի ածականից — և չարժեք այդպիսի չնչին ասեկոսներով կասկածանքի ստվեր գցել տեղ Հոսիկի նման ազգասեր քահանայի անբասիր քղամիդիան։

... Առավոտյան ժամը տասնմեկը կլինէր, յերբ այնքան յերազած կտմալորակում խումբը, առուզ ու առնական շարքերով, վերջապես մտավ քաղաք։ Բայց նախ քան նրա քաղաք մտնելը՝ դիմավորելու էյին զնացել կայարան, Մազութի Համոյի և ընկ. Վառդգեսնի գլխավորութեամբ, վոգեկորված նայիրցիները։ Ո՞վ ասես, վոր չեք զնացել կայարան հերոսներին դիմավորելու. այնտեղ էյին, գեներալ Ալոշից սկսած — մինչև Մեռելի Յենոքը։ Մեռելի Յենոքը, ասենք, ինչպես Քոռ Արուրը, ուզած-չուզած այնտեղ էյին ու այնտեղ, այնինչ Կինտաուրի Միժոնը, պ. Աբոմարը, Հաջին, վարսավոր Վասիլը և մի շարք ուրիշները «գործը կիսատ քողել» —

հատկապես զնացել էյին «դիմավորելու» նպատակով Յես ել չեմ խոսում արհեստավորների և բոլոր «գրվածներին» մասին, վորոնք լեկել էյին «խումբը» տեսնելու։ Ամենաանսիրտը Լորիս-Մելիքանն եր. — նա, այդ չարչիւնների փողոցը, համարյա թե ներկայացուցիչներ չունենէր այդ որը կայարանում. յերևի չարչիւններն ավելորդ էյին համարել «գործից եղնելը», վորովհետև միևնույնն է, խումբը ուզած-չուզած իրենց փողոցով պիտի անցնեն, այնպես վոր նրանք հնարավորութիւն ունեցին հենց իրենց խանութների առաջից դիմավորելու նրանց, այդ աննման հերոսներին։ Այնինչ, դրա փոխարեն կայարանում եր քաղաքի համարյա ռամբոլդ ինսելի-գեմցիլուն — ուսուցիչները, նայիրցի սպաները, ուսանողները, պաշտոնյաներից շատերը։ Ներկա էյին նաև մեծ թվով աշակերտներ, վոր այդ որը զոհել էյին դասը (պարապմունքները, թեկուզ փոքր ուշացած, բայց արդեն սկսվել էյին դպրոցներում) — հայրենիքի գործին, բայց վերջիններին շարքերում կային և այնպիսիները, վորոնք մտածում էյին արդեն վիճ միայն «դասը», այլ և իրենց կլամբը դոհաբերել այդ արբազուն նպատակին։

Գնացքը մոտենալուց դեռ հինգ րոպե առաջ, արդեն կանգնած էյին պատճառով վրա՝ Համո Համբարձումովիչը, Բնկ. Վառդգյանը, Բոչկա, Ռոսկի Նարիմանովը, Գեներալ Ալոշ յեւ Կինտաուրի Միժոնը. սա այն կազմակերպված խումբն էր, վոր պաշտօնապես պիտի դիմավորէր կամավորական խմբին։ Այդտեղ հենց, դրանց կողքին, արդեն պատրաստ կանգնած եր զինվորական յերաժշտախումբը, վորին արդեն պատվիրել եր ընկ. Վառդգյանը զնացքը մոտենալու վայրկյանին նվագել



նայիրյան հիմեր՝ «Մեր Հայրենիք»։ Ամեն ինչ, մի խոսքով, մտածված երևալ է պատրաստած, վորպեսզի վորքան հնարավոր է սրտագին դիմավորեն խմբին—և ահա, վերոհիշյալ պատկանելի անձնավորությանց չետեղ կենդանի մի պարիսպ կաղձած՝ աչքերը չերկաթգծի հեռուն՝ սրտատրոփ սպասում էյին անհամբեր նայիրցիները գնացքի մոտենալուն։ «Ուռացալ»—արդեն անհանգստանալով՝ ասաց Գեներալ Ալոշը Մազուլիի Համոյին այնպիսի մի տոնով, վոր կարծես վերջինս լիներ ուշանալու պատճառը։ Բայց հենց այդ վայրկյանին լավեց շոգեկառքի ավետարեր սուլոցը—և բոլորը հանկարծ շարժվեցին տեղերում, հրեքեցին իրար՝ հանգստանալու փոխարեն ավելի ևս անհանգստացան։ Զինվորական չերաժշտախումբը, ընկ. Վառդգյանի նշանով, հնչեցրեց նայիրյան հիմեր. գնացքը, դանդաղ, մոտեցավ կայարանին։

Դժվար է, սիրելի ընթերցող, իմ անդոր գրչով ներկարգել այն աներեւակայելի վոգեկորությունը, վորով համակվեցին նայիրցիները պատմական այդ նշանավոր, այդ անկրկնելի վայրկյանին։ Հազիվ եր յերեացել առաջին փափախալուս գլուխը, յերբ ամբողջ կայարանը թնդաց բացականչութունից. ամբողջ կայարանը կարծես հողս ցնդեց։ Իսկ յերբ կանգնեց գնացքը և դուրս յեկավ վագոնից խմբի ղեկավարը—Հայկի Անուր, —յերբ, հապշտապ, գլխարկները ձեռներին, դեմ վագոնի նրան Մազուլիի Համոն և ընկ. Վառդգյանը և Հայկի Անուր, ջերմագին փաթաթվելով համբուրվեց՝ նախ Մազուլիի Համոյի և ապա... ընկ. Վառդգյանի հետ, —հասկանում եք՝ ընկ. Վառդգյանի—և այդ այն ժամանակ, յերբ, խորին ակնածանքը դեմքերին՝ Հայկի

Անձնավորության ձեռքը սեղմելն էյին յերազում բժիշկը, Ոսեփ Նարիմանովը և Գեներալ Ալոշը—յես էլ չեմ խոսում Կոշկակար Սիմոնի—Կուրքի Մեյմունի մասին... Ասում եմ՝ յերբ կատարվել սկսեցին այս շանթահարող, այս շմեցնող բաները—հախուռն «ուռա»-ների ձայնը մինչև քաղաք հասավ, այնպես վոր՝ «եկան»—ասաց Վոլոպոտյանը գնորդին և նրա դեմքին անգամ շողաց, յերանավետ, նայիրյան մի ժպիտ։ Հետո դուրս յեկավ խումբը և խմբապետի նայիրաբառ հրամանով՝ շարք կանգնեց կայարանի առաջ։ Յեվ հա... Մազուլիի Համոն, ելի նույն անփոխարինելի Մազուլիի Համոն ըսկըսեց վողջույնի ձառը։ «Բարի գալուստ» —այսպես սկսեց իր վողջույնի խոսքը Մազուլիի Համոն. —«ղուխեղ ունեք մեք գլխներին»։ Յեվ ապա խոսեց այն մեծագույն նշանակության մասին, վոր պիտի ունենա անմոռանալի այդ մեծ որը նայիրյան կյանքում.—«Ազգային ամենամեծ, յեկեղեցական տոների շարքը պիտի դասվի պատմական այդ որը. և, Վառդգյանց տոնի, Ծննդյան լիվ Հառուրյան տոների նման տոնն պիտի այդ որը ապագա նայիրին։ Տոնն պիտի ազատ և անկախ նաչիրին այնտեղ, սահմանի այն կողմը, ուր մեր տառապալ յեղբայրները սպասում են հիմա ձեր ազատարար խմբերին... Գնացեք,—վերջացրեց իր խոսքը, համարյա արցունքն աչքերին, Մազուլիի Համոն.—մեր սիրելի յեղբայրները դեռ սպասում են այնտեղ բռնության նիստնետում, մեր հայրերի յերկրորդ դեռ աղյուռն է քսնում բաբարոսի լծից.—գնացեք, մեր քնք, մեր անխորտակելի, մեր աննահանջ կամքի յերկաթյա զինվորներ.—գնացեք, և ձեզ շնորհակալություն կասի, ինչպես այսոր արդեն ասում ենք մենք—յես հավատում եմ,



այո, ապագա ազատ ու անկախ, անկաշիւանդ Նալիբին...»: — Բուռն, հանելի «ուռ»-ներն ներքո վերջացրեց իր խոսքը Մազուլիի Համոն և, հուզմունքից որորվելով, մոտեցավ խմբապետին. — «Թող բուշլ քովի ինձ» — ասաց Մազուլիի Համոն գրկելով խմբապետին. — «համբուրել այս նախար, սիրելի հայրենակիցներ, վոր չի՝ վախեցել յերբեք բեմամու գնդակից, վորն հեզմանում է դիմադրել բեմամու գնդակին յեւ, յես համոզված եմ միանգամայն, վոր դեռ յերկար-յերկար մինչեւ հաղթանակի ուր, պիտի դիմադրես...»:

Հնչեց, թնդաց աղմկալից նալիբան հիմնը կրկին. հնչեց ազատաձայն. ներկաներից շատերի, նույնիսկ Մեռելի Յենոֆի յեւ Գոռ Առուքի, աչքերին յերևացին խնդուլթյան արցունքներ. Հետո խմբապետը, յերկու-յերեք խոսքով, ինչպես վայել է զինվորականին, շնորհակալութուն հայտնեց թանկագին հայրենակիցներին, վորոնք չղրացան հանձինս իրենց՝ իրենց հարգանքը բերել նվիրական գործին: «Բայց, — ասաց խմբապետը վերջում, — յեթե այդ հարգանքի մի հարյուրերորդը գոնե նրանք արտահայտեցին գործով, գործնական ոգնությամբ նվիրական գործին — այն ժամանակ, այո, ա: Համապատասխան նման ինքը ևս վոչ մի վալրկյան չի կատարածի, վոր հեռու չե այն ուր, յերբ ազատագրված կլինի յերկիրը Նալիբին...»:

Այսպես խիստ, այսպես տեղին խոսքերով վերջացրեց իր պատասխան-ճառը հայցնի խմբապետը և ապա, յերբ դադարեց նալիբյան հիմնը և լուսերն կեցցենները — «Թող միտ կտուկ լինի մեր քաղաք-կայսեր անհաղթելի սուրբ» — կարծես վերհիշելով, ավելացրեց խմբապետը. — «վորովհետեւ նրա արհայտեցան կտուքն և միայն,

վոր պիտի ազատագրվի յերկիրը Նալիբին...»: Այս խոսքերից հետո յերաժշտութունը նվագեց «Բոմե ցաղա» — բոլորը գլխարկները հանեցին, իսկ խմբապետն ու ընկ. Վառուդյանը, վոր արդեն մի քանի որ եր, ինչ կամավորական հագուստներ եր կրում — ձեռքերը, վորպես զինվորականներ, տարան փափախներին:

«Կեցցե՛ք քաղաքը կայսր», — կարծես գլխի ընկնելով, վոր, աններելի թյուրիմացությամբ, մոռացել եր այդ կարևոր հանգամանքը հիշատակել իր վողջույնի խոսքում — բացականչեց Մազուլիի Համոն գլխարկը թափահարելով: Յեւ յերբ յերաժշտութունն ու «ուռան» դադարեց — հանդեսը վերջացավ: Խմբապետը, Մազուլիի Համոն և ընկ. Վառուդյանը նստեցին առաջին, թիկնապահը, բժիշկը և Գեներալ Ալոշը — յերկրորդ, իսկ Ռսեփ Նարիմանովը և մյուսները ֆնացած կառքերում — զմայլված նայիրցիների յերջանիկ հայացքների ուղեկցությամբ դիմեցին քաղաք:

Մի ժամ հետո, հայտնի խմբապետի յերկրորդ ոգնականի հրամանատարությամբ, քաղաք մտավ կամավորական խումբը, ուր ևս նա հանդիպեց ավելի քան բուռն, սրտալի վողկորության:

Յերեք օրից հետո նույն այդ տեղից դեպի ճակատելին ճանապարհ դնում, նույն Մազուլիի Համոն ընկ. Վառուդյանի առաջնորդությամբ, այդ խմբի կամավորներին քաղաքի բնակիչները: Այս անգամ ներկաների բազմութունը շատ ավելի ստվար եր, քան բնդունելության օրը, մի հանգամանք, վոր մասամբ կիրակի լինելուն պիտի վերադրել, մասամբ ել նրան, վոր շատ շատերը, այն, մանավանդ արհեստավորներից և շրջանի



գլուղացիներէց, յեկել ելին ճանապարհ դնելու — վորը հարազատին, ընկերովը, վորն ել ծանոթին կամ դրացուն, վորոնք ճակատ եյին մեկնում, ընկ. Վառուդյանի ձեռքով «գրված» լինելու պատճառով, այդ խմբի հետ: Ասվեցին, ինչպես հարկն եր, ճաղեր. նվագեցին, ինչպես հարկն եր, Գայիւրյան ճիւղնր յեկ «Բո՛ժ ցաղանք». բարի յերթ մաղթեցին սիրելի կամավորներին վո՛չ միայն Մազութի Համոն և ընկ. Վառուդյանը, վորոնք խոսում եյին վորպես պաշտօնական անձնավորութիւններ ամենքին հայտնի հիմնարկութեան կողմից — ալլև Գեներալ Ալոշը, վոր խոսեց քաղաքացիների անունից: Հետո կամավորները գնացք նստեցին — և ահա կեցցեհներէ, շերտաշերտեցի, լացի և վոգեկորութեան հախուռն արտահայտութիւններէ ներքո գնացքը հեռացավ: Սրտառուշ եր տեսարանը, սրտառուշ ու անմոռանալի, բայց այդ տեսարանից բոլոր անգամ ավելի սրտառուշ և անմոռանալի եյին Մազութի Համոյի աչքերը, վորոնցում արցունք կար և, արցունքի միջից, սպասումի ժպիտ: Նրանք, Մազութի Համոյի այդ անմոռանալի աչքերը, նայում եյին հեռացող գնացքին, բայց չեյին տեսնում գնացքը. նրանք տեսնում եյին սահմանի «այն կողմը», ուր, ինչպես ասել եր ինքը իր վողջուլեանի խոսքում, գեղարքան ճիւղաններում տառապում եր դեռ յերկիրը Նայիրի: Այնտեղ եր, այն մթամած հեռվում, ուր հեռացավ գնացքը, — Ավեսյաց յերկիրը — ճնաղյա Նայիրին: Յեկ, գնացքն անհետանալուց յերկար դեռ անց — նայում եյին այն կողմը ժպտաթախիժ աչքերը Մազութի Համոյի, բայց Մազութի Համոյի ժպտաթախիժ աչքերը արդեն տեսնում եյին, գալիքների անհայտ մշուշների միջից — այնտեղ, ուր հեռացավ գնացքը «Նայիրյան ուժերով»

բեռնավոր — իր նոր, վերածնված հայրենիքը, կամ, ինչպես կասեր նա խեղագրում, յեթե կենդանի մնար — միացյալ ու անկախ, ծովից-ծով Նայիրին...

ՄԱՍՆ ՅԵՐՐՈՐԴ ՅԵՎ ՎԵՐՋԻՆ

## ՅԵՐԿԻՐԸ ՆԱՅԻՐԻ

Միթե սա յի յերկիրը Նայիրին...  
Յե. 2. «Շողեգալուստ»

Մենք արդեն անցնում ենք մեր սուլն այս վեպի կարեւորագույն մասին — և այստեղ ե ահա, սիրելի ընթերցող, վոր, ինչպես ասում են՝ իր ամբողջ հասակով կանգնում ե մեր առաջ մեր առաջադրած ճիմնական խնդիրը, թե վո՞րն ե, վերջապես, յերկիրը Նայիրի: Սուլն այս վեպիս առաջաբանում, հիշում ես, յես հարցրել ելի «Երամտութեամբ, կասկածով հարցրել եր սիրտս, թե, դուցե, մշուշ և նա, Նայիրին, ուղեղային մոռմոք, արհի ճիւղանկարքով... Յեկ ճիշտ վոր, — վո՞րն ե այդ Նայիրին: Ինչո՞ւ համար եմ սուլն այս վեպիս ամեն մի ելում իմ նկարագրած քաղաքը անվանում «Նայիրյան» քաղաք, և մարդկանց, վոր ապրում են այդ քաղաքում — «Նայիրցիներ»: Միթե կարող եր «ուղեղային մոռմոք» կերպարովել և իրականութիւն դռնալ. միթե կարող եր, սիրելի ընթերցող, միս և մարմին ստանալ «արհի ճիւղանկարքով» — և քայլել քաղաքում, հասկանում ես, վո՞չ թե ուղեղում կամ սրտում, ալ իրական քաղաքում, վորպես մի թեկուզ հենց, ասենք, Գեներալ Ալոշ, կամ Մեռելի Յեմոք, կամ, լավագույն դեպքում — վորպես մի Համո Համբարձումովի — Մազութի Համո... Իհարկե վո՞չ,



կաես ամեն մի խելքը գլխին անձնավորութիւն—չեր կարող: Զառանցանք չեր այդ քաղաքը, և վոչ ել նրանում ապրողներն ելին զառանցանք. և, այո, չես ամենայն վճռականութեամբ կարող եմ ասել, վոր վոչ վոք ել դրանցից իրեն չեր համարում «նայիրցի», և վոչ ել այդ քաղաքը, ուր ապրում եր ինքը — «նայիրցան» մի քաղաք: Ուրեմն յնս եմ հնարել այդ լեզենդը, սիրելի ընթերցող, վոր մոլորեցնեմ մարդկանց դատարկ դուռըներով, գուցե յնս եմ հնարել, վորպես թուղթ մրտող, անբան մի բանաստեղծ, վորին ևս «Բամի քոցնող» պիտի անվաներ վարսավիր Վասիլը, լեթե այս գրութիւնս կարդար: Այո: Ի՞նչ «նայիրի»: Յեմ ամենից առաջ. վորտեղից մեյդան ընկավ այդ անունը. ի՞նչ ե նա նշանակում:

Սիրելի ընթերցող: Յես չեմ հնարել այդ անունը և պարզապէս չգիտեմ, թե ի՞նչ ե նա նշանակում: Գուցե «նայիրի» նշանակում ե ցնորք. հմ իմանա: Գուցե նըշանակում ե՝ «անբաւ պանիր» — աստված ինքը գիտե: Կամ, գուցե, «նայիրի» այն գաղին ե նշանակում, վոր տեսել ե լեկաւականց քեռին իր այն նշանավոր յերազում: Զգիտեմ: Յեմ ի՞նչ նշանակութիւն ունի վերջապես, թե ի՞նչ ե նշանակում «նայիրի»: Նայիրին Նայիրի չե — պրծավ գնաց: Պայմանավորվեք միայն, վոր դա, մի շարք այլ բաներ նշանակելուց բացի, մի յերկրի անուն ե, ինչպես Սողոմոնը — մարդու և... Յեմ նորից — խոչընդոտ, սիրելի ընթերցող — Վորտեղ և, վորն ե այդ յերկիրը — կարող ես հարցնել դու հիմա, — և չես նորից կարող եմ ֆնալ քիս կախ, այսինքն շըվարած: Շվարած վոչ թե այն պատճառով, վոր չգիտեմ այդ յերկրի տեղը, այլ այն հասարակ պատճառով,

վոր իմ հավաքած պատմական և աշխարհագրական ստույգ տեղեկութեանց նայելով — այդ յերկիրը շատ քիչ ե նման գոյութիւն ունեցող այլ յերկիրներին, ասենք — Արգենթինային, Չիլիին, Տաճկաստանին, Ռուսաստանին, կամ թեկուզ Հաբեւստանին կամ Ալբանիային... Բիչ ե նման վոչ թե իր աշխարհագրական դիրքով, բնակիչները կազմով, պետական սիստեմով եւլն, ալ... Հենց այս «ալլումն» ե բանը, սիրելի ընթերցող: Այս «ալլն» ե ահա, վոր ձեռնթափ ե անում ինձ, քարից-քար խփում, խայտառկում: Բանն այն ե, վոր այդ «յերկիրը», այդ չարաբաստիկ «նայիրին», ինչպես բանաստեղծներն են հաճախ ասում իրենց գերերկրային սիրուհիները մասին — և «կա և չկա»: Կա, իհարկե, կա, չեթե վոչ ի՞նչպես պիտի ապրեյին «չեղյալ» այդ յերկրում մի շարք աջնալիսի պատկառելի մարդիկ, ինչպիսիք են նույն Գեմեալ Ալոբը, Ոսեի Նարիմանովը, Բոռ Արուբը, պ. Մարուբն, — վորը թվեմ: Մարդիկ, վորոնց յերկրային գոյութիւնը, ինչպես տեսնում եք, վոչ մի դեպքում չի կարելի, իհարկե, կասկածի յենթարկել: Յեմ, միեւնույն ժամանակ, չկա, վորովհետեւ... լեթե նա լիներ — ապա ուրեմն ինչո՞ւ նա պիտի անվանվեր «նայիրի» — այսինքն կրեր մի անուն, վոր դուք չեք գտնի այսոր և վոչ մի աշխարհագրական քարտեզի վրա: Փորձեցեք մի նամակ գրել և հասցեագրել այսպես՝

«Յերկիր Նայիրի — Գեմեալ Ալոբին» —

տեսեք ո՞ւր կհասնի, — կարծում եք՝ մեր նկարագրած քաղաքը: Սխալվում եք: Ուրեմն ճանապարհի՞ն կմնա: — Յերեւակայեցեք, վոր վոչ: Յեմ այստեղ ե ահա հարցի



ամբողջ գաղտնիքը, սիրելի՛ ընթերցող: Ձեր այդպես հասցեագրած նամակը կգա և կընկնի ուղիղ — ինչեք կարծում, Կա՛րո, Յերեւա՛ն, Դիարբեհ՛ի, Շապիհ-Գա-րահիսա՛ր... իհարկե վոչ:

Այդ նամակը կգա ու կընկնի ուղիղ մեր ամենածա-նոր Համո Համբարձումովիչ Ասատուրովի— Մազուրի Հա-մովի... ուղեղը... Ահա և ամբողջը: Յե՛վ թե՛ ինչու, ինչպիսի շարունակութեանն անցնելով, մենք պետք ե ղիմենք հնում մանավանդ շատ ընդունված գրական մի պրիմի, վորից այնքան խուսափում են արդի հեղի-նակները: Ռեմիսկեյնովն նախագայրի նման մենք պիտի ձգտենք թափանցել սույն այս վեպի կենտրոնական անձնավորութեանց ուղեղները, — առաջին հերթին, իհարկե, Համո Համբարձումովիչ Ասատուրովի — Մա-զուրի Համովի ուղեղը: Այո՛ — Ամենից առաջ Մազուրի Համոյի, վորովհետեւ նա յեր (ուղեղը և վոչ թե Մա-զուրի Համոն), վոր, տարիներ շարունակ բոլոր հա-մանումն ուղեղների կատարյալ կատարելապիսի լինելով՝ վորպես առասպելական այն ցուլը, կրում եր իր ուղեղի յեղջուրների վրա... յերկիր յայլի: Նրան, այո՛ — Համո Համբարձումովիչ Ասատուրովի — Մազուրի Համոյի ուղեղին մենք պիտի ղիմենք, յեթե ուղում ենք իսկա-կան աղբյուրից հանել մեր այնքան ցանկացյալ ջուրը, — յեթե ուղում ենք իսկական աղբյուրից խմել կենա-րար հեղուկը մեր հավաքական, կամ իրա՛ Մազուրի Համոյի սեփականությամբ ասած՝ «ազգային» գոյություն:

Այդ հանճարեղագույն ուղեղն ունեն հանճարեղա-գույն հատկութուններ — Ամենից առաջ՝ միթե հան-ճարեղագույն հատկութունը չպիտի համարել այն զար-մանալի հանգամանքը, վոր նա, այդ ուղեղը, Մազու-

թի Համոյի այդ տարրինակ ուղեղը տարիներ, դարեր շարունակ, հնամենի հնուց, կրում եր իր վերոհիշյալ յեղջուրների վրա մի ամբողջ յերկիր, և այն եւ այնպիսի մի տիեզերական յերկիր, ինչպիսին եր յերկիրը Նայի-րի: Հասկանում եք՝ նրա, այդ «Լույսի» կառավարիչ Համո Համբարձումովիչի այդ գերերկրային ուղեղում, ինչպես մեր յեղի յերկրագնդի վորեւ հատվածի վրա, տեղավորված կային — գյուղեր ու քաղաքներ, ապրում էին մարդիկ այդ գյուղերում ու քաղաքներում. ապ-րում էին — ամենից առաջ հենց ինքը, Մազուրի Համոն, ապա Գենեբալ Այոզը, բժիշկը, Ռսեփ Նարիմա-նովը, Անգիմա Բարսեղովնան և հազար-հազարավոր ուրիշ-ուրիշները. աղառ, քայլում էին ուղեղային քա-ղաքներում, գնում էին գործի և վերադառնում էին գործից, ուտում էին և արտաքնոց էին գնում. — մի խոսքով՝ այն ամենը, ինչ վոր կապված ե մարդկային կյանքին, ինչով վոր կենդանի չե այդ կյանքը: Այդ նրանց բոլում եր միայն, վոր իրենք, ասենք, քայլում են Լորիս-Մեխիմյանով. եյապես նրանք վոչ այլ ինչ էին անում, քան յեքեռային տեսնումներ առաջ բերելը Մազուրի Համոյի տիեզերապարփակ ուղեղում. կամ Մազուրի Համոյի ուղեղից սահած զեպի Լորիս-Մեխի-մյանը՝ մըսում էին այնտեղ դարերի խայտառակու-թյանը դամած, սովերային մի կյանք: Յե՛վ վոչ միայն նրանք, այլ և հազար-հազարավոր ուրիշ-ուրիշները. պ. Արամարը, մանրամասն Կոլոպոտանը, Հաջի Ունիկ Էֆենդի Մանուկոֆը, Կյուբի Մեյմուներ, Քոռ Արուրը, բոլորը, բոլորը, — և ամենից առաջ մեր սույն այս վե-պում այնքան մանրամասն նկարագրած բոլոր քաղա-քացիք, նրանց կենցաղը, գործնական յեռուզեռը, առ-Յերկիր նայրի 6



տնին առույն. մի խոսքով ասած՝ ամենքը և ամեն ինչ նայիրյան այդ քաղաքում վոչ այլ ինչ եր գուցե, չեթե վոչ Մազուքի Համոյի տիեզերապարփակ ուղեղի չեղկ արտացոլումը, ուղեղային մոմոմբ միայն — ուղեղային խաղը: Յեվ միթե նրա, Մազուքի Համոյի հանձարեղազույն ուղեղը չէր ծնել այդ քաղաքն իր բոլոր հրաշքներով և հրաշալիքներով, ինչպես չեղել եր հնում հունական Ջելսի աստվածային գլխից խմաստուլթյան ու գեղեցկության գերազույն գեցուհին՝ Աթենա-Պալլասը: Այն: Այլապես վճնց, վճրաեղից պիտի յեղնեյին և քարակերտ վեհությամբ ապրեյին դարեր — թեկուզ հենց Վաղանի կամուրջը, բերդը, Առաքելոց յեկեղեցին... Այդպես ել լես ու դու, ընթերցող. մեզ համար քալել ենք շարունակ փողոցից-փողոց, մտել ենք վարսավիր Վասիլի վարսավիրանոցը և Տեյեֆոն Սեքոյի սրճարան՝ ճաշարանը, վորի ցուցանակի վրա գրված է՝ «Չայ — Ղանվե — ձառաքան, Սեքոյի Ֆայիան» ապրել ենք, մի խոսքով, իբր թե յերկրային աշխարհաբնակ կյանքով, և չենք ել իմացել, վոր իլլուզիա լի այդ բոլորը, ուղեղային մորմոք, — վոր այդ ամենը վոչ թե առասպելական մի ինչ-վոր խղճուկ Մայայի շղարշն է մեր աչքերի վրա, այլ այդ ամենասովորական «Լալոյի» կառավարիչ Մազուքի Համոյի, այդ Համո Համբարձումովիչ Ասատուրովի ուղեղային մոմոմբ — վոր մեր ամբողջ կյանքն իր «տակով-վրայով» վոչ այլ ինչ է չեղել, չեթե վոչ ճիշտ վոր — ուղեղային մոմոմբ — սրսի ճիվանդություն... Այն: Մազուքի Համոյի հանձարեղազույն ուղեղի զառանցանքն եր այդ քաղաքն իր «տակով-վրայով» — և մենք, սիրելի ընթերցող, տարիներ շարունակ ապրել ենք Մազուքի Համոյի ուղեղից սահած այդ

զառանցանք-քաղաքում, ապրել ենք զառանցանքում, վորպես «մեր տանը» — և մենք այդ չենք իմացել, գլխի չենք ընկել, չենք գիտակցել: Յեվ դու, ընթերցող, ավելի քան պիտված կլինես, չեթե կարծես, վոր սույն իմ այս պոեմանման վեպում լես ցանկութուն եմ ունեցել նկարագրել իրապես գոյութուն ունեցող մի քաղաք, պատկերել այդ քաղաքի յերկրային բնակիչներին, վեր հանել ինչ-վոր չտեսնված «թիպե»: — Այդպիսի բաներ լես յերբեք ել չեմ մտածել, ընթերցող, և չեթի յեկ կարող մտածել: Իսկ ինչ վերաբերում է այն, առաջին հայացքից կարծես թե ինձ մասնող, հանգամանքին, վոր լես քանիցս, սկզբից և չեթ, խոսել եմ այդ քաղաքի և նրա բնակիչների մասին, վորպես շատ սովորական, միանգամայն հաստատ գոյությանց մասին, — ինչ վերաբերում է դրան, սիրելի ընթերցող, լես այստեղ հարկադրված եմ ասել, բացե ի բաց խոստովանել, վոր լես խաբել եմ լեզ, լուղել եմ գլուխդ, ինչպես խաբել է ինձ տարիներ շարունակ, Մազուքի Համոն, ինչպես խաբել է և քեզ, միևնույն է՝ ապրել ես դու թե վոչ մեր նկարագրած քաղաքում. խաբել ե, և մշուշ ե փռել աչքերիդ — չես իմացել: Այն, ընթերցող, զառանցանք եր այդ քաղաքը, ուղեղային մորմոք — և կար, գոյութուն ունեց, թվում եր, թե ապրում է յերկրային — քանի կար, կենդանի յեր դեռ Մազուքի Համոն, քանի փռում եր դեռ որերի և տարիների վրա իր ուղեղային շղարշը Համո Համբարձումովիչ Ասատուրովի — Մազուքի Համոն: Ել ինչ «տիպեր» կամ «հերոսներ» — և լես ել չգիտեմ, թե ել ինչ զանազան... Նրան, միայն նրան, այսինքն վոչ թե Մազուքի Համոյին, այլ նրա հանձարեղազույն ուղեղին եր, այն,



պարտական նայիրչան աչդ քաղաքն իր չերկրային գոյությամբ — և առանց նրա, այսինքն վոչ թե Մադութի Համոյի, այլ նրա ուղեղի, չեք կարող գոյութիւն ունենալ, անգամ մի չերկվարկչան ապրել վոչ միայն նայիրչան այդ քաղաքը, այլև ամբողջապես հենց ինքը — յերկիրը Նայիրի: Չես հավատում: Նայիր շուրջդ ապա. ուր ե մեր նկարագրած քաղաքը, ուր են նրա բնակիչները: Ո՛ւր են Մեռելի Յեմոքը և Տելեֆոն Սեքոն... Ո՛ւր են, ուր են, վերջապես, Վարդանի կամուրջը և Առաքելոյ յեկեղեցին... Չկան, ծուխ են դարձել, ցնդել են մշուշում. դարձել են մուժ ու հիշատակ: Ինչո՞ւ — Վորովհետև չկա, այլևս ցնդել ե մշուշում Մադութի Համոյի ուղեղը. — չկա. մուժ ե դարձել. դարձել ե մշուշ ու հիշատակ:

Իսկապես վոր հանճարեղ կարողութիւններ ունիւր այդ ուղեղը, գորավոր կարողութիւններ: Բավական են, կարծեմ, վերեւում ասածներս միայն, վորպեսզի հասկացողութիւն կազմվի այդ հանճարեղագույն ուղեղի կարողութիւն մասին. բայց, արեք տեսեք, վոր յես ամենակարևորը և ամենազարմանալին դեռ չեմ հիշատակել, ամենաանբնականայնին: Մենք ասացինք, վոր այդ զարմանալի ուղեղի վրա յեր կանգնած յերկիրը Նայիրի, վորպես հնում աշխարհն՝ առասպելական այն ցուլի յիդյուրներ լրա. բայց ինչի՞ վրա յեր կանգնած ինքը, այդ ուղեղը — ահա ամենանշանակալի: Ինչո՞ւ եր սնվում հենց ինքը, ինչո՞ւ եր կենդանի աչդ ուղեղն ինքը — ահա հարցը: Յե՞ւ այս հարցին ե ահա, վոր մենք հարկադրված ենք տալ մի ամենաանսպասելի պատասխան, ամենաանբնականայնի —

— Նա, Համո Համբարձումովի յայդ զարմանալի ուղեղը կանգնած եր — յերևակայում եք — հենց ինքն իր վրա... Ուրիշ վոչինչ: Չես հավատում. — իրենից հարցառ. — այսպես եր հավատացնում ինձ ինքը, այսպես եր համոզված Վառդանը, — ավելին՝ այսպես եր համոզված և ամբողջ «Ընկերայունը». ո, սա ամբողջ մի փիլիսոփայութիւն եր, սիրելի ընթերցող, — ամբողջ մի, յեթե կարելի չե այսպես ասել՝ յեզեղեղեղ ուղեղասիւսեմ... կանգնած եր, ու բա՛ւսա, պրծա՛ւ դնաց. ուղում ես զարմացիր, ուղում ես՝ հիացիր: Կար, գոյութիւն ունիւր և սնվում եր — հենց ինքն իրենով — ահա թե ինչ: Կար, գոյութիւն ունիւր և աշխատում եր, անխոնջ ու մըշտընջեղական, ինչպես ինքը բնութիւնը, կամ, ավելի լավ ե ասել՝ վորպես մի իսկական «պերպետուում-մոբիլ» գերմանական հայտնի գիտնական Հելմհոլցի նշանավոր թեորիան միանգամայն ժխտելով՝ ապացուցում եր իր կենդանի որինակով, վոր նման մի ինքնաշարժ մեքենա մնչ միայն հնարավոր ե սկզբունքորեն, այլև կա, գոյութիւն ունի և կարող ե աշխատել՝ ինքն իրեն սընելով՝ դարեր ու դարեր, մահանալ ու կյանք առնել նորից իր սեփական աճուրդից, վորպես չեզիպտական մի Ֆենիքս-բոչուն: Այսպիսի ահա ինքնասնուլց մի թռչուն, բայց ավելի լավ ե ասել՝ «պերպետուում-մոբիլ» յեր Համո Համբարձումովի ուղեղը. ինքնաշարժ մեքենա, վոր, ինչպես ասացինք, ինքն իրեն սընելով՝ դուրս եր թողնում, հանում եր շրջանառութիւն անսպառ քանակութեամբ — վոնց ասենք... Տո՛ւ, ազգային յեռանդ (եներգիա), վորով, միմիայն վորով, կանգուն եր դեռ, չեք հավասարվել հողին, Ասորիքի կամ Բաբելոնի նման, յերկիրը հնամայն — հազարամյա Նայիր-



րին: Կարծում ենք, վոր հենց նրա, Համո Համբարձումովիչի պերպետուում մորիլանման ալդ ուղեղն եր ահա աչքի առաջ ունեցել մեր սիրելի, այնքան վաղաժամ մահացած պոետը՝ սուչն տողերը գրելիս:—

«Յեզիպասկան բուրգերը փոփ կը դառնան՝

Ուրվի պես, յերկիր իմ, կ'ավաղես վառման...»:

Այսպես ենք կարծում, ընթերցող, և մենք հիմք ունենք այսպես կարծելու, վորովհետև նույնը, ճիշտ նույնը, բառացի նույնն եր մտածում և ինքը, նույն ինքը Մազուլի Համոն, վորին մենք վեպիս լերկորդ մասի վերջում կայարանում կանգնած թողինք՝ հայացքը նայիրյան հեռուն, ուր հեռացավ գնացքը՝ «Այլիւր լուծեալ» բեռնավոր: Հենց նույն այդ դառն ու աղնվական, տխուր և ժպտաթախիծ զգացմունքն եր տիրում Համո Համբարձումովիչի սրտում, յերբ նա, վայրկյանի լրջությունից ազդված, կայարանից քաղաք եր վերադառնում՝ վոչ թե, ինչպես կարելի յե կարծես, ընկ. Վառդգյանի ուղեկցութեամբ, այլ մենակ, մեն-մենակ, տխուր ու մտախոհ՝ սեփական, այսինքն «Այլիւր» տեղական գրասենյակին պատկանող կառքում ընկողմանած:

Մենակ, մտախոհ, տխուր ու ժպտաթախիծ զգացմունքներով լեցուն՝ Մազուլի Համոն կայարանից վերադառնում եր քաղաք: Յեւ կայարանից մինչև բնակարանը նրա, Մազուլի Համոյի աչքերը նույն այն ժպտաթախիծ արտահայտութեանն ունեյին, ինչպիսին, ինչպես հիշում ե ընթերցողը վեպիս լերկորդ մասի վերջից՝ ունեյին նրանք (Համո Համբարձումովիչի աչքերը) կայարանում: Այդ աչքերի ներսում դեռ գնացքն

եւ, այդ աչքերի ներսում դեռ նեղում եր գնացքի՝ սանմանի այն կողմը. — Համո Համբարձումովիչի աչքերը չեյին տեսնում Լուիս-Մեյիֆյանի, այդ Հարջիական փողոցի ցածրիկ խանութները: Համո Համբարձումովիչի աչքերում, աչքերի ներսում, նա յեր, ըզմալին ու յեքաղալը, — յերկիրը Նայիրի Գնում եր. փողոցի փոսերից, քարերից չեկեջելով, գնում եր կառքը «Այլիւր» գրասենյակի: Համո Համբարձումովիչն ընկողմանել եր կիսահուշ: Որորվում եր, Համո Համբարձումովիչի նստուկի նման, կառքի ցնցուկներից վեր ու վար չեկեջելով, որորվում եր Համո Համբարձումովիչի ուղեղում — յերկիրը Նայիրի: Շինվում եր. Համո Համբարձումովիչի նստուկի նման՝ նստան կես եւ փնջում, ճանելի գոյալինակ — Համո Համբարձումովիչի ուղեղում յերկիրը Նայիրի: Փնտռում եր, բայց չեր գտնում. որորվում եր, ինչպես աշխարհը լերբեմն առասպելական այն ցուլի լեղջուրների վրա. որորվում եր, չեկեջում եր անհանդիստ, յեւք եր փնտռում. — Համո Համբարձումովիչի ուղեղից սահելով՝ դեպի լերկւրայինը, դեպի գոյացման նեղումներն եր ձգտում, դեպի սանմանի այն կողմը — յերկիրը Նայիրի: Մտածում եր՝ «Վո՞րն ե Նայիրին» — ու շինվում եր ուղեղում, չեղնում եր դարերի մշուշից, հառնում եր Համո Համբարձումովիչի ուղեղից, վոր նորից իրականանա — ուր, վո՞րտեղ սակայն — վո՞ր ավերում... Կանգնում եւ չին, դարերի մշուշից, զառանցանք չելած, շինվում ելին Մազուլի Համոյի ուղեղում — քաղաքներ ու փոստաններ. չեղնում ելին՝ Վանը, Բիբլիսը, Մուրը, Ներսիսը, Սվազը, Դիարբեհիքը — վեց փիլայիք: Նայիրին եր. հին ու հազարամյա. հառնում եր, կյանք եր առնում, շին-



վում եր Համո Համբարձումովիչի ուղեղում՝ դեպի գալիքի զառանցանքն եր ձգվում։ Մի հանգամանք սակայն ստեղծագործական այդ նվիրական ժամին մընում եր անորոշ։ Ֆնում եր, ավելի լավ ե ասել, անուշադիր. — Համո Համբարձումովիչի ուղեղի տեսողության դաշտից կարծես դուրս եր ֆնում, կարծես թյուրիմացաբար հաշվի չեր առնվում — մի խոշորագույն հանգամանք — յիթե միայն «հանգամանք» կարելի լինի համարել մեք ցկարագրած ֆաղաք, վորում ապրում եր նեց ինք, Մազուքի Համոն։ Նման եր, յիթե անպատվաբեր չե այսպիսի համեմատությունը, — Նասր-Նդդիս հոնայի հայտնի առակին։ Մովա-Նասր-Նդդիսի նրման՝ Համո Համբարձումովիչը մոռացել եր, կամ մոռանում եր հաշվել... իրեն, կամ — իր նստած յերկաբականց ֆեռուն, այսինքն — ցայիրյան այդ ֆաղաք... Հասկանում եք՝ կյանքի ու մահու այդ ճակատագրական ժամին Համո Համբարձումովիչի տիեզերապարսկ ուղեղը կարծես մոռացել եր ամենաեղանակ — մոռացել եր այն, ինչ, ինչպես ասում են՝ իր, Համո Համբարձումովիչի, ֆթի քակ եր գտնվում։ Գուցե և չեր մոռացել, բայց... Բայց փաստը ֆնում եր փաստ։ և այդ փաստն այն եր, վոր՝ Համո Համբարձումովիչի ուղեղում, ուր շինվում եր, յի՛նչում եր տարիներ լիտուց ու ձգվում եր դեպի յերկրայինը, դեպի աշխարհի յերկրային հեռուն, յերկիրը Նայիրի, — այդ ճակատագրական ժամին բացակայում եր վնչ միայն այդ քաղաքը, ուր առաջին հերթին ապրում եր հենց ինքը, Մազուքի Համոն — այլև ամբողջ սահմանի այս կողմը. պատկերացնում եք՝ ամբողջ սահմանի այս կողմը, կարծես, ջրնջել եր չարաբաստիկ մի ձեռք Համո Համբարձումովիչի

վիչի տիեզերաշեն ուղեղից։ Յեվ Համո Համբարձումովիչը — վոչինչ. չեր անհանգստանում։ Չնայած, հակառակ եք, բերդին, չնայած Վարդանի կամուրջին ե Առաքելոց յեկեղեցուն, չնայած հին ու հնամենի բոլոր այդ նայիրյան հրաշալիքներին — Համո Համբարձումովիչի տիեզերական ուղեղը մի տարրերնակ համառությամբ անտես եր առնում, ասես համարում եր չեղյալ սահմանի այս կողմը. — ո, գիտեք, հասկանում եր Մազուքի Համոն. վոր այսեղ չե, վոր իր հանճարեղագույն ուղեղից սահելով պիտի միս ու մարմին առնեք, կերպավորվեք հաստատ, գոչանար յերկրային — յերկիրը Նայիրի . . . . .

Թող չկարծվի սակայն, վոր Համո Համբարձումովիչը միամտաբար եր այդպես մտածում։ Վնչ. — այդպես մտածելու համար Համո Համբարձումովիչի ուղեղը, ինչ խոսք, վոր ուներ հարգելի պատճառներ։ Նման պատճառները փոխիկոսների բարբառում կոչվում են՝ ֆաղաֆական պատճառներ . . . . .

Բայց և այնպես, ընթերցող, — ձվ իմանա։ Այսպես ել Համո Համբարձումովիչի ուղեղը և հենց ինքը, Մազուքի Համոն — ինչ իմանա։ Յեվ այն ել — ճակատագրական այն որը, Ասում ենք ճակատագրական վորովհետև այդ որը, ի բաց առջալ բոլոր վերահիշյալ դեպքերը — Համո Համբարձումովիչի կյանքում, ավելի լավ ե ասել՝ Մազուքի Համոյի ուղեղում կատարվեց և մի այլ, ավելի քան նշանակալից, գերճակատագրական — դիպք ասեմ, չգիտեմ, — թե անըսպասելի մի տիեզերացնցում, վորի հետևանքով տարրերի-



նույն մի տեղափոխութիւն կատարեց Համո Համբար-  
ձումովիչի ուղեղում... յերկիրը Նայիրի: Բայց այս մա-  
սին արդեն հարկավոր է մանրամասն խոսել:

Համո Համբարձումովիչը, ինչպէս ասացինք, կա-  
յարանից վերադառնում էր տուն: Ուղեղում — դե լերը  
էր Համո Համբարձումովիչի ուղեղը իբր յերկիր. ուղե-  
ղում, կրկնում ենք վերջին անգամ, — նայիրյանն էր,  
հալիտեանականը. ուղեղի մշտնջենական լեզվաբանների  
վրա որորվում էր, ծանր, — յերկիրը Նայիրի: Այդպես  
էլ հասավ իր բնակարանը և անցավ իր առանձնատե-  
ղակը. առանձնատեղակում նստած էր իր անդուգա-  
կան դուստրը — Սեվալյա Պրիմադոննան, Սկաչա Պրի-  
մադոննան արտասովոր էր՝ գլուխը ձեռքերի մեջ ա-  
ռած՝ արմուկները գրասեղանին: Մոտեցավ. գրկեց  
գոտեր գլուխը Մազուլի Համոն. ուղեղում նայիրյանն  
էր դեռ և վոչ անձնականը. ուղեղի լեզվաբանների վրա  
դեռ նստած էր, ծանր, յերկիրը Նայիրի: Մոտեցավ.  
ձեռքը, բնազդաբար, իջավ ցնցվող ուսին Սկաչա Պրի-  
մադոննայի. Սկաչա Պրիմադոննան խոսելու փոխա-  
րեն արցունքոտ ցուցամատով ցույց տվեց մոր ննջա-  
բանը Մազուլի Համոյին: — «Գնա՛ այն տեղ» — ասաց  
արցունքոտ ցուցամատը Մազուլի Համոյին: Համո  
Համբարձումովիչը կարծես զգաց, հասկացավ կարծես  
Մազուլի Համոն քստմնելի մի բան. ուղեղում, ու-  
ղեղի լեզվաբանների վրա, յերեքաց, անհանգիստ, չե-  
րկիրը Նայիրի: Համո Համբարձումովիչը զգուշ, ինչպէս  
զոդը, մոտեցավ Անգինա Բարսեղովնայի ննջարանին:  
Գոացավ, բանալիի ծակից ներս նայեց, Անգինա Բար-  
սեղովնայի ննջարանը, Մազուլի Համոն. որորվեց,

ուղեղի լեզվաբանների վրա թփրտաց անհանգիստ չե-  
րկիրը Նայիրի... Որորվեց, թփրտաց անհանգիստ. —  
Նայիրի յերկիրը, ցատկելով ուղեղի լեզվաբանների վրա.  
լեց, ցատկելով ուղեղից — նստեց Համո Համբարձու-  
մովիչի ականջներից բուռած... պոզերի վրա: Յեւ այդ  
տարրինակ-յերկար, հոր ականջներից ընտանեբար  
բուռած պոզերի արանքից, Մազուլի Համոյին գաղ-  
տազողի մոտեցած, նրա լսուկը շնչառապա կռացած,  
Սկաչա Պրիմադոննան տեսավ... մազերը, կըռ-  
նակը և սալիակն ցատկը քաղաքի պարեթի (բարձրահա-  
սակ սօլալի), վորին, նկարչական մի շքեղ կոնսրուս  
կազմելով, քնքռւշ փաթաթվել էին պոնձագուլն սրուն-  
կերն Անգինա Բարսեղովնայի՝ իրա, Սկաչա Պրիմադոն-  
նայի, մոր — Համո Համբարձումովիչի անդուգական  
կողակցի

Այս: Վերն էր — «Նայիրի»...

Նա այնտեղ էր — Համո Համբարձումովիչի ուղեղա-  
բնականեկան լեզվաբաններից... ներողութիւն՝ պոզերին  
նստած սնում էր, սնում էր նրան Համո Համբարձու-  
մովիչի ուղեղը, վորպես մի իրականացած «պերպե-  
տուալ-մոբիլի» գերմանական հայտնի գիտնական Հելմ-  
հոլցի նշանավոր թեորիան հերքելով՝ անհատնում յե-  
ռանդ, իրա տերմինոլոգիայով ասած՝ ազգային եմե-  
րիա յեւ մատակարարում իրեն ու ամենքին: Բայց  
այստեղ հարկավոր է արդեն, ինչպէս ասում են՝ «վա-  
կագծերը բացալ»: Հարկավոր է ասել, վոր «Համո  
Համբարձումովիչի ուղեղ» ասելով պետք է մոտափո-  
րապես այն հասկանալ (մենք մոտափոքապես այն ենք  
հասկանում), ինչ վոր հասկանում են իդեալիս փիլի-



ստիաներից վոմանք «յես» ասելով. — «Տիեզերական հոգի» — տվյալ դեպքում, իհարկե, նայիրյան մասեսաբով: Իհարկե, Մազուլիի Համոյի ուղեղն հյապես մի մասնիկն եր միայն Կենսոնաուդեղասարդի, նայիրյան այդ «Տիեզերական հոգու» վոր շուտով, շուտով, իր դիպեկսիկական զարգացման սինթեզին հասնելով՝ պիտի իրականանար որերում ու տարիներում, վորպես հազարայնա նայիրա-արայություն: Նրա, այդ «Տիեզերական հոգու» (նայիրյան մասշտաբով) գերազույն սուբստանցիան եր — Ընկերությունը, այսինքն Կենսոնաուդեղասարդը, և այդ «Տիեզերական հոգու» (նայիրյան մասշտաբով) մի մասիկն եր ահա Համո Համբարձումովիչի ուղեղը՝ տեղական սուբստանցիան: — Յեվ այդտեղ եր ահա Նայիրին, Համո Համբարձումովիչի այդ հանձարեղազույն ուղեղում: Այդտեղ եր շինվում եր այդ տեղի — Լրացել ելին որերն ու ժամանակները. ուղեղայինն արդեն չերկրայինի պիտի փոխվեր. ուղեղայինը պիտի իրականանար:

Յեվ այդ իրականացումը, ինչպես տեսանք, սկսվեց բավականին տարրորինակ, սկսվեց... արմատից: Առաջին հերթին, ինչպես տեսանք, արմատը, այսինքն Համո Համբարձումովիչի ուղեղային յեղջյուրները, այնքան անսպասելի կերպով, փոխվեցին — ընտանեկան ամենասովորական... պոզերի: Բայց — «Ռ՝վ չուցի» — մտածեց Համո Համբարձումովիչը, մտաբերելով Արամ Անտոնիչին, դավառապետին իրան, — հազար-հազարին: Մի ժամ չանցած՝ մոռացավ՝ չեղյալ համարեց այդ ամենը Համո Համբարձումովիչը. տեղ չկար ուղեղում անձանկանի համար. ուղեղում տիեզերականն եր, Նայիրյանը՝ Քնեց. կամքի յերկաթե ձեռքով սրբեց ու

դեղից անհաճո միջադեպը. յերազում — զնացն եր՝ նայիրյան ուժերով բեռնավոր. — յերազում թռչում եր գնացքը... անկախելի հեռուն: Բայց հաջորդ առավոտ, չերը դուրս չեկավ տնից Համո Համբարձումովիչը և, կառք նստելով, ուղում եր «Լույսի» գրասենյակը գնալ — անսպասելի կերպով կառքը չարժեց. ձերբը, քառացած նիոբենեի նման, տեղերում մնացին: «Խ՞ն, կա» — հարցրեց Համո Համբարձումովիչն անհանգստացած. և դեռ չեր լսել կառապանի փնթփնթոցը, յերբ նրա, Համո Համբարձումովիչի ուղեղից սահելով խոսեցին փողոցը, կանգնեցին իրականացած... Համո Համբարձումովիչի ուղեղա-ընտանեկան յեղջյուրապողերը. փողոցի մայթերից ձգվեցին դեպի ինքը — կենդանի յեղջյուրներ, բազմազուլս պոզեր: Յեվ ահա՝ հազիվ եր դուրսը դուրս յերկարել կառքից — շրջապատեցին, լեզու առան հանկարծ այդ մարմնավորված յեղջյուրները, — ներողութուն՝ պոզեր: « — Աղա՛ւ, մզի տե՛ ե՛-ե՛ղ, մզի խա՛ւ-ա՛ւ-ա՛ւ, մզի խա՛ւ մց, մզի խա՛ւա՛ց, մը՛ղի՛ — խա՛ւ-ա՛ւ-ա՛ւ-ա՛ւ-ա՛ւ... » — խոսեցին բազմաձայն ու բազմազուլս, կենդանի յեղջյուրները՝ այսինքն՝ պոզերը: «Վ՛ո՛րսեղից ե՛ք» — մեքենայաբար հարցրեց Համո Համբարձումովիչը, բնադդորեն, յերեկ, զլսի ընկնելով, վոր ինչ-վոր առնչութուն պետք և լինի դրանց և իրա, այսինքն Համո Համբարձումովիչի, ուղեղա-ընտանեկան յեղջյուրապողերի մեջ: « — Վ՛ո՛րսեղից ե՛ք » — հարցրեց Մազուլիի Համոն:

« — Բա՛ւսե՛նա՛ւ, Բա՛ւսե՛նա՛ւ, — սե նա » — խոսեցին հազար-երեքան ասին, խոսեցին ուղեղը: « Գաղթական եմ, սահաման եմ փախեմ » — պարզաբանեց կառապանը Մազուլիի Համոյին. խոսվեց. խոսվեցին իրար, ուղե-



դից սահելով յետ՝ նորից Համո Համբարձումովիչի ուղեղը խուժեցին յեղջուրներն ու պոզներ. ուղեղում, հաստատ ու մարմնավոր, Նայիրին եր արդեն—յերիբայինը.—կառք, կառապան, բարձրահասակ սպա. Անգլիա Բարսեղովնայի պղնձագույն սրունքները—գաղթականներ... Բասեն:

Ձեռքը քաշում եր կառապանի թևից: Կառքի մեջ—հասակովը մեկ կանգնած—արդեն «Լույսի» գրասենյակներ գնում Համո Համբարձումովիչը.—ուղեղից լեռնելով, արդեն դիմավորում եր նրան գրասենյակի դռներում ընկ. Վառդգյանը՝ փափախալիք . . . . .

Յերկուշաբթի լեր. հազար իննը հարյուր տասնչորս թվականի դեկտեմբերը:

Յեվ ալստեղից ե ահա, վոր, կարծես Մազուլի Համոյի ուղեղից սահելով, կերպավորվելով աշխարհում, վորպես Մազուլի Համոյի ուղեղից յեկած առտնին զառանցանք՝ գլորվեցին որերը, տխուր ու աղետաբեր. գլորվեցին և իրականացան 1914, 15, 16 թվականները—լեռան, տեսիլանման, հանձարեղադույն այդ ուղեղից և իրականացան այնտեղ, սահմանի այն կողմը, ահտեղ, ուր պիտի հառներ տարիների մոռժից լերկիրը Նայիրի, այնտեղ, ուր հեռացավ գնացքը՝ «Նայիրյան ուժերով» բռնապետը.—իրականացան այդ տարիները, դաժան ու անկարելի, այնտեղ—Վանում, Բիքիսում, Մուսում, Դիարբեքում, —այնտեղ—Ներսիսում, Սվազում, Սերգևիսում, —այնտեղ—Գառնիսում... Անապատում յեկած միրափի նման՝ լեռավ—դեռնահարվեց, վերին պատրանքով շրջավորված հնամյա լերազը,

դեռնահարվեց—առդյո՞ւմ ընդմիջես... Ու մնացին—դիեր, դիեր, դիեր, —առտնին զառանցանք: Ու մնացին—ավերակներ: Ու մնաց... Մազուլի Համոն՝ հայիրյան ալդ քաղաքում կանգնած կանդանի Նայիրի. վորպես հավիտենական պերպեսում մարիլ, վոր ինքն իրեն սնելով, անսպառ քանակությամբ «ազգային յեռանդ» և հղանում, շնչավորելով հավիտենացածը՝ մի՞թե անկարելի... Յեվ բազում դեպքեր ու պատմություններ լեռան մեր նկարագրած քաղաքում, բայց այդ բոլորը մենք թողնում ենք մի կողմ, թողնում ենք... դարերին: Գլորվեցին, ինչպես ասացինք, 1914, 15, 16 թվականները, դատարկվեց ու ամալացավ այդ մռայլ տարիներում լերկիրը Նայիրի,—բայց, ինչպես հայտնի յե քեզ, ընթերցող, պատահեց այնպես, վոր «ուսուր» կամ, ինչպես մեր նկարագրած քաղաքի բնակիչներն ելին առում՝ «սոլը» գրավեց յերազյալ վայրերը, հասավ, իհարկե հասավ, Ներսիսում, բայց վոչ թե «յոթը» որում, ինչպես Մազուլի Համոն եր գուշակում, այլ անհամեմատ ավելի լերկար ժամանակամիջոցում: Բայց միթե միս ե հարցը, ընթերցող—Ո, վոչ. իհարկե վոչ: Դուռի արժեք չունեք այդ հարցը, մի ինչ-վոր քաղաք գրավելու ժամանակամիջոցը սխալ գուշակելու խնդիրը, Մազուլի Համոյի համար.—զինվորական չեք Մազուլի Համոն և վոչ ել սրտեզ, այնպես վոր նրա հաշիվներում պատահած այդ փոքրիկ սխալը, այդ ինքնին չնչին հանդամանքը, ապացուցում եր ամենից առաջ իրեն, Մազուլի Համոյին, և ապա «Անկերտայան» բոլոր մնացած անդամներին, վոր «աղեսների» հարցում միանգամայն անմեղ ե ինքը, Մազուլի Համոն, ինչպես և «Անկերտայունը»: Յեվ ճիշտ վոր. ինչո՞ւ հնարավոր չեք Ներսիսումի դը-



բաժնու՞մը «յոթ» որից. ո՞վ էր խանդարողը: Ո՞վ կար դեմը կեցած, ի՞նչ զորավոր ուժ. ռազմի ի՞նչ կարողութիւն... Ծիծաղելի չէր, դառը ծիծաղ էր հարուցանում ինչպես Մազուլի Համուլի իրա, այնպես էլ «Ընկերության» մյուս աղդեցիկ անդամներ, սրտում այդ անհասկանալի անհեթեթութիւնը: Հասկանա՞ւմ էք. Սոխր տասնչորս միլիոնանոց բանակ ունեցող այդ տիգերակալ Աբդը, չէր կարող լղբնուկ մի փոքր վեցնեղ-յոթ ուրվաքնքրում... Յեւ սա այն ժամանակ, յերբ դեմը կեցողը — Ջառամյալն էր, Հալիսեմական Հիվանդը, Մահամբար... Թափթփուկ հորդաներով կեցել էր զորավոր Սոխի հանդեպ, անգամ ջարդում էր ու քշում, սրի ու հրի չէր մատնում չերկիրը Նայիրի և վոչինչ. կարծես չէր ել անհանգստանում Սոխը, և չէր ել վրդովվում... զրավոր խոսումներ սվող Բարձրագույն Ինսանցիան... Մի բան կար թագնւած այս ամենի յետևը, և Մազուլի Համոն ափիլի քան հասկանում էր այդ բանը. հասկանում էր, իհարկե, և «Ընկերությունը», բայց՝ ինչո՞վ, ինչո՞վ էր մեղավոր Մազուլի Համոն, ինչո՞վ էր մեղավոր Ընկերությունը: Յեկան, աշխարհի չորս կողմից հավաքվեցին նայիրցի ռազմիկներ. արին, ինչ-Վոր կարող էին անել. ափիլին արին. իրենց մայրերի ու զավակների հավելյալ արյունը բերին ի նվեր նենգավոր Սոխի փրկարար առաջախաղացումին. և ի՞նչ — usur, ցեղ, գեհնափառ դավաճանությունն էր հատուցումը՝ ափերված Նայիրին... Իսկ մի, Վոր, լպիրշ ու լրբաբար վախկոտ-վախկոտներ, թալանչիներ ու ավազակներ հայտարարվեցին նայիրցի ռազմիկները, և այդ ստոր սոխերի կողմից խայտառակութան սյանը գամվեցին ամբողջ աշխարհի առաջ — ի տրիտուր այն մեծ ու հերոսական ոգնության,

Վոր հասցրին նայիրյան ռազմիկները սոխերի վոյստ-րային բանակին... Ամոթ էր, լկտի դավաճանութիւն — սոխերի կողմից, իսկ «Ընկերության» և նայիրյան բանակի կողմից — հերոսական պայքար, ազատաշունչ գոյամարտ, որհառական կոխի: — Ո՞վ, ո՞վ վերցրեց Վանը, յեթե Վոչ՝ Նայիրյան բանակը. ո՞վ վերցրեց նույն Երզնուր... «— Երկամեն, Երբե՛ր, դավաճաններ» — փրփուրը շրթունքներին վորտում էր հաճախ, ձեռքը սեղանին խփելով, Տեղական Կովիսեյի նխտերին, Մազուլի Համոն. — «Վոչ. ել յես սոխտեր չեմ, ել չեմ կտրող հանդուժել զրանց այդ լիկի վերաբեմունքը» — գոռում էր, փրփուրը բերանին, Մազուլի Համոն, — և ապա գնում էր դավառապետի բնակարանը, ուր հանգստանում էր մի քիչ, հանգստացնում էր ջղերը Ագրիպինա Վլադիկովնայի, իր անգին կողակից Անգրինա Բարսեղովնայի, քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) և իր անդուգական դստեր՝ Սեվայյա Պրիմադոնովայի հետ՝ «դուռակի» խաղալով:

Չէր վնասում. — Կենսոնմառնդեպատարդի ուղեղատառանումներին յենթակա ու հլու՝ որերի լրացմանն ու արյան հասուցմանն էր սպասում Համո Համբարձումովիչի ուղեղը. սպասում էր, Վոր համաշխարհային պատերազմը վերջանա և հաշտութեան սեղանին նրստեն ազգերն ու ժողովուրդները. գիտեր, համոզված էր հա, Վոր այն ժամանակ արդեն կիրականանա յերազյալը, Կկատարվի անխուսափելին, կթոշի, անգույութան գերկը կգլորվի Հավիտենական Հիվանդը, և նրա գլխի վրա, նրա նեխած մարմնի քալքալումից չեղնելով՝ կկանգնի, պայծառ ու յերկնային — չերկիրը Նայիրի: Այսպես էր մտածում, այսպես էր հավատա-



ցած Համո Համբարձումովիչը, բայց անցավ 1916-ը, չեկավ 1917-ը և, չերևակայում եք, պատահեց անսպասելին, կատարվեց — անսպասելի, կատարվեց — հանկարծ ..

Այդ անսպասելին, Համո Համբարձումովիչի — Մազուլի Համոյի համար այդ հանկարծակի պատահածը, վոր շարժեց տեղից, շփոթ ու իրարանցում մտքից վող միայն Համո Համբարձումովիչի, այլև ամբողջ «Անկե-րուքան» կենտրոնաուղիկում Ռուսական Հեղափոխու-թյունն եր, հազար իննը հարյուր տասնյոթ քվականի փեքը-վարը...

Այստեղից ե ահա, վոր մենք պիտի անցնենք մեր նկարագրած քաղաքի վերջին դեպքերի պատմությանը:

Սկսվեց նրանից, վոր մի որ, միանգամայն անսպասելի կերպով, քաղաքի փողոցներում չերևաց, զին-վորական շորերով և չսափրած, բորբոսած դեմքով, վե պիս յերկրորդ մասից արդեն բավականին ծանոթ կարո Դարայանը. ճիշտ այնպես, ինչպես առաջին անգամ իր հայրենի քաղաքի գալիս, չեկավ ու իջավ — ուղիղ պ. Մարութի բնակարանը: Յեվ ահա, նրա գալուց ընդամենը մի որ հետո, ցերեկվա ժամը մոտա-վորապես 11-ին, հանկարծ փակեց «Առյուծ» գրասեն-յակը Համո Համբարձումովիչը. հապտապ, և այն ել վող թե կառքով, այլ — չտեսնված յերեուլթ — վոսֆով տուն չեկավ Մազուլի Համոն ու փակվեց իր առանձ-նասենյակում, հրամայելով ծառային, վոր բոլոր իրեն հարցնողներին, բացի ընկ. Վառդգյանից և բժշկից, հայտնի, վոր ինքը տանը չե: Մինչև յերեկո այդ որն իր առանձնասենյակում մնաց Մազուլի Համոն: Վա-

րագույրները քաշել եր ու նստել կիսախավարում. լուռ եր. գլուխը ցավում եր մի քիչ. ուղիղում... պարա-պոթյուն եր այդ որը՝ անգո մի մշուշ, բաց տարածու-թյուն. Կտրվել ելին կարծես որիքն ու տարիները. հառվել եր ինչ-վոր բան Համո Համբարձումովիչի ու-ղեղում, ինչպես ասացինք, մշուշ եր թափանցիկ — բաց տարածություն: Բայց այդ բաց տարածությունը յեր բեմա-յիրբեմա սկսվում եր լցվել. կարծես քնած եր արթմնի ու, արթմնի յերագում, տեսնում եր տեսել-ներ. տեսնում եր. —

— Թեքվել եր Ագրիպինա Վլադիսլավովնան իր վրա ու քնքճւշ-քնքճւշ կկոցում եր, ինչպես մի անհղա-ղափն... Նայում եր աչքերին. Ագրիպինա Վլադիս-լավովնայի աչքերում ևս մշուշ եր թափանցիկ, բաց տարածություն... Անգրիպինա Վլադիսլավովնան թվում եր փոքրիկ-փոքրիկ. մանկական կարմիր շրթունքնե-րով համբուրում եր Համո Համբարձումովիչի սառը շրթունքներն Անգրիպինա Վլադիսլավովնան: Նայում եր, անթարթ նայում եր Անգրիպինա Վլադիսլավով-նայի աչքերին Համո Համբարձումովիչն ու նկատեց. Անգրիպինա Վլադիսլավովնայի աչքերի բաց տարածու-թյունն սկսեց լցվել. լցվել, իմաստավորվել, իմաստ ստանալ. «Ձե՞ս հանաչում» — հարցնում եր բաց տար-ծությունն Անգրիպինա Վլադիսլավովնայի աչքերից Համո Համբարձումովիչին. Համո Համբարձումովիչ. Նայեց — նայեց — ու վեր թռավ տեղից, յերագեց արթնացողի նման ձեռքով շփեց ճակատը Համո Համբարձումովիչը. նայեց՝ թեքվել եր վրան իր անդուգական գոտարը՝ Սեվաչյա Պիմադոննան. նայում եր աչքերին: Աչքերում — մշուշ եր անգո՝ բաց տարածություն: — «Ի՞նչ կա» —



հարցրեց Համո Համբարձումովին անհանդստացած. Սեհնչա Պրիմադոննան հառեց աչքերը գետնին. հետո արագ-արագ, կարծես դաս ասելիս լինեք, խոսեց. Համո Համբարձումովին իր դստեր կարկտի պես թափվող խոսքերից միայն այն հասկացավ, վոր ինքն իսկույն պետք է գնա գավառապետի բնակարանը: Վերկացավ Համո Համբարձումովինը, հազավ վերարկուն, վերցրեց ձեռնափայտը. գնաց: Արդեն մութն եր, յերեկոյան ժամն արդեն 10-ը կլինեք, յերբ Համո Համբարձումովինը մտավ գավառապետի բնակարանը: Մարտի 2-ն եր. 1917 թվի մարտի 2-ը:

Թե ինչ եր խոսվել այդ յերեկո գավառապետի բնակարանում — աստված ինքը գիտե, բայց մի քանի որ անց պ. Մարութեն ասում եր, վոր այդ յերեկո գավառապետի մոտ են յեղել բացի Համո Համբարձումովինից, նաև բժիշկը, Ոսկի Նախմանովը, Գեներալ Ալոբը և գլխավոր տեսուչը — Արամ Անտոնիս: Բայց մենք այդ ասելիս ստույգ տեղեկություններ չունենալով՝ հարցը թողնում ենք բաց. հարցի տեղ թողնում ենք — բաց արածուրյուն. թող լցնի, ում յերեկոյան յեղել վոր կամենա, այդ բաց տարածությունը: Մենք յենթադրություններ չենք ուղում անել: Յեղ, վերջիվերջո, ինչ նշանակություն ունի, թե ով է ներկա յեղել այդ յերեկո գավառապետի և Համո Համբարձումովինի զրույցին. — ելականն այդ չե, ընթերցող, այլ այն, թե ո՞ր եմ գնացել այդ յերեկո, գավառապետի բնակարանից յեկելով, Համո Համբարձումովինը և բժիշկը. — անհ հարցը: — Յեղ այս հարցի շուրջն եր ահա, վոր միքանի որ անց քաղաքում պտտվել սկսեցին դանա-

դան հետաքրքիր զրույցներ. հետաքրքիր թեկուզ այն պատճառով, վոր այդ զրույցները կապված էին — յերեկոյան հեղեղ — «Ալոբ սեղի» հետ, այսինքն Հինգ հարկանի ծեփի ներքևի հարկի ամենածայրը, անկյունում գտնվող այն փոքրիկ սենյակի, վոր ընկ. Վառդգյանի կենակի վրա — ինչպես հիշում ե ընթերցողը վաղիս առաջին մասից — թողել եր... հետաքրքիր հետքեր: Խոսում էին, վոր այս զրույցները տարածում է պ. Մարութեն. նույնիսկ ասում էին, վոր այս զրույցները տարածելու մեջ նույնպես մաս ունի — յերեկոյան հեղեղ — ինքն ընկ. Վառդգյանը. բայց այս յերկրորդ հանգամանքը հետադարձում միանգամայն հերքվեց և զրպարտության ամբողջ մեղադրանքը մնաց Կարո Դարայանի խղճին, Կարո Դարայանի, վոր արդեն դիակ եր, կորցված մութ մի գիշեր, ընկած — ով գիտե, թե ով... Մութ, խորհրդավոր պատմություն եր այդ, ընթերցող, վոր այնպես ել մութ մնաց ու մնաց խորհրդավոր. — բայց այդ մասին հետո:

Հաջորդ որը, մարտի 3-ին, առավոտյան ժամը 8-ը դեռ հազիվ կլինեք, յերբ բերդից հանկարծ, քաղաքացիների համար միանգամայն անսպասելի կերպով, դեպի քաղաք շարժվել սկսեցին — զորեք, զորեք, զորեք. շարժվեցին քնդանոթներով ու գնդախմբներով. լցրին փողոցները: Մարտի 3-ի խանութներն իրար յետևից փակել սկսեցին Լուխ-Մեղիքյանի խանութպանները. բանն այն է, վոր նրանք վաղ մի տեղեկություն չունենալուց քացի, այդ անսպասելի շարժման, այդ իրարանցումի մեջ չեղին տեսնում նման դեպքերում քաղաքի եր ցեխից հանող Մաղուբի Համոյին, վաղ ել մյուս



պատկանելի նաշերցիներէց վորհե մեկին. գիտեի՜ն, լսել ե. ին, վոր ինչ-որ բան պատահել ե ներսերում, բայց ադ մասին վախենում էին խոսել. — իրենց գործը չեր: Յերեք որ եր արդին, վոր պատվում էին շուկաները, բաց քաղաքացիք, մանավանդ Լորիս-Մելիքյանի խանութպանները թերահավատ էին դեպի նման շուկաները. թերահավատ ու կասկածոտ: Թերթեր յեր-  
 123 րորդ որն եր չեր ստացվում. Չեին ստացվում անգամ նաշիրատառ «Մեակն» ու «Հովիգոնը». ասում էին, վոր գավառապետը մարդ ե կանգնեցրել կայարանում և ձերբակալում ե բոլոր ստացված թերթերը. ասում եր — պ. Մարութն: Այնպիսի վոր աստարյալ անգիտութեան մեջ եր քաղաքը դեռ յերբ ադ առավոտ, բերդից շարժվել սկսեցին — զորքեր, զորքեր, զորքեր. գնդացիք ու թնդանոթ. ինչպես ասացինք՝ փակվեցին խանութները, վոր նոր էյին բացվել. խանութպաններէց վորը տուն գնաց, վորը հենց ենպես կանգնեց իր փակ խանութի փակ դռան առջեւ, վորն ել Տեյեֆոն Սեթոյի սրճարանը գնաց՝ ու եր ստանալու: Տեյեֆոն Սեթոյի սրճարանը գնացողների մեջ եր և Հաջի Ունիկ եֆենդի Մանուկոֆ, անգլիախոս դորգովաճառը — Հօր, բան մը կրհասկընա՞ւ սա դալաբալդեմ — հեգնախառն հարցերից Հաջի Ունիկ եֆենդին սրճարանը մտնելով. — «Ընչի՞ չենք հասկընա որ» — կտրուկ պատասխանեց Տեյեֆոն Սեթոն — «զորքին պիկազ ե եկե որ ռեվայուց ենն» — վերջացրեց Սեթոն ու տիրեց լուսթյուն հեռվից գալառապետի բնակարանի կողմից, լավեց մի հազար բերան «ուռուռ». պրո՛ւ գնացող գինւորների ցնծալից ու անավոր աղաղակ եր դա. վոր ներկաների վրա անում եր միտակ տպավորութեան: Կուռ եր. լուռ

լուռ էյին բոլորը. դեմքերի արտահայտութեանն այն եր, վոր, կարծես, նրանք սպասում էին թնդանոթի պայթյունի. հառել են լսողութեաններն ու սպասում անհամբեր՝ հիմա կպայքի: — «Կրանք բերդեմ բոփի յեն կապե նաշակիկի տունը» — արտահայտեց ընդհանուրի միտքը պ. Սրճարը, վոր նույնպես գտնվում եր սրճարանում բայց հավանութեան չկաւ: — «Ձեզեկ-զեկ-զեկ յտեսն են, հալվան, բու ի՞նչ խառնվելու գործի ե» — բարկացավ Հաջի Ունիկ եֆենդին ու ավելացրեց, մի փոքր լռելուց հետո, չոր ու խրատական — «Աս տիկըքաներու գուռնան յեսքը կիմնանք, յավուս» — ու զուրս գնաց ձեռնափայտը գետնին խփելով — չոր ու խրատական: Ու գուռ եր տուն գնալ Հաջի Մանուկոֆ եֆենդին, բայց Հաջու տան ճանապարհն ընկնում եր Հինգհարկանի Շենքի մոտով. դեռ նոր եր թեքվել դեպի այդ շենքը Հաջին, յերբ յետ-յետ գնաց, զարհուրած կրթնեց պատին: Դեմը, Հինգհարկանի Շենքի առաջ, Ունիկ եֆենդին տեսավ զորքեր, զորքեր, զորքեր. անհաշիվ բազմութեան: Դեմը վեր ցցված սվիններ, ու վեր ցցված սվինների միջից Հաջի Ունիկ եֆենդի Մանուկոֆը տեսավ Հինգհարկանի Շենքի պատշգամբը. պատշգամբում տեսավ — մի քանի սոխ գինւորներ, նրանց մեջ իրան — պ. Մարութեյին, իր հորջորջած՝ «Բամի կուլ սվող» կարո Դարայանին և սրանց մեջակող — ի, զարհուրանք, իրան՝ վոսիկանապետին... Դուրսը բաց եր վոստիկանապետի. Հաջի Մանուկոֆ եֆենդու նայած վայրկյանին՝ մի ինչ-վոր սոխ սալ-դաք պոկում եր նրա, ինչպես տեղա իք էյին ասում ուսուիրների՝ «չիմեր». «Բամի կուլ սվողը» բռնել եր ոճիքից վոստիկանապետի ու ցույց տալով վոստիկա-



նապետի վախից ցամաքած դեմքը ներքևում կանգնած գինվորներին՝ «խալի կուլ սկսողն» ասում էր անկառելի խոսքեր։ Շուռ յեկավ Հաջի Ուննիկ եֆենդին — վազեց հակառակ ուղղությամբ։ Դեմից, նույնքան սարսափած ու շփոթված, դեպի ինքն էր գալիս — ընկ. Վառդգյանը. ընկ. Վառդգյանի փափախը թեքվել էր մի կողմ. գենքը չկար։ «Ուր, Հաջի» — հարցրեց ընկ. Վառդգյանը՝ դեմքը, աղաչական, Հաջուն մոտեցնելով. «— Գնա՛, գնա՛, յալրո՛ւս. ինձի հետ գործ չունիս» — հրեց նրան մի կողմ Հաջի Ուննիկ եֆենդին ու շարունակեց վազել իր վազած ուղղությամբ։ Ու դեռ չէր շուռ յեկել դեպի կողքի փողոցը, յերբ նորից ստիպված յեղավ պատին կպչել Հաջին. կողքի փողոցից շուռ յեկան դեպի ինքը, ու լցրին փողոցը — զորքեր, զորքեր, զորքեր — անթիվ բազմություն. — դեպի Հինգհարկանի Շենքն էլին գնում նրանք։ Խառնված նրանց, այդ սոխ սալդարներին, գնում էլին նաև մոտ մարդիկ. «բաշիբոզուկներ» — ինչպես մտածեց Հաջին. — չերկաթուղագծի ծառայողներն ու բանվորներն էլին դրանք, վոր խառնվել էլին զորքին — սոխ սալդարներին։ Սարսեց, քաց կտրեց տեղն ու տեղը Հաջին, Հաջին տեսավ. — սոխերն ու բաշիբոզուկները, մեջ առած, տանում էլին... բարձրասիճան Սոխին. սոխ գինվորներով ու բաշիբոզուկներով շրջապատված, գլխաբաց, առանց ուսղիքների, կախնալորի նման գետին նայելով, քայլում էր... բարձրասիճան Սոխը, այսինքն գալիս ուսպես... Բնադաբար ձեռքը գլխարկին տարավ Հաջի Ուննիկ եֆենդին, յերբ անցնում էր մոտից գավառապետը. բարեբախտաբար, Հնայեց նրա կողմը և Հաջի Ուննիկ եֆենդին մի գոլ ուրախություն զգաց իր

ներսում, վոր Հնայեց իր կողմը գավառապետը։ Բայց Հաջու այդ վայրկենական ուրախությունը հաջորդ վայրկյանին տեղի տվեց մի անզուսպ բարկություն, անգամ կատաղություն. — գավառապետին շրջապատող սոխ գինվորների ու բաշիբոզուկների յետևից, յերգելով ու աղմկելով, գնում էլին քաղաքի սկյուր յերեխաները. նրանցից վոմանք գտել էլին թիթեղե թեյամաններ ու գինվորական կահեղուկներ, վորոնց տակերին խփելով նրանք անասելի աղմուկ էլին բարձրացնում — վայրի յերաժշտություն։ Ձայրույթից ու կատաղությունից Հաջի Մանուկոֆ եֆենդու ծնկներն սկսեցին նդողալ. կրնկներ, յեթե շարժվող գինվորների պատման հոսանքը չալահեր։ Հոսանքն անցավ, շրջվեց դեպի Հինգհարկանի Շենքը. փողոցը դատարկվեց։ Հանդիստ շունչ քաշեց Հաջի Մանուկոֆ եֆենդին. հետո նստեց պատահաբար անցնող «Լույսի» գրասենյակի կողքը. քիչ անց, քրտնաթոր, ինչպես բաղնիքից յեկած, իր տան առջևը իջնում էր կառքից Մանուկոֆ եֆենդին. «— Ուր ե աղադ» — հարցրեց Հաջին կառապանից՝ նրան դրամ տալով. — «Ճառ կանսո չե եկե, չեմ տես» — պատասխանեց կառապանը. շուռ տվեց կառքը. գնաց։

Սոչերդավոր ժպիտը դեմքին, ժպիտ, վորի մեջ խառը կային թե դարմանք, թե անսպասելի ուրախություն և թե խորին ակնածանք, — հանդիպեց Հաջի Ուննիկ եֆենդուն Հաջու աղիկ կողակիցը — Նուրուջար հանըմը. շնչասպառ, նրան հանձնեց իր ձեռնափալարը Հաջին և ուղում էր արդեն ընդունարանը մտնել, յերբ Նուրուջար հանըմը կտրեց նրա ճանապարհը. Նուրուջար հանըմը մատները դրեց Հաջի Ուննիկի շրթունք-



ներին. — «Ը՛ս՛ս՛ս՛ս» մատները Հաջու շրթունքներին դնելով՝ խորհրդավոր ժպտաց նուենուֆար հանձմը. — «յա՛վսե, ոե.իՖ, ներսը մարք կա. .» «Լս՛վ կա» — չոր ցցվեց եֆենդին՝ դեմքին վախ ու սարսափ. ու չհամբերեց, դեպի իրեն քաշեց դուռը... ու մնաց քարացած. Հյուրասենյակում նստած ելին — յերեւակայում եք — Համո Համբարձումովիչը, բժիշկը և, — Հաջու համար ամենազարմանալին ու ամենաանսպասելին, ֆադաֆի պորեկսը (բարձրահասակ սպան)... «Ն՛, Շա՛ս պիտի լերկա՞ր սա սա սաղոյրյուհը» — ներս մտնելով հարց տվեց Հաջին՝ հերթով նայելով Համո Համբարձումովիչի, բժշկի և բարձրահասակ սպայի (քաղաքի պարետի) դեմքերին. բայց Համո Համբարձումովիչի, բժշկի և քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) դեմքերն անպատասխան թողին Հաջի Մանուկոֆ եֆենդու հարցմունքը: «Ն՛, երա՛նք, երա՛ր մեկսեկ րաա սղի առե՛նք» — ավելացրեց հաջին՝ ընդհանուր շփոթմունքը ցրելու ցանկությամբ: Ու մտան ճաշասենյակ:

Ճաշասենյակի ամենավերի դուռը, հաջի Ոննիկ եֆենդու կողքին նստած, լուռ ճաշում եր Մադութի Համոն: Մադութի Համոն ուտում եր պաղ, ջրանման, կանաչավուն «չորքա»: Ուտելով՝ Համո Համբարձումովիչը նայում եր պնակին. բայց Համո Համբարձումովիչի աչքերը կարծես չեյին տեսնում կանաչավուն չորքամ. պնակում, չորքայի փոխարեն, — մշուշ եր. անդո մի մշուշ — բաց տարածութուն: Հասկանում եր Համո Համբարձումովիչը, զգում եր. — այն, վոր կատարվում եր դուրս — կատարվում եր իրենից դուրս, կատարվում եր — իրենից անկախ: Սպասում եր՝ ի՞նչ կլինի: Մտածում եր՝ ինչո՞վ կվերջանա: Ու պատաս-

խան չեր դառնում իր այդ հարցմունքին Մադութի Համոն. ուղեղում — մշուշ եր. անդո մի մշուշ — բաց տարածութուն...

Արդեն վերջացրել էյին ճաշը, յերբ յեկավ ընկ. Վառդյանը: Ընկ. Վառդյանը ներս ընկավ շնչափառ: Յե՛վ ահա Հաջի Ոննիկ եֆենդի Մանուկոֆի համար, իր իսկ բնակարանում, պատահեց չտեսնված մի բան. Համո Համբարձումովիչը, բժիշկը և ընկ. Վառդյանը խնդրեցին Հաջուն, վոր նա թույլ տա իրենց առանձնաձև հարեան սենյակը: Հաջին, իհարկե, թույլ տվեց, թեկուղ և վո՛չ առանց դարձանքի, վար իր իսկ բնակարանում հյուրերն ուզում են ազատվել իրենից: Բայց և այնպես՝ — ընկելիք ի՞նչ, Հաջի՛. ընկեր ես... պիտի փաշես» — մտածեց Հաջին ու առաջնորդեց հյուրերին հարեան սենյակը: Մտան հարեան սենյակը Համո Համբարձումովիչը, բժիշկը և ընկեր Վառդյանը փակվեցին հարեան սենյակում: Իսկ Հաջին մնաց քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) հետ ճաշասենյակում. նայիրախառն ուռածրենով սկսեց զրուցել քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) հետ որվա անց ու դարձի մասին: Խոսում եր Հաջին քաղաքի պարետի (բարձրահասակ սպայի) հետ, բայց միտքն այնտեղ եր — հարեան սենյակում: Հասկանում եր Հաջին. դիտեր. այդ վայրկյանին հարեան սենյակում նիստ եր Տեղակա՞ն կոմիտեյի: Գիտեր բայց չեր հասկանում Հաջին, վոր այդ վայրկյանից պատմական վայր եր արդեն իր, Հաջի Ոննիկ եֆենդի Մանուկոֆի բնակարանը. վոր այդ վայրկյանին իր, Հաջի Ոննիկ եֆենդի Մանուկոֆի բնակարանում, հարեան սենյակում, կա-



տարվում էյին ինչպես իր, այնպես էլ ամբողջ նա-  
յիրյան ցեղի համար — ճակատագրական անցքեր:  
— Սյգվայրկյանին Համո Համբարձումովիչը, բը-  
ժելիք և ընկեր Վառուդյանը, այսինքն Կենտրո-  
նառնդեղասարդի Տեղական Կոմիտեն, այսինքն նա-  
սինքն նայիրյան տիեզերական հոգու Տեղական  
Սուբստանցիան իր դերքն եր վորոչում դեպի  
կատարվող դեպքերը, և այս տիեզերական հանդաման-  
քը չէր ըմբռնում Հաջին. Հաջին չէր հասկանում այս  
տիեզերական դեպքի ամբողջ նշանակությունը: Թե  
լ'ոչ վորոչում հանցին կատարվող դեպքերի մասին  
Համո Համբարձումովիչը, բժելիք և ընկ. Վառուդյանը  
հարևան սենյակում — Հաջի Մանուկով Եփենդին, ի-  
հարկե, չիմացավ և չէր էլ կարող իմանալ. բայց  
չուտով նա պիտի իմանար, և պիտի իմանար նաև այն,  
թե ի'նչ բարի պատեհությոն եր իր համար այդ թան  
կադին հյուրերի այդ ուրն իր մոտ դալը: Յեվ այս ա-  
մենը Հաջին պիտի իմանար ընդամենը մի շաբաթ  
անց, յերբ բժելի Սերգե Կասպարիչը շրջանային կո-  
միտար եր արդեն, իսկ Համո Համբարձումովիչը — Բա-  
ղաբային Խոքիքի նախագահ...

Տարրինակ, մութ, չհասկացաված դեպքեր պա-  
տահեցին նայիրյան այդ քաղաքում այդ շաբաթվա ըն-  
թացքում: Դեպքեր, վորոնք ծածկված են դադանիքի  
ու խորհրդավորության անթափանցելի քողով — և դրժ  
մար թե վորեւե մեկին յերբեմեցե հաջողվի վեր հանել  
այդ քողը և նայել կատարված դեպքերի իսկական առ-  
տառին: Այնպես վոր այստեղ մենք պիտի խուսափենք  
զանազան յենթադրությունների անելուց ու յեղբակա-

ցություններ հանելուց. պիտի պատմենք լուր այն, ինչ  
վոր մեզ հաջողվել և տեսնել սեփական աչքերով կամ  
լսել մարդկանցից, վորոնք մեր աչքին ունեն ճամարտա-  
խոսի անկաշառ կերպարանք: — Անցնենք այդ դեպքե-  
րին:

Սմինից առաջ հարկավոր և ասել, վոր այդ նույն  
մամանակ, յերբ Հաջի Ոնիկ Եփենդի Մանուկովի բնա  
կարանում հավաքված՝ կատարվող դեպքերի հանդեպ  
իր բռնելիք դերքն եր վորոչում Տեղական Կոմիտեն  
այդ նույն վայրկյանին քաղաքում արդեն կային մար  
դիկ, վոր վո'չ միայն արդեն վորոչել էյին իրենց դիր-  
քը, այլև փակցրել էյին քաղաքի պատերին իրենց այդ  
դիրքի մասին սոխատառ և նայիրատառ հայտարարու-  
թյուններ: Յեվ, կարեւորն այն և, վոր այդ հայտարա-  
րությունների տակ, ի թիվս այլ, մեծ մասամբ քաղա-  
քին անձանոթ, սոխերի ստորագրությանց, կային և  
յերկու ստորագրություն, վոր բավականին մտահոգու-  
թյուն էյին պատճառում վոչ միայն քաղաքի նիսիս  
բնակիչներին, այլև շատ ավելի պատկառելի մարդ-  
կանց. — Կ. Գարայանի և պ. Մարութեյի (Եսույյգ՝ Մա-  
րութե Դատտառալոյցն) ստորագրություններն էյին  
դրանք, վոր մեյիսի գլուխների նման ցցվելով այդ  
հայտարարությունների տակից՝ մի շարք պատկառելի  
նայիրցիների մեջ սկզբից և յեթ այն միտքն էյին ա-  
ռաջ բերում, վոր այդ մեյիսի գլուխներին հարկավոր և  
խիլել: Այդ հայտարարություններից բխող այս, վո-  
րոչ չափով իմպրեսիոնիստական ցանկությունն ավելի  
ևս խորացավ մի շարք նայիրցիների մեջ մի որ անց,  
յերբ քաղաքում տարածվել սկսեցին «մութ տեղ»-ի հետ



կապված վերոհիշյալ լուրերը. ասում եյին, վոր այդ լուրերը տարածում ե պ. Մարութեն. ինչպես ասել ենք արդեն՝ նույնիսկ կարծողներ կային, վոր այդ լուրերը տարածելում մատ ունի նաև ընկ. Վառոդյանը, յերեակայում եք՝ այն ընկեր Վառոդյանը, վոր ինչպես գիտենք՝ Տեղական կոմիտեյի անդամ եր վաղուց հետե և Համո Համբարձումովիչի անձնական բարեկամը։ Չգիտենք մատ ունե՞ր թե չե այդ լուրերը տարածելում ընկ. Վառոդյանը, բայց փաստը մնում եր փաստ. և այդ փաստն այն եր, վոր ինքն ընկ. Վառոդյանը գտնվել եր մի ինչ վոչ հայտնի ցուցակում, այսինքն վոչ քե հայտնի, այլ գաղտնի, վոր հայտնի յեր դարձել Կ. Դարայանի, այդ «Իսաի կուլտվոդ» նայիրցու շնորհիվ։ Դե արեք ու բան հասկացեք սրանից. և այն ել սա դեռ ամբողջը չե։ Բանն այն ե, վոր այդ ցուցակը, ինչպես ասում եյին՝ լրիվ չեր. չորս քերք պոկած եր այդ ցուցակից և այդ չորս քերքի չուրջն եր ահա, վոր կարո Դարյանն ամեն մի ժողովում բարձրացնում եր անասելի աղմուկ, անտանելի հարայհրոց։ Յեվ վերջապես ինչքան աղմուկ ուղում եր՝ կարող եր բարձրացնել Կարո Դարայանը, բայց ինչու՞ յեր կապում նա իր այդ աղմուկը Համո Համբարձումովիչի—Մագուքի Համոյի հետ։ Պ. Մարութեյին նայած՝ այնպես եր դուրս գալիս, իբր Համո Համբարձումովիչի և բժիշկ Սերգեյ Կասպարիչի ձեռքերի գործըն եր այդ հայտնի, այսինքն գաղտնի ցուցակի առաջին չորս թերթի անհայտ անհետանալը, բայց ո՞վ կը հավատա պ. Մարութեյին։ Ո, վոչ մենք չեյինք հավատա նման զրպարտությանց և չեյինք ել հավատում, չնայած վոր — այդ յես հաստատ գիտեմ — անգամ

ընկ. Վառոդյանն այդ առթիվ վորոշ շրջաններում արել եր բավականին յերկմիտ հայտարարություններ։ Բայց յնթադրենք անգամ, վոր վորոշ հիմք ունեյին պարոն Մարութեյի հայտարարությունները. հարց՝ ինչու՞ եյին Մաղութի Համոն և Սերգեյ Կասպարիչը, բժիշկը (յեթե միայն նրանց ձեռքերի գործն եր չորս թերթերի անհայտ անհետանալը)—ինչու՞ եյին նրանք ցուցակում քողել ինքզինքն քերքը վորի մեջ գտնվեց իրենց անձնական բարեկամի, իրենց Տեղական կոմիտեյի անդամի ընկ Վառոդյանի անունը։ Չենք հասկանում, մնում ենք չվարած, մնում ենք ձեռնաթափ։ Յեվ ասա՝ ինչու՞ պիտի շահագործված լիներ Վառոդյանը վերոհիշյալ հայտարարություններն անելով. մի՞թե ցանկալի յեր նրան իր անձնական բարեկամների, իր հետ միասին Տեղական կոմիտեյում նստող այդ պատկառելի ընկերների վարկաբեկումը.—իհարկե վոչ, կասե ամեն մի խելքը գըլխին անձնավորություն — չեք՝ կարող ցանկալի լինել, ինչքան ել վիրավորված լիներ ընկ. Վառոդյանը հայտնի ցուցակի յերեան դալով։ Համոզված պնդում ենք մենք այս, մանավանդ, վոր մի չաբաթ անց մի կտրուկ հայտարարությունով Տեղական կոմիտեն թյուրիմացության հետեանք հայտարարեց ընկ. Վառոդյանի հայտնի, այսինքն գաղտնի ցուցակում գտնվելու պատմությունը, այո՛ մի չաբաթ անց Տեղական կոմիտեն իր պատկառելի ստորագրությամբ հայտարարեց ու հաստատեց ի լուր հանրության, վոր ցուցակում գտնվել ե վոչ թե Վառոդյան աղգանունը, այլ—Բարության և վոր այդ Բարությանը վոչ մի կապ չունի ամենքին ավելի քան



հայտնի ընկ. Վառուդյանի հետ: Յեւ այդ հայտարարութիւնը լույս տեսնելու յերկրորդ օրը, — մի ամիս լորդ սպացուցեալ ևս, վոր իդուր էյին սլ. Մարուքեյի չարամիտ զբաղարտութիւններն ընկ. Վառուդյանի հաոյեկին, — ընկ. Վառուդյանը նշանակից քաղաքի ու շրջանի միլիցիայետ ու առաջին դործը, վորով միլիցիայում զբաղվեց ընկ. Վառուդյանը, յերևակայումս ևք՝ կարո Ռարայանի կորած դիտիկ վորոնումն եր, ասում ենք դիակի, վորովհետեւ ընկ. Վառուդյանի այդ նոր սրաչառնին անցնելուց ընդամենը յերկու օր առաջ հանկարծ լուր տարածվեց քաղաքում, վոր կարո Ռարայանը (վոր մինչև այդ բնաւում եր շրջանի գոյեի կոմիսար) — անհայտ չարագործների ձեռքով սպանված ե գիշերվա ժամի չորսին, իսկ թե ինչո՞ւ անսպասան «չորս»-ին — անհայտ եր, վոր վոր չգիտեր, բայց համառ կերպով ասում եր, վոր գեպքը պատահել ե գիշերը, ճիշտ այդ ժամին: — Գետառիին, սառուցի վրա (գետն այդպէս ուշ եր հալչում նայիրյան այդ քաղաքում) միլիցիան գտել եր արյուն կարմիր — կարմիր, քսամունի հետքեր. . . Բայց մենք առաջ անցանք ու չառացինք այն հայտնի, այսինքն գաղտնի ցուցակների մասին այն ամենը, ինչ վոր հայտնի յե մեզ: Մութ, մութ, խոր հրդաւոր պատմութիւն եր այդ պատմութիւնն, բնութեցող, — և մենք չենք կարող չհիշատակել այստեղ այդ պատմութիւն առթիւ այն ամենը, ինչ վոր լսել ենք ու գիտենք, ինչ վոր հայտնի յե մեզ:

Ինչպէս ասել ենք վերեւում՝ այդ պատմութիւնը այսինքն հայտնի (գաղտնի) ցուցակից չորս քերթի

կորչելու պատմութիւնը, մեզ համար միանգամայն անհասկանալի պատճառով մարդիկ կապում էյին այն հարցի հետ, թե դավառապետի տնից յեկնելով՝ ու՞ր էյին դնացել Համո Համբարձումովիչը և բժիշկը մարտի 2-ի գիշերը, ահա հարց, վոր մի չարաթ ամբողջ գանաղան փախսակաների նյութ եր տարիս քաղաքի նիսիս (ինչպէս Հաջի Ունիկ եֆենդին եր ասում) բնակչներին և, առաջին հերթին, — սլ. Մարուքեյին: Բայց մենք խցի ամենայն հանգստությամբ պիտի ասենք, վոր մինչև վերջն ել չեյինք հաւատում սլ. Մարուքեյի չարամիտ փախսականերին և չեյինք ել հաւատա, և այժմ այս տողերը դու չեյիր կարդա, ընթերցող, յեթե մեր աչքին բաւականին ծանրակշիւ մի հանգամանք չուտով չգար խախտելու մեր այդ անհողող հաւկտքը. բանն այն ե, վոր կարո Ռարայանը ևս, իր յեղերական վախճանից մի քանի օր առաջ, իմ, հեղինակիս, ներկայությամբ մի ունգամ հայ տարարեց մի բաւականին բաղձամարդ ժողովում, վոր տեսել ե այն յերեկո, ամէլի ճիշտ կլինի ասել՝ մարտի 2-ի գիշերը, ժամը մոտավորապէս 2-ին Համո Համբարձումովիչին և բժիշկին «մութ տեղի» պաշտոնայի հետ հինգհարկանի շենքից յեկնելիս: Հարց՝ ի՞նչ գործ ունեյին գիշերյա այդ ուշ ժամին այդ ակնածելի վայրում Համո Համբարձումովիչը և Սերգեյ Կապարիչը — բժիշկը. . . Հիշում եմ՝ յերբ տվեց այս հարցը կարո Ռարայանը Համո Համբարձումովիչին — դահլիճում, ուր տեղի յեր ունենում ժողովը, տիրեց անասարսուռ լուսթիւն, դարհուրելի դարգանդ. . . Բոլորը քար կարած սպասում էյին Համո Համբարձումովիչի պատասխանին: Թիւում եր, թե՛ յերբայա-



կան Յեհովայի նման, կամ ինչպես Ձեվսը կիրիւրի  
ահա Համո Համբարձումովիչը, — այդ, մենք կասե-  
լինք՝ նայիրյան Արամաղդը. — յերբայական Յեհովա-  
յի կամ հունական Ձեվսի նման ցասման կայծակ ու  
չանթ կթափե այդ յեղկ մահկանացուի գլխին, այդ  
վողորմելի մահկանացուի, վոր համարձակվում ե  
կասկածի տակ առնել նրա, Համո Համբարձումովիչ  
Ասատուրովի, Տեղական Կոմիտեյի նախադահի հեղա-  
փոխական Կոստոյունը: — Բայց յերևակայում եք  
— կայծակը չճայթեց, չանթը չչողաց, վոչ ել ամալո-  
ւր վորոտաց, այլ, պատկերաւոր ասած՝ խաղաղարար  
անձրեւ, յերկնային զովություն հորդեց նայիրյան Ա-  
րամաղդի աչքերից, հորդեց դառնաթախիժ արցունք...  
Ալեհեր գլուխը պրեզիդիումի սեղանին դրած (Համո  
Համբարձումովիչը պրեզիդիումի անդամ եր այդ ժո-  
ղովում) — դառնաթախիժ թախծեց, դառնացած լաց  
յեղավ Մաղութի Համոն — և ամբողջ դահլիճը, ուր  
ներկա ելին բավականին թվով սոյս զինվորներ ու  
մի քանի վակզալի բաշիրուզուկներ, ուր ներկա  
յեր նաև, — ո, խայտառակություն, — պ. Մարու-  
քեն, — այո՛, ամբողջ դահլիճը քար կտրած ահասա-  
րուռ նայում եր Մաղութի Համոյի հեկեկանքից ցընց  
վող, ալեհեր գլխին... «Փա՛ստ, փա՛ստ» — վեր ցատ  
կելով տեղից՝ դառնաձայն բացականչեց հեկեկանքի  
միջից Մաղութի Համոն: Բայց փաստ չկար. կար —  
մթին կասկածանք. միտի փաստանման բանը — կարո  
Դարբայանի ձեռքին գտնվող հայտնի, այսինքն գաղտ-  
նի ցուցակն եր, վորի չորս թերթերը, ինչպես ար-  
դեն գիտենք, — պոկված ելին ինչ-վոր անհայտ ձեռ-  
քով: — Իսկ կարելի չե արդյո՞ք, այդ չեղյալ թերթե-

րի վրա հիմնվելով՝ խայտառակության սյանը դամել,  
կասկածի տակ առնել մի պատկանելի նայիրցու մի  
ալեհեր հեղափոխականի՝ հեղափոխական Կոստու-  
րյունը: — «Փաստ» — դառնաթախիժ բացականչում եր  
արցունքից խեղդվող ձայնով Համո Համբարձու-  
մովիչը, ու պատերի լուծյունն եր միայն և դեմ-  
քերի վարմանքն ու ակնածանքը դառնորեն արձագան-  
քում Համո Համբարձումովիչի արդարություն հայ-  
ցող աղեկտուր ձայնին... Ահա իրողությունն,  
ընթերցող. փաստ չկար, կար մթին կասկա-  
ծանք: Գրում եմ այնպես, ինչպես տեսել ու  
լսել եմ յես, առանց յեղբակացություն հանելու,  
հանի՛ր, ինչ յեղբակացություն վոր կուղես, ընթեր-  
ցող. — Պիղատոսի նման մենք լվանում ենք մեր ձեռ-  
քերն այս մութ, անհասկանալի, անիմանալի գործից:  
Ասենք միայն այն, վոր փաստ չլինելու պատճառով  
Համո Համբարձումովիչն արդարացավ. անդամ ասում  
եր հետադայում, վոր յեթե կենդանի մնար Դարա-  
յանը — նրան դատի պիտի կանչեր, հեղափոխական  
դատարանի առաջ պատիվ պիտի պահանջեր նրանից  
ինքը, բայց, դժբախտաբար, Կարո Դարբայանն այնպես  
անսպասելի կերպով զոհ գնաց անհայտ չարագործների  
ձեռքից, և Համո Համբարձումովիչը մնաց չբավարար-  
ված:

Այո՛, մութը, կասկածելի, խորհրդավոր դեպքեր  
եյին, վոր տեղի ունեցան այդ շարաթվա ընթացքում  
նայիրյան այդ քաղաքում, և այդ դեպքերից ամենա-  
մութն ու ամենակասկածելին Կարո Դարբայանի մահն  
եր, նրա անսպասելի սպանությունն անհայտ չարա-



գործների ձեռքով: Յեւ իւրուր եր, իր՝ միլիցիայեանի բոլոր կարողութիւնները գործի դնելով, քրտնաթոր վերոնում նրա գիւղեր և նրան սպանողներին ընկեր վառողյանը, — նրանք չգտնւեցին: Վոչ միայն չգտնւեցին նրանք (այսինքն Կարո Դարայանի գիւղեր և Դարայանին սպանողները), այլև շատ շուտով կորցվեց, հայտնի չէ, թե նայիրյան այդ քաղաքացի ո՞ւր հեռացաւ ... պ. Մարութեն: Ընկ. Վառողյանը կասկած եր հայտնում, վոր, ամենայն հավանականութեամբ, Կարո Դարայանի սպանութեան հետ վորոչ առնչութիւն պիտի վոր ունենար պ. Մարութեյի անհետանալը. բայց այդ կասկածը կասկած եւ մնում եր և չէր կարող փարատվել, քանի զեռ չէր գտնված պ. Մարութեն: Իսկ թե ո՞ւր եր գտնվում պ. Մարութեն—միայն իրան եր հայտնի և մեկ եւ ծխականի վարժուհի, մեզ վեպիս առաջին մասից արդեն բաժանականին ծանոթ, որ. Սաքս-յիւն, վոր արդեն մի շարաթից ամբիւր յեր, ինչ յերեկոյան դարմբացներ եր կազմակերպել կայարանի մօտ գտնվող ինչ-վոր կասկածելի մի տեղում, ուր նա ինչ-վոր բաներ եր պարապում վակզալի բաշխուղակներին. այսինքն կայարանի բանվորներին հետ՝ որական մի ժամ պարբերաբար, տոն ուրերին—յերկու, անդամ յերեր ժամ: Բայց այդ մասին, իհարկե, վոչ վոր չգիտեր, չգիտեր անդամ ինքը՝ ընկ. Վառողյանը: Յեւ այժմ եւ քաղաքում այդ որ. Սաթոն եր ահա, վոր բռնել եր պ. Մարութեյի տեղը՝ զանազան լուրեր, զբաղարարութիւն ներ և մութ կասկածանքներ տարածելու գործում: Բայց որ. Սաթոյի և պ. Մարութեյի մեջ կա մի խոշոր տարբերութիւն. նախ՝ որ. Սաթոն կիւն եր, իսկ պ.

Մարութեն— տղամարդ (ամենայնայնայն տարբերութիւնը)—և ապա—վոր ամբիւր կարեւոր և դուշե, քան առաջին հանգամանքը, —այս հարցում մեր կարծիքը տարբերվում և Հաջի Ոսիկ Եփենդու կարծիքից, —որ. Սաթոն ամբիւր յեր զգուշ ու խորամանկ, քան պ. Մարութեն: Փաստ. թեկուզ հենց այն, վոր չնայած որ. Սաթոյի տարածած մի շարք բաժանական մութ ու պատասխանատու լուրերին վոչ վոր չէր խմանում այդ լուրերի խկտկան աղբյուրը. որ. Սաթոն այնպես եր տալածում այդ լուրերը, վոր լուրերի սկզբնական աղբյուրը, այսինքն որ. Սաթոն մնում եր անհայտ: Ահա այս եր պատճառը, վոր, չնայած ընկ. Վառողյանի թափած գերմարդկային ջանքերին—նրան, ընկ. Վառողյանին, այնպես եւ չէր հաջողվում այդ լուրերի առաջն առնել. իսկ այդ բանում ո՞վ կարող եր ամբիւր շահագրգռված լինել, քան ինքը միլիցիայետը, այսինքն նույն ընկ. Վառողյանը: Յեւ իր այս շահագրգռման համար, ասում են ընկ. Վառողյանն ուներ ամբիւր քան ծանրակշիւ պատճառներ: Որինակ՝ թեկուզ հենց այն, վոր այդ լուրեր տարածող աղբյուրը քաղաքում բաց եր թողել այնպիսի մի լուր, վորից նույնիսկ ընկ. Վառողյանի մտքերը, ինչպես ասում են, բիզ-բիզ կ'են կանգնում—եւ ո՞ւր մնաց ուրիշներին: Այդ լուրը տարածող աղբյուրը Կարո Դարայանի սպանութեան սովորվ քաղաքում տարածել եր, վոր գուր տեղի և պ. միլիցիայետն այնքան յեռանդուն կեբաղով վորոնում Դարայանին սպանողներին: Այդ աղբյուրին նայելով՝ միլիցիայետը Դարայանին սպանողներին կարող եր գտնել ... իրեն չափազանց մոտիկ, յեթե վոչ — հենց իր մեջ ... Այս-



պիտի ահա անստակառ լուրեր եր տարածում սը-  
տախոսութեան այդ անստակառ աղբյուրը, և նրան  
շտա թանդ կնստեր նման հանցադործութիւնը, յեթե  
նա ընկներ հեղափոխական իշխանութեան, այսինքն  
ընկ. Վառուդյանի ձեռքը: Բացի այս՝ ստերի այդ աղ-  
բյուրը տարածում եր լուրեր, վոր իբր թե քաղաքում  
նոր հաստատված հեղափոխական իշխանութիւնը,  
այսինքն Տեղական կոմիտեն հանձինս Համո Համբար-  
ձումովիչի, բժշկի, ընկ. Վառուդյանի և այլոց, աղատ  
ե արձակել, յերեակայո՞ւմ եք—գալառապետին, վոս-  
տիկանապետին և «Մուք Տեղի» գլխավոր վարիչին—  
ահա՛ թե ինչ: Յեւ մի՞թե այդ միևնույն աղբյուրը  
չե՞ր, վոր շրջանառութեան եր հանել մի այլ, վոչ պա-  
կաս անստակառ, զրպարտութիւն ևս այն մասին, թե  
քաղաքի պարետը (քարձրահասակ սպան) դատնի պահ  
վում ե—հենց ի՞նչ՝ Համո Համբարձումովիչի բնակա-  
րանում:—Այսպիսի լուրեր եր տարածում ահա կարս.  
Դարայանի սպանութիւնից և պ. Մարութեյի անհետա-  
նալուց հետո ստոր պրովոկացիաների (ինչպես ասում  
եր ընկ. Վառուդյանը) այդ աղբյուրը, այսինքն որ.  
Սաթոն, և այս լուրերն այնքան եյին ջղայնացնում ու  
անհանդատացնում քաղաքի հեղափոխական իշխանու-  
թեանը (Տեղական կոմիտեյին), վոր նա, այսինքն  
քաղաքի իշխանութիւնը (Տեղական կոմիտեն) հարկա-  
դրված յեղալ ի վերջո մի ընդարձակ հայտարարու-  
թիւնով պաշտոնապես հերքել քաղաքում տարածված  
այդ պրովոկացիաները, վորոնք, ինչպես ասված եր  
հայտարարութեան մեջ, նպատակ ունեն փորել ժող-  
վրդական իշխանութեան դեռ մոր հաստատված հիմքերը  
և վերականգնել ցարական լպիրշ ռեժիմը: Այսպես

եր ասված այդ հայտարարութեան մեջ. ալեկին՝ ժողո-  
վրդի թշնամի և ցարական ստոր վարձկան եր հայտա-  
րաւում այդ հայտարարութեան մեջ նման պրովակա-  
ցիաներ տարածողը, իսկ հայտարարութեան ամենավեր  
ջում ասված եր, վոր, ճիշտ ե, հեղափոխութեան թշնա-  
մի մի շարք ցարական վարձկանների ջանքերով բան-  
տից փախած են յեղել դավառապետը, վոստիկանա-  
պետը, «Մուք Տեղի» գլխավոր վարիչը և քաղաքի  
պարետը, բայց հեղափոխական իշխանութեան (կարգա-  
Տեղական կոմիտեյի) ջանքերով, նրա ձեռք առած կրտ-  
րուկ միջոցներով ժողովրդի բռնամիները գտնված են և  
վերստին փակված բանտում: Յեւ ճիշտ վոր, ձերբա-  
կալված և փակված եյին, բայց — «վո՞ր բանտում» —  
հարցնում եր որ. Սաթոն խորամանկ: Ու ինքն ել պա-  
տասխանում եր հարցին՝ «Զինվորական բանտում»:—  
Լավ, ինի դի՛նիսրական, ի՞նչ տարբերութիւն,—կա-  
րող եր ասել միամիտ խոսակիցը, և յեթե այդպես ասեր  
միամիտ խոսակիցը—որ. Սաթոն բաց կաններ նորից  
իր սուտերի տոպրակը և արագ—արագ, դանաղան «լսել  
իմ»—ներով ու «ո՞վ գիտե»—ներով քողարկված, ման-  
վածապատ նախադասութիւններ կթափեր խոսակցի  
դիւին—կարծիքներ ու կասկածներ: Չտեսնված լեզու-  
ուններ այդ ծամը կտրած որիորդը, վորի «որիորդու-  
թիւնը» վաղուր արդեն կասկածի յեր յենթարկել ընկ.  
Վառուդյանը: Դիտեր՝ ո՞ւմ հետ պետք ե խոսել և ո՞ւմ  
հետ ի՛նչ լեզվով պետք ե խոսել: Ինչպես ասում եյին  
քաղաքում՝ «դարմանի տակի ջուր» եր իսկ վոր որ.  
Սաթոն. տեսից՝ անմեղ, ներսից՝ սատանա: Յերեա-  
կայո՞ւմ եք՝ անգամ վերոհիշյալ «վերստին ձերբակա-  
լութեանց» մասին որ. Սաթոն տարածել եր քաղաքում



անհամարալի ստեր. տարածել եր, վոր իբր վերոհիշյալ անձնավորություններին՝ վերստին ձերբակալել» և վոչ թե քաղաքի իշխանությունը (այսինքն Տեղական կոմիտեն), այլ զինվորական. — յեկեք ու հավատացեք... Մի խոսքով՝ ստերի կատարյալ սողորակ եր դարձել կարո Դարայանի սպանությունից և պ. Մարտիկի անհետանալուց հետո այդ ուր. Սաթոն և մենք ցավում ենք, վոր նա ժամանակին չընկալ հեղափոխական իշխանության, այսինքն ընկ. Վառդգյանի ձեռքը:

Իսկ սուտը սուտ, ուստի անստիպան ատածն ասում ե. — «Ձիք ծուխ առանց կրակի»: Ի հարկե, ուստի ասական այդ առածը յեղս կարելի չե այնպես շուտ տալ, վոր դուրս դա, — սատանան դիտե, թե ինչ. վոր դուրս դա այն, ինչ ով ուզում ե՝ նայած քեֆին ու ճաշակին: Որինակ՝ այդ սատածից յեղնելով կարելի չե ասել, վոր ներկա դեպքում «ծուխը» ուր. Սաթոյի տարածած ստերն ելին, իսկ «կրակը» — հենց ինքը՝ ուր. Սաթոն... Յեվ սա այսպես էլ եր, վորովհետև վերստին ձերբակալությանց որից մի յերկու ուր անց այնպիսի մի ծուխ տարածեց այդ կրակը, այսինքն ուր. Սաթոն, վոր բոլոր քաղաքացիք, մանավանդ Համո Համբարձումովիչը, բժիշկը և ընկ. Վառդգյանը ստիպված էլին քրեները պահել, վորպեսզի չխեղդվեն այդ ծխից, ավելի լավ ե ասել՝ այդ ծխանման դարչանոտությունից, վոր տարածում եր այդ «կրակը»: Իսկ այդ ծուխը կայանում եր նրանում, վոր ուր. Սաթոն, ո՞վ դիտե ինչ՞ անխմանալի միջոցներով ու ճանապարհներով, եր ձեռք բերել ինչ—վոր մի միփական նամակի պատճեն և կարգում եր սրան—նրան,

այսինքն նրան, ում վրա ինքը վստահություն ուներ և դրանք էլ իրենց հերթին տարածում ելին, ում վրա վոր վստահություն ունեյին, վերջ է վերջո այնպես եր դուրս դալիս, վոր վոչ վոք չդիտեր, թե ո՞վ ե այդ լուրերի իսկական ակը. մեկը լսում եր մյուսից և սլատմում եր մյուսին—ասա և ամբողջը: — Ինձ էլ ե կարդացել այդ միփական նամակի պատճեն ուր. Սաթոն, բայց յես, դժբախտաբար մոտավորապես միայն հիշում եմ հիմա այդ միփական նամակի բովանդակությունը: Հետաքրքիր նամակ եր այդ նամակը, ընթերցող, բայց ավելի հետաքրքիր ելին ուր. Սաթոյի կոմենտարիաներն այդ նամակին: Յեվ ավելի քան հետաքրքիր եր այն (և այս հանգամանքը մինչև վերջն էլ ինձ համար չլուծված առեղծված մնաց), թե ինչպե՞ս եր այդ նամակը, հասցեյադրված լինելով իրենու Մուսուխի Համոյին, — ընկել ուր. Սաթոյի ձեռքը. նու, յեթե վոչ իսկական նամակը, դոնե պատմենք: Գուցե Սաթոն հենց ինքն եր հնարել այդ միփական նամակը և իր հնարածից պատմեն հանել, վորպեսզի յուր լցնի իր առանց այդ էլ բավականին լավ աշխատող անիվին, այսինքն—լեզվին... Ո՞վ իմանա: Մենք պատմում ենք այն, ինչ վոր լսել ենք իրենից—ուր. Սաթոյից, և թողնում ենք, վոր ընթերցողն ինքը հավատա կամ չհավատա ուր. Սաթոյին:

Այդ միփական նամակը գրված եր զինվորական բանտից և հասցեյադրված եր Համո Համբարձումովիչ Սատուրովին: Նամակի հեղինակն եր—(յեթե ի հարկե, ընդունենք, վոր նամակն իսկապես գրված եր մեկի կողմից և վոչ թե հնարված ուր. Սաթոյի ուղեղում)



—վերստին ձերբակալված գավառապետը: Այստեղ կարելի չէ ալելագնեւ որ. Սաթոյի հետաքրքիր կոմեդիան: Որ. Սաթոյի ասելով՝ նամակը դրելուն դավառապետին առիթ է տվել վերստին ձերբակալութեանը, վորի մեջ, դավառապետի կարծիքով՝ անշուշտ մատ ունեցել է Մաղութի Համոն: Որ. Սաթոն ևս այս հարցում համամիտ էր դավառապետին, իսկ թե ինչու՞ չէ Մաղութի Համոն մատ խառնել գավառապետի վերստին ձերբակալութեանը—դա պարզ է ինքն ըստ ինքան ասում էր որ. Սաթոն, թեկուզ մեղ համար դա այնքան էլ «պարզ չէ ինքն ըստ ինքան», ինչպես ասում էր որ. Սաթոն: Բայց անցնենք նամակին: Հիշում եմ՝ նամակն սկսվում էր «—Հարգելի պ. Ամո Ամբարձումովիչ» խոսքերով և յետ այդ խոսքերը կարդալիս, չգիտեմ ինչու, իսկույն պատկերացրի դավառապետի՝ չոր, դեղնածխակապես վոր սոխի գլուխը, դայրացկոտ զինվորականի նույնպես չոր, պաշտոնական հայացքը և ցանցառ մորուքը: Զայրույթի ու ցասման ահասարսուռ բոթ լիջեց դեմքիս դավառապետի այդ հասարակ, քաղաքավարի խոսքերից, և թերևս մասամբ ել իմ այս հոգեկան չփոթմունքն էր պատճառը, վոր յետ հիմա այնքան էլ լավ չեմ հիշում նամակի առաջին նախադասութիւնները: Հիշում եմ այն, վոր նամակն սկսվում էր կալիքաւորական նախադասութիւններով: Նամակի առաջին իսկ խոսքերից յերևում էր, վոր հաստատ կերպով վճռել է կյանքի ու մահվան դրոշի դիմել այդ կալանաված առյուծը, այդ հուժկու զինվորականը, վորի պատահական անկումից ոգտվելով՝ ինչպես ասված էր նամակում, քացի ելին տալիս նրա աղնավան կո-

ղերին անդամ յերկարականջ քեռիները: Այսպիսի մի այլաբանական նախադասութիւնով էլ, կարծեմ, հենց սկսվում էր դավառապետի նամակը. նախադասութիւնը չեմ հիշում, բայց հիշում եմ որ. Սաթոյի կոմեդիան «յերկարականջ քեռիների» մասին. նրա կարծիքով այդ ալլաբանական խոսքի տակ պետք է նապաստակներ հասկանալ, այնինչ իմ կարծիքը բավականին տարբերվում էր որ. Սաթոյի կարծիքից: Այո, ինչու՞ նապաստակներ, և վոչ ուրիշ մի բան... Բայց անցնենք նամակին: Կրկնում ենք՝ մենք բառացի չենք հիշում այդ միջակամ նամակի բովանդակութիւնը, բայց բավականին լրիվ հիշում ենք նամակի ընդհանուր լիմաստը, վոր դժբախտաբար պիտի պատմենք մեր տկար լեզվով, տեղ-տեղ միայն բառացի մեջ բերելով նամակի այն ցայտուն տողերը, վոր այն ժամանակ մեկտեղին մեր ուղեղում և մնացին այնտեղ— և, կարծում ենք, վոր այդպես էլ մեկտեղ կմնան այնտեղ— ընդամենը ու հավիտյան:

Նամակն ինչպես ասացինք, սկսվում էր դառնադին հոխորտանքով, բայց դնալով փոխվում էր դառնաթախիժ տրտունջի և նորից ծայր էր առնում հոխորտանքն ու մեղադրանքը և, նորից տրտունջի դառնութիւն փոխվելով՝ վերջանում էր հուշով, վոր «ամենակարող տերը» կվերականգնի արդարութիւնն ահեղ դատաստանի որը, վորին նա հավատում էր այնպես, ինչպես հավատում է նորին կայսերական մեծութեան մոտաւոր հաղթանակին: Բայց այս չէ ելակարգ և ամենահետաքրքրականը այդ նամակում, այլ այն թե ի՞նչ լեզվով էր այդ նամակում խոսվում Համո Համ-



բարձրագույնի և մանավանդ բժշկի—Սերգե Կասպարի-  
չի մասին, այստեղ է ահա նամակի ամենալուրջին  
ու ամենաշուքալիին և նամակի այդ տողերն էլին  
ահա, վոր հատուկ բախականություն էլին պատճա-  
ռում որ. Սաթույին, վառում նրա հայացքը ու թքա-  
կալում նրա, ինչպես ասում էլին քաղաքում—շնական  
շրթունքները:—«Մի՛քե դուք չեյիք, հարգելի Ամո  
Ամբարձումովիչ» ասվում էր այդ միջակա նամակում  
«վոր լիզում էյիք իմ պնակները և բռնում իմ շուքան  
առնեմ անգամ, յերբ իմ բնակարանն էյիք գալիս —և  
միքե՞՞նք անգուգալան դուտոր Սևաչյա. Պրիմա-  
դոնան չե՞ր, վոր հանգստացնում էր իմ, ծանր պաշ-  
տոնից ֆայլոված, ծերութունից հյուծված, վաստակած  
զոներ... Իսկ ո՞վ եք, ո՞վ եք, արդյոք», — ասվում էր ապա  
այդ միջակա նամակում, — «վոր նայիլան գեղեցկու-  
հիներ եք մուսակարարում գաղտնի բաժանմունքի վարիչ  
Անգելեյելին, յերբ վոչ այսուրիս «Շրջանային կոմիտե»  
Սերգե Կասպարիչը, յերեկվա ֆաղաֆային բժիշկը... Իսկ ո՞վ  
եք, — ասվում էր նամակում, — վոր Տեղեկան Կոմիտեյի  
կնիքով յեվ «Տեղական Կոմիտե» ստորագրււթյաւք անաբե-  
կող նամակ ուղարկեց յերկու տարի առաջ մեր ֆաղաֆու  
հսկայական պրակտիկա ձեռք բերած բժիշկ Կարչելսկուն,  
վորպեսզի վերջինս իսկույն յեվ յեր բողոքի մեր ֆաղաֆը  
յեվ հեռանա ստատուսների գիրկը—ո՞վ եք այդ անողը,  
յերբ վոչ նույն ինքը, ձեռ (այսինքն Մագուրի Համոյի.  
Յե. 2.) անգուգալան բարեկամ, ներկայումս «Շրջա-  
նային Կոմիտե», Սերգե Կասպարիչը, նախկին ֆաղա-  
ֆային բժիշկը... Յեվ ո՞վ եք, վոր—ասվում էր ապա  
այդ զարմանալի նամակում,—իր տան արտաբնույն տախ-  
տակները քակարդի նման հարմարեցնելով՝ որք ցերեկով

իր տան արտաբնույն խեղդեց իր հարազատ, խելագար-  
ված կնոջը, վորպեսզի ազատի նրանից, իր մի ավելորդ  
բախտից. — ո՞վ եք, ո՞վ եք այդ ամենի դիմադրող  
նեղի-  
նակը, յերբ վոչ — ելի ինքը, նույն ինքը, բժիշկ Սերգե  
Կասպարիչը, Ձեռ Տեղական Կոմիտեյի անդամը, ներկա-  
յումս «Շրջանի կոմիտե» բժիշկ Սերգե Կասպարիչը...  
Իսկ դո՞ւք, — զիմեղով իրան՝ Համո Համբարձումովիչին՝  
ասում էր ապա զավառապետը, ոչսինքն միջակա  
այդ նամակը, — դուք չե՞յիք միքե, հարգելի Ամո Ամբար-  
ձումովիչ, վոր իմ ստորագրա պատշտնյա, շրջանի նաչա-  
նիկ Շմերկինգի միջոցով ձեռ «Լույսի» պահեստներից ա-  
բազներով նավթ էյիք ուղարկում մեր յեվ մտնավանդ ձեռ  
դարավոր վոսխիսին, անոթներին, յեվ վոսխիներ դիզում  
մեր ու ձեռ յեղբայրների քալած ծով արյան գնով... Դո՞ւք  
էյիք, հարգելի Ամո Ամբարձումովիչ, դո՞ւք, — յեվ իզուր  
եք դուք այսուր բռնեք ֆում ինձ, ծերուկիս, մոտանալով  
այն տղուհացը, վոր տարիներ շարունակ վաշելի եք իմ  
լիստոս սեղանից...»: Այսպիսի ահա չլաված ամբաս-  
տանություններ կալին իրա—Համո Համբարձումովիչի  
և բժիշկ Սերգե Կասպարիչի հասցեյին այդ միջակա  
նամակում, և մենք չենք կասկածում, վոր այդ միջա-  
կան նամակը հետևանք չեր որ. Սաթույի փչացած ու-  
ղեղի Այս, չես չեմ ել կասկածում, վոր այդ միջակա  
նամակը կարող էր այլ աղբյուր ունենալ, քան որ. Սա-  
թույի փչացած ուղեղը, վոր ի բնե փչացած լինելուց  
բացի՝ տարիներ շարունակ կրել էր իր վրա մի ավելի  
ևս փչացած, ավելի քան շնական ուղեղի— պ. Մարու-  
քեյի ուղեղի — աղղեցությունը:

Ինչեւ, ընթերցո՞ղ... Մուկ ու խորհրդավոր պատ-



մութութուններ ելին դրանք, վոր մինչև վերջն ել ինձ, հեղինակիս համար աշխատեալ ել մութ մնացին ու մնացին խորհրդավոր: Հիմա լիլ, լերբ աշտեղ նկարագրած դեպքերից անցիլ են արդէն բավականին տարիներ, չերբ բավականին ջուր ե հոսել, ինչպես ասում են, պատմութեան ջրաղացի անլվին ե մեր նկարագրած դեպքերից ու անձնավորութիւններից շատ շատերն արդեն պատմութեան, ուշաինքն անգոյութեան գիրկն են անցել—հիմա անգամ, ընթերցող, չերբ յիս մտքով շուռ եմ գալիս, դառնում եմ լետ ե աշխատում եմ վերհիշել ու հասկանալ աշն ժամանակ կատարված դեպքերն ու պատմութիւնները—այդ դեպքերն ու պատմութիւններն ինձ պատկերանում են, ինչպես պղտոր մի հոսանք, մութը մի գետ, վոր անցնում ե հորդած ե խեղդում իր դեմն առնել ցանկացող ամեն մի խթան ու արգելք: Հիշում եմ՝ մի անգամ, չերբ յես դեռ յերախա ելի, հորդել եր մեր այդ նկարագրած քաղաքի գետը. քիշեր եր, չերբ յես ու չեղբայրս, տնից փախչելով, գնացինք հորդած գետին նայելու: Մութն եր, կարծես մազուք ելին քսել լերկնքին, ու հոսել եր մազուքը յիրկնքից ե ծածկել քաղաքը, փողոցները, շինքերն ու մարդկանց: Մենք ապրում էինք Վարդանի կամուրջի մոտերքը, բերդի տակ, ե տնից իջնելիս մենք կարծում ելինք, վոր կհասնենք գետափնյա փողոցը ե աշտեղից կնաչենք հորդած ջրին: Բայց մենք չարաչար սխալվեցինք: Մեր տնից դեպի հիշալ փողոցն եր լինում ծուռ ու մուռ մի արահետ. դեռ նոր ելինք շուռ յեկել այդ քարքարոտ արահետի վերջին վոլորտը, վորից հետո արահետն ուղիղ դեպի գետափնյա փողոցն եր իջնում, չերբ մեր աչքերի առաջ փռված խավարի

մազուքը բաժանվեց յերկու մասի. վերը մուգ, իսկ ներքեւ բաց գույնի մազուք եր, վոր հազիւ եր տարբերվում վերի մազուքից: Վարի համեմատաբար բաց գույնի մազութը—հորդած գետն եր, ջուրը, վոր լցրել եր գետափնյա փողոցն ու ծանր շնթուկել՝ լաչն ու ահավոր, ինչպես մի խռատակալան վիշապ: Մի ծանր, ճնշող, դեպի իր գիրկը քաշող խոնավութիւն եր շնչում հորդած գետը, ու յիս կպչում ելի չեղբորս, վոր ինձ իր գիրկը չքաշի, չխեղդի, կուլ չտա խռատակալան այդ վիշապը: Դեմը, բաց գույնի մազութի խոնավ գրչից յեղնելով՝ իր համեմատական մուգութեամբ հեղ գհետե լուծվելով վերի մութ մազութին՝ տեսիլանման յերերում եր ահեղի մի սեւություն, հակա մի քարակույտ: Վարդանի կամուրջն եր այդ, վոր սեին եր տալիս մազութանման մշուշում: Մեր մոտ կանգնած մ. րդիկ վիճում ելին, թե կդիմանան արդոք Վարդանի կամուրջը հեղեղած ջրի ահեղի հոսանքին, թե վոչ. կային, վոր կարծում ելին կդիմանա, ու կային, վոր կարծում ելին, թե վոչ: Այդ միջոցին եր ահա, վոր գետի վերի կողմից, ծանր վողողած հեղեղատի միջից, լավեց զարհուրելի, սիրտ ճեղքող, անպատմելի մի ճիչ, ու ճիշտ նույն վայրկյանին սրընթաց հեղեղատի վրա յերեաց փոքրիկ փոքրիկ, վախկոտի պուշ աչքի նման ահաբեկված թարթող, սրընթաց մի կրակ: Եես ավելի պինդ սեղմվեցի չեղբորս, գրկեցի նրա վոտքը. շուրջս հավաքված մարդիկ բարձրացրին մի ահախառն աղմուկ, շարժիցին տեղերում ու, չգիտեմ ինչու, հաչհոյեցին իրար. աչք ժամանակ մի վերջին անգամ ես խոնավ հեղեղատի ծանրանիստ մազութի միջից լավեց զարհուրելի սրտակեղեք ճիչը. վախկոտի աչքի պես ահա-



բեկված թարթող պուշ կրակը սրընթաց սուբաց դեպի Վարդանի կամուրջի սեասե ուրվականը — և ամեն ինչ կորավ, լոկեց, սուզվեց մագուլթանման հեղեղատում: Պարզվեց, վոր քաղաքի գետափնյա փողոցներից պոկված մի նավակ եր դա, վոր հոսանքի մեջ ընկնելով՝ քշվել եր դեպի Վարդանի կամուրջը: Յեղաբոս կողքին կպած՝ դողալով տուն յեկա չես, պառկեցի մորս կողքին — և ամբողջ գիշերը մինչև լույս իմ մանկական ուղեղի միջից ծանրանիստ ընթանում եր հորդած գետը, ուղեղիս ահաբեկված մագուլթում կախված՝ որորվում եր Վարդանի կամուրջի սեասե ուրվականը, ու այդ սեասե ուրվականին դիպչելով՝ սրտակեղեք մի ճիչ եր արձակում վախկոտի աչքի պես ահաբեկված թարթող, պուշ կրակը: Առափնյայան արթնանալիս իմ առաջին գործն այն չեղավ, վոր չես շնչակտուր վաղեցի դեպի գետը և — ո՛, դարձանք և ուրախություն, տեսա, վոր գետափնյա փողոցից արդեն քաշվել եր առաքելական վիշապը. գետն իր ավերն եր մտել և հոսում եր հանդարտ, իսկ Վարդանի կամուրջը գետի մեջտեղն արքայաբար նստած հորացնում եր իր թրջած կողերը չեղող արևի պայծառ ճառագայթների ներքո... Մանկական միամտությունամբ նայեցի Վարդանի կամուրջի կողերին դիպչող մթափրփուր ջրին, կարծելով, վոր այնտեղ կը գտնեմ վորև հետք գիշերվա սրընթաց սահող նավակից և անգամ, — ո՛, մանկական անմեղություն, — վախկոտի պուշ աչքի նման ահաբեկված թարթող այն կրակից... Բայց վնչ մի հետք, իհարկե, չկար, և չեր ել կարող լինել այդ բոլորից: Վարդանի կամուրջն եր միայն, վոր արքայաբար կուրծքը դեմ եր տվել մթափրփուր ջրերին... Մանկությունս որերին կատարված

այս ինքնին աննշան դեպքից անցել են համարյա քսանից ավելի յերկար ու ձիգ տարիներ, բայց չես հիշեցի հանկարծ ինքնին աննշան այդ դեպքը՝ նայիրյան մեր նկարադրած քաղաքի վերոհիշյալ դեպքերն ու պայմանները մտաբերելիս: Իսկ պատահական բան ե տրդվեց, չեք մարդ այս կամ այն դեպքի կամ պատմության առիթով հիշում ե մի ուրիշ, այլ դեպք կամ պատմություն: — Իհարկե, պատահական բան չե, ընթերցող — և խորը, խորը, խորագույն իմաստ կա նման, դիտական տերմինով ասած՝ գաղափարների տառցիաղիայում, և ներկա դեպքում այդ խորագույն իմաստն ինձ համար պարզ ե ավելի, քան արևի լույսը: Յեվ իրոք. իր ավերից յեկած, հորդած գետ չե՞ր միթե այն որերում նայիրյան այդ քաղաքի կյանքը, մի կյանք, վորի վրա, ինչպես հայտնի չե քեզ, ընթերցող, վաղուց հետե կախված եր մագուլթանման մեուքը, վորը վաղուց հետե ծածկել եր, ինչպես հայտնի չե քեզ, նայիրյան այդ քաղաքն ու բնակիչներին, շենքերն ու մարդկանց: Հեղեղել եր կյանքը, յելել եր այդ որերին իր սովորական ավերից և, թերևս, իզուր եր Կառո Դարայանը փորձել լույսի նշույլ մացնել, վերոհիշյալ դժբախտ նավաստիի նման քարել իր տառամ կրակը, մագուլթանման մուծում: — Ո, պիտի իմանար, պիտի հասկանար այդ Կարո Դարայանը, վոր զարնվելու չե իր նավակը «Վարդանի կամուրջի» արքայանիստ քարակույտին, վոր վաղուց սովոր եր արդեն իր քարակերտ կուրծքը դեմ անել ամեն հոսանքի ու հեղեղատի: Յեվ ճիշտ վոր. վերը նկարադրած դեպքից հետո չես հեռացա նայիրյան այդ քաղաքից և վերադարձա մի տարի անց, ու ի՞նչ. նոյնն եր ապավորությունս, ճիշտ



նույն տպավորութիւնը, վոր յես ստացել ելի մանկութիւնս ուրերին՝ հորդած գետը տեսնելու գնալու հաջորդ առավոտը. ճիշտ այն ժամանակվա նման յես տեսա, վոր համարյա թե իր սովորական ափերն եմտել նախրջան այդ քաղաքի առօրյա կլանքի այն ժամանակ այնպես մթափոփուր հորդած, հեղեղած գետը — և նույն ակնածանքով ու ահավոր հիացմունքով յես տեսա մեր ամենահարգելի Մազուրի Համոյին, վոր, ինչպես գետի հորդելուց հետո Վարդանի կամուրջը, արքայակերպ կեցել եր կլանքի արդեն բավականին հանդարտած, համարյա իր ափերը մտած հոսանքի մեջտեղը և ալլես իզուր ելին նրա, այսինքն Մազուրի Համոյի, հաստակալան ղիբի քարակերտ պատերին դիպչել փորձում արդեն իշած գետի մի քանի մանրիկ, մթափոփուր ալիքները... Բարեբախտաբար այլևս լերեխա չեյի յես այդ ժամանակ, վորպեսզի այդ լըրճուկ (ընկ. Վառդգանի խոսքով ասած) ալիքների փրփուրում փնտրելի ինչ-վոր նավարեկման հետքեր: Որ. Սարոն եր միայն, վոր դեռ շարունակում եր տարածել քաղաքում իր անսպառ ստերն ու պրովակացիաները. — բայց ել հիւ եր որ. Սաթոյին, այդ «ծամը կտած լըբին», կարևորութիւն տվողը: Մազուրի Համոն կար ու կանդնած եր ելի, ինչպես Վարդանի կամուրջը, անսաստ ու քարակերտ: Կանգնած եր նախրջան այդ քաղաքի ու իսկական, այո, համարյա քե մարմնացած Նախրիի, այսպես կոչված, «գրավված վայրերի» կենտրոնում, վորպես «Ընկերայան» լիազոր ներկայացուցիչ, Տեղական Կոմիտեյի յեվ Քաղաքային Խորհրդի նախագահ, Զինվորական Բարձրագույն Ասյանի անդամ — և ալլն, և այլն, — և նրա, Մազուրի Համոյի ուղեղում ելի նախրջան

եւ ու հավիսեմականը՝ արդեն մարմնավորել սկսող յեւիկը Նախրի...

Շատ ջրեր ելին հոսել նախրջան այդ քաղաքի և ընդհանրապես Նախրիի ու աշխարհի վրայով այդ մի տարվա ընթացքում, չերբ յես բացակայում ելի քաղաքից ու Նախրիից, և ամենանշանավորն ու կարևորն այն եր, վոր այդ ջրերի հետ մեկտեղ հոսել ելին նախրիի ստիական բանակները Նախրիից ու այդ քաղաքից, և Նախրին ու քաղաքը ճնացել ելին Մազուրի Համոյին ու նախրիցիներին. չերազյալը, կարծես, յերկրային եր դարձել. Մազուրի Համոյի ուղեղից սահելով՝ մարմնավորվել եր կարծես, յերկրը Նախրի: Հավաքել եր «Ընկերայանը» յեվ գրավված վայրերն եր ուղարկել բազում ու անհամար նախրյան ռազմիկներ. դարերի մուծից, մշուշից յենելով՝ հառնել եր, վերջապես, նախրյան վոգին. դրավել եր շեներ ու քաղաքներ. բռնել եր բերդը: Անթիվ տարիներից, դարերից հետո վերջատին նախրյան դարձած Առաքելոց յեկեղեցում նախրյան հնամյա բարբառով աստվածահաճո պատարագ եր անում արդեն տե-Հուսիկ Բանանան — Խաչագողը, ու բերդի ամենաբարձր աշտարակի վրա յեռագույն դրոս պարզած՝ բերդի հրամանատարն եր արդեն ընկ. Վառդգանը: Քաղաքի ու շրջանի, արդեն ամբողջովին նախրյան դարձած, դպրոցների վարիչ եր Արամ Անսոնիչը, դպրոցի (այսինքն ռեալականի) տեսուչը, իսկ Գեներալ Ալոբը, Հայի Ոստիկ Եֆենդի Մանուկոֆը, կոչակար Սիմոնը — Կուրբի Մեյմունը, մանրավաճառ Կոլոպոտյանը և շատ ու շատ ուրիշ պատկանելի նախրցիներ դարձել ելին Քաղաքային Խորհրդի անդամներ: Մենակ Մեռելի



Յեմովն եր իր տեղը մնացել։ Քոռ Առուքի հետ մեկտեղ  
նա ելել չայ ու կալքաւ եր ծախում վաղկալի մեղդանում,  
և վոչինչ՝ գոհ եր իր վիճակից։ Մոռացանք Ոսեի Նարի-  
մանովին։ հաշտարար դատավոր Ոսեի Նարիմանովը  
միանգամայն լքել եր իր հաճախար դործունեյութունը  
և բժիշկ Սերգե Կասպարիչի հետ միասին դարձել եր  
Զինվորական Գերագույն Ասյանի անդամ, այսինքն մե-  
նակ ինքը, Ոսեի Նարիմանովն եր՝ անդամ, իսկ բը-  
ժիշկ Սերգե Կասպարիչը—այդ Գերագույն Ասյանի նա-  
խագահն եր, քաղաքի ու շրջանի ամենաազդեցիկ մարդը,  
այո՛ նուչնիսկ ասողներ կային, վոր ավելի ազդեցիկ  
քան ինքը՝ Մագուքի Համոն։—Բայց մենք, իհարկե,  
չենք հավատում նման յերեխայամիտ կարծիքներին։  
Այսպիսով, ինչպես տեսնում եք, ամեն ինչ փոխվել եք  
և ընդունել միանգամայն նայիրյան կերպարանք։ Նա-  
յիրի՛ն եր, հին, յերազայլ, հավիտենական Նայիրին,  
վոր տարիների մոռոթից, մշուշից յեւած՝ առել եր իրա-  
կան կերպարանք։ Յեւ ամեն ինչ լավ եր գնում, նուչն-  
իսկ կարելի յե ասել, վոր կաճախլալ հանգիստ ու խա-  
ղաղություն կտիրեր նայիրյան այդ քաղաքում և շըր-  
ջանում, յեթե չլինեյին մի շարք սոռ, անպատկառ նա-  
յիրադավանան մարդիկ, վորոնք խանդարում եյին նո-  
րասեղծ նայիրապետության հանգիստը։ Յեւ ո՞վ գիտե՞  
կկատարվելի՞ն արդյոք հետագա դժբախտ ու ահավոր  
դեպքերը, յեթե չլինեյին այդ սոռ, անպատկառ, նայիրա-  
դավանան մարդիկ։ Յերևակայում եք՝ դրանք, այդ սոռ,  
դավանան, անպատկառ մարդիկ դեմ եյին «գրավված վա-  
րեք» պաշտպանության։ Ինչ-վոր խաղաղություն եյին  
պահանջում այդ սոռ, դավանան մարդիկ, յերբ դեռ չեք  
գետնահարված վոսոխը. պեկին՝ յերբ իր վերջին հոր-

դաճեցրէ հաւաքած՝ քափքիով լրանակներով պատրաստ-  
վում էր «գրավված վախճան» խուժել, վերստին հրի ու  
սրի մատնել աշխարհի դժգոհութիւններով վերջապես  
ազատագրված յերկիրը Նախիրի... Հասկանում է՞ք՝ դուրս,  
ինչպես ասում էր Հաջի Ռանիկ եֆենդին, յերկնային  
քուշունը յեկել, իր վոտքով մեր ձեռն եր ընկել, իսկ  
այդ ստոր պարոնները պահանջում էին, վոր մենք  
մեր ձեռքով վերցնենք ու բաց թողնենք այդ դուրս՝—  
հանուն ինչի՞, կամ, ինչպես նույն Հաջի Ռանիկ եֆեն-  
դի Մանուկոֆն եր ասում — անունն ի՞նչ դնենք...  
Ո, վոչ մի անուն չեր կարելի դնել այդ նախորդաց  
տխմարութեանը, քան այն անունը, վոր դրել եր Տե-  
ղական Կոմիսեմ, վոչ՝ «Ընկերություն» ինքը. և այդ  
անունն եր, ինչպես քանիցս կրկնել ենք արդեն իմի-  
շի ալլոց — «ազգային դավանանքություն»։ Յեւ ռվքեր  
ելին դրանք, և ռվ եր դրանց ղեկավարը. — միքանի  
լոգոսիկ սիւրբոցներ, ինչպես ասում եր Համո Համբար-  
ձումովիչը, կամ հայկառա սանկյուլոցներ, ինչպես կար-  
ծում եր անգլիախոս Հաջի Ռանիկ եֆենդին և չհաս-  
կացողին թարգմանում ու հասկացնում, վոր սանկյուլո-  
ցներ նշանակում է — անվաթիփ օցներ, կարծես թե վար-  
տիքավոր շներ ել են լինում... Յեւ ռվ եր, ռվ եր,  
ինչպես ասացինք, դրանց ղեկավարը, կամ, ինչպես  
ելի նույն Հաջին եր ասում — «վերի գլուխը» . — ար-  
յունաբու մի սկյուր, ուսացած մի մոնղոլ, մի գերմանա-  
կան լրեսե, վոր պոլմբած վազոնով հայրենիք վերադա-  
րած՝ չին զորեբու յեւ անվաթիփ ավարանբու ոգնու-  
թյամբ ներսեւում խել եր արդեն իսխանությունն ու հանձնել  
այն գերմանացիներին՝ այդպիսով գլուխ բերելով իր խոս-  
տումը, վոր զվել եր արյունաբու Վիլնեմ կայսեր... Ահա



թե հովքեր ելին դրանք և ահա թե հով եր դրանց «ամենավերի գլուխը», այսինքն ամենամեծ ղեկավարը: Յեվ, յերևակայում եք, ընթերցող — այդ ժամանակ արդեն պարզվել եր (զոհն այդպես եր ինձ հավատացնում պ. Արամբյան), վոր նախիրյան այդ քաղաքում այդ սանձադնեցի, այսինքն անվարժի՛ բնեցի ղեկավարն և յեղել, — հավատում եք՝ սուլյն Հաջու խոսքերով ասած՝ այն «եանասաց յեղած» Կարո Դարալանը, վորի սպանողներին զուր տեղն եր իր թանկագին ու անսպառ յեռանդն անձնվիրաբար մխսելով՝ այնքան տենդագին վորոհում ընկ. Վառդգյանը: «— Շուներ օան մանով կստեղծի» — ասում եր այդ առթիվ Հաջի Ոննիկ Եֆենդի Մանուկոֆը, և նա, թերևս, իրավունք ուներ, վորովհետև պետք և վերջապես մի կերպ արտահայտությունն գտներ այդ պատկառելի նախիրցու անձնուրաց նախիրասիրությունը: Ահա թե հով և յեղել Կարո Դարալանը, ընթերցող, իսկ մենք դեռ ցավում ելինք նրա յեղեբական մահվան համար և անվերապահ հավատ ելինք ընծալում նրա ամեն մի խոսքին: Իսկ նրա ընկերները. հովքեր ելին նրանք նախիրյան այդ քաղաքում. — առաջինը՝ Կարո Դարալանի խորհրդավոր սպանությունից հետո քաղաքից անհայտ անհայտացած պ. Մարուքեն եր, ընկ. Վառդգյանի հորջորջած այդ պ. Դրաստամատյանը, և ապա — մեղ քաջ ծանոթ «ծամը կտած» չակերտավոր «որիորդ» որ. Սաքոն և ելի միքանի նման արարածներ, մի յերկու հոգի, վոր վակզալի մոտերը հավավաքված՝ դիտահան ելին անում վակզալի բաժբուզուկներին, այսինքն յերկաթուղային բանվորներին ու ծառայողներին և ֆրոնտից փախած դեղերատիրներին: — Ահա, ահա, ընթերցող, թե

հովքեր ելին նախիրյան այդ քաղաքի և նորաբողոջ նախրապետության հանդիսաբ խանգարողները. դրանք ելին, այդ սոռ, նախրուրաց, նախրադավանան մարդիկ, վոր մոս, կամ, տեր-Հուսիկ քահանա — Խաչագոյի խոսքով ասած՝ «վսնեո» քթներն ամեն տեղ խոթելով՝ ջուր ելին պղտորում, վոր ձուկ վորսան: Յեվ դա, հասկանում եք (կրկնում ենք ընթերցող, վոր լավ դըլ խի ընկնես և հարկ յեղածի չափ լավ պատկերացնես դրու՛թյան ամբողջ խայտառակությունը) — յեվ այդ ամենն այն ժամանակ, յերբ գրավված վայրեր, այսինքն արդեն իրողություն դարձած նախրյան յերկիրն անցնելով՝ արդեն անկախ Նախիր յեր հայաբարել նախրյան հայսնի հերոս, այժմ հայսնի զորավարը, — այն ժամանակ, յերբ, ինչպես ասում են՝ քափ ու քսիմ կտած՝ նախրյան ռազմիկներ եր ուղարկում գրավված վայրեր, այսինքն յերկիր Նախիրն պաշտպանելու համար, Տեղական Կուրսեն, վոջ՝ տեղական, այսինքն նախրյան իսլամությունը, — յերբ, մյուս կողմից, արդեն սուլյո յուրեր ուներ սացած նախրյան իսլամությունը, վոր, վերջին հորդանքը հավաքած, քափփուկ բանակներով մրտադրություն ունի գրավված վայրեր խուժելու Հավիսենական Հիվանդը, — այդ ժամանակ անա այդ սոռ, դավանան, նախրուրաց մարդիկ դեգերտություն ելին քաղաքում նախրյան բանակում յեվ խոսում ելին հաճություն մասին. ո՞ւմ հե՛ս. — Հավիսենական վոսոխի ու Հավիսենական Հիվանդի, վորին նախրցի մի ռազմիկի քաջին անգամ բավական եր, ինչպես ասում եր Մաղութի Համոն, — վորպեսզի նա հավիսենապետ փչեր իր ռուկը, յեվ նա, ի հարկե, կփչեր իր ռուկը, յերբ չիցնելն այդ նախրուրաց, սոռ, նախրադավանան մարդիկ...



— Ո՛ւշ, շատ ուշ գլխի ընկան (և դեռ հարց ե՛ գլխի կընկնեյ՞ն արդո՞ք մյուսները, չեթե չլինեիր ելի նույն Մազուլի Համոն) և ուշ, շատ ուշ հարկ յեղած խստագույն միջոցներին դիմեցին հիշյալ լրբերի վերաբերմամբ նայիրյան իօխանաւորները, — բայց թե ի՞նչ կարող ելին անել այլևս նրանք, յերբ արդեն մեր նկարագրած քաղաքի համարյա պարիսպների տակ եր վոսոխը, յերբ, չերկու որ անց, ինչպես հետազայում մանրամասն կիմանանք, դեպքերի թավալդոր արագութեամբ ընկալ նայիրյան այդ քաղաքը, և Հալիսեմական վոսոխը վոռք դրեց վառվող քաղաքի մօխիւրների վրա...

Մենք արդեն անցնում ենք նայիրյան այդ քաղաքի և սույն այս պոեմանման վեպի վերջին դեպքերի նկարագրութեանը — և մի սուր, դառնաթախիծ կսկիծ սկսում ե ուտել մեր սիրտը. ձեռքս կրկին սկսում ե դողալ, և գրութեանս տառերը գրվում են ծուռ ու դողդոջ, կարծես որորում ե տողերս աներևութ մի հողմ... Սև, մրուրոտ, արշուճալի յեն այդ դեպքերը, վորոնց նկարագրութեանն անցնելու չենք հիմա, ընթերցող, և չգիտենք՝ կարողանալու յե արդո՞ք մեր տկար գրիչը պատկերել այդ դեպքերն այնքան սրտակեղեք ու ահավոր, վորքան սրտակեղեք ու ահավոր ելին նրանք իրականում: Մենք ավելի քան կասկածում ենք դրան, ընթերցող, վորովհետև դժվար թե մեր հնամյա արեւի ներքո գտնվի մի գրիչ, վոր պատկերել կարողանա այդ վերջին դեպքերը, պատկերել այնպես, վոր բիզ-բիզ կանգնեն ընթերցողի մագերը, կսկծից ու ցավից խորովվի ընթերցողի սիրտը, և այլո՞ղ, այլո՞ղ, այլո՞ղ արցունքներ թափվեն ընթերցողի աչքե-

րից: Մենք չենք հավատում, վոր դա կհաջողի մեզ, ընթերցող, և բարկութեանից ու ցավից ուզում ենք դեն նետել մեր գրիչը, չվերջացնել պոեմանման այս վեպը, վոր առանց այդ ել բավականին յերկարեց, — բայց ահա իմ, հեղինակիս, ուղեղի խորհրդավոր դադանարանից լեկնելով խուժում են հոգևոր հայացքիս առջև սեղ մուրեհ, արյունալի դեպքեր ու դեմքեր, և յես կըրկին վերցնում եմ գրիչս՝ ընդհատված պատմութեանս շարունակելու:

Այս ահագն ևս պատմութեանս սկսվեց նրանից — այսինքն Համո Համբարձումովիչից — Մազուլի Համոյից... Յեղ ի՞նչպես կարող եր իրանից, այսինքն Համո Համբարձումովիչից — Մազուլի Համոյից չսկսվել, յերբ, ինչպես հայտնի յե արդեն, վոչ միայն նայիրյան այդ քաղաքը, այլև ամբողջ Նայիրին նրա շուրջն եր դառնում, և վոչ միայն ռուզը դառնում, այլև, ինչպես գիտենք, հառնել եր նրա ուղեղից՝ նրա, Մազուլի Համոյի ուղեղից սահելով՝ ուղեղայինը դարձել եր, կամ համարյա թե դարձել եր յերկային. դարձել եր — համարյա փաստ... Այն, այս ահագն ևս սկսվեց նրանից, վոր քաղաքում հանկարծ լուրեր տարածվեցին, թե Համո Համբարձումովիչ Ասատուրովը — Մազուլի Համոն գրաված վայրերն ե մեկնում, իբր արևակարգ լիազոր՝ տեղում դիմադրություն կազմակերպելու համար: Դրա հետ զուգընթացաբար քաղաքում պատվել սկսեցին լուրեր, թե շարժվել ե արդեն վոսոխը յեղ գալիս ե նայիրյան այդ քաղաքի վրա. գալիս ե սելավաման, քար ու քանդ անելով այն ամենը, ինչ վոր գտնում ե իր ճանապարհին: Այսպիսի ահա լուրեր պատվել սկսեցին



այդ առաւելոս քաղաքում, և այս լուրերի հետ մեկտեղ, սրանց զուգընթաց՝ պատմել սկսեցին քաղաքում — վոչ թե ուրիշ լուրեր, այլ կենդանի մարդիկ. քաղաքում պատմող այդ վոչ թե լուրերը, այլ կենդանի մարդիկ մտնում էին տները և տներից դուրս էին բերում — վոչ թե իրեր, այլ գեներալ քննականներին ու քշում կալարան, քշում Ֆրոնս: Յեւ այս ամենը կատարվում էր վոչ թե աչնալես, քամու բերածով, այլ այն պատերի՝ փակցրած սպիտակ, բայց այս անգամ նայիրատառ, և վոչ թե հայաստանությունների այլ հրամանների հիման վրա, հրամաններ, վորոնց ներքեւ, — ո՛ր, զարմանալի զարմանք, — դրված էր վոչ թե ընկ. Վոռոդյանի, կամ սեղական կոմիսեյի կամ գեներալական իսխանություն, և կամ, վերջապես, իրա Համո Համբարձումովիչի անունը, այլ — այդ նայիրատառ հրամանների ներքեւ դրված էր — յերեւելաճում էք — վոչ թե անուն, ազգանուն, կամ հիմնարկություն անուն ասենք, այլ — յերեւելաճում էք, յերկու Հ. և մի Դ. (Հ. Հ. Դ.)... — Յեւ այդ յերեւելաճում էք ազգեությունն ավելի չեւ ուժեղ ու զարհուրելի, քան հազար-հազար թեկուղ և Մադուլի Համոնների, կամ զանազան իշխանությունաց անուններ... Մահվան սարսուռ էր փչում այդ յերեւելաճում էք — ան թե ինչ: Յերեւելաճում էք այդ զարհուրելի տառերով ստորագրված հայտաբարությունը, ներողություն — հրաման — սկսվում էր « — նայիրցիներ» դիմումով. կարճ ու ազդու: Այն, կարճ ու ազդու յեր այդ դիմումը, ինչպես կարճ ու ազդու յեր այդ դիմումի, այսինքն հրամանի, ներքեւ ստորագրությունը, — բայց հասկացողի համար մի ամբողջ, այն, մի ամբողջ թեկուղ կար այդ մի հասիկ բառում, և այս բանը հասկանում էին

վոչ թե ընտրյալները միայն, վոչ թե բացառություններ, այլ և ամենքը, բառացի ամենք, — առանց բացառություն: Ավելին՝ վոչ միայն հասկանում էին, այլ և մտնում էին մեջը, այդ մի հատիկ բառի մեջ — ամենքը. սա յեր անա զարմանալին: Այն այդ մի հասիկ բառի մեջ էին մտնում թե Համո Համբարձումովիչը — Մադուլի Համոն ինքը, թե ընկ. Վոռոդյանը, թե Սերգեյ Կասպարիչը — բոլորը, թե Ոսեի Նարիմանովը, թե Հաջի Մանկոֆ եֆենդին, թե մանրավաճառ Կոլոպտյանը, թե Մեռելի Յենոքը ու Գոռ Արուսթը և անգամ վակալի բաշիբուզուկներն ու դեգերիները. այսպիսի անա թեկուղական սարսուռություն ունեւ այդ դիմումը, այդ մի հատիկ բառը, վորով սկսվում էր հրամանը: «Նայիրցիներ» — ասված էր այդ հրամանում, «Hannibal ad portas»!... — Հենց այսպես էլ տպված էր՝ ինքզինից, ինչպես կարծում էին սարսուռած քաղաքացիները, և թերեւս սա յեր պատճառներից մեկը, բացի վերոհիշյալ դիմում — մի հասիկ բառից, վոր այդ հրամանը բոլոր նայիրցիների վրա թողեց մի զարհուրելի, համարյա միտիքական տպավորություն: « — Թեւա՛մին մոտեցնում է մեր դարպասներին» — ասվում էր ապա այդ հրամանում, — «ամեն մի նայիրցի պե՛տք է պարզ հաշիվ տա իրեն, քե ի՞նչ է նշանակում այդ...»: — «Նայիրցիներ» — կրկնված էր ապա թեկուղապարփակ դիմումն այդ հրամանում. « — մեր չքնաղ յերկիրը, դարեւ շարունակ յերազված յեւ այժմ մեր գավակների հավելյալ արյունով վերջապես ձեռք բերված մեր հայրենիքը, մեր դրախտավայր Նայիրին, կանգնած է անասելի վսանգի առաջ. մոտեցել է վոստիս յեւ կրկին, կրկին սրի ու հրի կոխան է կամեցնում դարձնել մեր յերկիր Նայիրին»... — « — Նա-



յիւրցիւնե՛ր» — չորրորդ անգամ դիմում եր հրամանը տի-  
եղերքին ու ամենքին. — « — Մի բան ե մնում անել  
այսու ամեն մի իսկական նայիրցու՝ վերցնել զենք յեւ  
նակաս գնալ իր սեփական արշունով պաշտպանելու մե-  
անման յերկիրը, — ծծկե՛ր յերեսայից մինչեւ իննսուն  
սարեկան ծեռունին պե՛տք ե այսու ռազմանակաս գնա  
յեւ իր կուրծք դեմ անի վառոյսի ավիներին յեւ իր սը-  
բազան արշունով փրկի անկումից ու ավերումից նվիրա-  
կան հայրենիքը — մե՛ր դրախտանման Նայիրին»։ — Յեւ  
— «Նայիրցիւնե՛ր» — չորրորդ ու վերջին անգամ դիմում  
եր հրամանը տիեզերքին ու ամենքին — « — Հասել ե  
վնասական բոպեն յեւ Հ. Հ. Դ. մի կոչ ունի միայն անե-  
լու իր սիրեցյալ նայիրյան ժողովրդին. — Դեպի կոի՛վ...  
իզեն, վերջի՛ն անգամ իզեն, տառապյալ նայիրյան ժո-  
ղովուրդ. Նայիրին վերջին անգամ կանչում ե քեզ։ Յեւ  
քոզ նեռանան մե՛ր նանապարհի վրայից վախկոսներն ու  
բուլամորքները, քոզ վսարվեն, անարգանքի սյանը գամ-  
վեն բոլոր նրանք, ովքե՛ր այս նակասազրական վայրկյա-  
նին իրենց անձնական կաշին ավելի բարձր կդասեն, քան  
նայիրասիրական վե՛ր գաղափարը։ Հ. Հ. Դ. հայցնում ե  
սրանով, վո՛ր տեղումսեղը հրացանազարկ են արվելու բո-  
լոր նրանք, ովքե՛ր փորձ կանեն իրենց վոդոմելի կաշին  
փրկելու համար ռազմանակաս չգնալ, կամ փախչել ռազ-  
մանակասից։ Այդ ե պահանջում մեզնից այսու հայրենի-  
քը, այդ ե պահանջում այսու մե՛ր նվիրական Նայիրին։  
Ո՞ն, ուրեմն՝ ի զե՛ն՝ նայիրցիւնե՛ր, — դեպի ռազմանա-  
կաս...»։ Այսպես եր վերջանում հրամանը, և ապա  
գալիս էին վերոհիշյալ յերեք տառերը — Հ. Հ. Դ. —  
Եւ կարող ե արդյոք դարձանալի թվար, վոր այդ հաչ-  
տարարութեանը, ներողութուն, հրամանը բոլոր քա-

ղաքացիներին վրա թողեց մի անասելի, շմեցնող, դա-  
հուրելի տալովորութուն։ Այնպիսի մի անասելի իրա-  
ւանցում ընկալ ջաղաքում, վոր, ինչպես կասեր Մե-  
ռելի Յենոքը՝ «մերք մանուկը մոռացալ»։ Ժամք յեղալ  
կարծես, կարծես յեղալ անել դաստասանի ուրբ։ Յեւ լե-  
թե ճիշտը կուզեք, հենց այդ որվանից ել պետք ե հաշ-  
վել յերկիր Նայիրիի և այդ քաղաքի վախճանի սկիզբը.  
և դա վոչ թե վերոհիշյալ հրամանի պատճառով, այլ  
այն, մեզ համար միանգամայն հասկանալի, իսկ այլ  
քաղաքացիներին համար ախպես ել անհասկանալի մնա-  
ցած, պատճառով, վոր Մազուքի Համոն, քեկուզ յեւ  
ժամանակավորապես, քոզեց իր հայրենի քաղաքը. իսկ  
լե՛նչ կարող եր անել այդ քաղաքն առանց Մազութի  
Համոյի, այսինքն՝ առանց այն առանցքի, վորի շուրջը  
դառնում եր քաղաքը։ Պարզանբանենք մեր միտքն  
որինակով։ Որինակ՝ « — վո՛րն ե Ֆայսունի նպատակը » —  
հարցնում ե մի անգամ Գոռ Արութին Մեռելի Յենոքը.  
բայց Գոռ Արութը չի իմանում, և քանի վոր Գոռ  
Արութը չի իմանում՝ իր տված հարցին պատասխա-  
նում ե ինքը, Մեռելի Յենոքը. « — Ֆայսունի նպատակն  
ուն ե » — պատասխանում ե իր դրած հարցին Մեռելի  
Յենոքը ու պարզաբանում ե հետո. — « Են ու չեղնի —  
Ֆայսունը չի երբա »։ — Յեւ մենք միանգամայն համա-  
միտ ենք Մեռելի Յենոքին. — այդպես ել տվալ դեպ-  
քում։ Յերևակայեցեք, ընթերցող, վոր, ինչպես նայիր-  
յան այդ քաղաքն, այնպես ել ամբողջ Նայիրին, Մե-  
ռելի Յենոքի տերմինոլոգիայով ասած՝ մի հսկա «Ֆայ-  
սոն» ե, իսկ Համո Համբարձումովիչը — Մազութի Հա-  
մոն՝ նրա «ոսը». ե, լե՛նչ կարող ե անել «Ֆայսունը»,  
այսինքն նայիրյան այդ քաղաքը, կամ ամբողջ Նայի-



բին, առանց «ոսի» — այսինքն Համո Համբարձումովի-  
չի — Մազուլի Համոյի, Հարցնում ենք՝ ի՞նչ կարող ե  
անել: Պատասխանը մեկն է. — վոչինչ ու վոչինչ: —  
Կքանդվի, տեղում կմնա՝ կփտի ու կթափվեն մասե-  
րը, ինչպես քայքայվող դիակի մասեր: Յեւ այս հան-  
գամանքն ավելի պարզ ու հասկանալի կլինի, յեթե  
հիշենք, վոր Մազուլի Համոն վոչ միայն «ոսն» եր  
նայիրջան այդ քաղաքի, այլև հոգին: Դե յերեակայե-  
ցեք հիմա մարմնի դրուժյունն՝ առանց հոգու. ի՞նչ  
կլինի մարմինը, յեթե հեռանա հոգին: — Սրա յեւ պա-  
տասխանը մեկն է. — կքայքայվի, կտարրալուծվի, մաք-  
ւիմ կաղճող ֆիլիական սարեհն ամենքը մի կողմ  
կփախչեն ու կմնա ի՞նչ. վոչինչ. կմնա — մահ, մոռա-  
ցության մշուշ — բաց սարածություն: Յեւ նույնը, ճիշտ  
նույնը կատարվեց նայիրջան այդ քաղաքի, ապա և  
ամբողջ Նաչիբի հետ, հենց վոր Մազուլի Համոն  
թողեց այդ քաղաքը և գրավված վայրերը գնաց՝ ճե-  
ղում դիմադրություն կազմակերպելու...

Մեծ, մեծ, անասելի սխալ եր Մազուլի Համոյի  
բացակայելը քաղաքից. հետո, յերբ նա վերադարձավ  
գրավված վայրերից — արդեն ուշ եր, քայքայվել եր  
արդեն քաղաքի մարմինը և վոչ մի հոգի չեր կարող  
այլևս կենարար շունչ փչել ու վերստին գոյութուն  
պարգևել այդ քայքայված մարմնին: Ավելին՝ հետո,  
յերբ Մազուլի Համոն վերադարձավ արդեն գրավված  
վայրերից — վոչ միայն ի վիճակի չեղավ կենարար  
շունչ փչել քայքայվող քաղաքի սառած յերակները,  
այլև շուտով ստիպված լեղավ փչել իր սեփական ռուկը,  
փչել — հավիտյան ու անդարձ. փչել — ընդմիշտ... Յեւ  
նրա հետ միասին իրա շունչը փչեց յերազյալն ու հա-

վիտենականը՝ յերազյալ ու հավիտենական, իրա, Մա-  
զուլի Համոյի հանճարեղագույն ուղեղից դեպի յերկ-  
րայինն ու գոյացյալը ձգտող, համալսյա գոյացած Նաչի-  
բին... Համոզված, ալ՝ խորիմ համոզմունքով մենք  
կարող ենք ասել, վոր գուցե իսկի յեւ տեղի չունենա-  
յին թավալելոր արագությամբ Մազուլի Համոյի գնա-  
լուց հետո նայիրջան այդ քաղաքում կատարված դեպ-  
քերն ու իրողությունները, յեթե Մազուլի Համոն  
չհեռանար քաղաքից. — յերկրորդ, բաց առաջինից  
ավելի կարևորագույն սխալն եր այս, վոր Մազուլի  
Համոն ինքը, մասամբ և ամբողջ «ըկեռությունը»  
կատարեցին այդ ժամանակ. — առաջին սխալը, ինչ-  
պես մասամբ արդեն գիտենք, այն սոսր, նայիրուաց,  
նայիրադավանան մարդկանց հանդեպ խստագույն մի-  
ջոցներ չդիմելն եր ժամանակին, իսկ յերկրորդ, և,  
ինչպես ասացինք, ամենակարևորագույն սխալը — Մա-  
զուլի Համոյի քաղաքից հեռանալը: Այո, Մազուլի  
Համոն չպետք է հեռանար քաղաքից, բաց նա, ինչ-  
պես տեսնում եք, հեռացավ, և անսպասելի, յեղերա-  
կան անասարսուռ դեպքերն ու իրողությունները, նա-  
չիրջան այդ քաղաքի վերջին դեպքերն ու իրողու-  
թյունները, իրար հաջորդեցին, ինչպես ասացինք՝  
թավալելոր արագությամբ...

Մազուլի Համոյի քաղաքից հեռանալու որը, ինչ-  
պես արդեն գիտենք, քաղաքում լույս տեսավ վերո-  
հիշյալ զարհուրելի, համարյա միստիքական սուպեր-  
նուրթյուն թողնող, հայտարարությունը, այսինքն հրա-  
մանը: Յեւ դրա հետ մեկտեղ, ինչպես գիտենք, քա-  
ղաքում պտտվել սկսեցին — վոչ թե լուրեր, այլ կեն-



դամի մարդիկ, վորոնք մտնում եյին տները և հանում տներին — վոչ թե իրեր, այլ զեմքի բնորոշակներին: Բացի այս՝ ընկեր Վառդգյանը կայարանում կանգնեցրել եր մարդիկ, արտակարգ փափախավորներ, վորոնք խստիվ արգելում եյին հեռանալ քաղաքից: Սխալվեցինք, սկզբներում դեռևս թույլատրվում եր քաղաքից հեռանալ, բայց — միմիայն կամանց ու յերխաներին. և ահա սկսվեց նրանից, վոր քաղաքից հեռանալ սկզբսեցին կանայք ու յերեխաները: Յեվ զարմանալին աչն ե, վոր մի շարք այլափոխություններ տեղի ունեցան նայիրցան այդ քաղաքում այդ որերին. քաղաքում խոսում եյին, վոր, վերին հրաշքով, կնոջ կերպարանք են ստացել մի շարք պատկառելի նայիրցիներ, ինչպես որինակ՝ պ. Աբովաբեք, կոշկակար Միմոն — Կուրի Մեյմունք, մանրավաճառ Կոլպոտյանի յերիտասարդ տղան և ուրիշ շատ-շատերը. — բայց հավատացնում եմ, ընթերցող, վոր այստեղ վոչ մի երաժ չկար. պարզապես բռնել եյին դրանց կայարանում կանգնած արտակարգ փափախավորները — կամացի շոքերով. ահա և ամբողջը: Ի՞նչ հրաշքով, չգիտենք, բայց այդ պատկառելի նայիրցիներն աղաովեցին զնդակահարությունից. ավերին՝ շուտով իմացվեց, վոր նրանք բոլորն ել անհոգ թռչունների նման թափառում են, թեպետ և նայիրից դուրս գտնվող, բայց համարյա նայիրյան, չքնաղաղուն մի քաղաքի լազուր յերկնքի ներքո և նույնիսկ զարմանում են, վոր մնացած նայիրցիները չեն հետևում իրենց գեղեցիկ որինակին... «Չեն հետեւում...» — Բայց վճնց հետևելին, յերբ քաղաքի պատերից, որ որի յետևից, շրմած քաղաքացիների գլխներին եյին թափվում մեկը մեկից զարհուրելի

մեկը մեկից անողոր ու սարսափ տարածող հրամաններ, այնպես վոր ի վերջո քաղաքի խեղճ բնակիչները զարհուրում եյին քններ բարձրացնել և չեյին ել բարձրացնում, վորպեսզի իրենց այդ պատկառելի, նայիրցյան քթներով չդիպչեն վորեւ զարհուրեալագույն հրամանի: Ինչպէս, ինչպէս կարող եյին հետևել պ. Աբովաբեքի և ընկերների որինակին սարսափած նայիրցիները, յերբ շուտով, ընկ. Վառդգյանի մի նոր խստագույն հրամանով, արգելվեց քաղաքից հեռանալ անգամ կամանց ու յերխաներին, վորպեսզի, ասված եր ընկ. Վառդգյանի հրամանում, — «խուճապ չառաջանա»: «Թե՛ ցամաքն աստիճան ե» — ասվում եր ապա այդ հրամանում, — «չեյի բոլոր կարող եմ հանգիստ տեղները: — Դե յեկեք ու ընկ. Վառդգյանի այսպիսի հրամաններից հետո հետևեք պ. Աբովաբեքի և ընկերների գեղեցիկ որինակին... Բայց բանն այն ե, վոր, չնայած ընկ. Վառդգյանի ու մյուսների խստագույն հրամաններին, չնայած կայարանում կանգնած արտակարգ փափախավորներին, վորոնց ձեռքին եր իրապես գտնվում այդ ճակատագրական որերին քաղաքի բանալին, — չնայած այդ ամենին՝ քաղաքի բնակչութունն որ որի յետևից նոսրանում եր ու նոսրանում, և նոսրանում եյին ամենից առաջ քաղաքի վարի, այսինքն կեցեցեցեղան թաղերը: Վճնց, ինչպես, ինչ հրաշքով, չգիտենք, բայց վաղուց արդեն առանց նույնիսկ Հանրմի ու իր, արդեն 18-րդ տարեկան դարձած, «պրզ-թիկի» յեր իր ամենորյա չորքան խմում Հաջի Ունիկ եֆենդի Մանկուֆը, և վաղուց արդեն նույն այդ դարձեցեղանությանն եր յինթարկված Արամ Անցոնիչը, դըպրոցի տեսուչը (այժմ քաղաքի ու շրջանի բոլոր նա-



յիրյան դպրոցների վարիչը)։ Յեվ նույն ալդ դառնա-  
դառը մենակության վիճակին ելին վաղուց արդեն  
յինթակա թե Ոսեփ Նարիմանովը, թե գեներալ Ալոշը,  
թե տեր-Հուսիկ քահանա — Խաչագողը, — բոլորը, բո-  
լոր պատկառելի նաչիրքիները՝ Ալեքսանդրյանի ու Լո-  
րիս-Մելիքյանի բնակիչները։ Ասենք բացառութիւն-  
ներ ել, իհարկե, կային, ու այդ տխուր բացառու-  
թիւնների մեջ էին Տեյեֆոն Սեթոն, Մեռնիլ Յեմոք,  
Քոռ Արուքը, հայտնի ճաշարանատեր Բաշկա Նիկայայր  
և շատ ու շատ նման թեկուզ և Ալեքսանդրյանի ու Լո-  
րիս-Մելիքյանի վրա խանութ ունեցողները, բայց եյա-  
պես հասարակ, մանր-մունր մարդիկ։ Սրանք բոլորն  
եւ իրենց ընտանեկան հարկի ներքո դեռևս վայելում  
էին ընտանեկան կյանքի բոլոր քաղցրութիւնները։  
Իսկ ինչ վերաբերում է վերի քաղերի, այսինքն բերդի  
յեւ Սուաբեյոց յեկեղեցու թաղերի բնակիչներին՝ դրանք  
բոլորն եւ տեղները նստած էին մնացել, և, ընկ. Վա-  
ռուդյանի հրամաններին հետևելով՝ նստած եւ մնում  
էին, վորպեսզի խուճապ չառաջացնեն։ Բայց շատ բան  
եր կախված այդ վերի թաղերի բնակիչներից, այդ  
«բռնի անասուններից», ինչպես անվանում էր նրանց  
վարսավիր Վասիլը, վորը, ի դեպս վաղուց արդեն փա-  
կել էր իր հեշակավոր վարսավիրանոցը և ռազմաճակատ  
եր գնացել, ուր, ընկ. Վառուդյանի կողմից նշանակված լի-  
նելով՝ մերեմբեք եւ հայրայրում նաչիրյան բանակին։ Թե  
ինչո՞վ բացատրել վարսավիր Վասիլի այս տարորինակ  
քալը — չգիտենք, սակայն այդ բանն ավելի քան լավ  
գիտեր Հաջի Մանուկոֆ եֆենդին, վոր նույնպես  
«հայրայրոյ» էր, բայց վոչ թե «փինթի», ինչպես վար-  
սավիր Վասիլը, այլ — խոշոր, անգամ ամենախոշոր,

խոշորագույն։ Այն, նոսրացել էր քաղաքի բնակչու-  
թիւնը, սակայն այս նոսրացումն հարկավոր է հաս-  
կանալ վոչ թե քանակի, այլ վորակի իմաստով. քա-  
ղաքից հեռացել էին արդեն ամենապատկառելի քա-  
ղաքացիների ընտանիքները՝ բայց դրանց տեղը, շրջանի  
գյուղերից քաղաք էին փախել հազարավոր նոր ըն-  
տանիքներ, վորոնք լցրել էին փողոցները սայլերով,  
յեղներով, կովերով, յերեխաներով և տնային այլ  
անասուններով, բացի զղամաղկանցից, վորոնց վաղուց  
արդեն ռազմաճակատ էին ռազարկել ընկ. Վառուդյանի  
արտակարգ փախաւորները։ Դաղաքի վորակն էր  
փոխվել ամբողջովին — ահա թե ինչ. ու փոխվել էր  
քաղաքի տեսքը։ Յեվ այս հանգամանքը մեծ մտահո-  
գութիւն էր պատճառում ընկ. Վառուդյանին, բայց,  
չնայած նրա մի շարք ավելի քան խստագույն հրա-  
մաններին — այնպես էլ չհաջողվեց շրջանից փախած  
այդ «վախկոս վոչխարներին» իրենց տեղերն ռազարկել.  
նրանք չգնացին, չնայած անգամ նրան, վոր ընկ.  
Վառուդյանի արտակարգ փախաւորները քանիցս  
փորձեցին մտրակային լեզվի փոխել ընկ. Վառուդյանի  
հրամանների նաչիրյան քաղցր լեզուն։ Չոգնեց, վո-  
չինչ չոգնեց, դրանք մնացին քաղաքում, անբան անա-  
սունների նման թափված մնացին նաչիրյան չքնաղ  
քաղաքի վոչ այնքան էլ չքնաղ փողոցներում ու լըց-  
րին այդ վոչ այնքան էլ չքնաղ փողոցներն իրենց  
ահուլի դարձահոտությամբ։ — Յերեւակայում եք՝ հենց  
այդտեղ, նաչիրյան չքնաղ այդ քաղաքի վոչ այնքան  
էլ չքնաղ փողոցներում էլ նրանք ուտում էին ու  
քնում և կատարում իրենց բոլոր բնական առաքում-  
ները։ Բայց ընկ. Վառուդյանին ջղայնացնողը գերա-



զանցապես այն եր, վոր դեղերօթրննի կատարյալ բուշներ ելին դարձել փողոցներում, բակերում ու այգիներում թափված մարդկային այդ դարչահոտ կույտերը։ Ուղիմաճակատից փախչում ելին ռազմիկները և պահվում դրանց մեջ, դրանց սալերի արանքում, վերմակների տակերին և նույնիսկ իրենց կանանց ու մարերի փեշերում։ Յեվ ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորները, իրենց ամոթխածությունը մի կերպ զսպելով՝ շատ անգամ ստիպված ելին լինում դեղերօթրննի վորոններ... շրջանից փախած այդ կանանց փեշերում։ Բայց այս բոլորը դեռ ելի վոչինչ, մի կերպ կարող եր հարթվել, սակայն քաղաքի մեծագույն դժբախտությունն այն լեղավ, վոր մի դեղեցիկ որ եր ընկ, Վառոդյանը և Սերգե Կասպարիչը նկատեցին, վոր քաղաքում փակվել են համարյա բոլոր խանութները։ Ընկ. Վառոդյանը և Սերգե Կասպարիչը, վոր Մազուրի Համոյի գնալուց հետո նրա տեղակալն եր ճեղակաճ Կոմիտեյում յեվ Քաղաքային Խորհրդում, շուտափույթ կերպով մի հրաման արձակեցին, վոր խանութները բացվեն։ Բայց, ավագ, խանութները չբացվեցին, իսկ ժողովուրդը մքեռ եր ուզում — չայ, սաղոն, նաֆ, լուցկի և ելի հազար ու մի նման զանգումար։ Տեսնելով, վոր անելանելի չե դրությունը, Քաղաքային Խորհրդում մի ինչ վոր վեթի թաղեցի հարց բարձրացրեց, վորպեսզի խանութներից մի քանիսը ջարդեն և Քաղաքային Խորհուրդն ինքը վաճառել սկսի այդ խանութների ապրանքները։ Ինչպես և կարելի լի սպասել, առաջարկն ընդունվեց միաձայն։ Բայց ցավալին այն ե, վոր յերբ ջարդեցին խանութները — դուրս չեկավ, այսինքն վոչինչ ել դուրս չեկավ խանութներից

— խանութները դատարկ ելին, ինչպես Բոռ Արուքի ձախ աչիբ... Հարց՝ ուր ելին այդ խանութների ապրանքները։ Պատասխան՝ չկային — և ուրիշ վոչինչ։ Յեվ այն ել վոչ միայն ապրանքներ չկային, այլև իրենք — ապրանքների ճեղքը։ Պարմանալի հրաշքով վերացել ելին նրանք նայիրյան այդ քաղաքից, չնայած կայարանում կանգնած արևակաղ փափախավորներին։ Գուցե ռազմաճակատ ելին գնացել նրանք, կաղող և հարցնել ընթերցողը. բայց մենք ստույգ տեղեկություններ ունենք, վոր նրանք այնտեղ չելին։ Յեվ սա յե, այս ամենն ել դեռ հեշ, չեթ չլինեք քաղաքը և ռազմաճակատը քայքայող ամենամեծ ջարիքը, վորի մասին քանիցս թեթևակի հիշատակեցինք, — դեղերօթրուքյունը։ Ամեն առավոտ տներից ու փողոցներում թափված մարդկույտերից, սալերի արանքից և նույնիսկ կանանց փեշերի ճակից հազարներով հանում ելին ու ռազմաճակատ ուղարկում դեղերափրներին հարյուրավոր խմբեր, — բայց գիշերը, մութն ընկնելուն պես, նրանք կրկին փախչում ու քաղաք ելին վերադառնում բազմաթիվ խմբերով, և հաջորդ առավոտ ընկ. Վառոդյանի արտակարգ փափախավորների կողմից ելի ճակատ քշվում, վոր մութն ընկնելուն պես նորից վերադառնան քաղաք։ Չարիք եր, անասելի չարիք, նայիրյան խաղաղություն։ Ինչ միջոցներ ասես, վոր ձեռք չելին առնում անասելի այդ չարիքի առաջն ապշելու համար Զինվարական Գերագույն Ասյանի նախագահ բժիշկ Սերգե Կասպարիչը և բերդի հրամանատար ընկ. Վառոդյանը. սրանց հրամանով, ծեծի, հրապարակային ամբաստանության, թքի ու մուրի ելին չենթարկվում այդ նայիրադավաճան լրբերը, բայց չեք



ողնու միջինն, դրուծյունը նույնն եր մնում, նորից փախչում ելին ռազմաճակատից, ինչպես սարսափած վոչքարներ, և ընկ. Վառուդյանի արտակարգ փափախավորները կողմից նորից ճակատ ելին քշվում բխելով ու մեծելով: Պարզ ե, վոր այսպես չեք կարող շարունակվել. հարկավոր եր գերագույն միջոցի դիմել, բայց այդ գերագույն միջոցին դիմելուց առաջ հարկավոր եր գտնել չարիքի արմատը: Յեւ վարիքի արմատը գտնվեց. և այդ չարիքի արմատը գտնողը, այսինքն վոչ թե դնողը, այլ այդ արմատի վրա առաջին անգամ մաս դնողը ելին ինքն եր, նույն ինքը՝ հանճարեղադույն Մազուրի Համոն, վոր համապատասխան բովանդակութեամբ գրուծյուն եր ուղարկել ռազմաճակատից: Այն, նա յեր ելի, ելի նույն հանճարեղադույն Մազուրի Համոն, վոր իր վճռական մասը վերջապես կարողացավ դնել չարիքի իսկական արմատի վրա. ստում ենք կարողացավ «մասը դնել», վորովհետեւ այնքան եր, վերջիվերջո, դժվար բան չեք այդ արմատի գտնելը, վորովհետեւ նա, այդ արմատը, վոչ թե թաղված եր գետնում, ինչպես ամեն մի արմատ, այլ ցրցված եր դուրս, ինչպես նայիրյան մի քիթ, և վաղուց արդեն բոլորն ել տեսնում ելին այդ չարաբաստիկ քիթը, այսինքն արմատը: Բայց — մի բան տեսնելը, տարբեր բան՝ տեսածի վրա վճռական կերպով մաս դնելը: Տեսնում ելին, այդ չարաբաստիկ արմատը բոլորն ելին տեսնում, բայց, կրկնում ենք, Մազուրի Համոն եր միայն, վոր ժամանակին մասնանիե արավ այդ արմատը և առաջարկեց այն հիմքից պոկել յեւ դեմ շարտել, ինչպես վարակող մի սպի: — «Երկրորդությունը արմատը հարկավոր ե տեսնել այն նայիրադա-

վանան արկանների մեջ, վորոնց առաջնորդն եր մեր փառաբան անհայտ չարագործների (հարկավոր ե ասել բարեգործների, վաղաճում միեւրոյն եր Մազուրի Համոն) ձեռով ռան սասակ յեղած Կարո Դարայանը — այսպես եր զրել ռազմաճակատից ուղարկված իր նահա-հրահանգում Մազուրի Համոն. — «Դրանք յգրել են հիմա ռազմանակասը յեւ դեպքերուրյուն են փառագում մեր արի զինվորներին, դրանք խոստանում են զինվորներին հող, խաղաղություն ու հանգստություն յեւ նման լիքի միջոցներով փայայում են մեր բանակը» — զրել եր Մազուրի Համոն իր այդ հրահանգ-նամակում: — «Դրանց վերաբերմամբ հարկավոր ե ամենախիստ միջոցների դիմել, չեւովել անգամ գնդակահարությունից» — հրահանգել եր վերջում Մազուրի Համոն և հրահանգի վերջին տողերը յերեք անգամ ընդդեմ. Մազուրի Համոնի այդ ընդդեմներն են ահա, վոր մենք անվանում ենք «մաս դնել»: — Յեւ իրոք վոր, Մազուրի Համոնի այդ հրահանգ-նամակն ստացվելուց հետո բոլորը բաց արին աչքերը ու մնացին, ինչպես վարսավիր Վասիլը կասեր — «եւ կտրած». — այդ վոնց եր, վոր իրենք չեյին հասկանում այդպիսի հասարակ մի բան, հասարակ, նու, ինչպես որիւ լույսը: Այսպես թե այնպես՝ չարիքի արմատը գտնված եր արդեն և ահա ընկ. Վառուդյանի արտակարգ փափախավորները ռկսեցին այդ արմատը պոկելու համար արտակարգ պատրաստութիւններ տեսնել: Հիշում եմ քաղաքի մեղաւնում ընկ. Վառուդյանի արտակարգ փափախավորները գեղեցիկ մի որ իրարից մի հեռագրասյան հեռավորութեամբ կանգնեցրին, յերկու հեռագրասյուն և դրանց վրա խփեցին յերրորդը: — «Եւ ի՞նչ կեցնեմ, յեղբայր» — հարց-



րեց փափախավորներից մեկին այդտեղ կանգնած յե-  
րեխաներից մեկը: Վոր խորին հետաքրքրությամբ և  
աշխատանքով հետևում եր յերրորդ հեռագրասյան վրա  
նստած արտակարգ փափախավորի արտակարգ շար-  
ժումներին: — Փյանդրբազի չվան կրեմենեմ, վոր դեղե-  
թիւները վրեմ փանդրբազ խաղան», պատասխանեց փա-  
փախավորը և յերեխաներն ուրախ հրհռացին, պատկե-  
րացնելով յերևի, վոր բավականին զվարճալի մի բան  
պետք է լինի այդ զվարճալի դեղերտիրների փանդր-  
բազուքյունը: «Փյանդրբազի չվանը», ճիշտ է, շինեցին,  
բայց, ցավով սրտի հարկավոր է ասել, վոր վոչ ար-  
տակարգ փափախավորները և վոչ ել հիշյալ յերեխա-  
ներն առիթ ունեցան այդ զվարճալի դեղերտիրների  
«փանդրբազուքյունը» տեսնելու. հեռագրասյունները  
կանգնեցնելուց յերկու որ հետո, դեպքերի զլխիվայր  
արագությամբ նայիրյան այդ քաղաքն ընկալ և ար-  
տակարգ փափախավորների շինած այդ «փանդրբազի  
չվանի» վրա, — ո, ճակատագրի յեղբրական հեգնանք,  
— հաբկադրված յեղան փանդրբազուքյուն անել — յե-  
րեվակայում եք — ինքն քնկ. Վառոդյանը, Սեբեկ Կաս-  
պարիչը — բծեկը յեվ, Համո Համբարձումովիչ Ասատու-  
րովը — Մագուքի Համոն... Ճակատագրի տարորինակ  
մի խաղ, բախտի յեղբրական մի հեգնանք եր դա,  
ընթերցող, վոր դեպքերի այնքան վողբերական ու  
սխրալի բերումով յեղրափակելու լեկավ նայիրյան այդ  
քաղաքի աղետալի պատմությունը...

«Հեռագրասյունները» կանգնեցնելու որն եր հենց,  
վոր Մագուքի Համոն անսպասելի կերպով վերադար-  
ձավ քաղաք: Բանն այն է, վոր աթոն գրավված էին

գրավված վայրեր. ավելին՝ Վոսոխը, Հալիսեմակաւն  
Հիվանդը, անսպասելի մի հրաշքով արդեն անցել եր  
սահմանի այս կողմը և յեկել, իր թափթփուկ բանակ-  
ներն եր դրել քաղաքից 30 վերստ հեռավորության  
վրա: Մարտափ առած նախիրների նման՝ նայիրցի  
ռազմիկները փախել էին Վոսոխից ու լցրել քաղաքը.  
եւ վոչ «դեղերթիւ» եր մնացել, վոր փանդրբազ խա-  
ղացնելին, վոչ բան. հո չէր կարելի մի ամբողջ բանակ  
յիւրեք հեռագրասյան վրա փանդրբազ խաղացնել: Թե  
ինչ եր ներկայացնում քաղաքն արդեն — դժվար է  
նկարագրել: Յերևակայեցեք, ընթերցող, վոր մի առա-  
վոտ վեր եք կենում ձեր տեղից և ուզում եք շորներդ  
հագնել, բայց տեսնում եք, վոր անհասկանալի մի  
հրաշքով քանդվել են ձեր շորերի բոլոր կարերը. վերց-  
նում եք ձեր շապիկը — թափվում են շապիկի մասերն  
առանձին-առանձին՝ թեք մի կողմ է գնում, ոճիքը  
մի կողմ, մնացածը — ուրիշ մի կողմ. վերցնում եք  
ձեր վարտիքը — նույնը. դե հիմա սրան ավելացրեք  
և ալն, վոր հանկարծ հրդեհ է ընկնում ձեր բնակարանը.  
— Թնչ պիտի անեք. դժուր վաղեք. բայց դուրսը կանգ-  
նած են կանայք և յերեխաներ. տկլոր հո չէք յերկա-  
կանանց և յերեխաների աչքին. — ներսը մնաք. —  
բայց ներսում ել ձեզ խեղդում է ծուխը, և մի վալրկյան  
չանցած՝ հրդեհի ալ-կարմիր բոցերն արդեն լիզել կըս-  
կըսեն ձեր մարմինը... Այսպիսի ահա անելանելի մի  
դրության մեջ ընկալ Մագուքի Համոն գրավված վայ-  
րերից վերադառնալիս. քաղաքի, պատկերավոր ասած՝  
բոլոր կարերն արդեն քանդվել էին, մասերից ամեն  
մեկը մի կողմ եր փախել, իսկ քաղաքի շուրջը — հըր-  
դեհ եր. ծուխը լցվել եր արդեն քաղաքը և մոտենում



եյին արդեն քաղաքի ծխախողով մարմինն ահա՛վոր հըր-  
դեհի ալ-կարմիր բոցերը: Ի՞նչ եր մնում անելու Մա-  
զութի Համոյին. փախչել. մնալ — բայց ինչպե՞ս կա-  
րող եր, ասացե՛ք խնդրեմ, փախչել Մազութի Համոն.  
կարող եր արդյո՞ք փախչել մարդու հոգին և իր սեփա-  
կան, հարազատ մարմինը թողնել հրի բերան... Յե՛կ  
Մազութի Համոն մնաց. վոչ միայն մնաց, այլև իր վրա  
վերցրեց բովանդակ իշխանությունը. մի վերջին ճիգ  
ևս, գերմարդկային մի ճիգ գործադրել կամեցավ Մա-  
զութի Համոն, վոր փրկի զրությունը. բայց զրու-  
թյունը չփրկվեց. — ուշ եր, բավականին ուշ եր ար-  
դեն, և զրությունը չեր կարող փրկել այլևս վոչ մի,  
թեկուզ և գերմարդկային, ճիգ...

Վհնց, վհնց փրկեր զրությունը Մազութի Համոն,  
յերբ, ինչպես ասացինք, քանդվել եյին արդեն քաղա-  
քի բոլոր կարերը և վոչ մի, թեկուզ և հանճարեղա-  
գուն, դերձակ չեր կարող այլևս իրար միացնել այդ  
վոչ միայն իրարից բաժանված, այլև զարմանալի թա-  
փով իրարից խռչս տալ սկսող, մասերը. Համո Համ-  
բարձումովիչի բացակայության ընթացքում այնպիսի  
մի չտեսնված զարգացման եյին հասել քաղաքի, ինչ-  
պես ասում են՝ կենցաղնախույս ուժերը, վոր այլևս  
անհնարին եր դրանք վոչ միայն վոչնչացնել, այլև  
չեղոքացնել. Յերևակայեցե՛ք՝ ընդամենը մի ամիս բա-  
ցակայությունից հետո քաղաք վերադարձավ Մազութի  
Համոն, — և ի՞նչ. առաջին հերթին դեպի բերդը վազեց  
Մազութի Համոն և նրա աչքերի առաջ պատկերացավ...  
Ո, այն, ինչ վոր պատկերացավ Մազութի Համոյի աչ-  
քին բերդում — թող վոչ մի գերագույն հրամանատարի

չպատկերանա... Բերդը, նախրյան արքաների շինած  
և դարեր շարունակ հազար չարի ու վոստիսի իր քա-  
րակերտ կուրծքը դեմ դրած այդ բերդը, Մազութի Հա-  
մոն գտավ վողբալի վիճակում... — Հարթեցին՝ տալի-  
ների մուժից, մշուշից յեղնելով՝ թունդ առան Մազու-  
թի Համոյի սրտում... յերազները. յերան, Մազութի  
Համոյի դառնաթախիժ սրտից յեղնելով՝ Մազութի Հա-  
մոյի վշտից ու դառնությունից բորբոքված հանճարե-  
ղագուն ուղեղը խուժեցին... դաժավոր սպասումներ...  
Միթե՛ս այսպես եր յերազել Մազութի Համոն այս ուր.  
միթե՛ս այսպես եր նկարվել Մազութի Համոյի հանճա-  
րեղագուն ուղեղում — բերդը, նախրյան այս բերդը՝  
հույսով ու սպասումով հարուստ այն հեռու որբերին,  
յերբ «Լույսի» զրասենյակում նստած այս որեմն եր  
յերազում ինքը, այն ժամանակ դեռ միմիայն «Լույսի»  
կառավարիչ Մազութի Համոն... Այստեղից, այժ, բեր-  
դի այս ժայռակերտ պատնեշների վրայից պիտի ուռն-  
բեր տեղային մի ուր, յերե այդ ուր գա... Այստեղից,  
այժ, բերդի այս ժայռակերտ պարիսպների վրայից  
իջներ պիտի մի ուր — պիտի, անպարս կոթով մայիլյան  
ցեղի... Վորպես յերկաթե մի բուռնցք՝ իջներ պիտի  
մի ուր թշնամու գլխին — Այստեղից, բերդի այս անա-  
ռիկ բարձրություններից հեռանալով պիտի յեղներ  
ահասատ, պիտի հառներ հաստատ մայիլյան վողկն.  
կորովը, դժը հազարամյա — նախրյան աշխարհի... Ու  
պիտի վառվեր նորից, պիտի ժպտար խնդազին յեր-  
կերը հազարամյա — հնամյա Նայիրին... Ահա թե ինչ  
եր յերազել Մազութի Համոն «Լույսի» զրասենյակում  
անցկացրած իր անքուն գիշերներին՝ այս որվան սպա-  
սելիս... Որը յեկավ. Դեպքերի անսպասելի, հեքիա-



Թալին բերումով՝ քաղվեցին սոխական բանականները նա-  
յիրյան աշխարհից. դեպքերի անսպասելի, հեքիաթա-  
յին բերումով՝ հանկարծ մարմնավորվեց, իրողութուն  
դարձավ յերկիրը Նայիրի... Յեւ լինչ. Հավիսենական  
Հիվանդի հորդաններից սարսած, Մանախնձի քափք-  
փուկ բանականներից սարսափահար՝ նախիրների նման  
պուկ տվին նայիրյան բանականները. մնացել է բերդը  
միայն, նայիրյան այս բերդը, վոր վաղը վոտնակոխ  
պիտի արվի Հավիսենական Հիվանդի հորդանների կողմից,  
պիտի լիզե նորից Հավիսենական Հիվանդի հորդանների  
վոտները, Հավիսենական Հիվանդի Թափթփուկ բանակ-  
ների չաքմանների փոշին... Ո՛ւր ե, ո՛ւր ե ուժը, ո՛ւր  
ե կորովն հնամյա նայիրյան ցեղի. ո՛ւր ե յերկաթե  
բռնեցքը... Ո՛ւր ե, — հարցնում եր, դառնացած Յենո-  
վայի նման մազերը պոկելով, Մազութի Համոն. —  
«Ո՛ւր ե»։ Դառնացած Յենովայի նման պոկոտում եր  
մազերը ու նայիրյան արքաների կորովն եր վոգեկո-  
չում բերդի ամենաբարձր աշտարակի վրա կանգնած,  
նայիրյան յեռագույնի դողդոջ փայտին կռթնած, Մա-  
զութի Համոն. — «Ո՛ւր ե» — Հարցնում եր Մազութի  
Համոն, բայց պատասխան չկար. բերդի հաղարամյա,  
մռայլ պարխալներն ելին միայն լուռ նայում Մազու-  
թի Համոյին, վերջին այդ արքայակերպ նայիրցուն,  
վոր պոկոտում եր մազերը և նայիրյան կորովը վոգե-  
կոչում. Ու չկար կորովը. լուռ եր բերդը։ Ու բերդի  
ամենաբարձր աշտարակի վրա կանգնած նայիրյան  
յեռագույնի դողդոջ փայտին կռթնած՝ դառնաթախիծ  
թախձեց, լաց չեղավ, ինչպես այն ժողովում, Մազու-  
թի Համոն, և Մազութի Համոյի, վերջին այդ արքա-  
յակերպ նայիրցու բոցե արցունքներն ալրեցին նա-  
յիրյան հնամյա պատերը... «Վոչ» — ձեռքը նայիրյան

յեռագույնի դողդոջ փայտին խփելով դառնաթախիծ  
լացի, հրե արցունքների միջից բացականչեց հանկարծ  
Մազութի Համոն. «Զի՛ լինի»։ — Յնցվեց վայրկենա-  
կան քնից, կամ կաթվածից արթնացածի նման՝ ցնցեց  
իր դուխը Մազութի Համոն. հանեց թաղինակը և  
սրբեց աչքերը։ Յեւ նոր կարծես տեսավ, վոր կանգ-  
նած են շուրջն ընկ. Վառդյանը, բժիշկը, մի յերկու  
նայիրյան զենեքալ և մի քանի նայիրցի սպաներ. ան-  
հուն պատկառանքով նայում ելին նրանք Մազութի  
Համոյին ու լուռ, լուռ, լուռ ելին, ինչպես բերդի  
պատերը։ «Ո՛ւր են» — ցասման շանթեր տեղալով աչ-  
քերից՝ հարցրեց վորոտաձայն Մազութի Համոն. —  
«Ո՛ւր են մյուսները»։ Բայց «մյուսները», վորոնց մա-  
սին հարցնում եր Մազութի Համոն, իր քիչ առաջ  
վոգեկոչած նայիրյան կորովի և ուժի նման, չկային.  
պարզվեց, վոր բերդի սպայություն բավականին նկա-  
տելի մասը գիշերը հեռացել է բերդից և չի վերադար-  
ձել. — «Իսկ ո՛ւր ե բերդի գարնիզներ» — ավելի մեղմ,  
կարծես կոտրած ձայնով, շարունակեց իր ռեկվիզան  
Մազութի Համոն. ընկ. Վառդյանը ցույց տվեց մա-  
տով. Մազութի Համոն նայեց ընկ. Վառդյանի մատի  
ուղղությամբ. և Մազութի Համոն տեսավ. — այնտեղ,  
բերդի յերկրորդ աշտարակի վրա Մազութի Համոն  
տեսավ ի մի խոնված նայիրյան սրխավոր ռազմիկների  
բավականին բազմամարդ մի խումբ, վոր զբաղված  
եր իրեն, Մազութի Համոյին նայելով։ «— Ներողու-  
թյուն...» — ասաց Մազութի Համոն — «դրանք... բոլի  
զգե՛լ գիտե՛մ...» — «Այո՛, նիս այդպես ե» — զինվորական  
պատիվ բռնելով՝ պատասխանեց զենեքալներից մեկը,  
և Մազութի Համոյի արքայակերպ դեմքը մեղմիկ լու-



սավորվեց մի մանկական, համարյա իդիոտային, ժպիտով: Հասկացաւ Մազութի Համոն՝ վերցացած եր. ուղեղում, հատնող մոմի բոցերի նման, հիսախառն յերերաց, կողքե-կողք ընկաւ... յերկիրը Նայիրի: Բայց — «Վո՛չ» — բացականչեց մտքում, վերջին ուժերը հավաքելով, Մազութի Համոն, — «Զի՛ լինի»: Ու հրամայեց նոր նազմիկներ բերել բերդ, թնդանոթներ դնել, անգամ ցույց տվեց, թե ի՞նչ ուղղութեամբ ե հարկավոր դնել այդ թնդանոթները. հետո կառք նստեց և վերաբաղարձաւ քաղաք:

Քաղաքում սպասում եր նրան անսպասելի մի ուրախութիւն. — ռազմաճակատից հաղորդագրուելու և կար ստացված, վոր հերոսական մի գրոհով նայիրյան ռազմիկները տասը վերստ յետ են քշել թշնամուն և զրավել միանգամայն կալուն դիրքեր: Ավելին՝ տեղեկութեան մեջ ասված եր, վոր շուտով հավանական ե առաջխաղացում սկսեն և քշեն թշնամուն — մինչև Հայսնի Քաղաք: Կարգաց Մազութի Համոն այդ հաղորդագրութիւնը և նրա սրտից կապարե մի ծանրութիւն ընկաւ գետին. կասկածն ու քիչ առաջ նրան պատող հուսահատութիւնը նրա սրտից, ինչպես ասում են, վոնց վոր ջնջոցով սրեցին. շտկեց իր, քիչ առաջ բերդում կորված, մեջքը Մազութի Համոն. աչքերը լցվեցին աշխուժութեամբ ու կայտառութեամբ: Մինչ այդ քաղաքում սկսվել եր անորինակ մի խուճապ. շրջանից փախածներն ու վերի քաղեցիք ամեն ինչ հավաքել՝ պատրաստվում էին գաղթի. հաղարավոր խմբերով դրանք բռնել էին փողոցներն ու դեպի կայարան տանող խճուղին. քաղաքի քիչ թե շատ պատ-

կառելի բնակիչներն արդեն գտնվում էին կայարանում, և մի յերկու գնացք արդեն հեռացել եր՝ քաղաքի պակասելի բնակիչներով բեռնված: Թե ի՞նչ եր կատարվում այդ ժամանակ կայարանում — անհնարին ե նկարագրել. խուճապի յենթարկված բազմահազար ամբոխը լցրել եր պլասժոնդը. տեղի յեր ունենում ակնպիսի մի իրարանցում, վորի հանդեպ մանկական մի խաղ եր Բաբելոնի առարակաթնուրյունը, յեթե միայն դա իրոք տեղի յե ունեցել: Մարդիկ կոխտուտ էին իրար ու իրարու վրայով սողալով՝ առաջ անցնում, վորպեսզի մոտ լինեն յեկող գնացքին. մայրերն ամբոխի գլուխների վրայով առաջ էին նետում իրենց յերեխաներին, վորպեսզի իրենք ևս առաջ սողան, բայց յերեխաները խեղդվում էին ընդհանուր հրհրոցում, իսկ մայրերը, առանց յերեխաներին հասնելու, փչում էին իրենց շունչը՝ չորս կողմից սեղմված: Տղոցկան կանայք ծնում էին կանգնած տեղերում, և նրանց ճիշդ լսելի յեր լինում անգամ այն ահուկ աղմուկում, վոր բարձրացնում եր բազմահազար, սարսափից յեւազարված, ամբոխը: Տղամարդիկ ծեծում էին իրար. կանայք ճանգառում էին տղամարդկանց դեմքերը, և այս ամենի վրա շահում եր առաւելագ փափախալորների մտաւր: Մտաւրով ճանապարհ էին բաց անում նրանք և առաջ անցնում, հետներն առաջ տանելով զանազան պատկառելի նայիրցիների ընտանիքներին, վորոնք ընկ. Վառդգանից կամ Մազութի Համոյից ունեւին պակասելի քղբեր: Բայց, չնայած արտակարգ փափախալորներին, չնայա ք ամգամ զպակասելի քղբերին, հաճախ չեր հաջողվում նրանց նպատակին հասնել. ամբոխը կատաղած թշնամու նման



գործիչ յեր դիմում ու ընդհանուր հորձանքում խեղդում թե՛ արտակարգ փափախավորներին և թե՛ նրանց հովանավորած պատկառելիներին: Անասելի, այո, աներևակայելի բաներ եյին կատարվում այդ ժամանակ կայսրանում, բայց ավելի անասելի՞ն ու աներևակայելի՞ն այն եր, ինչ վոր տեղի յեր ունենում քաղաքում: Քաղաքում ծայր եյին առել հրդեհները: Քաղաքից հեռացող նախըրցիները, նախըրցիան անասելի, չտեսնված մի յեռանդով, այրում եյին իրենց տներն ու խանութները, վոր վոսոխին չմնան: Տեղական իսլամությունը գուցե և դեմ լիներ նախըրցի սիրության նման բեծ արտահայտություններին, յեթե միայն, ինչպես ասում են՝ խելք գլխին լինել: Բայց նրա խելք գլխին չեւ և ժողովուրդը անում եր այն ամենը, ինչ վոր թելադրում եր նրան նախըրցիական բարձր զգացմունքը: Բայց այդ չեւ զարմանալին տներն ու խանութներն այրում եյին, ասենք, դրանց տները, այրում եր ժողովուրդը: Բայց թվ եր այրում հիսմաբկությունները: Քաղաքում ասողներ կային, վոր հրդեհներն սկսվել են հիսմաբկություններից. ամենից առաջ այրվել եր «Լույսի» գրասենյակը, յերևակայում եք՝ իրա, Մազութի Համոյի գրասենյակը, վոր ժամանակավորապես փակված եր՝ պահեստներում նաեւ և Համո Համբարձումովիչի տրամադրության ներքո ազատ ժամանակ չլինելու պատճառով: «Լույսի» գրասենյակն այրվել եր Մազութի Համոյի քաղաք վերադառնալուց մի որ առաջ, գիշերը (առավոտյան արդեն նա քաղաքում եր գտնվում) — և Մազութի Համոն, արտակարգ մի պատվասիրությամբ՝ քաղաք վերադառնալուն և հրդեհի լուրն ստանալուն պես՝ հրամայել եր,

ինչ գնով ել լինի հրդեհի լափող ճիրաններից, վոր արդեն մխացող մոխիրների եյին փոխվել, ազատել «Լույսի» մասյաններն ու հաշիվներ, բայց այդ կարելի չեր արդյոք, ընթերցող, հնարավոր եր արդյոք... Այա ալրվել եր «Մամր Վարկի Ընկերությունը», այսինքն ընկերության շենքը, հետո — միլիցիանունը: Յեվ, ասում են, դրանցից հետո յեր ահա, վոր քաղաքից հեռացող նախըրցիները ցուցադրել սկսեցին իրենց բեծ նախըրցիությունը, վոր ահալի արագությամբ ծավալվում եր քաղաքում և լցնում քաղաքի փողոցները նախըրցիական յուրորինակ մի արտահայտությամբ, այսինքն հրով ու ծխով: Այսպիսի ահա դրության մեջ եր քաղաքը, յեր Մազութի Համոն ստացավ ռազմաճակատից վերահիշյալ ուրախալի հաղորդագրությունը: Ռազմական արտակարգ նիստ հրավիրեց խելուչ Մազութի Համոն, վորը վորոշում կայացրեց՝ 1) Գերագույն միջոցներ ձեռն առնել խուճապը կանգնեցնելու համար, 2) վերջ տալ հրդեհներին, 3) հրամայել ժողովրդին հանգիստ իր տեղը մնալ, վորի համար արտակարգ միջոցներով արգելել ֆաղափից հեռանալը, 4) արգելել գնացներ յերբեկեկությունը: Վորոշումը հանելով՝ Մազութի Համոն անձամբ հրամայեց կայսրանին գնացքներ բաց չթողնել և ընկ. Վառդգյանի միջոցով արտակարգ փափախավորներ ուղարկեց՝ խճուղիով փախչող ժողովրդին վերադարձնելու, կամ, ծայրահեղ դեպքում, մնացածների առաջն առնելու: Այդ կարգադրություններին զուգընթաց՝ Քաղաքային կոմիտեի վաղեջ Մազութի Համոն, վոր նրա միջոցով ևս ազդի ժողովրդի տրամադրության վրա. արտակարգ նիստ նշանակեց, բայց, ցավոք սրտի, դուրս չեկավ, վոր քաղաքից բա-



ցակայում եյին Քաղաքային Խորհրդի համարյա բոլոր անդամները. վոչ Գեներալ Ալեք կար, վոչ մանրավաճառ Կոլոպոսյանը, վոչ Հաջի Ոսնիկ եֆենդին և վոչ էլ մյուսները. վերի քաղեցի անդամն էր միայն, վորը մի անգամ արդեն ցույց էր տվել իր ամբողջ քաղաքական հմտութիւնը՝ փակ խանութները ջարդելու իր այն ճիշատակելի առաջարկը մտցնելով, մի առաջարկ, վորից, հիշում եք, թե ի՞նչ դուրս յեկավ, — այսինքն վաչինջ էլ դուրս չեկավ: Ի՞նչ պիտի անէր Քաղաքային Խորհրդի այդ մի հատիկ անդամի հետ Մազութի Համոն, — այն, ի՞նչ պիտի անէր: — Վոչինչ էլ չէր կարող անել Քաղաքային Խորհրդի այդ մի հատիկ անդամի հետ Մազութի Համոն. Մազութի Համոնին մնում էր միայն թափահարել իր ձեռքը և գնալ տուն՝ հանգրտանալու. և Մազութի Համոն թափահարեց իր ձեռքը և վորոշեց տուն գնալ՝ հանգստանալու: Արդեն չերեկոյնէր, հոգնել էր ինքը ուղեղը նվում էր հոգնութիւնից. և, հոգնութիւնից, ուղեղում նվում էր... Նայիրին: Հարկավոր էր քնել, հանգստանալ, — և արդեն, կառք նստելով, ուղում էր կառապանին «Բեհ սուն» ապել Մազութի Համոն, յերբ հանկարծ հիշեց, վոր վաղուց արդեն քաղաքում չէ «սունը». գրավված վարեք մեկնելուց առաջ քաղաքից ուղարկել էր Անգինա Բարսեղովային և Սեւէյա Պրիմադոննային Մազութի Համոն, վորպէսզի միանգամայն աղատի իր նայիրյան հոգսերով ծանրաբեռնված ուսերը՝ ընտանեկան ավելորդ բեռից: — Հիշեց ու դառնորեն ժպտաց մտքում իր ազիզ կողակից Անգինա Բարսեղովնային Մազութի Համոն. ու, նրան ժպտալով, հիշեց Ագրիպայինա վլադիսլավովնային Համոն Համբարձումով

վիշը... «Բեհ՝ բերդը» — հրամայեց կառապանին Մազութի Համոն ու ընկողմանեց կառքում. գլուխը ձեռքերի մեջ առավ. քնեց...

Հաջորդ առավոտ... Բայց լավ է չլուսանար այդ առավոտը, վորովհետեւ այդ չարաբաստիկ առավոտը դեռ նոր էր լուսանում, յերբ քաղաքում մնացած ժողովուրդը, վոր վերոհիշյալ արտակարգ նիստի հրամանից և ռազմաճակատից ստացված ուրախալի հաղորդագրութիւնից հետո բավականին հանգստացել էր կարծես ու սրտապնդվել, — լսեց հրացանների տրաքտրաքոց և թնդանոթների դեռ բավականին հեռու, բայց հետզհետեւ մոտեցող վորտա: Վոչ մի ուժ այլևս, անգամ վոչ մի չերկնային վերին ղորութիւն, ի վիճակի չէր «տեղը նստած» պահել քաղաքում մնացած ժողովուրդին: Հսկա, տասնյակ և հարյուր հազարավոր գլուխներով հաշվող մի նախիրի նման, սարսափահար տեղահան յեղավ քաղաքում մնացած ժողովուրդը. մի մասը բռնեց կայարանի ճամբան, մյուսը խճուղու: Քաղաքի աները մեկը մյուսի չետից սկսեցին վառվել, և այդ վառվող տներում, հրի ու ծխի միջից, ինչ վոր բան էլին փախցնում ռազմաճակատից նահանջած նայիրցի ռազմիկները: Հաստատ կարելի չէ ասել, վոր այդ վայրկյանից քաղաքը կարելի չէր արդեն ընկած համարել, բայց նա այդպիսին դեռ չէր համարվում, վորովհետեւ վառվող դեռ չէր կտրել փախուստի ճանապարհը և դեռ հնարավոր էր փախչել: Այդ վայրկյանից սկսած քաղաքում չկար այլևս վոչ մի իշխանութիւն: Գեներալ իւստրիւսը բերդում էր հավաքվել, վորպէսզի այնտեղից անմիջապէս ղեկավարի ռազմական



գործողութիւնները: Քաղաքի վարի թաղեցիք (այսինքն կենտրոնական փողոցների բնակիչները) բոլորն էլ համարյա հեռացել էին քաղաքից, արդեն հեռանալ էլին սկսել վերի քաղցիքէ կա, այնպես վոր քաղաքի բուն բնակչութեան չնչին մասն էր միայն դեռ քաղաքում գտնվում: Բայց, չնայած դրան, քաղաքը լիւիւցողն էր դեռ մարդկային բաղմահադար, խռիւղ, խալտարդետ խմբերով, գերազանցապէս շրջանից փախած «բռնետով...» ծալը, վախճան չկար սրանց խայտաբղետ շարքերին: Տեղեֆոն Սերոն էս, վոր մինչ այդ մի զարմանալի անփութութեամբ քաղաքում էր մնացել, իր յեղբոր՝ Գոռ Արուսի է նրա հավատենական ընկեր Մեռելի Յեմովի ոգնութեամբ այրեց իր հոշակավոր սրճարան-ճաշարանը է իր «չոլուխ-չոճուղը» հավաքած՝ բռնեց կայարանի ճամբան: Հարկավոր է ասել, վոր մինչև սրճարանն այրելը, մինչև վերի թաղը վազելը է «չոլուխ-չոճուղն» հավաքելը բավականին փամանակ անցել էր արդեն. թաղեցիք համարյա բոլորն էլ արդեն հեռացել էին, այնպես վոր, լիթն չհաշվենք ուրիշ մի քանիսին, վոր այնպես էլ վերի թաղում մնացին, Տեղեֆոն Սեթոյի թափորը վերջինն էր, վոր հեռանում էր այդ թաղից: Վերի թաղեցիք փախել էին քաղաքից խնուղու ճանապարհով, այնինչ Տեղեֆոն Սեթոն վորոշեց կայարանով գնար, հուշ ունենալով, վոր «վերինի ոգնութեամբ» իրենց կհաջողվի գնացք նստել: Յեւ նրան, Տեղեֆոն Սեթոյին, ինչպէս է «չոլուխ-չոճուղին» Գոռ Արուսին ու Մեռելի Յեմովին, հաջողվեց գնացք նստել է այդ աներակալայելի հանգամանքը տեղի ունեցավ վոչ թե վերինի ոգնութեամբ, այլ իրա, Տեղեֆոն Սեթոյի, ռազմագիտական քանքարի

շնորհիւ: Բանն այն է, վոր Տեղեֆոն Սեթոն վորոշեց կայարան գնալ վոչ թե քաղաքի միջով, վոր միանգամայն անհնարին էր, այլ սալի վրայով, թեպետ սալի վրայով տանող ճանապարհն իջնում էր դեպի յերկաթուղին կայարանից բավականին հեռու՝ կայարանին հակառակ ուղղութեամբ: Յեւ հենց այս էր պատճառը, վոր նրանց հաջողվեց գնացք նստել: Արդեն կեսոր էր, հրացանների տրաքտրաքոցը է թնդանոթների թնդունն արդեն լսելի էր բերդից համարյա թե մի յերկու վերստ հեռավորութեան վրա, յերբ Տեղեֆոն Սեթոյի թափորն իջնում էր դեպի յերկաթուղագլիծը. թափորի առաջից, իր փոքրիկ յերկաթին գրկած, գնում էր ինքը, Տեղեֆոն Սեթոն, կողքից մի մեծ բոխա գրկած, վազում էր նրա «ողլուտաղը». յետեւից վազում էր Գոռ Արուսը՝ մի բավականին ծանր խուրչին շալակած, Գոռ Արուսի յետեւից — Մեռելի Յեմովը: Մեռելի Յեմովը, այլ հարստութիւն չունենալով, տանում էր շալակին իր «վակղի բլուփանը», այսինքն մի, իր իսկ ձեռքով հին ափսեներից շինած, կեռոֆ, մի յերկու գրվանճա-ֆառեր, մեկ էլ իրեն ունեցած յալմ ու կալբասը: Այսպէս էլ նրանք հասան յերկաթուղագլիծն է ճիշտ իրենց առաջ կանգնած տեսան — գնացքը. գնացքը, փախչող նալիքներով ծալրեծալը լիցողն, հեռացել էր կայարանից է ինչ վոր անհայտ պատճառով կանգ առել ալդտեղ: Յեթի կողմից մոտեցավ գնացքին Տեղեֆոն Սեթոյի թափորը է, ինչպէս համողված էր Տեղեֆոն Սեթոն՝ վերինի հաւաքով դեմ յեւ լավ հենց այն բաց վազոնին, վորի վրա, ճիշտ է, լցված էին «հագարից ալիլի», ինչպէս պատմում էր հեռագրում Տեղեֆոն Սեթոն, բայց հենց վազոնի յե-



գերքին տեղ էլին բռնել — Հաջի Մանուկոֆ եֆենդին և վարսավիր Վասիլը. դրանք ինչպես չերևում էր, վերջացած համարելով իրենց հայթաթողական ֆունկցիաները («— ե՛. ո՞ւմ պիտի հայրայրեյին, յերբ բանակ չկար») — վորոշել էլին իրենք ևս միանալ ընդհանուրին: «— Տաւ տեսնիմ պզտիկ» — ասաց Հաջին Սեթոյին, և Տեղեֆոն Սեթոն տվեց Հաջուն իր չերեխան. հետո վարսավիր Վասիլի ոգնությամբ բարձրացրին և Սեթոյի ողլուգադին: Մնացին իրենք: «Իսկ ալ գացեմ գննիլներու վրա կայնեցեմ» — խորհուրդ տվեց Հաջին, վորովհետև իրենց մոտ վոչ միայն նրանց այլև ասեղի տեղ չկար: Գնացին. չերկար հայտնելուց, խնդրելուց ու աղաչելուց հետո, վերջապես հաջողվեց բարձրանալ գննիլներու, այսինքն բուֆերների վրա. կանգնեցին կողք-կողքի, մի-մի ձեռով իրարու բռնած, մյուս ձեռներով՝ իրենց ապրանքը: Հենց այդ ժամանակ գնացքը շարժվեց: Վերջին գնացքն էր դա, վոր դուրս յեկավ նախրյան այդ քաղաքից. չերբ շարժվեց գնացքը — տրաքտրաքոցներն արդեն լավում էլին բերդի տակից: Թշնամին, ինչպես չերևում էր, արդեն մոտեցել էր բերդին: Զննիլներու վրա կանգնած Տեղեֆոն Սեթոն, Բոս Արուսթը և Մեռելի Յենոքը, ինչպես և այդ վերջին գնացքում գտնվող բոլոր նախրցիները, սարսափահար հայացքները հռոած՝ նայում էլին բերդին: Յեվ այն միաբը, վոր արտահայտեց, բերդին նայելով, Բոս Արուսթը՝ գնացքում գտնվող բոլոր նախրցիների միտքըն էր. «Յա՛, մերո՞նք ինչի չեն կրակե...» — ասաց Բոս Արուսթը, դալբացած ու զարմացած: — Բայց նրան ավաղ, չվիճակվեց լսել իր այդ որինավոր հարցի պատասխանը, չվիճակվեց վոչ թե այն պատճառով, վոր

այդ հարցի պատասխանը չկար, այլ այն հասարակ պատճառով, վոր, յերկու վարկյան չանցած, ինքը, Բոս Արուսթը չկար: Յեվ վոչ միայն ինքը, այլև իր հավիտենական ընկեր Մեռելի Յենոքը: Յեվ ահա թե ինչու: — Դեռ հաղիվ էր ասել իր վերոհիշյալ, հեռագայում պատմական դարձած, նախադասությունը Բոս Արուսթը, յերբ գնացքն ուժգին առաջ ցնցվեց. գնացքի ցնցումից վալը ձգվեց Բոս Արուսթի խուրջինը. այդ վալըկյանին յերկրորդ անգամ, յե՛ս ցնցվեց գնացքը. խուրջինը պոկվեց: Բոս Արուսթը ձեռից ընկնող խուրջինի յեռեից բնադդարար կոացավ, վոր բռնի խուրջինը. չբռնեց. կորցրեց հավասարակշռությունը... ընկավ: — «Յա՛ Հարո՛ւր...» — վախեցած ու լացակումած կանչեց նրա յեռեից Մեռելի Յենոքը. — ինքն էլ բնադդարար կոացավ, ձեռքը մեկնեց, վոր բռնի ընկերովը. չբռնեց. կորցրեց հավասարակշռությունը... ընկավ: — Ու հաջորդ վարկյանին Բոս Արուսթի յեվ Մեռելի Յենոքի, այդ հավիտենական ընկերների մերձված դիրքի վրայով, անցնելով սարսափահար փախչում էր վերջին գնացքը նախրյան այդ քաղաքից, ուր արդեն վոտք էր դրել վստխը, ուր մահ էր արդեն, ավերմունք, անասելի կոտորած, անպատմելի սարսափ...

Յեվ այսպես՝ Բոս Արուսթի ու Մեռելի Յենոքի արելալի դիրքի վրայով անցնելով, հեռացավ վերջին գնացքը նախրյան այդ քաղաքից, և Թշնամին, վստխը, մտավ քաղաք: Մենք չենք պատմի, ընթերցող, թե ինչ պատահեց այդ վալըկյանից հետո նախրյան այդ քաղաքում, վորովհետև դա վեր է մեր կարողությունից.



կասեճք միայն, վոր քաղաքում մնաց բազում ժողովուրդ, վոր և սրի քաշվեց վոսթսի հորդանների կողմից: Բայց այս չե ելականը, ընթերցող. ելականն այն է, վոր, բացի, ուրեմն, այդ բազում ժողովրդից, քաղաքում մնացին, և սա չեք ամենաեղականն ու սարսափելին, — բնկեք Վառոդյանը, Սերգե Կասպարիչը — բժիշկը, յեվ Մազուրի Համոն... Մինչև վերջին վայրկյանը նրանք քաջաբար մնացել էին իրենց դիրքերի վրա, մնացել էին բերդում և հենց բերդում ել գերի էլին ընկել վոսթսին. — ընկել էին թշնամու արջուհարբու ձեռքը: Այդ ժամանակ գերի ընկածներից վոմանք, վոր հրաշքով ազատվել էին հետո, փախել կոտորումից, — այդ հրաշքով ազատվածներից վոմանք հետագայում պատմում էին, վոր քաղաք մտնելու չերբորդ որը վոսթսը, մի դաժան նենգամտությամբ, հանձնել եր նրանց հորդանների ձեռքը, վորոնք և — յերևակայեմ եք — կախել էին բնկ. Վառոդյանին, Սերգե Կասպարիչին — բժիշկին ու իրան՝ Մազուրի Համոյին նիստ այն յերեք հեռագրասյուներից, վոր — ո՛հ, ճակատագրի անորինակ հեղանք, — իրա, ընկ. Վառոդյանի հրամանով յերկու որ առաջ կանգնեցրել էին ընկեր Վառոդյանի արտակարգ փափախավորները՝ դեգերսիրներից կախելու համար... Վոսթսից փախածները բավականին մանրակրկիտ կերպով նկարագրում էին այդ սխրալի դեպքը իր բոլոր սրտաճմլիկ մանրամասնություններով, այնպես վոր մենք ևս, նրանց պատմածների նիման վրա, կարող ենք արձանագրել այստեղ այդ սխրալի դեպքի սրտաճմլիկ մանրամասնությունները: Դեպքը պատահել է մոտավորապես այսպես: Ինքը մտնելով, վոսթսի սպաները գտել են ընկ. Վա-

ռոդյանին, բժիշկին ու Մազուրի Համոյին՝ բերդի ամենաբարձր աշտարակի վրա, նայիրչան յեռագույնի դողող վայտի մոտերքը, իրենց մագերթ պոկոսելիս: Տեսնելով նալիրյան հրամանատարների այս անսանկ վիշտը՝ խորին ակնածանքով մոտեցել են նրանց վոսթսի նենգ սպաները, մեծ պատիվ են տվել և մեծագույն շուքով տարել են քաղաք: Պատմում են, վոր ճանապարհին հանդիպած բոլոր վոսթս-սպաները պատիվ են բռնել նրանց, և նույնիսկ ինքը, վոսթսի ամենամեծ փառան սեղմել է նրանց ձեռքը յեվ ցավակցություն հայցնել նրանց վեժի համար: Այսպիսի ահա մի չտեսնված վերաբերմունք են գտնում ընկ. Վառոդյանը, բժիշկը և Մազուրի Համոն վոսթսի հրամանատարության կողմից, բայց, յերկու որ անց, մի դաժան նենգությամբ հանձնվում են նրանք վոսթսի քափրփուկ հորդանների ձեռքը, վորոնք և կախում են նրանց ու յենթարկում դարհուրելի գանահարությանց: Նրանք, վոսթսի այդ թափթփուկ հորդանները աջից կախ են անում ընկ. Վառոդյանին, ձախից բժիշկին, իսկ մեջտեղից — իրան, Մազուրի Համոյին, — և սա չե գեուկա ամենաղարհուրելին ու ամենաքստմեկին: — Ամենաղարհուրելին և ամենաքստմեկին այն է, վոր նրանք, վոսթսի այդ թափթփուկ հորդանները, ասում են, մի օախսակ են փակցնում յերբորդ հեռագրասյան մեջտեղը, Մազուրի Համոյի գլխավերեմը, — ու գրում վրան, յերևակայեմ եք — նայիրչան օտոհրով:



վոր նշանակում ե՝

«Մազուրի Համո Արֆա Նայիրի»:

.....

## ՎԵՐՋԱԲԱՆ

Ահա և ամբողջը, ընթերցող, ահա և մեր սուչն պոեմանման վեպը, վորը, վերջին հաշվով վոչ թե վեպ դուրս չեկալ, այլ «այլակերպ» մի բան: — Այլակերպ» բառն առնում ենք չակերտների մեջ. վորովհետև այդպես պիտի ասեր սուչն այս վեպիս մասին մեզ բավականին ծանոթ Հաջի Ոհնիկ Եֆենդի Մանկուկոֆը, այդ հայտնի անգլիախոս նաչիրցին, չեթե նա կենդանի լիներ և սուչն այս վեպս կարդար: Այո, այսպես պիտի ասեր Հաջին և մենք միանգամայն համամիտ պիտի լինեյինք նրան, վորովհետև նա, իբր հմուտ անգլիախոս յեվ պոսկառելի ցայիրցի, հարց պիտի դներ սուչն այս վեպիս ձևի վոչ ամբողջական լինելու, նրանում վեպի ելեմենտար կանոնների բացակայության և հազար ու մի այլ թերությունաց մասին, ու՝ մեր բաղում քանքարավոր քննադատներին ի խրատ՝ պիտի հիմնավորեր իր կարծիքն իր հմուտ անգլիախոսությամբ յեվ պոսկառելի... ցայիրաւորությամբ... Բայց — ավանդ, ավանդ, — մեր ստացած ստույգ տեղեկությունաց համաձայն՝ կենդանի չե այլևս Հաջի Ոհնիկ Եֆենդին, ուստի թողնենք ձևի խնդիրը և անցնենք բովանդակությանը, այսինքն մեր առաջադրած այն հիմնական հարցին՝ քե վո՞րն ե վերջապետ Նայիրին: —


Ընթերցող:

Վաղուց հետե մեր դրականության, մանավանդ բանաստեղծության մեջ չկա մի բառ, վոր ավելի հոլովվեր, քան «Նայիրի» գոյականը. բայց, չնայած դրան, մինչև իմ սուչն այս պոեմանման վեպը, լեզվադիտության ամուլ անդաստանում չեր ձարվում և վոչ մի Մանուկ Աբեղյան, վոր զբաղվեր այդ չամիչի պես գործածական դարձած բառի փերականակամ կազմությամբ, — և չես, նուչն հարգելի Հաջու տերմինով ասած՝ «փամի կուլ ցվոդ» նախասոս ելի, վոր առաջին անգամ զբաղվեցի այդ փերականակամ հարցով և գլխի ընկա, վոր «Նայիրի» բառը վոչ թե գոյական ե, այլ — չեթե միայն կարելի չե քերականության մեջ այսպես ասել — «մագալիի համոյական»... Յերեակալում եմ, թե ինչպես պիտի ծիծաղի Մանուկ Աբեղյանը, չերբ իմ այս քերականական նոր տերմինս կարդա. վոչ, չպիտի ծիծաղի, բարկանա պիտի նա. չեթե այս տերմինս կարդա, բայց մենք չեյինք բարկանա նրա վրա, վորովհետև մեր գործը չե քերականությունը, և իր, Մանուկ Աբեղյանի անփութության շնորհիվ ե, վոր ինձ պես համբաւները զբաղվում են փերականությունը: — Մյուս կողմից, կարծում ենք, վոր մեզ վրա ես բարկանալու այնքան ել հիմք չպիտի ունենա նա, քանի վոր մեր, համբաւիս, կարծիքով՝ «Նայիրին», իբր քերականության յեթեկա մի հանգամանք, այսինքն իբր բառ դուրսբերու ունենալուց առաջ՝ վաղուց արդեն գոյութուն ե ունեցել մի շարք ավելի քան պատկանելի մարդկանց մեջ (կարդա սուչն վեպս), վորպես ուղեգրին մուրմոֆ, արցի հիվանդություն... Իսկ նման դեպքերում, ինչպես դիտեք, քիչ գործ ունի անելու լեզվա-



գիտութիւնը. այստեղ, կարծում ենք, արդեն բժիշկ ե հարկավոր, անգամահասական ահեղ կամ լանցես լել վոչ քե քերականութիւն... Թող ներեն ինձ բժիշկները, յեթե գտնեն վոր չի կարելի ուղեղային մորմոք ու արտի հիվանդութիւնը հանել մարդկանց միջից ահեղների ու լանցեսների ոգնութիւնը — բժիշկ չենք մենք, ընթերցող, և վոչ ել, դժբախտաբար, կենդանի յե սուչն այս վեպիս մեջ քանիցս հիշատակված դոխտուր Արեակը, վոր նրանից կարծիք հարցնենք: — Բայց ինչ ել լիներ դոխտուր Արեակի կարծիքը՝ մի բան պարզ և մեղ համար. և այդ պարզ բանն այն ե, վոր վաղուց արդեն պատմութիւնը, այդ, կարծում ենք, ավելի հանճարեղ բժիշկը քան դոխտուր Արեակը, — պրակտիկայում կիրառել ե վերոհիշյալ միջոցը յել չենք կարծում, վոր պատմութիւն այդ փորձերն ապարդիւն են անցել. արյուն, ճիշտ ե, շատ ե հոսել, սակայն կենդանի մնացածներից տեսերն արդեն ազատ են վերոհիշյալ ուղեղային մորմոքից ու որտի հիվանդութիւնից յել այսոր իրենց յերկիրն են շինում — մի չերկիր, սակայն, վորի գոյական լինելը ճշտելու համար կարիք չկա դիմելու վոչ մի Մանուկ Աբեղյանի, վորովհետեւ այդ պարզապես տեսնում են բոլոր նրանք, ովքեր գործ ունեն նոյի ու առիաստների հետ և վոչ թե այն հռչակավոր՝ մենք կասեցինք՝ «նայիրումագութիւնամոյական» գարու, վոր, ըստ նայիրյան անեկդոտի՝ տեսել եր մի անգամ յերկարականջ քերթին իր այն նշանավոր յերագում...

Ահա և բոլորը:





Եր. 41



ՀՀ Ազգային գրադարան



NL0356566



48923

10 23 4.  
500 60 400.



ԵՂԻՏԵ ՎԱՐԵՆՇ  
ՏՐԱՆԱ ՈՒՐԻ

Դոսկադատ ՀՀՐ Արմենի  
Զրիվան — 1934